



Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը Ուսուցչի նյութ

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի նյութ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Շնորհակալ կլինենք Ձեր դիտողությունների և ուղղումների համար: Խնդրում ենք ուղարկել նկատառումները հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 East North Temple Street, Floor 8
Salt Lake City, Utah 84150-0008
USA

Է-փոստ. ces-manuals@ChurchofJesusChrist.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, հասցեն, ծովափը կամ ճյուղը և ցիցը կամ շրջանը: Ձեր մեկնաբանության հետ մեկտեղ, չմոռանաք
ընդգրկել ձեր Ս&Ի ձեռնարկի տարբերակը:

Ս&Ի տարբերակ 2, 06/2021

Անհատները կարող են տպել այս նյութը իրենց անձնական, ոչ առևտրային նպատակով օգտագործման համար (օգտագործումը կարող է կապված լինել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում նրանց կոչման կամ հանձնարարության հետ): Ցանկացած այլ նպատակով օգտագործելու համար խնդրում ենք թույլտվություն խնդրել permissions.ChurchofJesusChrist.org կայքում:

© 2021 by Intellectual Reserve, Inc.

All rights reserved.

Տարբերակ. 2/20

Teachings and Doctrine of the Book of Mormon Teacher Material-ի թարգմանությունը

Armenian

PD60010657 201

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Բովանդակություն

<i>Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի նյութի նախաբան, (Կրոն 275)</i>	V
Բաժին 1. Աստծո խոսքի զորությունը	1
Դաս 1. Դասարանի նախապատրաստական նյութ. Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին	2
Դաս 1. Ուսուցչի նյութ. Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին	7
Դաս 2. Դասարանի նախապատրաստական նյութ. Արձագանքել Տիրոջ մարգարեներին.	10
Դաս 2. Ուսուցչի նյութ. Արձագանքել Տիրոջ մարգարեներին.	14
Դաս 3. Դասարանի նախապատրաստական նյութ. Լեքիի երազը կենաց ծառի մասին.	17
Դաս 3. Ուսուցչի նյութ. Լեքիի երազը կենաց ծառի մասին.	22
Դաս 4. Դասարանի նախապատրաստական նյութ. Քննեք սուրբ գրությունները	25
Դաս 4. Ուսուցչի նյութ. Քննեք սուրբ գրությունները	29
Մաս 2. Փրկագնման մեծ ծրագիրը	32
Դաս 5. Դասարանի նախապատրաստական նյութ. Ադամի ու Եվայի անկումը և ազատ կամքի պարզելը	33
Դաս 5. Ուսուցչի նյութ. Ադամի ու Եվայի անկումը և ազատ կամքի պարզելը	38
Դաս 6. Դասարանի նախապատրաստական նյութ. Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը.	41
Դաս 6. Ուսուցչի նյութ. Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը.	45
Դաս 7. Դասարանի նախապատրաստական նյութ. Հիսուս Քրիստոսի զորացնող ուժը.	49
Դաս 7. Ուսուցչի նյութ. Հիսուս Քրիստոսի զորացնող ուժը.	54
Դաս 8. Դասարանի նախապատրաստական նյութ. Կյանք մահից հետո.	58
Դաս 8. Ուսուցչի նյութ. Կյանք մահից հետո	62
Մաս 3. Քրիստոսի վարդապետությունը	65
Դաս 9. Դասարանի նախապատրաստական նյութ. Հավատ առ Հիսուս Քրիստոս	66
Դաս 9. Ուսուցչի նյութ. Հավատ առ Հիսուս Քրիստոս	70
Դաս 10. Դասարանի նախապատրաստական նյութ. Ապաշխարություն և ներում	73
Դաս 10. Ուսուցչի նյութ. Ապաշխարություն և ներում	78
Դաս 11. Դասարանի նախապատրաստական նյութ. Առաջ ընթանալ ուխտի արահետով.	81
Դաս 11. Ուսուցչի նյութ. Առաջ ընթանալ ուխտի արահետով.	85
Դաս 12. Դասարանի նախապատրաստական նյութ. Մեր հոգևոր վերածննդի կարիքը	88
Դաս 12. Ուսուցչի նյութ. Մեր հոգևոր վերածննդի կարիքը	93
Մաս 4. Իսրայելի հավաքումը	96
Դաս 13. Դասարանի նախապատրաստական նյութ. Իսրայելի հավաքումը վերջին օրերում	97
Դաս 13. Ուսուցչի նյութ. Իսրայելի հավաքումը վերջին օրերում	102
Դաս 14. Դասարանի նախապատրաստական նյութ. Գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում.	105
Դաս 14. Ուսուցչի նյութ. Գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում.	109
Մաս 5. Հիսուս Քրիստոսի ծառայությունը	112
Դաս 15. Դասարանի նախապատրաստական նյութ. Նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի Գալուստին	113

Դաս 15. Ուսուցչի նյութ. Պատրաստվել Հիսուս Քրիստոսի Գալուստին	118
Դաս 16. Դասարանի նախապատրաստական նյութ. Հիսուս Քրիստոսը սպասավորում է մեկ առ մեկ	121
Դաս 16. Ուսուցչի նյութ. Հիսուս Քրիստոսը սպասավորում է մեկ առ մեկ.	125
Դաս 17. Դասարանի նախապատրաստական նյութ. Պատկանել Տիրոջ Եկեղեցուն	128
Դաս 17. Ուսուցչի նյութ. Պատկանել Տիրոջ Եկեղեցուն	133
Դաս 18. Դասարանի նախապատրաստական նյութ. Նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին	136
Դաս 18. Ուսուցչի նյութ. Նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին	140
Մաս 6. Բացահայտել հոգևոր վտանգները մեր օրերում	143
Դաս 19. Դասարանի նախապատրաստական նյութ. Արդար ապրել ամբարշտության օրերում	144
Դաս 19. Ուսուցչի նյութ. Արդար ապրել ամբարշտության օրերում	148
Դաս 20. Դասարանի նախապատրաստական նյութ. Կրոնական ազատության օրհնությունները	151
Դաս 20. Ուսուցչի նյութ. Կրոնական ազատության օրհնությունները	157
Դաս 21. Դասարանի նախապատրաստական նյութ. Հաղթահարել հպարտությունը	160
Դաս 21. Ուսուցչի նյութ. Հաղթահարել հպարտությունը	165
Դաս 22. Դասարանի նախապատրաստական նյութ. Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից	168
Դաս 22. Ուսուցչի նյութ. Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից	173
Մաս 7. Դրեք ձեր վստահությունը Աստծո վրա	176
Դաս 23. Դասարանի նախապատրաստական նյութ. Հնազանդություն Աստծո պատվիրաններին	177
Դաս 23. Ուսուցչի նյութ. Հնազանդություն Աստծո պատվիրաններին	182
Դաս 24. Դասարանի նախապատրաստական նյութ. Տիրոջ ազատման զորությունը	186
Դաս 24. Ուսուցչի նյութ. Տիրոջ ազատման զորությունը	191
Մաս 8. Եկեք Քրիստոսի մոտ. Դառնալ Նրա աշակերտները	194
Դաս 25. Դասարանի նախապատրաստական նյութ. Աղոթք և անձնական հայտնություն	195
Դաս 25. Ուսուցչի նյութ. Աղոթք և անձնական հայտնություն	200
Դաս 26. Դասարանի նախապատրաստական նյութ. Նախքան ձեր հավատքի փորձությունը	204
Դաս 26. Ուսուցչի նյութ. Նախքան ձեր հավատքի փորձությունը	209
Դաս 27. Դասարանի նախապատրաստական նյութ. Հավատք, հույս և գթություն	212
Դաս 27. Ուսուցչի նյութ. Հավատք, հույս և գթություն	217
Դաս 28. Դասարանի նախապատրաստական նյութ. Եկեք Քրիստոսի մոտ	220
Դաս 28. Ուսուցչի նյութ. Եկեք Քրիստոսի մոտ	225

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի նյութի նախաբան, (Կրոն 275)

Ողջունում ենք ձեզ Մորմոնի Գրքի ուսմունքների և վարդապետության դասընթացին: Շնորհակալությո՜ւն, որ ընդունեցիք հրավերը՝ օգնելու ինստիտուտի ուսանողներին Մորմոնի Գրքի ուսումնասիրության միջոցով գալ դեպի Քրիստոսը: Այս ուսումնական ծրագիրը կօգնի ձեզ լինել Քրիստոսակենտրոն և սովորողների հանդեպ ուշադիր ուսուցիչ:

Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Մեմինարիաների և կրոնի ինստիտուտների նպատակը հետևյալն է.

Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և չափահաս երիտասարդներին հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունն ու ուսմունքները, և ապավինել դրանց, արժանի լինել տաճարային օրհնություններին, պատրաստել իրենց, իրենց ընտանիքները և ուրիշներին հավերժական կյանքին՝ իրենց Երկնային Հոր հետ: (Ավետարանի ուսուցանում և ուսումնասիրություն. Ձեռնարկ Մեմինարիաների և կրոնի Ինստիտուտների ուսուցիչների և ղեկավարների համար [2012], 1):

Այս դասընթացը նախատեսված է օգնելու ձեզ և ձեր ուսանողներին իրականացնել Մեմինարիաների և Ինստիտուտների նպատակը հետևյալ կերպ.

- Ստեղծելով ուսումնական փորձառություններ, որոնք կօգնեն ուսուցիչներին և ուսանողներին զգալ Երկնային Հոր սերը և ամրապնդել իրենց հարաբերությունները Նրա հետ:
- Հնարավորություն տալով մեծացնել հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ:
- Օգնելով ուսանողներին բացահայտել և մեկնաբանել Մորմոնի Գրքի տարբերակիչ ուսմունքներն ու վարդապետությունը, մտածել, թե ինչով են դրանք կարևոր իրենց անձնական աճի

համար և որոշել, թե կյանքում ինչպես կիրառել այն, ինչ նրանք սովորում են:

- Խթանելով ուսմանը նպաստող սիրառատ և հարգալից մթնոլորտ, որտեղ ուսանողներին խրախուսվում է հարցեր տալ, մտահոգություններ հայտնել, քննարկել իրենց փորձառությունը և կիսվել վկայություններով:

Ինչպե՞ս են կազմված այս նյութերը:

Այս դասընթացը բաժանված է 8 միավորի՝ 28 դասաժամով: Յուրաքանչյուր միավոր ընդգրկում է Մորմոնի Գրքի կարևոր վարդապետական մի թեմա: Յուրաքանչյուր միավորի դասերը թեմատիկ են և վերաբերում են վարդապետական թեմային:

Յուրաքանչյուր դաս նախատեսված է 50 րոպեանոց դասաժամի համար: Շաբաթը մեկ 90 րոպե տևողությամբ դասերի դեպքում, ուսուցիչները կարող են համատեղել երկու դաս, քանի որ յուրաքանչյուր բաժնի դասերը սերտորեն կապված են միավորի թեմայի հետ:

Յուրաքանչյուր դաս բաղկացած է դասի նախապատրաստական նյութից և ուսուցչի նյութից: Այս նյութը նպաստում է, որ խորհելով նախապատրաստվեք, ուսանողներն ավելի խորը ուսումնասիրություն կատարեն և այնպիսի գործեր կատարեն, որոնք կօգնեն նրանց ավելի շատ նմանվել Երկնային Հորը:

Որպեսզի իմանաք, թե ինչպես լավագույնս օգտագործել այս ուսումնական ծրագիրը ձեր ուսանողների կյանքն օրհնելու համար, դուք պետք է դասի քննարկումներին պատրաստվելիս, ուսումնասիրեք ինչպես դասի նախապատրաստման, այնպես էլ ուսուցչի նյութերը:

Ուսումնասիրելով ուսումնական ծրագիրը, աղոթեք Տիրոջ օգնության համար, որպեսզի հասկանաք ձեր ուսանողների կարիքները: Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.



Բաց եղեք՝ բաց եղեք հատկապես Հոգու համար: Ձեր դասի ծրագրում տեղ թողեք մանկւրի համար: Եթե դուք կարիք ունեք մի քիչ կարճացնել դասը, որպեսզի բերեք ձեր վկայությունը և քննարկում ծավալեք որևէ արդիական հարցի շուրջ, խնդրում ենք անել այդպես այն դեպքում, երբ Հոգին հուշի, որ դա տեղին է:

... Հիշեք, որ ուսանողը տարա չէ, որը պիտի լցվի, ուսանողը կրակ է, որը պետք է բոցավառել: (“Angels and Astonishment” [address given at the Church Educational System training broadcast, June 12, 2019], broadcasts. ChurchofJesusChrist.org):

Դասի նախապատրաստման նյութ

Դասի նախապատրաստման նյութը ներառում է հատվածներ Մորմոնի Գրքից, այդ հատվածների համատեքստը, Եկեղեցու ղեկավարների հայտարարությունները, նկարներ, տեսանյութեր և «Բացել ավելին» բաժինը, որը տրամադրում է դասի թեմայի հետ կապված լրացուցիչ աղբյուրներ:

Դասի նախապատրաստման նյութը պարունակում է նաև հարցեր և վարժություններ, որոնք խրախուսում են ուսանողներին խորացնել իրենց ուսումնասիրությունը և պատրաստվել դասի մասնակցությանը: Օրինակ, 4-րդ դասի նախապատրաստման նյութում՝ «Որոնք սուրբ գրությունները», ուսանողները հրավիրվում են սովորել, թե ինչպես կարելի է սուրբ գրությունները նմանեցնել կամ համեմատել Լիաիոնայի հետ:

Ապա, նրանք հրավիրվում են կատարել հետևյալ վարժությունը.



Քննարկեք դասի նախապատրաստվելիս

Հարցրեք որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի, թե ինչպես են սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը իրենց կյանքում եղել առաջնորդության աղբյուր՝ անձնական Լիաիոնայի նման: Ձեր գրույցի ընթացքում գուցե կամենաք կիսվել սրա հետ կապված ձեր անձնական փորձառությամբ:

Յոթնասունից երեց Քիմ Բ. Քլարկն ուսուցանել է, թե ինչ պետք է անի սովորողը (և ուսուցիչը) նյութերն ավելի խորը ուսումնասիրելու համար.



Եթե իսկապես ցանկանում եք խորապես ուսումնասիրել, եթե ձեր սիրտը և միտքը բաց են սովորելու համար, և եթե գործեք ըստ այդ ցանկության, Տերը կօրհնի ձեզ: Երբ կատարեք ձեր բաժինը՝ հավատքով աղոթեք, նախապատրաստվեք, ուսումնասիրեք, ակտիվ մասնակցեք և անեք այն ամենն, ինչ կարող եք, ապա Սուրբ Հոգին կուսուցանի ձեզ, կմեծացնի սովորած նյութը կիրառելու ձեր կարողությունը և կօգնի ձեզ դառնալ այն, ինչ Տերն ուզում է, որ դառնաք: (“Learning for the Whole Soul,” *Liahona*, Aug. 2017, 27):

Ուսուցչի նյութ

Ուսուցչի նյութի նախաբանի յուրաքանչյուր դասում դուք կգտնեք սովորողի համար նախատեսված արդյունքների նկարագիր: Նախաբանին հաջորդում են դասավանդման առաջարկվող գաղափարները, որոնք կազմավորում են դասի կառուցվածքը, բովանդակությունը, քննարկման համար անհրաժեշտ օգտակար նյութերը և կիրառման գաղափարները:

Ուսուցչի նյութն ուսումնասիրելիս ուշադրություն դարձրեք, թե ինչպես է դա ազդում ուսանողների նախապատրաստության վրա: Ամբողջատ

խրախուսելով, որ ուսանողները պատրաստ ներկայանան դասին, կօգնի նրանց զգալ յուրաքանչյուր դասին պատրաստ լինելու կարևորությունը: Դաս 4-ից հետևյալ ցուցումը օրինակ է հանդիսանում, թե ինչպես է ուսուցչի նյութը հիմնվում ուսանողների պատրաստվածության վրա.

Ցուցադրեք հետևյալ սկզբունքները. **Երբ մենք ուշադրություն դարձնենք Քրիստոսի խոսքերին, նրանք կառաջնորդեն մեզ այս կյանքի մարտահրավերների միջով դեպի հավերժական ուրախություն:**

- Ե՞րբ են Քրիստոսի խոսքերը տվել ձեզ առաջնորդություն և ուղղորդում: (Գուցե ուսանողներին հրավիրեք կիսվել նաև նրանով, ինչ իրենք խոսել են ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ այն քննարկման ժամանակ, որին նրանք հրավիրվել էին մասնակցել՝ այս դասին նախապատրաստվելու համար:)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպես անում եք դուք և ձեր ուսանողները դասից առաջ, մի բույս նվիրեք խորհելուն, երբ պատրաստվում եք այս դասընթացի դասավանդմանը: Նախ՝ մեկ կամ երկու դաս կարդացեք, որպեսզի ծանոթանաք, թե ուսուցանելուն նախապատրաստվելիս ինչպես կարող եք միասին օգտագործել նախապատրաստման և ուսուցչի նյութերը: Ապա խորհեք հետևյալ հարցերի մասին՝ որո՞նք են այն եղանակները, որոնցով դուք կարող եք խրախուսել ուսանողներին պատրաստվել, որպեսզի նրանք կարողանան ավելի հարուստ փորձ ունենալ դասարանում: Ի՞նչ կարող եք անել, որ ընդգրկեք այն ուսանողներին, ովքեր չեն ուսումնասիրել նախապատրաստման նյութը:

Նշում. Երբ ուսանողները պատրաստ են գալիս դասի քննարկումներին, դուք կնկատեք, որ կարող եք ավելի արագ անցնել թեմաների խորը և իմաստալից քննարկումներին: Սա թույլ կտա, որ դասին ավելի շատ ժամանակ ունենաք՝

ուսումնասիրելու, թե ինչպես կարող եք դուք և ձեր ուսանողները պլանավորել և կատարել արդյունավետ, առաքինի գործեր:

Ինչպե՞ս կարող եմ արդյունավետ նախապատրաստվել ուսուցմանը:

Երկնային Հայրը կօգնի ձեզ, երբ դուք նախապատրաստվեք ուսուցանելու Իր զավակներին: Ավետարանով ջանասիրաբար ապրելու ձեր ջանքերը կօգնեն ձեզ արժանի լինել Հոգու առաջնորդությանը, երբ պատրաստվում եք ուսուցանմանը:

Միզուցե օգտակար լինի, եթե ուսուցանելուն պատրաստվելիս ինքներդ ձեզ տաք հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք աղոթել եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու և իմ աշակերտների կարիքներն իմանալու համար: Ինչպե՞ս կարող եմ որոշել, թե ինչն է առավել նպաստավոր նրանց համար:
- Արդյո՞ք ես բավականաչափ հմուտ եմ նախապատրաստման և ուսուցչի նյութերի հետ կապված: Արդյո՞ք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ուսանողներին՝ մեծացնել հավատը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, այս դասն ուսումնասիրելու ժամանակ: Ինչպե՞ս կարող եմ օգնել ուսանողներին գիտելիք փնտրել Սուրբ Հոգու միջոցով:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել յուրաքանչյուր իմ ուսանողին լիարժեք ընդգրկվել դասին: Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ ուսանողներն ունեն այն ժամանակամիջոցը, որն անհրաժեշտ է անձնական ծրագրեր կազմելու՝ իրենց սովորածը կիրառելու համար:
- Ինչպե՞ս կարող եմ ստեղծել սովորելուն նպաստող մթնոլորտ, որտեղ ուսանողներն իրենց կզգան գնահատված, ընդունված և ազատ՝ միմյանց հետ կիսվելու և միմյանցից սովորելու

համար: (Տես Վարդապետություն և Ուխտեր 88.78, 122):

Ինչպե՞ս կարող եմ հարմարեցնել դասերը սահմանափակ կարողություն ունեցող ուսանողների համար:

Ուսուցմանը նախապատրաստվելիս հաշվի առեք հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Հարմարեցրեք վարժությունները և առաջադրանքներն այնպես, որ այդ ուսանողները մասնակցեն և օգնեն նրանց հաջողություններ ունենալ: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Հաշմանդամությանը վերաբերող էջի աղբյուրներում՝ disabilities.ChurchofJesusChrist.org:

Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից՝ կրեդիտներ ստանալու համար:

Ինստիտուտի ավարտականի կրեդիտները հավաքելու համար, ուսանողներին անհրաժեշտ է.

1. Ուսումնասիրել նախապատրաստական նյութը՝ դասերի առնվազն 75 տոկոսի համար:
2. Մասնակցել անցկացվող դասերի 75 տոկոսին:
3. Ավարտել ուսումնական երեք փորձառություններից մեկը. պահել ուսումնասիրության օրագիր, գրել պատասխաններ երեք շարադրությունների հարցերին կամ ինքնուրույն ծրագրել և ավարտին հասցնել ուսումնառության որևէ առաջարկ (ուսուցչի հաստատմամբ), որը կապված է դասընթացի բովանդակության հետ: Մանրամասներին ծանոթացեք “Institute Elevate Learning Experiences,” անվանման ներքո՝ institute.ChurchofJesusChrist.org:

Եթե ուսանողները գրեն նախապատրաստական նյութի բոլոր հարցերի և վարժությունների պատասխանները, դա նույնպես կբավարարի ուսումնական փորձառության պահանջը: Անհրաժեշտություն չկա, որ ուսանողներն իրենց պատասխանները հանձնեն ձեզ: Կիսամյակի վերջում նրանք պարզապես պետք է ձեզ ցույց տան իրենց կատարած աշխատանքը:



Գրի առեք ձեր մտքերը

Մտածեք, թե ձեր ուսանողներն ինչ փորձառություն կունենան այս դասընթացի ժամանակ: Թվարկեք ձեր մտքերից մի քանիսն այն մասին, թե ինչպես եք նախատեսում օգնել նրանց՝ իմաստալից ուսումնառության փորձ ունենալ:

Ցանկանո՞ւմ եք ավելին: (Ոչ պարտադիր)

Լրացուցիչ ո՞ր նյութերը կօգնեն, որ ես դառնամ այն ուսուցիչը, ինչպիսին Տերը ցանկանում է ինձ տեսնել:

... ձեռնարկը կօգնի ձեզ հասկանալ սեմինարիաների և ինստիտուտների նպատակը և դասավանդման փիլիսոփայությունը, ինչպես նաև կօգնի ձեզ կիրառել ուսուցման հմտությունները:

Ավետարանի ուսուցանում և ուսումնասիրություն ձեռնարկը կարևոր աղբյուր է ուսուցման գործընթացը հասկանալու և հաջողությամբ դասավանդելու համար:

Ուսուցանել Փրկիչի ձևով նյութը պարունակում է սկզբունքներ, որոնք օգնում են ավետարանի ուսուցիչներին ուսուցանել Փրկիչի նման:

ԾԱՆՈԹ

Աստծո խոսքի զորությունը



ԴԱՍ 1. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

Բարի գալուստ Մորմոնի Գրքի ուսմունքներ և վարդապետություն: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Մորմոնի Գրքի ճշմարտությունները զորություն ունեն բժշկելու, սփռելու, վերականգնելու, սատար կանգնելու, զորացնելու, մխիթարելու և քաջալերելու մեր հոգիները» («Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքը առանց նրա» *Liahon*, նոյեմբեր 2017, 62): Երբ ուսումնասիրեք և ապրեք այս դասընթացում քննարկվող ճշմարտություններով, դուք կզգաք նախագահ Նելսոնի խոսքերի ճշմարտությունը: Ձեր վկայությունը Մորմոնի Գրքի մասին և ձեր հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ կմեծանա, և դուք ավելի նման կդառնաք Նրանց:

Նշում Այս նախապատրաստական նյութը ձեզ հիմք կապահովի ձեր դասի փորձառության համար: Ուսումնասիրելով նախապատրաստական նյութը յուրաքանչյուր դասից առաջ՝ դուք ավելի խորը, ավելի իմաստալի ուսումնական փորձառություն կունենաք:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը բարելավել իմ կյանքը:

Ավետարանի Վերականգնման սկզբում Մարգարե Զոզեֆ Սմիթը հայտարարել է.



Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների: (Մորմոնի Գրքի Նախաբանը, պարբերություն 6)

Մորմոնի Գրքի հրատարակվելուց ի վեր միլիոնավոր մարդիկ հայտնաբերեցին այս հայտարարության ճշմարտությունը:

Յոթանասունից երեց Պիտեր Մ. Ջոնսոնը կիսվել է մի օրինակով, թե ինչպես է Մորմոնի գիրքն օրհնել իր կյանքը, երբ նա երիտասարդ տղամարդ էր:



Իմ դոկտորական ծրագրի սկզբում ես հուսահատություն զգացի: Այդ տարի ծրագիրն ընդունեց միայն չորս ուսանողների, և մյուսները նույնպես հրաշալի ուսանողներ էին: Նրանք ունեին ավելի բարձր թեստային միավորներ, ավելի մեծ աշխատանքային փորձ կառավարման բարձր պաշտոններում, և նրանք վստահ էին իրենց ունակությունների վրա: Ծրագրում սովորելու առաջին երկու շաբաթից հետո ինձ սկսեցին հետապնդել հուսահատությունն ու կասկածը՝ գրեթե ճնշելով ինձ:

Ես որոշեցի, որ եթե ցանկանում էի ավարտել այս չորսամյա ծրագիրը, ապա պետք է ավարտեի Մորմոնի Գրքի ընթերցումն ամեն կիսամյակ: Կարդալով ամեն օր, իմ կյանքում իրականություն էր դառնում Տիրոջ այն հայտարարությունը, որ Սուրբ Հոգին կսովորեցնեի ինձ ամեն բան և կօգնեի հիշել ամեն բան [տես Հովհաննես 14:26]: Այն վերահաստատեց, թե ով եմ ես՝ որպես Աստծո որդի, հիշեցրեց ինձ չհամեմատվել ուրիշների հետ և տվեց ինձ վստահություն՝ աստվածային իմ դերում հաջողության հասնելու համար: . . . Կարդացեք Մորմոնի Գիրքը ամեն օր, ամեն օր, ամեն օր: («Հակառակորդին հաղթելու գործությունը», *Liahona*, նոյեմբեր 2019, 111)

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ուսուցանել է, որ «Մորմոնի Գիրքը մենք պետք է դարձնենք մեր ուսումնասիրության կենտրոնը, [որովհետև] այն գրվել է մեր օրերի համար» («Մեր կրոնի պորտաքարը», *Ensign*, Jan. 1992, 5): Երբ կարդաք նախագահ Նելսոնի հետևյալ հայտարարությունը, նշեք, թե ինչպես կարող է Մորմոնի Գիրքն օրհնել մեր կյանքը, հատկապես մեր օրերում:



Իմ սիրելի՝ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքն իրոք Աստծո խոսքն է: Այն պատասխաններ է տալիս կյանքի

ամենակարևոր հարցերին: Այն ուսուցանում է Քրիստոսի վարդապետությունը: Այն պարունակում է և հստակեցնում է շատ «պարզ ու արժեքավոր» [տես 1 Նեփի 13:29-33] ճշմարտություններ, որոնք կորսվել էին դարերի ընթացքում և Աստվածաշնչի բազմաթիվ թարգմանությունների ժամանակ:

Հիսուս Քրիստոսի Քավության մասին Մորմոնի Գիրքը տրամադրում է ամենաամբողջական և ամենահեղինակավոր հասկացողությունը, որը երբևէ եղել է: . . . Հիսուս Քրիստոսի ավետարանի ողջ գործությունը պարունակվում է Մորմոնի Գրքում: Ժամանակաշրջան:

Մորմոնի Գիրքը պարզաբանում է Տիրոջ ուսմունքները և բացահայտում է հակառակորդի մարտավարությունը: Մորմոնի Գիրքն ուսուցանում է ճշմարիտ վարդապետություն այն մասին, թե ինչպես հաղթահարել կրոնական կեղծ ավանդույթները՝ ինչպես օրինակ մանուկների մկրտության սխալ սովորույթը: Մորմոնի Գիրքը նպատակ է տալիս կյանքին, հորդորելով մեզ խորհել հավերժական կյանքի ներուժի և «երբեք չվերջացող երջանկության վիճակի» մասին» [Մոսիա 2:41, տես նաև Ավա 28:12]: Մորմոնի Գիրքը մերժում է այն կեղծ համոզմունքները, որ երջանկություն կարելի է գտնել ամբարշտության մեջ, և որ անձնական բարությունը այն ամենն է, ինչ պահանջվում է Աստծո ներկայություն վերադառնալու համար: Այն ընդմիջում վերացնում է կեղծ հասկացողություններն այն մասին, որ հայտնությունն ավարտվել է Աստվածաշնչի հետ, և որ երկինքները կնքված են այսօր: («Մորմոնի Գիրքը. ինչպիսի՞ն կլինեի ձեր կյանքն առանց նրա» *Liahona*, նոյեմբեր 2017, 62)



Խորհեք դասին Նախապատրաստվելու համար

Ի՞նչ օրհնություններ եք ստացել դուք կամ ձեր ծանոթը Մորմոնի Գիրքը ուսումնասիրելու միջոցով: Ըստ ձեզ, Մորմոնի Գրքի

ուսումնասիրությունը ինչպիսի՞ օրհնություններ կբերի ձեր կյանք հաջորդ մի քանի ամիսների ընթացքում:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը ամրապնդել իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին

Մի տեսիլքում Նեփի մարգարեն իմացավ, որ Մորմոնի Գրքի (և մյուս վերջին օրերի սուրբ գրությունների) հիմնական նպատակն է՝ վկայություն բերել, որ Հիսուս Քրիստոսը «Երկնային Հոր Որդին է, և աշխարհի Փրկիչը, և որ բոլոր մարդիկ պետք է զան դեպի նա, այլապես նրանք չեն կարող փրկվել» (1 Նեփի 13.40):



Իր ողջ կյանքի ընթացքում Նեփին ջանասիրաբար աշխատում էր համոզել [իր] զավակներին և նաև [իր] եղբայրներին «հավատալու Քրիստոսին և հաշտվելու Աստծո հետ» (2 Նեփի 25.23): Իր արձանագրության վերջում, նա տվել է մի վերջնական վկայություն դեպի Քրիստոսը բոլոր մարդկանց բերելու Մորմոնի Գրքի զորություն մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելու համար

Կարդացեք 2 Նեփի 33.6–10-ը, փնտրելով, թե Նեփին ինչպես կարող էր հույս ունենալ, որ իր խոսքերը կազդեն ձեր վրա:

Նախագահ Բենսոնը նշել է, որ շատ մարդիկ ամբողջ աշխարհում մերժում են Հիսուս Քրիստոսի աստվածայնությունը: Նա բացատրել է.



Մարդիկ կասկածի տակ են դնում Նրա հրաշափառ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառավոր Հարության իրականությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ արտահայտություններով մեզ ուսուցանում է այդ բոլոր բաների ճշմարտությունը: Այն տալիս է նաև Զավության վարդապետության առավել ամբողջական բացատրությունը: Իսկապես, այս աստվածայնորեն ոգեշնչված գիրքը անկյունաքար է՝ Հիսուս Քրիստոսի մասին աշխարհին վկայություն բերելու համար» (Ensign, Nov. 1986, 5): [Մորմոնի Գրքի] Վարդապետի մասին վկայությունը «մաքուր է, չխեղաթյուրված և լի զորությամբ: (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն [2014], 129–30)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մի քանի րոպե տրամադրեք և խորհեք, թե ինչ սովորեցիք և զգացիք Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրության միջոցով: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունը դարձնեք ավելի Քրիստոսակենտրոն փորձառություն:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ արդյունավետ օգտագործել այս նախապատրաստական նյութը՝ բարելավելու իմ փորձառությունը այս դասի ընթացքում

Երբ Հիսուս Քրիստոսը հայտնվեց նեփիացիներին Լիառատ երկրում, Նա հնարավորություն ընձեռեց յուրաքանչյուր մարդու շոշափել վերքերը Իր ձեռքերի և ոտքերի վրա, իսկ հետո ուսուցանեց բազմությանը Իր վարդապետությունը: Նա հայտարարեց, որ նրանք, ովքեր հավատում էին Իրեն և ապրում Իր ուսմունքներով, կստանային մեծ օրհնություններ այս կյանքում և վեր կբարձրացվեին վերջին օրը (տես 3 Նեփի 11.29–40, 15.1):



Երբ Փրկիչը պատրաստվում էր հեռանալ օրվա վերջին, Նա նայեց բազմությանը և տվեց կարևոր խորհուրդ, թե ինչպես պատրաստվել հաջորդ օրվա Իր ուսուցմանը:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելու համար

Կարդացեք 3 Նեփի 17.2–3, փնտրելով Փրկիչի խոսքերն այն մասին, թե ինչպես պատրաստվել ավետարանի ուսումնասիրությանը:



Գրի առեք ձեր մտքերը

Գուցե կամենաք նշել և գրի առնել մի նպատակ, որի վրա կարող եք աշխատել այս դասընթացի ժամանակ՝ դառնալով Տիրոջ ավետարանի ավելի ջանասեր ուսանող: Ծրագիր կազմեք, որը կներառի, թե երբ կուսումնասիրեք նախապատրաստական նյութը յուրաքանչյուր դասի համար:



Կիսվեք ձեր ուսուցչի հետ

Եթե հնարավոր է, ուղարկեք հետևյալ տեղեկատվությունից մի քանիսը կամ բոլորը ձեր ուսուցչին էլեկտրոնային եղանակով: Կամ կարող եք գրել մի երկտող՝ ավելի ուշ հանձնելու համար:

1. Ի՞նչ եք զգում Մորմոնի Գրքի վերաբերյալ:
2. Ի՞նչ եղանակներով հույս ունեք աճել, երբ անցնեք այս դասընթացը:
3. Ի՞նչ հարցեր կկամենայիք, երբեմն, ուղղել այս դասընթացի ընթացքում:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գիրքը փոխել իմ կյանքը:

«Մորմոնի Գրքի մի պատմություն» տեսաֆիլմը (5:15), մի երիտասարդ եպիսկոպոս Անգլիայում նկարագրում է, թե ինչպես Մորմոնի Գիրքը եկավ իր կյանք և հավերժ փոխեց իր տեսլականը:

«Մորմոնի Գիրքը կյանքեր է փոխում» հոդվածը (*Ensign*, July 2018, 32–35) կիսվում է մի քանի նորադարձների պատմությամբ, ովքեր զարգացրին հավատք Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ՝ կարդալով Մորմոնի Գիրքը:

Ի՞նչ օրհնություններ կարող եմ ես ստանալ, եթե ուսումնասիրեմ և խորհեմ Մորմոնի Գրքի շուրջ ամեն օր:



Իր վերջին գերագույն համաժողովի
ելույթում, «Մորմոնի Գրքի զորությունը»

(*Լիաիոնա*, մայիս 2017, 86–87), Նախագահ Թոմաս
Ս. Մոնսոնը ընդգծեց այն օրհնությունները, որոնք
մենք կարող ենք ստանալ, եթե աղոթքով ուսումնա-
սիրենք և խորհենք Մորմոնի Գրքի շուրջ ամեն օր:

Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքն այդպիսի համոզիչ վկայություն հանդիսանում Հիսուս Քրիստոսի աստվածայնության և Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման մասին:



«Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր
վկա» ելույթում (*Լիաիոնա*, նոյեմբեր 2017,
107–9), Նախագահ Թեդ Ռ. Բալիսթերը՝

Կիրակնօրյա Դպրոցի Նախկին գերագույն
Նախագահը, բացատրել է, թե ինչպես է Մորմոնի
Գիրքը Աստծո «զորավոր վկայություն Հիսուս
Քրիստոսի աստվածայնության, Ջոզեֆ Սմիթի մար-
գարեական կոչման և այս եկեղեցու բացարձակ
ճշմարտության մասին» (109):

ԴԱՍ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

Եպիսկոպոս Ջերալդ Խոսեն՝ Նախագահող Եպիսկոպոսը, վկայել է. «Մորմոնի Գրքի կենտրոնական ուղերձն է՝ վերականգնել ճշմարիտ գիտելիքը մարդկության փրկության և վեհացման գործում Հիսուս Քրիստոսի հիմնական դերի մասին» («Կենդանի Քրիստոսի կենդանի վկան», *Լիսինսա*, մայիս 2020, 39):

Մորմոնի Գիրքը համոզում է մեզ հավատալ Հիսուս Քրիստոսին և ոգեշնչում է մեզ բարիք գործել: Այս դասի արդյունքում ուսանողները կնշեն կարևոր օրհնությունները, որոնք նրանք կարող են ստանալ Մորմոնի Գրքի ուսումնասիրությունից, կբացատրեն, թե ինչ կարող են անել Հիսուս Քրիստոսին ավելի մոտենալու համար և կծրագրեն, թե ինչպես կարող են դառնալ ավելի ջանասեր ուսանողներ:

Նշում. Հնարավորության դեպքում, նախքան դասի առաջին օրը, կապվեք այն ուսանողների հետ, ովքեր գրանցվել են այս դասընթացին և հրավիրեք նրանց նախքան դասի գալը կարգալ առաջին դասի նախապատրաստական նյութը: Հավաստիացեք, որ մյուս բոլոր ուսանողներն ունեն դաս 1-ի նախապատրաստական նյութի մի օրինակ առաջին դասի սկզբում: Օգտագործեք նախապատրաստական նյութը ձեր դասի քննարկման ընթացքում, որպեսզի ուսանողները հենց սկզբից տեսնեն, թե ինչպես դա կօգնի նրանց պատրաստվել դասին և հարստացնել իրենց փորձառությունը դասի ընթացքում:

Ուսուցման առաջարկներ

փոխող փորձառություն: («Մորմոնի Գիրքը. ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց Նրա» *Լիսինսա*, նոյեմբեր 2017, 61, 62)

Մորմոնի Գիրքը կփոխի ձեր կյանքը

Ուսանողներին ողջունելուց և նրանց հետ համառոտ ծանոթանալուց հետո ապահովեք, որ նրանց հասանելի լինի այս դասի նախապատրաստական նյութը: Այնուհետև ցուցադրեք և ընթերցեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը.



Ինչ-որ գորավոր բան է պատահում, երբ Աստծո որևէ զավակ ջանում է ավելին իմանալ Նրա և Նրա Սիրելի Որդու մասին: Ուրիշ ոչ մի տեղ այդ ճշմարտությունները չեն ուսուցանվում այդքան հստակ ու զորեղ, որքան Մորմոնի Գրքում: . . .

Մորմոնի Գրքի ճշմարտությունների մեջ պարբերաբար ընկղմվելը կարող է լինել կյանք

- Ի՞նչ եք սովորում Մորմոնի Գրքի մասին Նախագահ Նելսոնի ուղերձից: (Երբ ուսանողները կհավում են, գուցե կամենաք գրի առնել ճշմարտություններ, որոնք նման են գրատախտակին գրված հետևյալ մտքին. **Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը կօգնի ինձ ճանաչել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Այն կփոխի իմ կյանքը:**)

Կիսվեք ձեր վկայությամբ, թե ինչպես է Մորմոնի Գիրքն ազդել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին ձեր գիտելիքների և Նրանց հետ ձեր փոխհարաբերության վրա:

- Ի՞նչ օրհնություններ եք ստացել դուք կամ ձեր ծանոթը Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու

միջոցով: (Գուցե կամենաք հրավիրել մի ուսանողի ամփոփել կամ կարդալ Երեց Փիթեր Մ. Ջոնսոնի կողմից տրված օրինակը, որը գտնվում է նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

- Մորմոնի Գրքում ի՞նչ հատուկ սուրբ գրային հատվածներ, պատմություններ, իրադարձություններ, վարդապետություն կամ սկզբունքներ են մեծացրել ձեր գիտելիքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Նախագահ Նելսոնի վկայությունը բաժին 1-ի նախապատրաստական նյութում և կիսվել, թե Մորմոնի Գրքի մասին նրա ո՞ր հայտարարություններն ամենամեծ նշանակությունն ունեն իրենց համար հենց հիմա:

Մորմոնի Գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի մասին:

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը մեծամասամբ գրվել է չորս գլխավոր հեղինակների՝ Նեփիի, Հակոբի, Մորմոնի և Մորոնիի կողմից: Ցուցադրեք կամ ներկայացրեք հետևյալ գծապատկերը: Այս հրավիրեք ուսանողներին դասարանով կամ գույքընկերների հետ կարդալ «Փորձառություն» վերնագրի ներքո գտնվող հատվածների երկրորդ սյունակը, փնտրելով այն, ինչը որակավորում է յուրաքանչյուր գրողի լինել Հիսուս Քրիստոսի վկա:

Մորմոնի Գրքի գլխավոր հեղինակները

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի Նյութ:Դաս 1

Հեղինակ	Փորձառություն	Նպատակ
1. Նեփի	2 Նեփի 11.2	2 Նեփի 25.26
2. Հակոբ	2 Նեփի 11.3	Հակոբ 1.7–8

Հեղինակ	Փորձառություն	Նպատակ
3. Մորմոն	Մորմոն 1.15	Մորմոն 3.20-22
4. Մորոնի	Եթեր 12.38-39	Եթեր 12.41

Ուսանողներին բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք նրանց կիսվել այդ հատվածներից իրենց սովորածով:

- Պատկերացրեք, որ խոսում եք ինչ-որ մեկի հետ, ով տեսել է և խոսել է Հիսուս Քրիստոսի հետ: Նկարագրեք, թե ինչպես կլսեիք և կպատասխանեիք այդ մարդու խոսքերին: Իմանալով այն, ինչ գիտեք Նեփիի, Հակոբի և Մորմոնի մասին, ինչպե՞ս կկարդայիք և կուսումնասիրեիք Մորմոնի Գիրքը՝ ի տարբերություն մյուս գրքերի:

Խնդրեք ուսանողներին իրենց ընտրությամբ մտքում կարդալ գծապատկերի երրորդ՝ «Նպատակ» սյունակից մի հատված, և փնտրել մեկ կամ ավելի պատճառներ, որոնք գրողը արձանագրել է իր ուղերձում: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտածով:

Միասին կարդացեք 2 Նեփի 33.10 հատվածը և նշեք, թե Մորմոնի Գրքում մարգարեների խոսքերն ինչպես կարող են օրհնել և փոխել մեր կյանքը:

- Նեփիից ի՞նչ սովորեցիք նրա հիշատակարանի նպատակի մասին: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ ճշմարտություն. **Մորմոնի Գրքի ուղերձն է՝ համոզել մեզ հավատալ Տեր Հիսուս Քրիստոսին և բարին գործել:**)
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնել ձեզ բարին գործել և հավատալ Հիսուս Քրիստոսին:

Ժամանակ տվեք ուսանողներին խորհել, թե նրանք ինչպե՞ս կարող են Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը դարձնել ավելի

Քրիստոսակենտրոն փորձառություն: Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով:

Դասի նախապատրաստական նյութը խթանում է ուսումնառությունը

Բարելավենք մեր ուսուցումը և ուսումնառությունը

Վստահեք ձեր ուսանողների նախապատրաստությանը Ուղիներ գտեք և նախքան դասը խրախուսեք ուսանողներին ուսումնասիրել դասի նախապատրաստական նյութը: Այնուհետև օգտագործեք նրանց նախապատրաստվածությունը դասի ընթացքում: Դրանով կոգեշնչեք ուսանողներին ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել սեփական ուսումնառության համար: Դասընթացի ժամանակ ուսանողներին հնարավորություններ ընձեռեք կիսվել, թե ինչպես է նախապատրաստական նյութը խորացնում Մորմոնի Գրքի իրենց անհատական ուսումնասիրությունը և բարձրացնում իրենց փորձառությունը դասարանում:

Քանի որ սա առաջին դասն է և շատ ուսանողներ գուցե հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրել նախապատրաստական նյութը, կարող եք միասին կարդալ դասի նախապատրաստական նյութի 3 -րդ բաժինը և հարցնել.

- Ի՞նչ հայտնաբերեցիք հոգևոր ուսումնասիրության համար նախապատրաստվելու մասին 3 Նեփի 17.3 հատվածում Փրկիչի հրավերից:
- Ի՞նչ ուղիներով կարող ենք պատրաստել մեր մտքերն ու սրտերը այս դասի ուսումնասիրության համար:

- Նախապատրաստական նյութի՝ ներառյալ Մորմոնի գրքի նշանակված հատվածները դասից առաջ կարդալով, ինչպե՞ս կարող ենք մեծացնել միմյանցից և Մուրբ հոգուց սովորելու մեր կարողությունը: (Հրավիրեք ուսանողներին նկատել, թե ուսումնասիրելու, խորհելու, գրի առնելու, կամ քննարկելու հրավերները դասի նախապատրաստական նյութից ինչպե՞ս կարող են օգնել նրանց ինքնուրույն խորապես սովորել, նաև բարելավել իրենց ուսումնառության փորձառությունը դասարանում:)

Հրավիրեք ուսանողներին վերանայել կամ լրացնել նախապատրաստական նյութի բաժին 3-ում գտնվող «Գրի առեք ձեր մտքերը» վարժությունը:

Կարող եք ուսանողներին հրավիրել լրացնել «Կիսվեք ձեր ուսուցչի հետ» վարժությունը նախապատրաստական նյութի վերջում, եթե նրանք դա դեռ չեն արել:

Դասն ավարտելիս դուք կամ որևէ ուսանող կարող է վկայել, թե սովորելուն միասին նախապատրաստվելով, ինչպես կարող եք օրհնել դասարանի բոլոր անդամների կյանքը, երբ միասին աշխատում եք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ավելի նմանվելու համար:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ հաջորդ դասը կլինի մարգարեական խորհրդին արձագանքելու մասին: Հարցրեք ուսանողներին, թե վերջերս մարգարեների ո՞ր ուղերձներն են անհատապես ազդեցիկ եղել իրենց համար: Կարող եք խնդրել նրանց նաև քննարկել մի քանի մարգարեական ուղերձներ, որոնք կարող են դժվար ընդունելի լինել որոշ մարդկանց համար: Հրավիրեք ուսանողներին մտածել այդ ուղերձների և դրանց հնարավոր ազդեցության մասին, երբ ուսումնասիրեն նախապատրաստական նյութը հաջորդ դասի համար:



ԴԱՍ 2. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

Արձագանքել Տիրոջ մարգարեներին

Դուք երևի տեսել եք մարդկանց, ովքեր տարբեր ձևով են արձագանքում մարգարեների հաղորդած ուղերձներին: Մարդիկ Մորմոնի Գրքի վերաբերյալ նույնպես տարբեր արձագանքներ ունենին: Ի՞նչ կարող ենք սովորել Մորմոնի Գրքի մարդկանցից և մարգարեներից Տիրոջը և Նրա ուղերձներին արձագանքելու մասին: Երբ ուսումնասիրեք, մտածեք, թե ինչպես կարող եք ավելի մեծ հավատքով և հնազանդությամբ արձագանքել Աստծո խոսքին, որը հաղորդվում է Նրա մարգարեների միջոցով:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս են մարգարեների նախագգուշացումները հաղորդում Տիրոջ սերը մեր հանդեպ:

Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է.



Քանի որ Տերը բարի է, Նա կանչում է ծառաներ՝ մարդկանց վտանգի մասին նախագգուշացնելու համար: Նախագգուշացնող այս կանչը ավելի խիստ ու ավելի կարևոր է դառնում այն փաստի պատճառով, որ ամենակարևոր նախագգուշացումները այն վտանգների համար են, որոնք մարդիկ դեռ իրական չեն

համարում: («Մի նախագգուշացնող ձայն», *Ensign*, Nov. 1998, 32)



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 1.4-ը, փնտրելով, թե Տերն ու՞մ ուղարկեց նախագգուշացնելու Երուսաղեմի ժողովրդին, և ինչ ուղերձ սրանք հաղորդեցին:

Իրենից առաջ ապրած շատ մարգարեների նման Լեքին աղոթեց Երուսաղեմի ժողովրդի համար: Ապա այդ ժամանակ Հոգուց հաղթված՝ նա տեսիլքում տեսավ Հիսուս Քրիստոսին: Տերը ցույց տվեց

Լեքիին մի գիրք և խնդրեց նրան, որ կարդար:
(Տես 1 Նեփի 1.5-12:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 1.13-14-ը, փնտրելով, թե ինչ
հասկացավ Լեքին Տիրոջ մասին: Գուցե կամե-
նաք նշել այն, ինչ գտնեք:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ
Քրիստոֆերսոնը ուսուցանել է.



Նախագգուշացնող ձայնը բարձրացնելու
դրդապատճառը սերն է՝ Աստծո սերը և սերը
մերձավորի հանդեպ: Նախագգուշացնել՝
նշանակում է հոգ տանել: («Նախագգուշաց-
նող ձայնը», *Լիաժոնա*, մայիս 2017, 109)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 1.19-20-ը, փնտրելով, թե
Երուսաղեմի ժողովուրդն ինչպես արձագանքեց
Լեքիի ուղերձին:



Մեր օրերում Տերը կանչել է 15 տղամարդու (Առա-
ջին Նախագահության և Տասներկու Առաքյալների
քվորումի անդամներին)՝ որպես մարգարեներ,
տեսանողներ և հայտնողներ: Տասներկու Առա-
քյալների Քվորումից Երեց Ուլիսես Մոարեսն
ուսուցանում է հետևյալը Երկրի վրա մարգարե-
ների ներկայության մասին.



Մարգարեներ ունենալը Իր գավակների
հանդեպ Աստծո սիրո նշանն է: Նրանք
ժողովրդին հայտնի են դարձնում Աստծո և
Հիսուս Քրիստոսի խոստումներն ու ճշմա-
րիտ Եությունը: («Մարգարեները խոսում են
Սուրբ Հոգու զորությամբ», *Լիաժոնա*, մայիս
2018, 99)

Նեփին ուսուցանեց նաև, որ Փրկիչը առանցքային
է այն ամենի համար, ինչ մարգարեներն ուսուցա-
նում են և գրում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 2 Նեփի 25.26-ը, փնտրելով, թե ինչու
են մարգարեներն ուսուցանում և վկայում Հիսուս
Քրիստոսի մասին:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս են մարգարեներն օգնել, որ Փրկիչի հանդեպ ձեր հավատքը մեծանա: Մարգարեական ո՞ր վերջին ուղերձներն են օգնել ձեզ ավելի լավ հասկանալ Աստծո և Հիսուս Քրիստոսի էությունը:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ իմանալ,
որ ապրող մարգարեն
Ներկայացնում է Տիրոջը

Պատկերացրեք, թե ինչ կզգայիք, եթե լինեիք Լեքիի գավակներից մեկը, երբ նա ասաց նրանց, որ Տերը կամենում է, որ իրենք թողնեն իրենց տունը և ճամփորդեն դեպի անապատ: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարձագանքեիք այդ ուղերձին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 2.11–13, 16–17, փնտրելով, թե Լեքիի որդիներն ինչպես արձագանքեցին Նրան և Երուսաղեմից փախչելու Տիրոջ ուղերձին: Գուցե կամենաք նշել այն, ինչ գտնեք:

Նախագահ Այրինգը բացատրել է.



Լեքիի ընտանիքից միայն Նրանք, ովքեր հավատք ունեին և ովքեր ստացան հաստատող հայտնություն, տեսան՝ ինչպես վտանգը, այնպես էլ ուղին դեպի ապահովություն: Նրանց համար, ովքեր առանց հավատքի էին, անապատ գնալը թվաց ոչ միայն հիմարություն, այլ վտանգավոր: («Ապահովություն խորհրդում», *Ensign*, հունիս 2008, 7)



Գրի առեք ձեր մտքերը

Ձեր օրագրում գրեք հետևյալ հարցերի պատասխանները. Ի՞նչ կարող եմ սովորել Լեքիի որդիների օրինակներից, որոնք կարող են առաջնորդել իմ արձագանքները մարգարեական ուսմունքներին: Ե՞րբ եք ստացել վկայություն մարգարեի կոչի կամ մարգարեի ուղերձի վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչ կարող եմ սովորել Նրանից,
թե ինչպես Մորմոնի Գրքի
Ժողովուրդն արձագանքեց
Տիրոջ ուղերձներին,
որոնք հաղորդվեցին
մարգարեների միջոցով



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Տիրոջ կողմից հաղորդված հետևյալ ուղերձից ընտրեք մեկ կամ ավելի շատ օրինակներ: Երբ ուսումնասիրեք, փնտրեք թե ժողովուրդն ինչպես արձագանքեց: Նշեք ձեր սովորած սկզբունքները մարգարեներին արձագանքելու վերաբերյալ: Գրեք ձեր գտած սկզբունքները և բերեք դասարան:

- Թագավոր Բենիամին. Մորմոնի խոսքերը 1.17–18, Մոսիա 2.9, 4.1–3
- Աբինադի. Մոսիա 12.1, 9, 13.1–3, 15.11, 17.11–20
- Ալմա. Մոսիա 17.1–4, 18.1–3, 14–16

- Նեփի, որդին Հելամանի. Հելաման 7.11–13, 17–20, 8.4, 7–9
- Սամուել. Հելաման 13.2–5, 8, 11, 16.1–3, 6–7, 15–18

Երիտասարդ Կանանց զերագույն նախագահության առաջին խորհրդական Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին ուսուցանել է հետևյալը.



Մենք ունենք ընտրություն: Մենք կարող ենք ընտրել անտեսել, կատակել կամ ըմբռնալ քրիստոսի խոսքերի դեմ, որոնք կհնչեն Իր կարգված ծառաների կողմից: Բայց Փրկիչն ուսուցանել է, որ ովքեր այդպես կվարվեն, կկտրվեն Իր ուխտյալ ժողովրդից [տես 3 Նեփի 20.23]: . . .

. . . Թող մենք ընտրենք կանգնել մարգարեների հետ և ապրել նրանց խոսքերի համաձայն, մինչև որ կմիավորվենք հավատքով, կմաքրագործվենք քրիստոսում և կլցվենք Աստծո Որդու գիտելիքով: («Ապրեք մարգարեների խոսքերի համաձայն», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2014, 79)

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ի՞նչ են ուսուցանում տեսանող և առաքյալ կոչումները մարգարեների դերի մասին:

Մարգարեների՝ որպես տեսանողների մասին ավելին սովորելու համար, ուսումնասիրեք Մոսիա 8.16–18:

«Երեց Բեդնարը խոսում է առաքյալների դերի մասին» տեսաֆիլմում (11:06), Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը խոսում է առաքյալի կոչման մասին:

Առաքյալի կոչման մասին ավելին սովորելու համար կարդացեք «Տիրոջ առաքյալի կոչումը», որը մատչելի է ChurchofJesusChrist.org-ում:

Մենք ինչու՞ ունենք ապրող մարգարեների կարիքը:

«Ինչո՞ւ է կարևոր լսել և հետևել ապրող մարգարեներին» տեսանյութ (4:16), Քույր Մակքոնկին բացատրում է ճիշտ ձայներին լսելու կարևորությունը, երբ մենք գծագրում ենք մեր կյանքի ընթացքը:

Ինչպե՞ս են կարողանում ճանաչել և ձեռք բերել իմ սեփական վկայությունը ժամանակակից մարգարեների մասին:

Դիտեք Մորմոնի Գրքի տեսանյութը «Նեփին աղոթում է Լամանի և Լեմուելի համար (1 Նեփի 2.8–24)» (6:02), որպեսզի հասկանաք, թե ինչպես Նեփին ձեռք բերեց հաստատում, որ իր հայրն ասել էր ճշմարտությունը:



«Աստծո Մարգարեն» (*Լիա՛հոնա*, մայիս 2018, 24–27), Տասներկու Առաքյալների Քվորումից Նիլ Լ. Անդերսենը Իր ելույթում ուսուցանում է՝ մեզ դեպի Փրկիչը բերելու մարգարեների դերի և ինքնություն հասկանալու մեր ունակության մասին առ այն, որ նրանք կանչված են Աստծո կողմից:

ԴԱՍ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Արձագանքել Տիրոջ մարգարեններին

Տիրոջ մարգարենները բացահայտում են և ուսուցանում են Աստծո խոսքը: Եթե մենք ականջ դնենք նրանց ուսմունքներին, մենք կարող ենք զգալ Աստծո խոսքի զորությունը մեր կյանքում: Այս դասից հետո ուսանողները պետք է կարողանան բացատրել, թե ինչպես ենք մենք օրհնվում, երբ վստահում ենք Տիրոջ մարգարեններին և այն ուղերձներին, որ նրանք կանչված են հաղորդելու: Ուսանողները նաև կգնահատեն ներկայիս մարգարեական խորհրդին ականջ դնելու իրենց սեփական ջանքերը:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնառությունը

Համապատասխանեցրեք ուսուցման մեթոդները ուսանողների կարիքներին
Երբեմն դասերն ավելի շատ նյութ են պարունակում, քան դուք կկարողանաք համարժեքորեն ընդգրկել դրանք դասարանում: Դասի ծրագրում ամեն ինչ ընդգրկելու փոխարեն, կենտրոնացեք սուրբ գրությունների և նյութի վրա, որն առավելապես կօգնի ձեր ուսանողներին արդյունավետ, արդար գործողություններ կատարել, որպեսզի նրանք ավելի շատ նմանվեն Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Ուղղություն խնդրեք Սուրբ Հոգուց և ուսանողներից, որը կօգնի ձեզ իմանալ, թե ինչ սկզբունքներ, հարցեր և գործողություններ օգտագործեք դասարանում:

Տերն ուղարկում է Լեքիին՝ մարգարեանալու Երուսաղեմի ժողովրդին:

Սկսեք դասը՝ խնդրելով ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ ինչ-որ մեկը բացասաբար արձագանքեց մի ուղերձի կամ գաղափարի, որով իրենք փորձում էին կիսվել:

- Ինչո՞ւ են անդամները, միսիոներները և մարգարեները շարունակում կիսվել ուղերձներով,

որոնք, ըստ նրանց, ժողովրդականություն չեն կարող վայելել:



Ցուցադրեք մի նկար, որը պատկերում է Լեքիին քարոզելիս: Հրավիրեք որևէ ուսանողի նկարագրել այն միջավայրը, որից սկիզբ առավ Մորմոնի Գիրքը՝ ինչպես արձանագրված է 1 Նեփի 1-ում: (Եթե դուք ուսուցանում եք այս դասընթացի առաջին երկու դասերը միասին, ուսանողները, գուցե, հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրել նախապատրաստական նյութը այս դասի համար: Կարող եք հրավիրել մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 1.4-ը:)

- Ի՞նչ ենք սովորում Տիրոջ և Նրա մարգարեների մասին Մորմոնի Գրքի սկզբում: (Ուսանողների հետ կարդացեք կամ վերանայեք Նախագահ Հենրի Բ. Այրինգի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Բացատրեք, որ տեսիլքում Տերը Լեքիին տվեց մի գիրք, որ կարդար: Լեքին մարդկանց ասաց, որ Երուսաղեմը կործանվելու է: (Տես 1 Նեփի 1.12–13:)

Կարդացեք 1 Նեփի 1.14-ը միասին՝ փնտրելով, թե Լեքին ինչպես արձագանքեց տեսիլքին:

- Լեքին ի՞նչ իմացավ Տիրոջ բնավորության մասին: Ձեր կարծիքով, այս գիտելիքը Տիրոջ ողորմածության մասին ինչպես ազդեց Լեքիի՝ Երուսաղեմի ժողովրդին մարգարեանալու վճռականության վրա:

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 1.18–19 հատվածները, փնտրելով, թե ինչ կարող ենք սովորել մարգարեների մասին Լեքիի փորձառությունից: Օգնեք ուսանողներին գտնել այնպիսի ճշմարտություններ, ինչպիսիք են. **Մարգարեները հռչակում են Տիրոջ խոսքերն ու կամքը: Մարգարեներն ուսուցանում են և վկայում են Հիսուս Քրիստոսի և փրկագնման մասին, որը գալիս է Նրա միջոցով:**

- Որո՞նք են մեր կենդանի մարգարեների և առաքյալների վերջին ուղերձներից մի քանիսը, որոնք հռչակում են Տիրոջ խոսքերը և կամքը:

Հանձնարարեք ուսանողներին վերանայել Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի և Երեց Ուլիսես Մոարեսի հետևյալ հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ից և կիսվել, թե ինչը նրանց համար ընդգծվեց:

- Այս հատվածներն ինչպե՞ս են ազդում այն վերաբերմունքի վրա, որը դուք ունեք ներկայիս մարգարեների հանդեպ: Ինչպե՞ս են նրանք ազդում Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր զգացումների վրա:
- Ո՞ր վերջին մարգարեական ուղերձներն են օգնել ձեզ ավելի լավ ճանաչել Աստծո սերն Իր զավակների հանդեպ: (Ուսանողները խորհրդածեցին մի հարցի շուրջ, որը նման էր սրան, երբ նրանք ուսումնասիրում էին նախապատրաստական նյութի բաժին 1-ը:)

Նեփին հաստատում է ստանում, որ մարգարեներն ուսուցանում են Աստծո խոսքը:

Հրավիրեք ուսանողներին գտնել որոշ մարգարեական ուսմունքներ, որոնք մարդիկ, գուցե, դժվարանում են ընդունել մեր օրերում: (*Նշում.* Անհրաժեշտության դեպքում, հիշեցրեք ուսանողներին, որ մեր մտադրությունը Տիրոջ մարգարեներին քննադատելը չէ, այլ քննարկել, թե ինչպես կարող ենք հավատքով արձագանքել մարգարեական ուղերձին, որը մենք կամ մեր ծանոթը, գուցե, դժվարանում է հասկանալ կամ ընդունել:)

- Ինչու՞ է երբեմն դժվար ընդունել այն, ինչ մարգարեն է հայտարարում:

Ցուցադրեք կամ տվեք հետևյալ հարցը. *Ի՞նչ կարող եմ անել, եթե մաքառում եմ մի քանի դեմ, որը մարգարեն է ուսուցանում:* Երբ ուսանողները քննարկեն այս հարցը, ազատ զգացեք օգտագործել հետևյալ նյութն ամբողջությամբ կամ մի մասը՝ օգնելով նրանց մտածել, թե ինչպես կարձագանքեն, եթե իրենք կամ իրենց ծանոթը ունեցել է այդ մտահոգությունը:

Պատկերացրեք, թե ինչ կզգայիք, եթե լինեիք Լեքիի զավակներից մեկը, երբ հայրը հաղորդեց նրանց, որ Տերը կամենում է, որ իրենք թողնեն իրենց տունը և ճամփա ընկնեն դեպի անապատ:

- Լամանը և Լեմուելը ինչպես արձագանքեցին իրենց տնից հեռանալու լուրին: Ինչպե՞ս արձագանքեց Նեփին (Հրավիրեք նրանց վերանայել 1 Նեփի 2.11 -13.16-17: Դուք կարող եք նշել, որ Նեփիի սիրտը գուցե նույնպես կարիք ուներ փափկելու [տես 1 Նեփի 2.16]:)
- Որո՞նք են Մորմոնի Գրքում գրված տարբեր եղանակներից մի քանիսը, որոնցով մարդիկ արձագանքում էին մարգարեներին և նրանց ուղերձներին: (Կարող եք ուսանողներին ժամանակ տալ վերանայել իրենց սովորածը, երբ ուսումնասիրում էին նախապատրաստական նյութի 3-րդ բաժինը:)
- Որո՞նք էին նրանց արձագանքի հետևանքները: Ե՞րբ եք տեսել նմանատիպ արձագանքների այսքան տարբեր օրինակներ մեր օրերում:

- Ի՞նչ կարող ենք սովորել իր հոր ուղերձին Նեփիի տված արձագանքից: Փրկիչն ինչպե՞ս է օգնում մեզ իմանալ, որ Նրա մարգարեների խոսքերը ճշմարիտ են: (Ուսանողները կարող են գտնել նմանատիպ մի սկզբունք. **Եթե մենք խոնարհեցնենք մեզ և դառնանք դեպի Տերը, Նա կարող է օգնել փափկացնել մեր սրտերը մարգարեների խոսքերի ճշմարտացիության վերաբերյալ:**)

Կարդացեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը.



Դուք կարող եք իմանալ ինքներդ ձեզ համար, թե որն է ճիշտ և որը ոչ՝ սովորելով զանազանել չոգու հուշումները: . . .

Իմ սիրելի՜ եղբայրներ և քույրեր, ես աղաչում եմ ձեզ, լրջորեն որոնեք հաստատում չոգուց, որ այն ինչ ես ասացի ձեզ, ճշմարիտ է և Տիրոջից: Նա հայտարարել է, որ մենք կարող ենք փնտրել գիտելիք երկնքից և սպասել ստանալու այն (տես Վարդապետություն և Ուխտեր 42.61): . . .

Հարցրեք Երկնային Չորը՝ արդյո՞ք մենք իսկապես Տիրոջ առաքյալներն ու մարգարեներն ենք: («Աստծո սերն ու օրենքները» [ելույթ՝ տրված Բրիգամ Յանգի

համալսարանում հոգևոր հավաքի ժամանակ, սեպ. 17, 2019], 4–5, speeches.byu.edu)

- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել մարգարեի աստվածային կոչման կամ ուղերձի ճշմարտացիության վերաբերյալ ինքնուրույն սովորելիս:

Երբ ավարտեք քննարկումը «Ի՞նչ կարող եմ անել, եթե մաքառում եմ ինչ-որ բանի հետ, որը մարգարեն է ուսուցանում» հարցի վերաբերյալ, ուսանողներին ժամանակ տվեք՝ խորհելու և արձանագրելու, թե ինչ են իրենք զգացել կամ սովորել, որը կարող է օգնել իրենց կամ մեկ ուրիշի, ով ունի նմանատիպ հարց:

Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել, թե ինչը իրենք ուրիշ կերպ կանեն ապագայում, եթե մաքառեն որևէ բանի հետ, ինչը մարգարեն է ուսուցանում:

Հաջորդ անգամ

Գուցե կամենաք ցույց տալ Լեքիի կենաց ծառի տեսիլքի մի նկար և հրավիրեք ուսանողներին մտածել, երբ նրանք ուսումնասիրեն նախապատրաստական նյութը հաջորդ դասի համար, թե ինչ կարող է ուսուցանել այս տեսիլքը Աստծո խոսքի զորության մասին:



ԴԱՍ 3. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Լեքիի երազը կենաց ծառի մասին

Մտածեք այն մարդկանց, կազմակերպությունների, համացանցի կայքերի կամ սոցիալական լրատվամիջոցների հարթակների մասին, որոնք ազդում են ձեր մտքերի, ընտրությունների և գործողությունների վրա ամեն օր: Քանի՞սն են այս աղբյուրներից քաջալերում ձեզ հետևել Հիսուս Քրիստոսին: Երբ ուսումնասիրում եք, մտածեք, թե Աստծո խոսքն ինչպես կարող է օգնել մեծացնել ձեր կարողությունը՝ քայլելու նեղ և անձուկ արահետով, որը տանում է դեպի Տերը և Նրա Քավության օրհնությունները:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ զգալ Աստծո սերը իմ կյանքում:

Երբ Լեքիի ընտանիքը «մնում էր անապատում» (1 Նեփի 8.2) դեպի խոստացված երկիր իրենց ճամփորդության ընթացքում, Լեքին մի տեսիլք ստացավ Աստծուց: Տեսիլքում սպիտակ պարեգտով մի մարդ Լեքիին առաջնորդեց դեպի «մութ ու մռայլ մի անապատ» (1 Նեփի 8.1–7):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 8. 8–12-ը Լեքիի պատմության մասին, թե նա ինչ տեսավ ողորմածության համար Տիրոջն աղոթելուց հետո:



Նեփին հետագայում ստացավ իր հոր տեսիլքի նման մի տեսիլք: Երբ Նեփին խնդրեց, որ հասկանալ կենաց ծառի իմաստը, նրան ցույց տրվեց «Աստծո Որդու մայրը մարմնական ձևով . . . գրկում մի երեխա» (1 Նեփի 11.18, 20): Այս հրեշտակ հայտնվեց՝ օգնելով Նեփին ավելի լավ հասկանալ ծառի իմաստը:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 11.21-22-ը, փնտրելով, թե Նեփին ինչ եզրակացրեց ծառի իմաստի վերաբերյալ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է. «Աստծո սիրուց ճաշակել նշանակում է ճաշակել Հիսուս Քրիստոսի Քավությունից և այն . . . ուրախություններից, որոնք այն կարող է բերել» («Դասեր Լամանից և Լեմուելից», *Ensign*, նոյ. 1999, 8):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը նաև ասել է.



Ծառի պտղից ճաշակելը խորհրդանշում է, որ մենք ընդունում ենք վերականգնված ավետարանի արարողությունները և ուխտերը՝

մկրտվելով, ստանալով Սուրբ Հոգու պարգևը և մտնելով Տիրոջ տունը, որպեսզի ի վերուստ օժտվենք գործությամբ: Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով և մեր ուխտերը պատվելով՝ մենք ստանում ենք անսահման խոստում՝ ապրել մեր արդարակյաց ընտանիքի հետ ողջ հավերժության ընթացքում:

Զարմանալի չէ, որ հրեշտակը նկարագրում է պտուղը՝ որպես «հոգու համար ամենաբերկրալիս» [1 Նեփի 11.23]: («Պտուղ», *Լիառնա*, նոյեմբեր 2019, 117):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք Լեքի խոսքերի մասին, որոնք նա օգտագործեց (տես 1 Նեփի 8.10–12)՝ նկարագրելով կենաց ծառը և դրա պտուղը: Ի՞նչ են այս խոսքերն ուսուցանում Աստծո սիրո մասին, ինչպես ցույց է տրված Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի պարգևի միջոցով:

ԲԱԺԻՆ 2


Ի՞նչը կարող է ինձ հեռու պահել Հիսուս Քրիստոսից և Նրա Քավության պտուղներից:

Լեքի երագում մարդկանցից ոչ բոլորը ճաշակեցին պտղից կամ մնացին՝ այն ճաշակելուց հետո: Այս պատմությունից մենք սովորում ենք, որ մինչ մի քանիսը հրաժարվեցին ընդունել Փրկչին և այն օրհնությունները, որոնք զալիս էին Նրա քավությունից, մյուսները ճաշակեցին Նրա բարությունից և հետագայում հեռացան Նրանից, որովհետև նրանք շեղվեցին, շփոթվեցին կամ գայթակղվեցին մեղքի մեջ ապրել:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Ուշադիր ուսումնասիրեք 1 Նեփի 12.16–18 հատվածները՝ փնտրելով Լեքիի երազի մանրամասները, որոնք մարդկանց հեռու պահեցին ծառից և այն ամենից, ինչն ըստ Նեփիի, խորհրդանշում էր յուրաքանչյուր մանրամասնը:



Մարդիկ, ովքեր բռնել են երկաթյա ձողից խավարի մշուշներում:



Քննարկեք դասին նախապատրաստվելիս

Ընտանիքի կամ ընկերոջ օգնությամբ գտեք մի քանի ամկա օրինակներ «կեղտոտ ջրի աղբյուրի» (1 Նեփի 12.16), «խավարի մշուշների», (հատված 17), և մեծ ու ընդարձակ շենքում գտնվողների ծաղրի վերաբերյալ: Պատրաստ եղե՞ք կիսվել ձեր օրինակներով դասարանում:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող են դիմադրել
գայթակղությանը և հավատարիմ
մնալ Հիսուս Քրիստոսին:

Իր տեսիլքում Լեքին տեսավ երեք խմբի մարդկանց, ովքեր ձգտում էին քայլել նեղ և անձուկ արահետով, որը տանում է դեպի ծառը և նրա պտուղը: Լեքին տեսավ նաև երկաթե մի ձող, որն արահետով տանում էր դեպի ծառը:



Նեփին ուսուցանում է, որ երկաթյա ձողը ներկայացնում է Աստծո խոսքը և որ նրանք, ովքեր բռնել էին այն «երբեք չեն կորչի, ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց» (1 Նեփի 15.24): Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը նշել է, որ «Աստծո խոսքը

գտնվում է «սուրբ գրություններում, ապրող մարգարեների խոսքերում և անձնական հայտնության մեջ» («Խոսքի զորությունը», *Ensign*, մայիս 1986, 80):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Երբ կարդաք սուրբ գրության հետևյալ հատվածները, փնտրեք տարբերությունները և նրանց միջև, ովքեր ապավինում էին Աստծո խոսքին և նրանց, ովքեր չէին ապավինում:

- Խումբ 1. 1 Նեփի 8.21–23
- Խումբ 2. 1 Նեփի 8.24–28
- Խումբ 3. 1 Նեփի 8.30, 33
- Խումբ 4. 1 Նեփի 8.31–32



Քույր Էնն Մ. Դիբլ՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահության նախկին խորհրդականը, խրախուսանքի այս խոսքն ուղղեց նրանց, ովքեր բաց են թողել երկաթյա ձողը:



Երկաթյա ձողից բռնած մնալը միշտ չէ, որ հեշտ է: Մենք կարող ենք բաց թողնել այն հասակակիցների ճնշման կամ հպարտության պատճառով, մտածելով, թե կարող ենք հետագայում գտնել մեր ետդարձի սեփական ուղին: . . . Նեփին ասում է. «Եվ շատերը կորան նրա տեսողաշտից՝ թափառելով անձանոթ ճանապարհներով (1 Նեփի 8.32): Մեր սեփական կյանքի դժվարին ժամանակներում, գուցե մենք ևս պարզենք, որ

«թափառում ենք անձանոթ ճանապարհներով»: Թույլ տվեք հավաստիացնել ձեզ, որ մեզ համար միշտ հնարավոր է գտնել մեր ետդարձի ուղին: Ապաշխարության միջոցով, որը հնարավոր դարձավ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ, մենք կարող ենք վերագտնել և վերապարտավորվել՝ ամուր բռնած մնալով երկաթյա ձողից, և զգալ մեր Երկնային Հոր սիրառատ առաջնորդությունը մեկ անգամ ևս: Փրկիչը բաց հրավեր է հղել մեզ՝ ապաշխարեք, բռնած պահեք, և բաց մի թողեք: («Բռնված մնալ», *Liahona*, նոյեմբեր 2009, 81)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք, թե Նեփիի նկարագրած ո՞ր խմբերն են լավագույն ձևով արտացոլում ձեր ներկա իրավիճակը: Ի՞նչ ուղիներով է Աստծո խոսքն օգնում ձեզ՝ ավելի մոտենալ Փրկիչին և Նրա քավիչ զորությանը: Կան արդյո՞ք փոփոխություններ, որոնք կամենում եք կատարել, որպեսզի կարողանաք ավելի ամուր բռնած պահել ձողը:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Որտե՞ղ կարող եմ ավելի շատ բան սովորել Լեքիի երազից:

Մորմոնի Գրքի «Լեքին տեսիլքում տեսնում է կենաց ծառը (1 Նեփի 8)» (13:06) տեսաֆիլմը Լեքիի երազի վերապատկերավորումն է:



Իր՝ «Լեքիի երազը և դուք» ելույթում (*New Era*, Jan. 2015, 2–5), Տասներկու Առաքյալների Զվորումից Նախագահ Բոյդ Զ. Փաքերը բացատրել է, թե Լեքիի երազն ինչպես կարող է հատուկ իմաստ ունենալ ձեզ համար:

Դուք գուցե հավանեք նաև ուսումնասիրելով իրականում լրացված «Tree of Life AR» հավելվածը:



Հավելվածը մատչելի է Google և Apple սարքերում: Որոնեք հավելվածների խանութներ «Tree of Life AR»-ի համար:



Մորմոկի Գրքում ուրիշ ի՞նչ է ուսուցանվում կենաց ծառի մասին:

Ալմա 5.34, 62-ում և Ալմա 32.37–42-ում դուք կարող եք ավելի սովորել այն մասին, թե ինչպե՞ս վայելել օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ, երբ ճաշակում ենք կյանքի Ծառի պտղից:

ԴԱՍ 3. ՈՒՍՈՒՑԻ ՆՅՈՒԹ

Լեքիի երազը կենաց ծառի մասին

Կենաց ծառի մասին Լեքիի երազն օգնում է մեզ իմանալ, թե ինչպես զգանք Աստծո սերը և վայելենք Փրկիչի Քավության օրհնությունները: Այս դասում ուսանողները կգտնեն, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել դեպի Քրիստոսը գալու իրենց ջանքերին: Նրանք կունենան հնարավորություն որոշելու, թե ինչ կարող են անել, որ Աստծո խոսքը ավելի մեծ առաջնահերթություն դարձնեն իրենց կյանքում:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնառությունը

Ձգտեք կենտրոնանալ ուսանողի վրա

Նախագահ Դալլին Հ. Օուքսը նկատել է. «Ավետարանի ուսուցիչը, ինչպես Վարդապետը, ում մենք ծառայում ենք, պետք է ամբողջապես կենտրոնանա նրանց վրա, ում ուսուցանում է» («Ավետարանի ուսուցում», *Ensign*, Nov. 1999, 79): Երբ ձգտում եք կենտրոնանալ սովորողի վրա, ինքներդ ձեզ տվեք հետևյալ հարցերը. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի լավ հասկանամ իմ ուսանողների կրթությունը, փորձառությունները, մարտահրավերները և կարիքները: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց հիմնվել այն ամենի վրա, ինչ իրենք արդեն գիտեն: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց, որ լինեն ջերմեռանդ սովորողներ և նպաստեն մյուսների ուսումնառությանը: Ի՞նչ կարող եմ անել, որ հրավիրեմ նրանց ավելի մոտենալ Փրկիչին:

Լեքին տեսնում է կենաց ծառի տեսիլքը



Ցույց տվեք կենաց ծառի մասին Լեքիի տեսիլքի կից պատկերը և խնդրեք ուսանողներին համառոտ կիսվել նրանով, ինչ գիտեն տեսիլքի մասին: Գուցե խնդրեք որևէ ուսանողի համառոտ ամփոփել Լեքիի երազի պատմությունը:

Հրավիրեք ուսանողներին վերանայել նախապատրաստական նյութի հղումները՝ 1 Նեփի 8.10–12 և 1 Նեփի 11.21–22-ը, փնտրելով, թե ինչպես են Լեքին ու Նեփին նկարագրել ծառը և նրա պտուղը:

Հիմնվելով Լեքիի երազի ուսանողների հասկացողության վրա, դուք կարող եք ուղղել հետևյալ հարցերից մի քանիսը:

- Ի՞նչ են խորհրդանշում ծառը և նրա պտուղը: (Տես նախապատրաստական նյութի բաժին 1-ը:)

- Կենաց ծառի մասին Լեքիի երազն օգնում է մեզ իմանալ, թե ինչպես զգանք Աստծո սերը և վայելենք Փրկիչի Քավության օրհնությունները:
- Այս հատվածներն ի՞նչ են ուսուցանում մեզ ուրախություն ձեռք բերելու մասին: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի ճշմարտություն. **Գալով Քրիստոսի մոտ և ճաշակելով Նրա Քավության օրհնություններից, մենք ուրախություն ենք գտնում:**)
- Ինչո՞վ են Փրկիչի Քավության օրհնությունները «բաղձալի բոլոր բաներից ավելի»: (1 Նեփի 8.12, 11.22):

Ցուցադրեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը:



Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ուրախությունը, որ մենք զգում ենք, շատ քիչ է կապված մեր կյանքի հանգամանքների հետ և մեծապես կապված է մեր կյանքի կիզակետի հետ:

Երբ կենտրոնանում ենք . . . Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի [վրա], մենք ուրախություն ենք զգում, անկախ այն բանից՝ մեր կյանքում ինչ-որ բան տեղի ունենում է, թե ոչ: Ուրախությունը գալիս է Նրանից ու Նրա շնորհիվ: . . . Հիսուս Քրիստոսը ուրախություն է: («Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիահոնա*, նոյեմբեր 2016, 82)

- Ի՞նչ կարող եք անել ձեր կյանքում Հիսուս Քրիստոսի վրա ավելի շատ կենտրոնանալու համար, որպեսզի զգաք ավելի մեծ ուրախություն: (Ուսանողներին բավարար ժամանակ տվեք մտածելու և իրենց տպավորությունները գրանցելու համար:)

Լեքին ու Նեփին իմանում են, որ Աստծո խոսքը տանում է դեպի Փրկիչը և Նրա Քավությունը

Դասարանը բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ օժանդակ նյութը:

Խոչընդոտներ կենաց ծառի պտուղը ստանալիս

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի Նյութ: Դաս 3

Խմբով կարդացեք այս պարբերությունը. Լեքիի կենաց ծառի տեսիլքում կեղտոտ ջրերի ակունքը, «խավարի մշուշները» (1 Նեփի 12.17) և «մեծ ու ընդարձակ շենքը» (1 Նեփի 8.26) ավելի դժվար էին դարձնում մարդկանց համար հասնել կամ մնալ ծառի մոտ և ճաշակել Նրա պտղից: Դասի նախապատրաստական նյութում դուք գուցե գտնեք այդ ժամանակակից վտանգների և շեղումների որոշ օրինակներ, որոնք մարդկանց հեռու են պահում Փրկիչից: Ձեր խմբի անդամների հետ քննարկեք ուղիներ, երբ երիտասարդ չափահասները բախվում են հետևյալ իրավիճակների հետ այսօր.

Կեղտը կամ մեղքը (կեղտոտ ջրերի ակունքը. 1 Նեփի 8.13, 12.16, 15.27)

Խաբկանքներն ու գայթակղությունները («խավարի մշուշը». 1 Նեփի 8.23, 12.17)

Աշխարհի հպարտությունն ու ծաղրը («մեծ և ընդարձակ շենքը». 1 Նեփի 8.25–28, 12.18)

Քննարկեք. Ինչպե՞ս կարող են ձեր քննարկած օրինակները խանգարել որևէ երիտասարդ չափահասի գալ դեպի Հիսուս Քրիստոսը և վայելել Նրա Քավության օրհնությունները: Ինչպե՞ս փորձեցիք հաղթահարել այդ խոչընդոտները ձեր սեփական կյանքում:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց խմբերում քննարկածով:

Հրավիրեք ուսանողներին վերանայել այն, ինչ սովորեցին չորս խմբերի մարդկանց մասին, որոնց Լեքին տեսավ իր տեսիլքում (տես նախապատրաստական նյութի բաժին 3): Գրատալստակին գրեք հետևյալ վերնագրերը. *Խումբ 1 (1 Նեփի 8.21–23), Խումբ 2 (1 Նեփի 8.24–28), Խումբ 3 (1 Նեփի 8.30, 33), Խումբ 4 (1 Նեփի 8.31–32):*

- Ի՞նչ դեր խաղաց երկաթյա ձողը կամ Աստծո խոսքը յուրաքանչյուր խմբի համար: (Գրի առեք

ուսանողների պատասխանները համապատասխան վերնագրերի ներքո:)

- Ի՞նչն է կարևոր՝ նրանք «ուշադրություն չդարձրեցին» արտահայտության մեջ 1 Նեփի 8.33-ում: Ինչպիսի՞ տեսք կարող է այն ունենալ մեր օրերում:
- Ի՞նչ հույս կա նրանց համար, ովքեր բաց են թողել երկաթյա ձողը և շեղվել են արահետից: (Գուցե կամենաք խնդրել ուսանողներին վերանայել նախապատրաստական նյութում Քույր Էնն Մ. Դիբի հայտարարությունը:)

Բացատրեք, որ երբ Նեփին աղոթում էր իր հոր երազը հասկանալու համար, նրան ցույց տրվեց մի տեսիլք և [նա] իմացավ երազի իմաստը: Այնուհետև նա ուսուցանեց իր եղբայրներին, թե ինչ էր ներկայացնում երկաթյա ձողը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.23–24 հատվածները: Ապա հարցրեք.

- Ի՞նչ եք սովորել իր եղբայրներին տված Նեփիի բացատրությունից և հրավերից: (Մյուս ճշմարտությունների շարքում ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի սկզբունք.
Աստծո խոսքից ամուր բռնելով՝ մենք հնարավորություն ենք ստանում դիմակայել Հիսուս Քրիստոսից մեզ հեռացնելու սատանայի փորձերին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «[ամուր] բռնել» Աստծո խոսքից (1 Նեփի 8.30):

Ցուցադրեք Յոթանասունից Քեվին Վ. Փիրսոնի հետևյալ հայտարարությունը:



Եթե մենք «անընդհատ ամուր չբռնենք» [1 Նեփի 8.30] Աստծո խոսքից և չապրենք դրա համաձայն, մենք կդառնանք ավելի շուտ հոգևորապես կուրացած, քան հոգևոր մտածողությամբ: Քննեք Մորմոնի գիրքը և կենդանի մարգարեների խոսքերը

յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր օր: Դա հոգևոր կենդանության և խաբեությունից խուսափելու բանալին է: Առանց դրա մենք հոգևորապես կորչում ենք: («Մնալ կենաց ծառի մոտ», *Liahona*, մայիս 2015, 115)

Խնդրեք ուսանողներին կիսվել, թե Աստծո խոսքից ամուր բռնվելով, ինչպես են հոգևորապես գոյատևել կամ խուսափել խաբեությունից: Հրավիրեք նրանց կիսվել նաև, թե ինչպես է Աստծո խոսքն օգնել իրենց ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին և Նրա քավիչ գործողությանը:

Որպեսզի օգնեք ուսանողներին գործել՝ հիմնվելով նրա վրա, ինչ դուք սովորում և զգում եք, կարող եք ցուցադրել հետևյալ հարցերը և հրավիրել ուսանողներին խորհել և գրի առնել իրենց պատասխանները:

- Ի՞նչ կարող եմ անել՝ Աստծո խոսքից ավելի ամուր բռնվելու համար:
- Ո՞վ կարող է օրհնվել՝ լսելով իմ վկայությունը Աստծո խոսքից ամուր բռնելու կարևորության մասին:

Կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով:

Հաջորդ անգամ

Երկաթյա ձողի վերաբերյալ քննարկման լույսի ներքո հրավիրեք ուսանողներին մտածել այն մասին, թե որքան ջանասեր են եղել իրենք վերջերս սուրբ գրությունների իրենց ուսումնասիրության մեջ: Երբ նրանք ուսումնասիրեն նախապատրաստական նյութը հաջորդ դասի համար, խրախուսեք նրանց մտածել, թե սուրբ գրությունների ուսումնասիրությունը առաջնահերթություն դարձնելով, ինչպե՞ս կարող են ավելի մոտենալ Փրկիչին:



ԴԱՍ 4. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Քննեք սուրբ գրությունները

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Մի ենթարկվեք սատանայի ստիճ, թե դուք ժամանակ չունեք ուսումնասիրելու սուրբ գրությունները: . . . Աստծո խոսքով սնվելն ավելի կարևոր է, քան քունը, դպրոցը, աշխատանքը, հեռուստատեսային շոուները, տեսախաղերը կամ սոցիալական լրատվամիջոցները» («Հավատքի գործադրումը դարձրեք առաջնահերթություն», *Հիստորիա*, նոյեմբեր 2014, 93): Երբ ուսումնասիրեք այս նյութը, դիտարկեք, թե ինչու է Երեց Սքոթը այդպիսի մեծ առաջնահերթություն տալիս սուրբ գրությունների ուսումնասիրությանը: Գնահատեք, թե սուրբ գրություններն այժմ ինչ դեր են խաղում ձեր կյանքում:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ առաջնահերթություն ունեն սուրբ գրություններն իմ կյանքում:

Երբ Լեքին և իր ընտանիքը օրեր շարունակ ճամփորդում էին անապատում, Տերը պատվիրեց Լեքին հետ ուղարկել իր որդիներին Երուսաղեմ՝ ձեռք բերելու արույրե թիթեղները Լաբանից: Արույրե թիթեղները հնադարյան սուրբ գրությունների գիրք էր, որը համեմատելի է մեր Հին Կտակարանի հետ, և պարունակում էր հրեաների հիշատակարանը և մարգարեների

շատ գրվածքներ (տես 1 Նեփի 5.11–16, Սուրբ Գրքերի ուղեցույց, «Արույրե թիթեղները», scriptures.ChurchofJesusChrist.org):

Տերը գիտեր, որ այդ սուրբ գրությունները կարևոր էին Լեքի ընտանիքի և նրանց ժառանգների համար: Տերը նույնիսկ հրամայեց Նեփիին սպանել Լաբանին՝ հիշատակարանը ձեռք բերելու համար, ասելով. «Ավելի լավ է մեկ մարդ կորչի, քան մի ազգ անհավատության մեջ ընկնի և կորչի» (1 Նեփի 4.13):

Երբ Լեքին ստացավ արույրե թիթեղները և սկսեց «ուսումնասիրել դրանք» (1 Նեփի 5.10), «նա լցվեց Հոգով և սկսեց մարգարեանալ» (հատված 17):



Գրի առեք ձեր մտքերը

Գրի առեք մի քանի պատճառներ, որոնք, ըստ ձեզ, սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունը պետք է առաջնահերթություն դարձնեն ձեր կյանքում:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 5.19, 21–22-ը, փնտրելով, թե Լեքիի ընտանիքի համար ինչու էր կարևոր տանել սուրբ գրություններն իրենց հետ, մինչ նրանք ճամփորդում էին դեպի խոստումի երկիր:

Մեկնաբանելով սուրբ գրությունների կարևորությունն իր կյանքում՝ նախագահ Զուլի Բ. Բեքը, ով ծառայում էր որպես Միոփոլ միության գերագույն նախագահ, ուսուցանել է.



Ուրախություն եմ գգում սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության սովորությունից, որը ես սկսել եմ շատ տարիներ առաջ: Որոշ օրեր ես շատ ժամանակ ունեմ սուրբ գրությունների շուրջ խորհրդածելու համար: Մյուս օրերին ես մտածում եմ մի քանի հատվածների մասին: Ինչպես ուտելն ու շնչելն են ամրացնում իմ ֆիզիկական մարմինը, այնպես էլ սուրբ գրություններն են սնուցում և կյանք տալիս իմ հոգուն: Ես այժմ կարող եմ արձագանքել Նեփիին և ասել. «Հոգիս հրճվում է սուրբ գրություններով և սիրտս խորհում է դրանք: . . . Ահա, հոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և սիրտս շարունակ խորհում է այն բաների շուրջ, որոնք տեսել եմ ու լսել» (2 Նեփի 4.15–16): («Հոգիս հրճվում է սուրբ գրություններով», *Liahona* մայիս 2004, 109)

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող են սուրբ գրություններն օգնել ինձ ավելի լավ ճանաչել Հիսուս Քրիստոսին:

Իր ծառայության ընթացքում Նեփին ստեղծեց երկու հիշտակարաններ՝ մեծ թիթեղները և փոքր թիթեղները: Նեփիի մեծ թիթեղները սկզբում պարունակում էին Նեփիի ժողովրդի աշխարհիկ պատմությունը: Նեփիի փոքր թիթեղները ստեղծվեցին «հատուկ նպատակով»՝ պահպանելու մի հիշատակարան Նեփիի ժողովրդի ծառայության մասին (1 Նեփի 9.3): Նեփին նշել է, որ այս հիշատակարանի «[իր] ողջ նպատակն է» համոզել բոլոր մարդկանց գալ դեպի Քրիստոսը և փրկվել (1 Նեփի 6.4):

Երբ Նեփին պատվիրան տվեց իր եղբայր Հակոբին փոքր թիթեղների վերաբերյալ, նա հանձնարարեց Հակոբին գրել միայն այն, ինչն «ամենաարժեքավորն է» (Հակոբ 1.1–2):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Հակոբ 1.4, 6–8 և Հակոբ 4.3–4-ը, փնտրելով այն, ինչ Հակոբն էր համարում «ամենաարժեքավորը» (Հակոբ 1.2):

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ Նեփին, Հակոբը և Մորմոնի գրքի մյուս մարգարեները ավելացրել են իրենց վկայությունը մյուս սուրբ գրությունների մարգարեների վկայություններին: Նա բացատրել է.



Մարգարեական հռչակագրերի անվերջ թվացող հաջորդականությամբ՝ «բոլոր սուրբ մարգարեների» վկայություններով հանդերձ՝ [Հակոբ 4: 4] «նրա գալուստից շատ հազարավոր տարիներ առաջ» [Հելաման 8:18], Մորմոնի Գիրքը հանդիսավոր հայտարարում է, որ Հիսուսը Քրիստոսն է, մեր Փրկիչը և Քավիչը: ("A Testimony of the Book of Mormon," *Ensign*, Nov. 1999, 69)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ եք իմացել և զգացել Հիսուս Քրիստոսի մասին, երբ կարդացել եք սուրբ գրությունները, հատկապես՝ Մորմոնի գիրքը: Ի՞նչ որոշակի հատվածներ են ավելի մոտեցրել ձեզ Նրան:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող են սուրբ գրություններն առաջնորդել ինձ խնդիրներ լուծելիս և որոշումներ կայացնելիս:

Այն բանից հետո, երբ Լեքին կատարեց իրեն պատվիրված բոլոր հանձնարարությունները, Տերը նրան մի գործիք տվեց, որը կոչվում էր Լիահոնա (տես Ալմա 37:38): Լիահոնան գործում էր կողմնացույցի նման և ծառայում էր որպես ուղեցույց, երբ Լեքիի ընտանիքը ճամփորդում էր անապատով: Այն նաև ցույց էր տալիս անձնական ուղերձներ Տիրոջ կողմից: Նեփին սովորեց, որ Լիահոնան աշխատում էր «համաձայն այն հավատքի և ջանասիրության, որ իրենք հատկացնում էին» Տիրոջ ուղերձներին (1 Նեփի 16:28–29):



Մոտ 500 տարի անց, երբ Ալման իր որդուն՝ Հելամանին վստահեց արույրե թիթեղների և մյուս սուրբ գրությունների պահպանումը, նա գիտելիքներ հաղորդեց Լիահոնայի օգտագործման վերաբերյալ:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք և խորհեք Ալմա 37:40–41, 43–45-ում տրված Ալմայի գիտելիքների մասին, թե սուրբ գրություններն ինչպես կարելի է նմանեցնել կամ համեմատել Լիահոնայի հետ:

Յոթանասունի անդամ ծառայելու ընթացքում
Երեց Վ. Ռոլֆ Քլերն ուսուցանել է.



Քրիստոսի խոսքերը կարող են լինել անձնական Լիահոնա մեզանից յուրաքանչյուրի համար՝ ցույց տալով մեզ ճանապարհը: Եկեք ալարկոտ չլինենք ճանապարհի հեշտության պատճառով: Եկեք հավատքով ընդունենք Քրիստոսի խոսքերը մեր մտքերում և մեր սրտերում, ինչպես դրանք գրված են սուրբ գրքերում և ինչպես դրանք գրված են սուրբ ապրող մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից: Եկեք հավատքով և ջանասիրությամբ սնվենք Քրիստոսի խոսքերով, քանզի Քրիստոսի խոսքերը կլինեն մեր հոգևոր Լիահոնան, որոնք կասեն մեզ բոլոր

բաները որոնք մենք պետք է անենք: («Քրիստոսի խոսքերը՝ մեր հոգևոր Լիահոնան», *Լիահոնա*, մայիս 2004, 37)



Քննարկեք դասին նախապատրաստվելիս

Հարցրեք որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի, թե ինչպես են սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը իրենց կյանքում եղել առաջնորդության աղբյուր՝ անձնական Լիահոնայի նման: Ձեր գրույցի ընթացքում գուցե կամենաք կիսվել սրա հետ կապված ձեր անձնական փորձառությամբ:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ի՞նչ օրհնություններ են հասանելի Աստծո խոսքի միջոցով:

«Խաղաղության սկզբունքները. Աստծո խոսքը՝ #Խաղաղության Իշխանը» (2:02), մի երիտասարդ

բուժքույր հիշում է, թե ինչպես են սուրբ գրություններն օգնել իրեն իր կյանքի անհուսալի պահերին:



Իր «Սուրբ գրությունների օրհնությունը» ելույթում (*Լիահոնա*, մայիս. 2010, 32–35), Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը քննարկել է կարևոր ուղիներ, որոնցով սուրբ գրությունները կարող են փոխել մեր կյանքը:

«Ինչո՞ւ է կարևոր, որ ամեն օր ուսումնասիրենք սուրբ գրությունները և խորհենք դրանց շուրջ»:

Երեց Քրիստոֆերսոնը տեսաֆիլմում խոսում է ամենօրյա հոգևոր սնունդի մեր կարիքի մասին «Daily Bread: Pattern» (2:51):

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի բարելավեմ սուրբ գրությունների իմ անձնական ուսումնասիրությունը:

Սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունը բարելավելու գաղափարների համար վերանայեք «Գաղափարներ սուրբ գրությունների ձեր անձնական ուսումնասիրությունը բարելավելու համար» բաժինը *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* ձեռնարկի ներածական նյութում:

ԴԱՍ 4. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Քննեք սուրբ գրությունները

Մորմոն մարգարեն ասել է. «Նա, ով ունի սուրբ գրքերը, թող քննի դրանք» (3 Նեփի 10.14): Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա գտնել մի քանի օրհնություններ, որոնք կարող են ստանալ նրանք, ովքեր ջանասիրաբար քննում են սուրբ գրությունները: Ուսանողները նաև կորոշեն, թե ինչ կարող են անել, որպեսզի սուրբ գրությունների ուսումնասիրությունը դարձնեն իրենց կյանքի առավել իմաստավոր մաս:

Ուսուցման առաջարկներ

Լեքին և Նրա ընտանիքը սովորում են, որ սուրբ գրությունները մեծ արժեք ունեն

Կիսվեք հետևյալ սցենարով.

Թաշան երիտասարդ չափահաս է և խիստ զբաղված է: Նա հաճախում է դպրոց, աշխատում է կես դրույքով, ծառայում է Եկեղեցում, ակտիվ է սոցիալական ցանցերում և հանգստյան օրերին ժամանակն անցկացնում է իր ընկերների հետ: Նա ցանկանում է սուրբ գրությունների անձնական ուսումնասիրություն կատարել, բայց դժվարանում է ժամանակ ու եռանդ գտնել:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք Թաշային:

Հրավիրեք ուսանողներին պատմել պատմությունն այն մասին, թե ինչի միջով անցան Լեքիի որդիները՝ արույրե թիթեղները ձեռք բերելու համար: Ապա միասին կարդացեք 1 Նեփի 5.20–21-ը:

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունները, և դրան հաջորդող քննարկման ժամանակ ուսանողներին խրախուսեք գրի առնել դրա լրացման տարբեր եղանակներ. *Սուրբ գրությունները մեծ արժեք ունեն, որովհետև . . .*

- Լեքին և Նեփին ինչպե՞ս կավարտեին գրատախտակին գրված այդ միտքը:

- Ելնելով սուրբ գրությունների հետ ունեցած ձեր սեփական փորձառությունից, ինչպե՞ս կլրացնեիք այդ միտքը:

Ցուցադրեք հետևյալ հատվածները և բացատրեք, որ ամբողջ Մորմոնի Գրքում մարգարեները հայտարարել են սուրբ գրությունների արժեքի մասին. *1 Նեփի 15,23–24, Հակոբ 2.8, Հակոբ 4.4, Արմա 31.5, Արմա 37.8–10, Հելաման 3.29–30:*

Դասարանը բաժանեք փոքր խմբերի: Հրահանգեք յուրաքանչյուր խմբին այնպես բաժանել հատվածներն իրենց միջև, որ յուրաքանչյուր անդամ կարդա սուրբ գրությունների մեկ կամ երկու հատված: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ իրենց հանձնարարված սուրբ գրությունները և բացահայտել լրացուցիչ ուղիներ այն մասին, որ սուրբ գրությունները մեծ արժեք ունեն:

Խրախուսեք խմբի անդամներին կիսվել իրենց սովորածով, նաև ինչպես կավարտեին գրատախտակին գրված միտքը: Որպես իրենց քննարկման մաս, ուսանողները կարող են կիսվել, թե իրենք երբ են զգացել սուրբ գրությունների օգտակարությունը, ինչպես նկարագրված է իրենց քննարկած հատվածներում:

Վարժությունից հետո դասարանին ուղղեք հետևյալ հարցը.

- Սուրբ գրությունների մեծ արժեք ունեն. դրա պատճառներից ո՞րը կնշեիք որպես կարևորագույն:
- Ի՞նչ եք իմացել և զգացել Հիսուս Քրիստոսի մասին, երբ կարդացել եք սուրբ գրությունները,

հատկապես՝ Մորմոնի գիրքը: Ի՞նչ որոշակի հատվածներ են ձեզ ավելի մոտեցրել Նրան:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնառությունը

Ուսանողներին հնարավորություն տվեք գրի առնելու տպավորությունները: Երբ ուսանողները վարժվեն գրի առնել տպավորությունները, որոնք նրանք ստացել են Սուրբ Հոգուց, նրանք կարող են ավելի համահունչ դառնալ հոգևոր հուշումներին: Ուսանողներին հրավիրեք գրի առնել այդպիսի տպավորությունները այնպիսի մի տեղում, որտեղ կարող են վերանայել, ինչպես նաև ծրագրեր կազմել ու նպատակներ դնել: Դուք կարող եք խրախուսել նրանց օգտագործել Gospel Living հավելվածը՝ այդ անելու համար: Խրախուսեք ուսանողներին գրել և գործել իրենց տպավորությունների համաձայն:

Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին ժամանակ տրամադրեք խորհելու կամ գրի առնելու տպավորությունները, որոնք նրանք գուցե ստացել են դասի ժամանակ:

- Հիմնվելով այն բանի վրա, ինչ դուք սովորել եք սուրբ գրությունների ուսումնասիրության մասին, ինչ հատուկ օրհնություններ կկամենայիք ավելի շատ ստանալ:
- Մտածեք, թե որքան հաճախ և ինչպիսի արդյունավետությամբ եք ուսումնասիրում սուրբ գրությունները: Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի բարելավեմ սուրբ գրությունների իմ անձնական ուսումնասիրությունը: Ի՞նչ կարող եք անել ձեր տաճարային այցելություններն ավելի իմաստավոր դարձնելու համար:

Ալման Քրիստոսի խոսքերը համեմատում է Լիահոնայի հետ:

Ցուցադրեք կից պատկերը և խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ մաքառումների դիմակայեց Լեքիի ընտանիքը, մինչ ճամփորդում էր անապատով: Ինչո՞վ է մեր կյանքը նման անապատով ճամփորդելուն:



Ցուցադրեք Լիահոնայի կից պատկերը և հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես է այն գործում: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խնդրեք անդրադառնալ նախապատրաստական նյութի բաժին 3-ին:)



- Ի՞նչ հոգևոր դասեր կարող էր սովորել Լեքիի ընտանիքը՝ օգտագործելով Լիահոնան:

Ցուցադրեք կից պատկերը, որը նկարագրում է մի երիտասարդի, ով հեռախոսից սուրբ գրություններ է կարդում, և հրավիրեք ուսանողներին կարդալ կամ վերանայել Ալմա 37.43–46-ը:



- Մենք որտե՞ղ կարող ենք գտնել Քրիստոսի խոսքերը: Ինչպե՞ս կարող են Քրիստոսի խոսքերը ծառայել որպես ձեր անձնական Լիաժողով:

Ցուցադրեք հետևյալ սկզբունքները. Երբ մենք ուշադրություն դարձնենք Քրիստոսի խոսքերին, նրանք կառաջնորդեն մեզ այս կյանքի մարտահրավերների միջով դեպի հավերժական ուրախություն:

- Ե՞րբ են Քրիստոսի խոսքերը տվել ձեզ առաջնորդություն և ուղղորդում: (Գուցե ուսանողներին հրավիրեք կիսվել նաև նրանով, ինչ իրենք խոսել են ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ այն քննարկման ժամանակ, որին նրանք հրավիրվել էին մասնակցել՝ այս դասին նախապատրաստվելու համար:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես են Քրիստոսի խոսքերը հաճախ առաջնորդում մեզ, ցուցադրեք հետևյալ սցենարը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարգալ այն:

Լուիսին ասել էին, որ սուրբ գրությունները պատասխան ունեն ամեն հարցի համար: Նա հուսալքվել է, որովհետև չի կարողանում սուրբ գրություններում որոշակի պատասխան գտնել անձնական կարևոր հարցին: Որքան շատ է քննում, այնքան ավելի է հիասթափվում:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք Լուիսին:

Ցուցադրեք և բարձրաձայն կարդացեք Առաջին Նախագահությունից նախագահ Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



Մենք ասում ենք, որ սուրբ գրությունները պարունակում են ցանկացած հարցի պատասխանը, քանի որ սուրբ գրությունները կարող են *առաջնորդել* մեզ դեպի ցանկացած պատասխան: . . .

. . . Չնայած սուրբ գրությունները [գուցե] չպարունակեն պատասխաններ մեր հատուկ անձնական հարցին, աղոթքով լի սուրբ գրությունների ուսումնասիրությունը կօգնի մեզ ձեռք բերել այդպիսի պատասխաններ: Սա այն պատճառով է, որ սուրբ գրությունների ուսումնասիրությունը մեզ զգայուն է դարձնում Սուրբ Հոգու ոգեշնչման համար: . . .

. . . Սուրբ գրությունները կօգնեն մեզ վճռել մեր բոլոր անձնական հարցերը, քանի որ կարդալով դրանք, մենք հրավիրում ենք և արժանանում ենք Սուրբ հոգու ոգեշնչմանը, որը կառաջնորդի մեզ դեպի ամենայն ճշմարտություն: (“Studying the Scriptures” [Brigham Young University–Hawaii devotional, Mar. 14, 1986], 18–21, Church History Library, Salt Lake City)

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե Աստված ինչպե՞ս է վերաբերվում Իր զավակներին: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի ճշմարտություն, **Սուրբ գրությունների ուսումնասիրությունը հրավիրում է անձնական հայտնություն:**)
- Երբ են սուրբ գրությունները կամ ժամանակակից մարգարեները բացել անձնական հայտնության դուռը մեր կյանքում:

Բերեք վկայություն սուրբ գրությունների կանոնավոր անհատական ուսումնասիրության մասին և խրախուսեք ուսանողներին գործել Սուրբ Հոգու հուշումների համաձայն, որոնք նրանք ստացել են իրենց ուսումնասիրության և դասի ընթացքում:

Հաջորդ անգամ

Նշեք, որ հաջորդ դասի ընթացքում մենք կսկսենք մի նոր թեմա, որը կոչվում է «Փրկագնման մեծ ծրագիրը»: Երբ ուսանողները ուսումնասիրեն 5-րդ դասի նախապատրաստական նյութը, հրավիրեք նրանց խորհել, թե ինչ գիտեն Ադամի ու Եվայի անկման և այն ընտրությունների մասին, որ այն բացեց մեզանից յուրաքանչյուրի համար:

ՄԱՍ 2

Փրկագնման մեծ ծրագիրը



ՀԱՍ 5. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ադամի ու Եվայի անկումը և ազատ կամքի պարզևր

Այս բաժնում դուք հնարավորություն կունենաք դիտարկել, թե ինչպես է Երկնային Հոր փրկագնման ծրագիրը հնարավոր դարձնում, որ Նրա զավակները փրկվեն մեղքից և մահից: Այս դասը ուսումնասիրելիս քննարկեք, թե Ադամի և Եվայի Անկումը, ազատ կամքի պարզևր և Հիսուս Քրիստոսի Քավությունը որքանով են էական ձեր փրկագնման Երկնային հոր ծրագրի համար և որքանով են կարևոր, որ օգնեն ձեզ ավելի նմանվել Նրան: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ուսուցանել է, որ «աշխարհում ոչ մի գիրք չի բացատրում այս [Անկման և Քրիստոսի հանդեպ մեր կարիքի] կենսական վարդապետությունը, ինչպես նաև Մորմոնի Գիրքը» (“The Book of Mormon and the Doctrine and Covenants” *Ensign*, May 1987, 85):

ԲԱԺԻՆ 1

Ինչո՞ւ է Ադամի և Եվայի անկումը կարևոր իմ առաջընթացի համար:

«Անկում» արտահայտությունը վերաբերում է մահկանացու կյանքի պայմաններին և հետևանքներին, որոնց ենթարկվեցին Ադամն ու Եվան և նրանց սերունդները, քանի որ Ադամն ու Եվան ճաշակեցին Եդեմի պարտեզի արգելված պտուղը: Մահից առաջ Լեքին իր որդուն՝ Հակոբին

սովորեցրեց Անկման մասին և այն մասին, թե ինչպես է այն ազդել մարդկության վրա: (Տես 2 Նեփի 2:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 2 Նեփի 2:19–25-ը և նշեք այն ճշմարտությունները, որոնք մեզ սովորեցնում են, թե ինչո՞ւ է Ադամի և Եվայի անկումը Երկնային

Հոր ծրագրի անհրաժեշտ մասը: Կարող եք նաև դիտել Մորմոնի Գրքի մասին տեսանյութը՝ «Lehi Teaches How We Might Have Joy (2 Նեփի 2.16–28)» (3:08):



2 Նեփի 2.22-ում նկատեք, որ եթե Ադամն ու Եվան չընտրեին հանցանք գործելը, նրանք հավերժ «մնացած կլինեին նույն վիճակում, որում եղել էին արարվելուց հետո»: Նրանք չէին առաջադիմի և չէին ունենա հիվանդություն կամ մահ: Մա տապալելու էր Երկնային Հոր ծրագիրը Իր զավակների համար: Յոթանասունի անդամ ծառայելիս Երեց Բրյուս Ս. Հեյֆենն ուսուցանել է.



Անկումը աղետ չէր: Դա սխալ կամ դժբախտ պատահար չէր: Այն փրկության ծրագրի կանխամտածված մասն էր: Մենք Աստծո հոգևոր «ազգիցն ենք» [տես Գործք 17.28], Ադամի մեղքից «անմեղ»՝ ուղարկված երկիր [տես Վարդապետություն և Ուխտեր 93.38]: Այնուամենայնիվ, մեր Հոր ծրագիրը մեզ գայթակղության և թշվառության է մատնում այս ընկած աշխարհում՝ որպես իսկական ուրախություն ընկալելու գինը: Առանց դառնություն ճաշակելու մենք իրականում չենք կարող իմանալ քաղցրությունը [տես Վարդապետություն և Ուխտեր 29.39]: Մեր Հորը նմանվելու համար մեզ անհրաժեշտ է մահկանացության կարգապահությունն ու զոռումը՝ որպես «մեր զարգացման հաջորդ քայլ»: (“The Atonement: All for All,” *Liahona*, May 2004, 97)

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդը բացատրել է Անկման հետևանքներից մի քանիսը.



Ֆիզիկական մահը բերեց հոգու անջատումը մարմնից, իսկ հոգևոր մահը՝ ինչպես հոգու, այնպես էլ մարմնի հեռացումը Աստծուց: Անկման արդյունքում մահացության մեջ ծնված բոլոր մարդիկ կտառապեին այս երկու տեսակի մահերից: Բայց մենք պետք է հիշենք, որ Անկումը Երկնային Հոր աստվածային ծրագրի կարևոր մասն էր: Առանց դրա Ադամն ու Եվան չէին ունենա մահկանացու զավակներ, չէր լինի մարդկային ընտանիք, որը կտեսներ ընդդիմություն և աճ, բարոյական ազատ կամք և հարություն, փրկություն և հավերժական կյանքի ուրախությունը» [տես 2 Նեփի 2.22–27, Մովսես 5.11]: (Զեֆրի Ռ. Հոլլանդ, *Քրիստոսը և Նոր ուխտը. Մորմոնի գրքի մեխանիկական ուղերձը* (1997), 207)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք, թե Անկման հետևանքները ինչպես են Իր զավակների համար Աստծո ծրագրի կարևոր մասը հանդիսանում: Ինչպե՞ս է Անկումը ձեզ հնարավորություն ընձեռում առաջադիմել հոգևորապես և ուրախություն զգալ:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող է ազատ կամքի պատշաճ օգտագործումը օրհնել իմ կյանքը:

Անկման վերաբերյալ իր ուսմունքների հետ կապված՝ Լեքին քննարկեց, թե ընտրության ազատությունը որքանով է կարևոր քաղության ծրագրում մեր առաջընթացի համար: Նա պարզեց, որ հետևյալ պայմաններն անհրաժեշտ են ազատ կամքը հնարավոր դարձնելու համար: (Ուսումնասիրեք ուղեկցող սուրբ գրությունների հատվածները և նշեք այն բառերն ու արտահայտությունները, որոնք ուսուցանում են կամքի ազատության այս պայմանների մասին):

- Չարի և բարոյ մասին բավարար գիտելիքներ (տես 2 Նեփի 2.5)
- Մարդկությանը տրված օրենքներ (տես 2 Նեփի 2.5, 10)
- Հակադրվող զայթակողություններն ու ընտրությունները (տես 2 Նեփի 2.11–16)
- Ընտրության գործություն և ազատություն (տես 2 Նեփի 2.16, 26)

Մտածեք, թե դա ինչպես կազդեր ընտրելու և առաջընթացի ձեր ունակության վրա, եթե այդ պայմաններից որևէ մեկը բացակայեր Երկնային Հոր ծրագրում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնը խոսեց այս կյանքում կատարվող տարբեր տեսակի ընտրությունների մասին.



Օրվա մեջ հիմնականում ամեն ժամի մենք տարբեր տեսակի ընտրություններ ենք կատարում: Դրանց մի մասը սովորական առօրյա ընտրություններ են, մի մասն էլ՝ ավելի հեռու գնացող: Դրանց մի մասը հավերժության տեսանկյունից ոչինչ չեն փոխում, մյուսները շատ մեծ տարբերություն են ստեղծում: («Ընտրության երեք դասերը», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2010, 67)

Հիշեք, որ Երկնային Հայրը առաջնորդություն է տալիս, որպեսզի օգնի մեզ կատարել մեր ընտրությունները, հատկապես ամենակարևորները: Մտածեք այն մասին, թե ինչպես եք այդ առաջնորդությունը ստացել անցյալում:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք վերջերս կատարած ձեր ընտրությունների մասին: Ինչպե՞ս են այդ ընտրություններն ազդում ձեր առաջընթացի վրա:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսի Քավությանը ինձ իսկական ազատություն բերել:

Փրկագնման ծրագրում Անկման և ազատ կամքի անհրաժեշտության մասին ուսուցանելուց հետո Լեքին իր զավակներին սովորեցրեց, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը ազատություն է տալիս Աստծո զավակներին հավերժական նշանակություն ունեցող ընտրություններ կատարելու համար:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 2 Նեփի 2.26–28-ը և քննարկեք այն ընտրությունը, որը մատչելի է Փրկիչի քավիչ զոհաբերության շնորհիվ:

Մեկնաբանելով Անկման, ազատ կամքի և Հիսուս Քրիստոսի Քավության փոխհարաբերությունները՝ Երեց Հեյֆենը ուսուցանել է.



Ադամն ու Եվան անընդհատ սովորում էին իրենց հաճախ դժվարին փորձություններից: . . . Սակայն [Հիսուս Քրիստոսի Քավության]

շնորհիվ նրանք կարող էին դասեր քաղել իրենց փորձություններից՝ առանց դրանով դատապարտվելու: Քրիստոսի գոհաբերությունը պարզապես չի ջնջել նրանց ընտրությունները և վերադարձրել նրանց անմեղության Եդեմ: Դա կլիներ պատմություն՝ առանց սյուժեի և բնավորության աճի: Նրա ծրագիրը *զարգացման է՝* խրատ խրատի վրա, քայլ առ քայլ, շնորհի շնորհի վրա:

Այնպես որ, եթե կյանքում հանդիպում եք խնդիրների, մի մտածեք, թե ձեզ հետ ինչ-որ բան կարգին չէ: Այդ խնդիրների դեմ պայքարը ընկած է կյանքի նպատակների ամենահիմքում: Երբ մենք մոտենում ենք Աստծուն, Նա ցույց է տալիս մեզ մեր թուլությունները և դրանց միջոցով մեզ դարձնում ավելի խելացի, ավելի ուժեղ [տես Եթեր 12.27] (*“The Atonement: All for All,” Liahona, May 2004, 97*)



Գրի առեք ձեր մտքերը

Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Զ. Փաքերը ուսուցանում էր. «Եթե ազատ

կամքը մարդուն զար առանց [Հիսուս Քրիստոսի] Քավության, դա ճակատագրական նվեր կլիներ (*“Atonement, Agency, Accountability,” Ensign, May 1988, 71*): Հիսուս Քրիստոսի Քավությունը ձեզ ինչպե՞ս է թույլ տվել դասեր քաղել ձեր ընտրություններից: Ի՞նչ կարող եք սովորել ձեր գործած մեղքի կամ ձեր գործած սխալի արդյունքում:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Որտե՞ղ կարող եմ ավելին իմանալ այն մասին, թե ինչ է սովորեցնում Մորմոնի Գիրքը Ադամի և Եվայի անկման մասին:

Ավմա 12.20–37 և Ավմա 42.1–15-ում Ավման ուսուցանեց, թե ինչպես է Անկումը մեզ փորձաշրջան ապահովում, որպեսզի կարողանանք պատրաստվել հանդիպել Աստծուն:

Ինչո՞ւ Աստված Ադամին և Եվային տվեց Եդեմի պարտեզում իրար հակասող պատվիրաններ:

Հետևյալ հոդվածը՝ «Ավետարանի լրիվությունը. Ադամի և Եվայի անկումը» (*Ensign, June 2006, 48–49*), բացատրում է անկման մասին կարևոր ճշմարտությունները, ներառյալ այն, թե ինչո՞ւ Ադամին և Եվային ասվեց, որ չուտեն արգելված պտուղը, և միևնույն ժամանակ պատվիրվեց բազմանալ և լցնել երկիրը. մի պատվիրան, որը նրանք չէին կարող պահել, եթե չճաշակեին այդ պտղից:

Պտուղը ճաշակելու Եվայի ընտրությունը ինչպե՞ս օրհնեց մարդկությանը:



Իր ելույթում՝ «Երջանկության մեծ ծրագիրը» (*Ensign, Nov. 1993, 72–75*), Դավիթ Ն. Օուքսը բացատրել է, թե ինչո՞ւ

պետք է տոնել և չդատապարտել արգելված պտղից ճաշակելու Եվայի ընտրությունը (տես պարբերություն 14-18):

Փրկիչի օրինակից ի՞նչ կարող են սովորել ազատ ընտրության պատշաճ օգտագործման մասին:



Իր ելույթում՝ «Բարոյական ազատ կամք», երեց Դ. Թոդ Զրստոֆերսոնը քննարկել է,

թե մենք ինչ կարող ենք սովորել Հիսուս Քրիստոսի՝ ազատ կամքի պատշաճ օգտագործման օրինակից (տես հետևյալ բաժինը՝ “The Savior’s Exemplary Use of Moral Agency” in *Ensign*, June 2009, 46–53):

ԴԱՍ 5. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Ադամի ու Եվայի անկումը և ազատ կամքի պարզևը

Մարգարե Լեքին ուսուցանեց, որ Ադամի ու Եվայի Անկումը իրականացրեց Աստծո հավերժական նպատակներն Իր զավակների համար (տես 2 Նեփի 2.15–25): Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան բացատրել, թե Ադամի և Եվայի անկումը, ազատ կամքը և Հիսուս Քրիստոսի Քավությունը որքանով են էական Երկնային Հոր փրկագնման ծրագրի համար: Ուսանողները նաև կքննարկեն, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի լավ օգտագործեն իրենց ազատ կամքը՝ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին նմանվելու համար:

Ուսուցման առաջարկներ

Լեքին իր որդուն՝ Հակոբին, ուսուցանում է Անկման հետևանքների մասին

Նշեք, որ դասարանը սկսում է նոր բաժին Երկնային Հոր փրկագնման ծրագրի մասին: Գուցե օգտակար կլինի բացատրել, որ Երկնային Հոր ծրագրին տրված բազմաթիվ անուններից Մորմոնի Գրքում օգտագործվող ամենատարածված անուններից մեկը «փրկագնման ծրագիրն» է (տես օրինակ՝ Հակոբ 6.8, Ալմա 12.30, 32–33, 34.31):

Ցուցադրեք հետևյալ հայտարարությունը և ուսանողներին հրավիրեք գնահատել այն՝ հիմնվելով Մորմոնի Գրքի ուսմունքների վրա. *Ադամի և Եվայի անկումը ողբերգական սխալ էր կամ պատահականություն, որը հակասում էր Աստծո ծրագրին:*

Երբ ուսանողները կիսվեն իրենց գաղափարներով, ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը. **Ադամի և Եվայի անկումը Իր զավակների համար Երկնային Հոր ծրագրի հիմնական մասն է:**

Ուսանողների կողմից այս ճշմարտության ըմբռնումը խորացնելու համար գրատախտակին գրեք հետևյալ անավարտ հայտարարությունները (նախադասությունների միջև շատ տեղ թողեք):

Եթե Ադամն ու Եվան չուտեին պտուղը, . . .

Քանի որ նրանք կերան պտուղը, . . .

Հրավիրեք ուսանողներին վերանայել 2 Նեփի 2.19–25-ը և բացահայտել անկման հետևանքներն ու արդյունքները, որոնք նրանք կարող են օգտագործել յուրաքանչյուր հայտարարությունը ավարտելու համար: Հանձնարարեք ուսանողներին հաղորդել իրենց գտածը: Յուրաքանչյուր արտահայտության տակ նշեք նրանց պատասխանները:

Ցուցադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Օրսոն Ֆ. Ուիթնիի հետևյալ խոսքերը.



Ադամի անկումը քայլ էր դեպի ներքև, բայց նաև քայլ էր դեպի առաջ՝ մի քայլ մարդկային առաջընթացի հավերժական երթի մեջ: (In Conference Report, Apr. 1908, 90)

- Ինչպե՞ս է Անկումը «քայլ դեպի ներքև» և «քայլ դեպի առաջ» մեր հոգևոր առաջընթացի մեջ: (Որպես ձեր քննարկման մաս, կարող եք ուսանողներին հրավիրել վերանայել երեք Բրյուս Ք. Հեյֆենի և երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 1-ում և կիսվել այն ամենով, ինչն առանձնանում է իրենց համար):
- Հասկանալով Անկումը, ինչպե՞ս եք հասկանում, որ նույնիսկ մահկանացու մարտահրավերները Երկնային Հոր ծրագրի մասն են:
- Անկման արդյունքում առաջացած պայմաններն ինչպե՞ս են մեզ հնարավորություն տալիս

առաջ գնալ հոգևորապես և ուրախություն ունենալ: (Տե 2 Նեփի 2.25)

Քննարկման շրջանակներում ցուցադրեք նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը և մի ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ այն.



Լեքին հստակ գիտե՛ր՝ ինչ է ընդդիմությունը, անհանգստությունը, սրտի ցավը, դառնությունը, հիասթափությունը և վիշտը: Սակայն նա համարձակ ու անվարան հայտարարեց մի սկզբունք, ինչպես հայտնությամբ տվել էր Տերը. «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» [2 Նեփի 2.25]: Պատկերացրե՛ք: Մեր մահկանացու կյանքի բնույթն ու նպատակը նկարագրող բոլոր բառերից նա ընտրեց *ուրախություն*ը:

Կյանքը լի է շրջադարձներով ու փակուղիներով, փորձություններով և ամեն տեսակի դժվարություններով: Մեզանից յուրաքանչյուրը հավանաբար ունեցել է ժամանակներ, երբ վիշտը, տառապանքը և հուսահատությունը համարյա ջլատել են մեզ: Սակայն մի՞թե մենք այստեղ չենք ուրախանալու համար:

Այո՛: Պատասխանը հնչեղ այո՛ է: («Ուրախություն և հոգևոր գոյատևում», *Լիաժնա*, Նոյեմբեր 2016, 82):

Հրավիրեք ուսանողներին մտքում բացահայտել իրենց առջև ծառացած որևէ հատուկ մարտահրավեր: Ցուցադրեք հետևյալ հարցը և խնդրեք ուսանողներին խորհել այս հարցի իրենց պատասխանի շուրջ, ապա գրանցել իրենց մտքերը: (Անհրաժեշտության դեպքում հրավիրեք մեկ կամ երկու ուսանողի կիսվել իրենց գրածով: Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք չպիտի կիսվեն այն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ գաղտնի:)

- Անկման նպատակները հասկանալով, ինչպե՞ս կարող եմ դիտարկել այս փորձառությունը որպես հոգևոր առաջընթացի և ուրախության հնարավորություն:

Լեքին ուսուցանում է, որ մենք ազատ ենք Հիսուս Քրիստոսի միջոցով ազատություն և հավերժական կյանք ընտրելու հարցում:

Ցուցադրեք նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը. «[Անկումը] ակտիվացրեց երկու սերտորեն զուգակցված լրացուցիչ պարզկներ Աստծուց, գրեթե նույնքան թանկ, որքան բուն կյանքը՝ ազատ կամքը և պատասխանատվությունը» (“Constancy amid Change,” *Ensign*, Nov. 1993, 34):

- Որո՞նք են Լեքիի նշած որոշ պայմանները, որոնք հնարավոր են դարձնում ազատ կամքն ու հաշվետվողականությունը: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խորհուրդ տվեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 2-ը: Կարող եք ուսանողներին խնդրել հակիրճ բացատրել, թե այս պայմաններից յուրաքանչյուրն ինչո՞ւ են անհրաժեշտ ազատ կամքի գոյության համար:)

Միասին կարդացեք 2 Նեփի 2.26–29-ը՝ փնտրելով լրացուցիչ եղանակներ, որոնցով մեր ազատ կամքը ենթարկվում է Փրկիչի Քավության և Նրա կողմից անկման հետևանքներից մեզ փրկագնելու ազդեցությանը: Սկզբունքները, որոնք ուսանողները կարող են գտնել այս հատվածից, հետևյալն են. **Փրկիչի քավիչ գոհաբերությունը մեզ թույլ է տալիս ազատորեն ընտրել հավերժական կյանքը: Երկնային Հոր ծրագիրը ապահովում է մեզ համար անհրաժեշտ պայմաններ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով ազատություն և հավերժական կյանք ընտրելու, կամ սատանայի միջոցով գերություն և մահ ընտրելու համար:**

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Խրախուսեք ուսանողներին արդար գործեր կատարել: Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը ուսուցանել է. «Ճշմարիտ հավատը կենտրոնացած է Տեր Հիսուս Քրիստոսի մեջ և Նրա վրա, և միշտ

հանգեցնում է արդար գործողության» («Խնդրեք հավատքով», *Lhahhna*, Մայիս 2008, 95): Երբ ուսուցանում եք, ուսանողներին իմաստալի հնարավորություններ տվեք խորհելու, թե ինչպես կարող են հավատքով գործել և կիրառել իրենց սովորածը: Երբ դուք անընդհատ խրախուսում եք ուսանողներին խորհել և կիրառել այն, ինչ սովորում են, կարող եք օգնել նրանց մեծացնել արդար գործեր կատարելու իրենց կարողությունը:

Մտածեք, թե հետևյալ հարցերից որ մեկը կարող է օգնել ձեր ուսանողներին լավագույնս հասկանալ ազատ կամքը և ինքնություն որոշել, թե ինչ արդար գործեր պետք է ձեռնարկեն իրենց կյանքում: (Կարող եք ընտրել հետևյալ հարցերից մեկը և խրախուսել ուսանողներին գրանցել իրենց մտքերն ու տպավորությունները:)

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ մենք դառնում ենք «ազատ հավիտյան» . . . գործելու ինքնություն և չներգործվելու, բացի դա լինի օրենքի պատժով այն մեծ և վերջին օրը» (2 Նեփի 2.26): Ի՞նչ եք ոգեշնչված անել, որպեսզի այսօր կարողանաք արդար քայլեր ձեռնարկել:
- Որո՞նք են ամեն օր ձեր կատարած փոքր ընտրությունների մի քանի օրինակները, որոնք կարող են երկարաժամկետ ազդեցություն ունենալ: Ձեր ամենօրյա ինչպիսի՞ ընտրությունները կօգնեն ձեզ մոտենալ Հիսուս Քրիստոսին և հավերժական կյանքին: Որո՞նք են ձեր ներկալիս որոշ ընտրությունները, որոնք կարող են

խանգարել կամ նվազեցնել ձեր հոգևոր աճը կամ հնարավորությունները:

- Հիսուս Քրիստոսի Քավությունն ինչպե՞ս է ձեզ թույլ տվել դասեր քաղել ձեր սխալներից: (Անհրաժեշտության դեպքում վերանայեք երեց Բրյուս Ք. Հեյֆենի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ը:) Ի՞նչ կարող եք սովորել ձեր գործած մեղքի կամ ձեր կատարած սխալի արդյունքում:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և վկայությամբ: Բացատրեք ուսանողներին, որ նրանք չպետք է կիսվեն այն փորձառություններով, որոնք խիստ անձնական են կամ խոսեն իրենց գործած որևէ հատուկ մեղքի մասին: Խրախուսեք ուսանողներին գործել ըստ նրա, ինչ գրել են կամ ինչի շուրջ խորհել են այսօր: Վկայեք դասի սկզբունքների և Տիրոջ ցանկության մասին՝ օգնելով ուսանողներին կողմնորոշվել իրենց կյանքի ընտրություններում:

Հաջորդ անգամ

Նշեք, որ հաջորդ դասի ընթացքում մենք քննարկելու ենք Հիսուս Քրիստոսի Քավությունը: Խրախուսեք ուսանողներին ուշադիր ուսումնասիրել նախապատրաստական նյութը և մտածել, թե Մորմոնի Գիրքը ինչո՞ւ է նկարագրում Հիսուս Քրիստոսի Քավությունը՝ որպես անսահման և հավերժական (տես 2 Նեփի 9.7, Ալմա 34.10):



ԴԱՍ 6. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը

Ի՞նչ զգացումներ և մտքեր եք ունենում, երբ խորհում եք Գեթսեմանիի պարտեզում և խաչի վրա Փրկիչի կրած տառապանքների մասին: Ինչպես նախագահ Նելսոնն է ուսուցանել. «Մորմոնի Գիրքը տրամադրում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին ամենաամբողջական և ամենահեղինակավոր հասկացողությունը, որը երբևէ եղել է մինչ այդ» («Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա» *Հիստորիա*, նոյեմբեր 2017, 62): Երբ ուսումնասիրում եք, թե ինչ է ուսուցանում Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին, մտածեք, թե Նա ինչպես է փրկել ձեզ Անկման հետևանքներից և հնարավոր դարձրել, որ դուք ավելի նմանվեք Նրան և մեր Երկնային Հորը:

ԲԱԺԻՆ 1

Ես ինչո՞ւ պետք է
խանդավառությամբ ընդունեմ
Հիսուս Քրիստոսի Քավությունը:

Մ.թ.ա. մոտ 74 թվին Ալմա մարգարեն առաքելության է ուղևորվում գորամացիների մոտ, ովքեր Երկրպագության ապականված ձև ունեին և սովորեցնում էին, որ «Քրիստոս չպետք է լինի» (Ալմա 31.16): Երբ Ալման և Ամուղեկը քարոզում էին աղքատ գորամացիների մի խմբի, ովքեր

վտարվել էին իրենց երկրպագության վայրերից, նրանք նրանց սովորեցնում էին՝ ինչպես երկրպագել Աստծուն և համարձակ վկայում էին, որ Քրիստոսը կգա և կկատարի անսահման Քավություն:

Սուրբ գրություններից և ժամանակակից հայտնությունից մենք գիտենք, որ «[Հիսուս Քրիստոսի] Քավությունը ներառում էր մարդկության մեղքերի համար Նրա տառապանքը, Նրա արյան հեղումը, Նրա մահը և գերեզմանից հետո հարությունը» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Քավել, Քավություն», scriptures.ChurchofJesusChrist.org):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ավմա 34.8–10-ը՝ փնտրելով, թե ինչ է ուսուցանել Ամուդեկը Հիսուս Քրիստոսի Քավության անհրաժեշտության մասին:



Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է հետևյալը Փրկիչի անսահման Քավության մասին:



[Հիսուս Քրիստոսի] Քավությունն անսահման է՝ առանց վերջի: Այն սա անսահման էր այն առումով, որ ողջ մարդկությունը կարող էր փրկվել անվերջանալի մահից: Այն անսահման էր Նրա ահռելի տառապանքի առումով: Այն անսահման էր ժամանակի առումով, վերջ դնելով կենդանիների զոհաբերության Նախատիպին: Այն անսահման էր գործունեության շրջանակով. այն պետք է կատարվեր մեկ անգամ՝ բոլորի համար: Եվ Քավության ողորմածությունը տարածվում է ոչ միայն անսահման քանակությամբ մարդկանց վրա, այլև Նրա կողմից ստեղծված անթիվ աշխարհների վրա: Այն անսահման էր՝ վեր մարդկային ցանկացած

չափման սանդղակից կամ մահկանացուի հասկացողությունից:

Հիսուսը միակն էր, ով կարող էր առաջարկել այսպիսի անսահման քավություն, քանի որ Նա ծնվել էր մահկանացու մորից և անմահ Հորից: Այդ յուրօրինակ ծնունդի պատճառով Հիսուսն անսահման էակ էր: («Քավությունը», *Ensign*, Nov. 1996, 35)



Հակոբ մարգարեն նաև մի հզոր քարոզ ասաց, որում անդրադարձավ Տիրոջ անսահման Քավության մեր կարիքին, և թե ինչպես է Հիսուս Քրիստոսը ազատում մեզ Անկման և մեր մեղքերի հետևանքներից:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ուսումնասիրեք 2 Նեփի 9.6–10, 19–22-ը՝ փնտրելով, թե ինչ կկատարվեր առանց Փրկիչի անսահման Քավության:

Մենք կարող ենք լիակատար վստահություն ունենալ, որ Փրկիչի անսահման Քավության միջոցով մենք կարող ենք ապաշխարել մեր մեղքերի համար և մաքրվել: Նախագահ Թադ Ռ. Քալիստերը՝ Կիրակնօրյա դպրոցի նախկին գերագույն նախագահը, տվել է հետևյալ նախազգուշացումը Տիրոջ Քավության վրա սահմանափակումներ դնելու վերաբերյալ.



Երբեմն ես հանդիպել եմ լավ սրբերի, ովքեր դժվարություն ունեին իրենց ներելիս, ովքեր պարզամտորեն, բայց սխալմամբ սահմանների էին դրել Փրկիչի փրկագնող գործությունների վրա: Ակամայից, նրանք անսահման Զավությունը դարձրել են սահմանափակ, որը ինչ-որ ձևով չի գործում իրենց որոշակի մեղքի կամ թուլության պատճառով: Բայց սա անսահման Զավություն է, որովհետև այն ընդգրկում է և սահմանագծում է ամեն մեղք և թուլություն, ինչպես նաև ուրիշների կողմից ձեզ պատճառված ամեն վիրավորանք կամ ցավ: («Հիսուս Թրիստոսի Զավությունը», *Լիախոնա*, մայիս 2019, 85–86)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Իմանալով, որ Փրկիչի Զավությունն անսահման է, ինչպե՞ս եք հասկանում և վերաբերվում ձեր սեփական մաքառումներին և մտահոգություններին: Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ Հիսուս Թրիստոսի անսահման Զավությունը կարող է օգնել և փրկել ձեզ:

ԲԱԺԻՆ 2

Հիսուս Թրիստոսի Զավությունն ինչպե՞ս կարող է օգնել ինձ հաղթահարել բնական մարդուն:

Երբ Բենիամին թագավորը մոտեցավ իր կյանքի մայրամուտին, նա հզոր Թրիստոսակենտրոն քարոզ կարդաց իր ժողովրդին: Այս քարոզի ընթացքում նա պատմեց այն, ինչ հրեշտակն ուսուցանել էր իրեն Հիսուս Թրիստոսի ծառայության և Զավության մասին: Նա ուսուցանեց, որ միայն Տիրոջ Զավության միջոցով մենք կարող ենք հաղթահարել մեր բնական կամ մեղսավոր բնույթը:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 3.19-ը՝ փնտրելով, թե ինչ կարող եք անել բնական մարդուն հաղթահարելու համար:



Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ա. Բեդնարը հատկապես զաղափարներն է տվել բնական տղամարդու կամ կնոջ մասին:



Ինչ-որ չափով Բենիամին թագավորի նկարագրած բնական մարդը կենդանի է և առողջ յուրաքանչյուրիս մեջ (տես Մոսիա 3.19): Բնական տղամարդը կամ կինը չի ապաշխարում, մարմնավոր է և զգայական (տես Մոսիա 16.5, Ալմա 42.10, Մովսես 5.13), ներողամիտ և ծայրահեղակա է, չափազանց հպարտ և եսասեր է: Ինչպես ուսուցանել է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբլը. «Բնական մարդը հողեղեն մարդն է», որը թույլ է տվել, որ կոպիտ կենդանական կրքերը ստվերեն իր հոգևոր հակումները» (“Ocean Currents and Family Influences,” *Ensign*, Nov. 1974, 112):

Այսպիսով, մահկանացու կյանքի ստուգաթի ճշգրիտ բնույթը կարելի է ամփոփել հետևյալ հարցի մեջ. Արդյո՞ք ես կարճազանքեմ բնական մարդու հակումներին, թե՞ ես կենթարկվեմ Սուրբ Հոգու հորդորներին և կհանեմ բնական մարդուն ու կդառնամ սուրբ՝ Տեր Թրիստոսի Զավությամբ (տես Մովսես 3.19):

Դա ստուգարքն է: Բնական մարդու ամեն ախորժակ, ցանկություն, հակում և մղում կարելի է հաղթահարել Հիսուս Քրիստոսի Թավության շնորհիվ և դրա միջոցով: Մենք այստեղ՝ երկրի վրա, որպեսզի զարգացնենք աստվածանման հատկանիշներ և սանձենք մարմնական բոլոր կրքերը»: («Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիաիոնա*, մայիս 2013, 42, 43)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Երբևէ զգացե՞լ եք, որ չեք կարողացել վերահսկել կամ հաղթահարել բնական տղամարդու կամ կնոջ ախորժակն ու ազդակները: Ինչպե՞ս կարող են Մոսիա 3.19-ի ուսմունքները ձեզ հույս տալ, որ կարող եք ճիշտ փոփոխություններ կատարել և ավելի շատ նմանվել Փրկիչին:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

**Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել
այն մասին, թե ինչ է ուսուցանում
Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի
Թավության մասին:**

«Հիսուս Քրիստոսը և Թավությունը Մորմոնի Գրքում» (2:25) տեսանյութում Նախագահ Ռասսել

Մ. Նելսոնը բացատրում է, որ Մորմոնի Գիրքը պարունակում է բազմաթիվ ուսմունքներ Հիսուս Քրիստոսի և Նրա Թավության մասին:

Բացի վերը նշված հատվածներից, հետևյալ հատվածները ևս նշում են Հիսուս Քրիստոսի Թավության վերաբերյալ Մորմոնի Գրքի ուսմունքների խորությունն ու ընդարձակությունը. 2 Նեփի 2.6–8, Մոսիա 3.5–11, 15.7–9, Ալմա 7.11–13, 42.12–26, Շելաման 14.15–19, Մորոնի 8.8–12:

**Որո՞նք են Հիսուս Քրիստոսի Թավության
օրհնությունները:**



Հիսուս Քրիստոսի Թավությունը» (*Ensign*, Mar. 2008, 32–38) հոդվածում Տասներկու Առաքյալների Թվորումից երեց Ջեֆրի Ռ. Շոլլանը բացատրում է, որ Տիրոջ Թավության որոշ օրհնություններ անվճար տրվում են բոլորին, մինչդեռ մյուս օրհնությունները պայմանական են և հիմնված են պատվիրաններին մեր հնազանդվելու վրա:

**Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի
հաղթահարեմ բնական տղամարդուն
կամ կնոջը:**



«Հաղթենք բնական մարդու դեմ տարվող պայքարում» (*Ensign*, Dec. 2018, 64–69) երեց Կարլ Բ. Քուքը Յոթանասունի Թվորումից առաջարկներ է տալիս այն մասին, թե ինչպես կարող ենք բարձրացնել բնական տղամարդուն կամ կնոջը հաղթահարելու մեր կարողությունը և սրբեր դառնալ «Քրիստոսի Տիրոջ Թավության միջոցով» (Մոսիա 3.19):

ԴԱՍ 6. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը

Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի և Նրա միջոցով իրականացվող փրկագնման հզոր վկան է: Այս դասը կօգնի ուսանողներին բացատրել, թե մենք ինչպես ենք անկումից փրկագնվում Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության միջոցով: Ուսանողները նաև կորոշեն, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի շատ ապավինեն Փրկչին՝ օգնելով իրենց հաղթահարել բնական մարդու իրենց հակումները:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Ուսանողներին տեղեկացրեք ուսման արդյունքների մասին: Ուսման արդյունքները դրույթներ են, որոնք սահմանում են, թե ուսանողներն ինչ գիտելիքներ և հմտություններ պետք է կարողանան զարգացնել ուսումնական գործընթացում: Ուսանողների հետ կիսվեք յուրաքանչյուր դասի ներածության մեջ թվարկված նախատեսված արդյունքներով: Այս հաստատված արդյունքները կարող են օգնել ուսուցիչներին և ուսանողներին միասին գնահատել իրենց ուսումնասիրության և քննարկումների հաջողությունը:

յուրաքանչյուր կետի կամ գաղափարի վերաբերյալ հարցին: Կարող եք օգտագործել ուղեկցող նկարները կամ որոշ նկարներ, որոնք ինքներդ եք ընտրում: Համոզվեք, որ վերջնական նկարը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերությունը, որպեսզի ուսանողները կարողանան քննարկել, թե ինչպիսին կլինեն իրենց կյանքն առանց Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության:



Մորմոնի Գրքի մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի Քավության անհրաժեշտության մասին

Ցուցադրեք հետևյալ անավարտ հարցը. Ինչպիսի՞ն կլինեն իմ կյանքը առանց . . .

Որպեսզի օգնեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են լրացնել հարցը, ցուցադրեք մի քանի տարբեր նկարներ կամ բառեր: Հրավիրեք ուսանողներին զուգընկերոջ հետ համաժողով քննարկել, թե ինչպես կապտասխանեն





Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը. Առանց Փրկիչի և Նրա Քավության մենք . . .

Հիշեցրեք ուսանողներին, որ Հակոբն ու Ամուղեկը կարևոր քարոզներ տվեցին Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Ուսանողներին հանձնարարեք վերանայել 2 Նեփի 9.6–10 և Ալմա 34.9-ը՝ փնտրելով արտահայտություններ, որոնք կարող են օգտագործել գրատախտակի հայտարարությունն ավարտելու համար:

- Որո՞նք են այս հատվածների մի քանի արտահայտությունները, որոնք կարող են օգտագործել՝ գրատախտակի հայտարարությունն ավարտելու համար: (Երբ ուսանողները կիսվեն արտահայտությունը լրացնելու տարբեր եղանակներով, գրեք պատասխանները դրա տակ: Ուսանողները կարող են գտնել նմանատիպ մի ճշմարտություն. **Առանց Փրկիչի և Նրա Քավության, մենք անխուսափելիորեն կկործանվեինք:** Այլ ճշմարտություններ, որոնք նրանք կարող են բացահայտել, ներառում են

հետևյալը. **Առանց Փրկիչի և Նրա Քավության մենք կտրված կլինեինք Տիրոջ ներկայությունից, այլևս չէինք աճի, կդառնայինք սատանայի հպատակ և կնամանվեինք նրան, կմնայինք թշվառության մեջ և ենթակա կլինեինք մահվան ու դժոխքի ահավոր հրեշին:** Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե իրենց կարծիքով, ինչ են նշանակում այս արտահայտությունները:)

- Ի՞նչ է «սարսափելի հրեշը», որը Հակոբը նկարագրել է 2 Նեփի 9.10-ում: Ի՞նչն է այդքան ահավոր: (Անհրաժեշտության դեպքում օգնեք ուսանողներին հասկանալ, թե մշտական ֆիզիկական և հոգևոր մահը մեզ ինչո՞ւ կլսանգարեր նմանվել Երկնային Հորը: Ուշադրություն դարձրեք, որ հոգևոր մահը Անկման և մեր անձնական անհնազանդության արդյունքն է: [Տես «Մահ, հոգևոր» և «Մահ, ֆիզիկական», Ավետարանի թեմաներ, topics.ChurchofJesusChrist.org:])
- Անկման հետևանքների ճանաչումն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե մենք ինչո՞ւ ունենք Հիսուս Քրիստոսի կարիքը:

Միասին կարդացեք 2 Նեփի 9.11–12, 19–22-ը և խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ ուղիներով է Հիսուս Քրիստոսը քափում մեզ մահվան և դժոխքի «սարսափելի հրեշից» (հատված 10):

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը մեզ փրկում մահվան և դժոխքի «այս սարսափելի հրեշից»:
- Ինչպե՞ս եք վերաբերվում Փրկիչին, իմանալով, որ նա և՛ պատրաստ է, և՛ կարող է ազատել ձեզ մահից և դժոխքից:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հակոբը և Ամուղեկը նկարագրեցին «անսահման» քավության կամ զոհաբերության կարիքը (տես 2 Նեփի 9.7, Ալմա 34.10): Հրավիրեք ուսանողներին վերանայել նախագահ Ռասսել Մ. Նելսոնի և նախագահ Թադ Ռ. Քալիսթերի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 1-ում՝ փնտրելով, թե ինչպես է Փրկիչի Քավությունն անսահման:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Փրկիչի Քավությունն անսահման է:

- Իմանալով, որ Փրկիչի Քավությունն անսահման է, ինչպե՞ս եք հասկանում և վերաբերվում ձեր սեփական մաքառումներին ու մտահոգություններին:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի Տիրոջը ցույց տաք ձեր հավատն առ այն, որ Նրա անսահման Քավությունը կարող է օգնել և փրկել ձեզ: (Ուսանողներին ժամանակ տվեք իրենց մտքերը զրանցելու համար):

Թագավոր Բենիամինն ուսուցանում է իր ժողովրդին, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով նրանք կարող են իրենց միջից հանել բնական տղամարդուն կամ կնոջը

Ցուցադրեք հետևյալ խոսքերը. «Բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի անկումից ի վեր» (Մոսիա 3.19): Հիշեցրեք ուսանողներին, որ Բենիամին թագավորը ուսուցանել է այս ճշմարտությունը:

- Ինչպե՞ս կբացատրեք, թե ինչ է «բնական մարդը» որևէ մեկին, ում անձանոթ չէ այս եզրույթը: (Կարող եք քաջալերել ուսանողներին կրկնել երեք Դեյվիդ Ա. Բեդնարի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

Դասարանով կարդացեք Մոսիա 3.19-ը և հրավիրեք ուսանողներին փնտրել, թե ինչ է սովորեցրել Բենիամին թագավորն իր ժողովրդին բնական մարդուն հաղթահարելու մասին:

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել Բենիամին թագավորի ուսմունքներից, որոնք կարող են օգնել մեզ հաղթահարել մեր մեջ գտնվող բնական տղամարդուն կամ կնոջը: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի ճշմարտություն. **Երբ մենք ենթարկվում ենք Սուրբ Հոգու հորդորներին, Հիսուս Քրիստոսը կօգնի մեզ հեռացնել բնական տղամարդուն կամ կնոջը և դառնալ սրբեր Իր Քավության միջոցով:**)

Որպեսզի ուսանողները խորացնեն այս սկզբունքի իրենց ընկալումը, տվեք հետևյալ հարցերից մեկը կամ մի քանիսը՝ ըստ ուսանողների կարիքների.

- Ձեզ համար ի՞նչ է նշանակում «ենթարկվել Սուրբ Հոգու հորդորներին»: Ինչպե՞ս է Սուրբ Հոգին օգնել ձեզ հաղթահարել բնական տղամարդու կամ կնոջ հակումները:
- Ինչո՞ւ բնական տղամարդուց կամ կնոջից ազատվելը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ մենք ապավինենք Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը:
- Փրկիչի Քավությանն ապավինելը ինչպե՞ս է օգնել ձեզ՝ սրբացված և Քրիստոսանման մարդ դառնալու ձեր ջանքերում:
- Ինչպե՞ս կարող են Մոսիա 3.19-ում նշված ուսմունքները մեզ հույս և ուժ պարգևել, երբ մենք զգում ենք, որ չենք կարող վերահսկել կամ հաղթահարել բնական տղամարդու կամ կնոջ ախորժակներն ու ազդակները:

Խնդրեք ուսանողներին մտածել իրենց կյանքի այն ոլորտի մասին, որտեղ նրանք կարող են պայքարել բնական տղամարդու կամ կնոջ ախորժակի, ցանկությունների կամ ազդակների դեմ: Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին հրավիրեք խորհել և զրանցել իրենց մտքերն ու տպավորությունները.

- Ի՞նչը կարող է խանգարել ինձ ենթարկվել Սուրբ Հոգուն:
- Մոսիա 3.19-ում նկարագրված Քրիստոսանման հատկանիշներից ո՞րը պետք է ավելի լիարժեք զարգացնեմ:
- Ի՞նչ գործողություններ եմ ձեռնարկելու, որպեսզի կարողանամ ավելի մեծ օգնություն ստանալ Փրկիչից, երբ ձգտում եմ զարգացնել այդ Քրիստոսանման հատկությունը:

Եզրափակեք՝ կիսելով ձեր վկայությամբ, որ Հիսուս Քրիստոսը փրկագնել է մեզ Անկումից և կարող է փրկագնել մեզ մեր անձնական մեղքերից ու փոխակերպել մեզ, որ ավելի շատ նմանվենք Իրեն և մեր Երկնային Հորը:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել ֆիզիկական, մտավոր, հուզական և հոգևոր մաքառումների մասին, որոնք նրանք գուցե ունեն: Երբ նրանք ուսումնասիրեն հաջորդ դասի նախապատրաստական նյութը, հանձնարարեք նրանց մտածել, թե Հիսուս Քրիստոսը ինչպես կարող է օգնել նրանց իրենց մաքառումներում:



ԴԱՍ 7. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի զորացնող ուժը

Մեկ րոպե մտածեք այն ժամանակների մասին, երբ դուք մաքառումների մեջ եք եղել ֆիզիկական, մտավոր, հուզական կամ հոգևոր առումներով: Մտածեք նաև այն մասին, թե ինչպես եք ձեզ թույլ կամ անհամապատասխան զգացել: Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը նկատել է. «Իր Քավության շնորհիվ Փրկիչն ունի զորություն՝ օգնելու յուրաքանչյուր մահացու ցավի և տառապանքի դեպքում» («Զորանալով Հիսուս Քրիստոսի Քավությամբ» *Լիահոնա*, նոյեմբեր 2015, 62): Հիսուս Քրիստոսի Քավության մասին ավելին սովորելիս հաշվի առեք, թե ինչպես է Տերը օգնել և կշարունակի օգնել ձեզ դիմանալ ձեր կյանքի չարչարանքներին և հաղթահարել թուլությունները:

ԲԱԺԻՆ 1

Փրկիչն ինչպե՞ս կարող է օգնել ինձ իմ չարչարանքների և տկարությունների հարցում:

Թադ Ռ. Քալիսթերը՝ Կիրակնօրյա դպրոցի նախկին գերագույն նախագահը, այսպես է խոսել Փրկիչի Քավության ընդգրկունության մասին.



Հիսուս Քրիստոսի Քավությունը . . . մեզ հնարավորություն տվեց վերադառնալ Աստծո ներկայություն, ավելի շատ նմանվել Նրան և ունենալ լիարժեք ուրախություն: Սա արվեց՝ հաղթահարելով չորս խոչընդոտ.

1. Ֆիզիկական մահը
2. Աղամի կողմից և մեր մեղքերից առաջացած հոգևոր մահը
3. Մեր չարչարանքներն ու տկարությունները
4. Մեր թուլություններն ու թերությունները

«Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Լիահոնա*, մայիս 2019, 85):

Դաս 6-ում՝ «Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը», մենք անդրադարձանք առաջին երկու խոչընդոտներին: Հիմա եկեք քննարկենք, թե ինչպես է Փրկիչի Քավությունը հաղթահարում երրորդ և չորրորդ խոչընդոտները:

Մ.թ.ա 83 թ.-ին Ալմա Կրտսերը հրաժարվեց գլխավոր դատավորի պաշտոնից, որպեսզի կարողանա Աստծո խոսքը ուսուցանել ամբողջ երկրում: Գեդեոն քաղաքում Ալման մարգարեացավ, որ Քավիչը ծնվելու է երկրի վրա և կապրի Իր ժողովրդի մեջ, և որ Նա կզգա մահկանացության բոլոր ցավերը, տառապանքներն ու գայթակղությունները:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 7.11–12-ը և փնտրեք պատճառները, թե Հիսուս Քրիստոսն ինչո՞ւ իր վրա վերցրեց այս մահկանացու փորձությունները:



Մորմոնի Գրքի այս առանձնահատուկ ուսմունքի մասին նախագահող եպիսկոպոս Ջեռալդ Կոսեն նկատել է.



Մեր մեղքերի բեռը կրելուց բացի, Քրիստոսն Իր վրա վերցրեց մեր վշտերը, թուլությունները, տառապանքները, հիվանդությունները և մահկանացու վիճակում մարդուն բնորոշ բոլոր չարչարանքները: Չկա որևէ վիշտ, ցավ կամ տխրություն, որը Նա չի կրել մեզ համար [տես Ալմա 7.11–12]: («Կենդանի վկայություն կենդանի Քրիստոսի մասին», *Լիառնա* մայիս 2020, 39)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն նաև ուսուցանել է.



Տկարության պահին մենք, գուցե, բարձրաձայնենք. «Ո՛չ որ չգիտի, թե ինչի միջով եմ ես անցնում: Ո՛չ որ չի կարող հասկանալ»: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել և կրել է մեր անհատական բեռները: Եվ Իր անսահման և հավերժական զոհաբերության շնորհիվ (տես Ալմա 34.14) Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմած ձեռքը: Նա կարող է հասնել, դիպչել, սատարել, բուժել և ամրացնել մեզ, որ լինենք ավելին, քան երբևէ կարող էինք լինել, և օգնում է մեզ անել այն, ինչը մենք երբեք չէինք կարող անել, եթե ապավինեինք միայն մեր սեփական ուժին: («Իրենց բեռները հեշտությամբ տանելին», *Լիառնա*, մայիս 2014, 90)



Գրի առեք ձեր մտքերը

Ինչպե՞ս է դա օգնում ձեզ իմանալ, որ Փրկիչը կատարելապես հասկանում է ձեր բոլոր չարչարանքներն ու տկարությունները: Ե՞րբ եք զգացել, որ Նա հասնում է ձեզ, մխիթարում և զորացնում է ձեզ, երբ դժվարություններ եք ունենում ձեր կյանքում:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող է Փրկիչն օգնել ինձ իմ թուլությունների և անկատարությունների հարցում:

Որպես Մորմոնի Գրքի վերջին հեղինակ, Մորմոնին ներառել է Եթերի թիթեղների մի համառոտ շարադրանք, որը պարունակում է հարեդացիների պատմությունը և Հարեղի եղբոր գրությունները: Մորմոնին զարմացել էր Հարեղի եղբոր գրվածքի զորության վրա և իր մտահոգությունը հայտնեց այն թուլության վերաբերյալ, որը նա ընկալեց իր սեփական և Մորմոնի Գրքի այլ մարգարեների գրություններում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Եթեր 12.23–27-ը և դիտարկեք, թե Մորմոնին ինչպես է վերաբերվել իր անհամապատասխանությանը: Խորհեք, թե Տիրոջ պատասխանն ինչպե՞ս կարող է օրհնել ձեր կյանքը:

Մեր թուլություններն ու անկատարությունները դնելով հավերժական հեռանկարի համատեքստում, քույր Միշել Դ. Քրեյգը՝ Երիտասարդ կանանց գերագույն Նախագահության առաջին խորհրդականը, ուսուցանել է.



Իհարկե, յուրաքանչյուր կթերանա մեր աստվածային ներուժն իրականացնելիս, և դրա մեջ որոշ ճշմարտություն կա, որ մենք *մենակ* չենք կարող դա անել: Սակայն ավետարանի լավ նորությունն այն է, որ Աստծո շնորհով *մենք* կկարողանանք իրականացնել դա: . . .

Զարմանալի ճշմարտությունն այն է, որ մեր թուլությունները կարող են օրհնություն լինել, երբ դրանք խոնարհեցնում են մեզ և շրջում են դեպի Քրիստոսը: . . .

Իրականում, Հիսուսի հրաշքները հաճախ սկսվում են այն ժամանակ, երբ հասկացվում է ցանկությունը, կարիքը, ձախողումը կամ անհամապատասխանությունը: («Սուրբ դժգոհություն», *Լիախոնա*, Նոյեմբեր 2018, 54):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ե՞րբ եք տեսել, որ Փրկիչի օգնությամբ որևէ թուլություն օրհնություն է դարձել ձեր կյանքում կամ ձեր ծանոթի կյանքում:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ Տիրոջ շնորհն ավելի լիարժեք հրավիրել իմ կյանք:

Իր գրություններում Նեփին վկայեց, որ Մովսեսը իսրայելացիներին դուրս բերեց գերությունից Աստծո զորությամբ և շնորհով: Նեփին գրել է. «Եվ ինչպես Տեր Աստված ապրում է, չկա ոչ մի ուրիշ անուն երկնքի տակ տրված, բացի այս Հիսուս Քրիստոսից . . . որի միջոցով մարդ կարող է փրկվել»: (2 Նեփի 25.20): Նեփին ուսուցանեց իր ժողովրդին, որ նրանց կարող է փրկել միայն Հիսուս Քրիստոսի շնորհը, այլ ոչ թե միայն Մովսեսի օրենքին հնազանդվելը: Ընդհանուր առմամբ աստվածային օգնություն կամ ուժ է, որը տրվում է Հիսուս

Քրիստոսի լիառատ ողորմածության և սիրո շնորհիվ» (Աստվածաշնչի բառարան, «Շնորհ»):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 2 Նեփի 25.23, 29-ը՝ փնտրելով
ձեր դերը Տիրոջ շնորհը ձեր կյանք հրավիրե-
լու գործում:

«Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»
արտահայտությունը (2 Նեփի 25.23) կարող է
ճնշող թվալ: Դիտարկեք, թե Տասներկու Առա-
քյալների Քվորումի երկու անդամների հետևյալ
խոսքերն ինչպես կարող են օգնել մեզ հասկանալ,
թե ինչ է նշանակում այս արտահայտությունը:



Աստվածային օգնությանն արժանանա-
լու համար մենք կարիք չունենք հասնելու
կարողությունների կամ բարության ինչ-որ
նվազագույն աստիճանի. աստվածային
օգնությունը մերը կարող է լինել ամեն ժամ,
ամեն օր, անկախ նրանից, թե հնազանդու-
թյան ճանապարհի որ մասում ենք գտնվում:
Սակայն ես գիտեմ, որ Նրա օգնությունը
փափագելուց բացի, մենք պետք է ջանք
գործադրենք, ապաշխարենք և ընտրենք
Աստծուն, որպեսզի Նա կարողանա գործել
մեր կյանքում՝ համաձայն արդարության և
կամքի բարոյական ազատության: (Դ. Թոդ
Քրիստոֆերսոն, ««Ազատ հավիտյան՝ գործե-
լու ինքնուրույն» *Լիաժողով*, Նոյեմբեր 2014, 19)



Իր շնորհի միջոցով Տերը կօգնի մեզա-
նից յուրաքանչյուրին տանել մեր խաչը և
թեթևացնել մեր բեռը: . . . Երբեք մի հրաժար-
վեք պայքարից հաջորդական ձախողում-
ների պատճառով, ու երբեք չմտածեք, որ ի
վիճակի չեք հաղթահարել մեղքերն ու կախ-
վածությունը: Ավելի վատ կլինի, եթե դադա-
րեք փորձել և շարունակեք մնալ թուլության
ու մեղքի մեջ: Միշտ ձգտեք առավելագույնն
անել՝ ձեր գործերով ցույց տալով, որ ցան-
կանում եք մաքրել անոթը ներսից, ինչպես
ուսուցանել է Փրկիչը: . . . Երբեմն որոշակի
դժվարությունների լուծումները գալիս են
ամիսներ տևած շարունակական ջանքերի
արդյունքում: Մորմոնի Գրքում հանդիպող
խոստումը, որ «շնորհի միջոցով է, որ մենք
փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք
կարող ենք անել» [2 Նեփի 25.23], կիրա-
ռելի է այս դեպքերում: Խնդրում եմ հիշել, որ
Փրկիչի շնորհի պարզը «անպայման չէ, որ
ժամանակով սահմանափակվի, այսինքն,
տրվի միայն մեր կողմից ամեն ինչ անելուց
«հետո»: Մենք կարող ենք ստանալ Նրա
շնորհը՝ Նախքան կգործադրենք մեր սեփա-
կան ջանքերը, դրա ընթացքում և հետո» [see
Bruce C. Hafen, *The Broken Heart: Applying the
Atonement to Life's Experiences* (1989), 155–56]:
(Ուլիսես Սոարես, «Վերցնենք մեր խաչը»,
Լիաժողով, Նոյեմբեր 2019, 113–14)



Կիսվեք ձեր ուսումնառությամբ

Ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ կիսվեք
Նրանով, ինչ սովորել եք հետևյալ արտահայ-
տության մասին «շնորհի միջոցով է, որ մենք
փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք
կարող ենք անել» (2 Նեփի 25.23): Ձեր կարծի-
քով, ինչպե՞ս կարող եք հետազայում Փրկիչի
գորացնող ուժը հրավիրել ձեր կյանք, որպեսզի
այն օգնի ձեզ ձերբազատվել ձեր ներկա թու-
լություններից և անհամապատասխանության
զգացումից:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ այն մասին, թե Տիրոջ տառապանքներն ինչպես կարող են օրհնել իմ կյանքը:

Մոսիա 14-ում Աբինադին մեջքերեց Եսայիայի
մարգարեությունն այն մասին, թե ինչ տառապանք-
ներ է կրել Հիսուս Թրիստոսը, որպեսզի կարողանա
բժշկել և փրկել մեզ:



Գերագույն համաժողովի ելույթում՝ «Զորա-
նալով Հիսուս Թրիստոսի Զավայթամբ»
(*Liahonua*, նոյեմբեր 2015, 61–64), Նախա-
գահ Դալլին Հ. Օուքսը խոսեց այն մասին,
թե Փրկիչն ինչպես կարող է մեզ տալ այն ուժը, որն

անհրաժեշտ է բոլոր մահկանացու մարտահրավեր-
ները հաղթահարելու համար:

Տիրոջ շնորհն ինչպե՞ս կարող է փոխել իմ կյանքը:

Դիտեք տեսանյութը՝ «Find Hope and Strength in
Heavenly Father and Jesus Christ» (5:21), որպեսզի
ավելին իմանաք այն մասին, թե Աստծո շնորհն
ինչպես կարող է օգնել մեզ հաղթահարել կախվա-
ծության սովորությունները և դիմանալ դժվարին
փորձություններին:



Գերագույն համաժողովի իր ելույթում՝
«Շնորհի պարգևը» (*Liahonua*, մայիս 2015,
107–10), Տասներկու Առաքյալների Զվո-
րումից Երեց Դիտեր Ֆ. Ուիլսոնը խոսեց
Աստծո շնորհի մասին, թե մենք ինչպես ենք օրհն-
վում դրանով և ինչ պետք է անենք այն ստանա-
լու համար:

ԴԱՍ 7. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի զորացնող ուժը

Մորմոնի Գիրքն ընդլայնում է մեր հասկացողությունը Փրկիչի Քավության ըմբռնման և խորության մասին: Դրանից մենք սովորում ենք, որ Հիսուս Քրիստոսը ոչ միայն մեզ հնարավորություն է տալիս մաքրվել մեղքից, այլ նաև կարող է մխիթարել և օգնել մեզ մեր տկարությունների և թույլությունների միջոցով: Այս դասի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան բացատրելու և վկայելու այս վարդապետության մասին: Ուսանողներին նաև հնարավորություն կտրվի պարզելու, թե նրանք ինչ կարող են անել, որպեսզի Տիրոջ շնորհը հետագայում հրավիրեն իրենց կյանք:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Երբ սկսեք, մտածեք ուսանողների մասին:

Ուսանողները դասի են գալիս նախնական փորձով, գիտելիքներով և հարցերով: Մենք կարող ենք թույլ տալ, որ սովորողների ներկայիս ըմբռնումը ելակետ լինի, երբ ուղղորդում ենք նրանց ուսման գործընթացում: Այս դասընթացում, երբ սկսում եք դասը կամ սկսում եք խոսել որոշակի թեմաների մասին, հաշվի առեք, թե ինչպես կարող եք բացահայտել, թե ուսանողներն ինչ հարցեր և գաղափարներ են ցանկանում քննարկել, ապա հարմարեցրեք ձեր ծրագրերը՝ ինչպես Հոգին է ուղղորդում:

Ալմա Կրտսերը ուսուցանում է Գեդեոնի մարդկանց, որ Տերը կսատարի Իր ժողովրդին

Ցուցադրեք հետևյալ նկարները և հարցրեք. «Ի՞նչ մաքառումներ, ցավեր ու տառապանքներ կարող ենք տանել, որոնք մեղսավոր ընտրությունների արդյունք *չեն*»: (Ուսանողների պատասխանները թվարկեք գրատախտակին:)





Մի թույլ տվեք ուսանողներին խորհելու (և գուցե գրելու) որոշ մարտահրավերների մասին, որոնք ցավ կամ տառապանք են պատճառել իրենց կամ նրանց, ում իրենք սիրում են:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Ալմա Կրոսերը սպասավորում էր Գեդեոնի հավատարիմ ժողովրդին, սովորեցրեց նրանց, թե Փրկիչի տառապանքներն ինչպես կարող են օգնել նաև ցավերի և տառապանքների ժամանակ, որոնք *չեն* պատճառվել մեղքով: Հանձնարարեք ուսանողներին կրկնել Ալմա 7.11–12 և փնտրել ցանկացած արտահայտություն, որն առանձնանում է նրանց համար: Հրավիրեք նրանց բացատրել իրենց գտածի իմաստը, և ինչո՞ւ է դա իրենց համար կարևոր:

Որպեսզի օգնեք ամրապնդել ուսանողների ըմբռնումը Փրկիչի մասին՝ իմանալով, թե ինչպես պետք է սատարել Նրա ժողովրդին, կարող եք

կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլանդի հետևյալ խոսքերով:



[Սատարել] բառը հաճախ է օգտագործվում սուրբ գրություններում՝ նկարագրելով Քրիստոսի հոգատարությունը և ուշադրությունը մեր հանդեպ: Այն բառացիորեն նշանակում է «օգնել»: Ինչպիսի հոյակապ միջոց է՝ արտահայտելու Փրկիչի հրատապ ջանքերը հասնում մեզ: Երբ Նա կանչում է մեզ գալ Իր մոտ և հետևել Իրեն, Նա նաև անապայման շտապում է օգնել մեզ: («Եկեք ինձ մոտ» [Church Educational System fireside for young adults, Mar. 2, 1997], 9, speeches.byu.edu)

Ալմա 7.11–12-ի ուսմունքները քննարկելուց հետո օգնեք ուսանողներին գտնել մի սկզբունք, որը նման է հետևյալին. **Փրկիչն Իր վրա վերցրեց մեր ցավերը, հիվանդություններն ու զայթակ-
ղությունները, որպեսզի Նա կարողանա սատա-
րել մեզ, երբ բախվում ենք մահկանացության
մարտահրավերներին:**

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ Փրկիչի Քավության վարդապետության այս կողմը:
- Ի՞նչ է ձեզ սովորեցնում այս ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի բնույթի և բնավորու-
թյան մասին:
- Այս ճշմարտության հանդեպ հավատն ինչպե՞ս կարող է օգնել ձեզ կամ ձեր սիրելի մարդկանց անձնական մարտահրավերների ժամանակ:

Դասարանով կամ փոքր խմբերով կարդացեք Երեց Բեդնարի հայտարարությունը դասարանի նախապատրաստական նյութի բաժին 1-ից և քննարկեք հետևյալ հարցը նախապատրաստա-
կան նյութից.

- Ե՞րբ եք զգացել, որ Փրկիչը ձեռք է մեկնում, մխիթարում կամ զորացնում ձեզ, երբ փորձու-
թյուններ եք ունենում ձեր կյանքում:

Տերը Մորոնիին ուսուցանում է Իր շնորհի գործության մասին:

Ցույց տվեք ուղեկցող նկարը և հրավիրեք մի ուսանողի բացատրել, թե Մորոնին ինչպես էր

վերաբերվում սուրբ գրություններ գրելու իր ունակությանը: (Անհրաժեշտության դեպքում ուսանողների հետ վերանայեք Եթեր 12.23–25-ը:)



Կարող եք ուսանողներին խնդրել մի րոպե հատկացնել և գրել ու մտածել իրենց մի քանի թերությունների և թույլ կողմերի մասին:

Միասին կարդացեք Եթեր 12.27-ը և հրավիրեք ուսանողներին փնտրել սկզբունքներ, որոնք կարող են օգնել մեզ Տիրոջ ձևով նայել մեր թույլություններին: Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք գալիս ենք դեպի Տերը, Նա օգնում է մեզ ճանաչել մեր թույլությունը: Ճանաչելով մեր թույլությունը՝ կարող ենք խոնարհ դառնալ: Երբ մենք խոնարհեցնում ենք մեզ և հավատում ենք Փրկիչին, Նրա շնորհը կարող է մեր թույլ կողմերը դարձնել ուժեղ կողմեր:** Ցուցադրեք ուսանողների կողմից հայտնաբերված

ճշմարտությունները, որպեսզի նրանք կարողանան վկայակոչել դրանք հետևյալ վարժության մեջ:

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Օգնեք ուսանողներին իմանալ և հասկանալ սկզբունքներն ու վարդապետությունը:

Երբ ուսանողները սուրբ գրությունների և մարգարեների խոսքերից բացահայտեն սկզբունքներն ու վարդապետությունը, օգնեք նրանց հասկանալ այս ճշմարտությունների իմաստներն ու նրբությունները, և թե ինչպես կարող են այդ ճշմարտությունները ազդել նրանց կյանքի վրա: Այս գիտելիքն ու ըմբռնումը կարող են գալ այն ժամանակ, երբ ուսանողները բացատրում են վարդապետության մի դրույթ կամ սկզբունք և կիսվում են դրան վերաբերող օրինակներով ու փորձով: Աղոթեք հարցեր տալու օգնության համար, որոնք ուսանողների միտքն ու սրտերը բացում են իրենց կողմից բացահայտված սկզբունքների համապատասխանության և կարևորության համար:

Հրավիրեք ուսանողներին դասարանով կամ փոքր խմբերով բացատրել, թե իրենց համար ինչ են նշանակում այդ սկզբունքները:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի խորը մտածել և զգալ այս սկզբունքները, կարող եք ցուցադրել հետևյալ հարցերից մի քանիսը և ուսանողներին թույլ տալ, որ ընտրեն, թե որոնք են միասին քննարկելու: Հավանաբար ժամանակ չի լինի դրանք բոլորը քննարկելու համար:

- Ինչպե՞ս կարող է թույլությունը օրհնություն լինել ինչ-որ մեկի համար: (Եթե ցանկանում եք, վկայակոչեք քույր Միշել Դ. Քրեյգի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
- Ինչպե՞ս կբացատրեք Տիրոջ շնորհը մեկին, ով զգացել է, որ ի վիճակի չէ հրաժարվել որևէ մեղքից կամ սովորությունից:

- Ի՞նչ եք սովորել Փրկիչի մասին՝ անցնելով ինքներդ ձեզ խոնարհեցնելու և ձեր կյանքում Նրա շնորհին ապավինելու գործընթացի միջով:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի Տիրոջ շնորհն ավելի լիարժեք ներգրավվի մեր կյանք: (Վերանայեք 2 Նեփի 25.23, 29-ը և Եկեղեցու ղեկավարների հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 3-ում:)

Վկայեք (կամ ուսանողին հրավիրեք վկայել) Փրկիչի Քավության, հատկապես Նրա գործության մասին, որն օգնում է մեզ հաղթահարել տառապանքը, վիշտը, թուլությունը և թերությունը:

Ուսանողներին ժամանակ տվեք խորհելու կամ գրանցելու անձնական տպավորությունները, որոնք նրանք զգացել են այսօր դասի ընթացքում:

Դուք կարող եք հրավիրել նրանց քննարկել հետևյալ հարցերը. Ի՞նչ եք կարծում, Տերը ինչ կցանկանար, որ դուք անեիք՝ Իր շնորհի ավելի մեծ հասանելիությունը ձեռք բերելու համար: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի մեծ խոնարհությամբ և հավատով առ Քրիստոս մոտենաք որևէ թուլության, որի դեմ պայքարում եք ներկայումս:

Հաջորդ անգամ

Ուսանողներին խնդրեք քննարկել, թե ինչ հարցեր ունեն նրանք հոգևոր աշխարհի, Հարության կամ Վերջին դատաստանի վերաբերյալ: Երբ նրանք պատրաստվեն հաջորդ դասին, հրավիրեք նրանց մտածել այն մասին, թե ինչ են անում հետմահու կյանքին պատրաստվելու համար:



ԴԱՍ 8. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կյանք մահից հետո

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Մենք չպետք է մահվանը նայենք որպես թշնամի: Լիարժեք ըմբռնումով և պատրաստվածությամբ՝ հավատը փոխարինում է վախին: Հույսը փոխարինում է հուսահատությանը» (“Doors of Death,” *Ensign*, May 1992, 74): Այս նախապատրաստական նյութն ուսումնասիրելիս հաշվի առեք, թե ինչ է սովորեցնում Մորմոնի Գիրքը մահվան մասին և մահից հետո կյանքի մասին, որը կարող է օգնել ձեզ «պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն» (Ալմա 12:24):

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ է պատահում, երբ մենք մահանում ենք

Երբ Կորիանթոնը՝ Ալմա Կրտսերի որդին, լքեց ծառայությունը և սեռական մեղք գործեց, նրա հայրը խոսեց նրա հետ նրա գործողությունների լրջության մասին: Ալման ընկալեց, որ Կորիանթոնը մտահոգված էր հետմահու կյանքի և մեղավորին սպասվող պատժի համար: Ալման իր որդուն ուսուցանեց, որ չնայած բոլոր մարդիկ հարություն կառնեն, միայն արդարներն են ապրելու Աստծո հետ (տես Ալմա 40:1, 9–10, 25–26): Նա նաև բացատրեց, թե ինչ է պատահում մեր հոգիների հետ մահվան և Հարության միջև:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Երբ կարդաք հոգևոր աշխարհի մասին Ալմայի որոշ ուսմունքները Ալմա 40:11–14-ում, համեմատեք արդարների և ամբարիշտների փորձառության միջև եղած տարբերությունները: (Երբ Ալման օգտագործեց «դրսի խավար» արտահայտությունը, նա անդրադառնում էր ամբարիշտների վիճակին մահվան և Հարության միջև և նկատի չունեի սատանայի և նրա հետևորդների վերջին վիճակը: Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Դժոխք», scriptures.ChurchofJesusChrist.org։)



Նախագահ Զոգեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է «տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել» արտահայտության մասին.



[Այս արտահայտությունը] պարզապես նշանակում է, որ նրանց մահկանացու գոյությունը մոտեցել է ավարտին, և նրանք վերադարձել են հոգիների աշխարհ, որտեղ նրանք պետք է լինեն արդարների կամ անարդարների հետ՝ համաձայն իրենց գործերի, որտեղ կապասեն հարությանը: (Joseph Fielding Smith, Answers to Gospel Questions, comp. Joseph Fielding Smith Jr. [1958], 2:85)

Առաջին Նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսը հետևյալն է ասել հոգիների աշխարհի մասին.



Սուրբ գրություններից սովորում ենք, որ մեր մարմնական մահից հետո, մենք, որպես հոգիներ, շարունակում ենք ապրել հոգիների աշխարհում: Սուրբ գրությունները նաև սովորեցնում են, որ հոգիների աշխարհը բաժանված է՝ այս կյանքում արդար ապրած կամ արդարակյաց մարդկանց և ամբարիշտ մարդկանց միջև: Նրանք նաև նկարագրում են, թե ինչպես են հավատարիմ հոգիներից ոմանք ավետարանը ուսուցանում նրանց, ովքեր ամբարիշտ կամ ըմբոստ կյանքով են ապրել (տես Ա Պետրոս 3.19, Վարդապետություն և Ուխտեր 138.19–20, 29, 32, 37): Ինչն ամենակարևորն է, ժամանակակից հայտնությունը բացահայտում է, որ փրկության աշխատանքը շարունակվում է հոգիների

աշխարհում (տես Վարդապետություն և Ուխտեր 138.30–34, 58), և չնայած մեզ հորդորում են չհետաձգել մեր ապաշխարությունը մահկանացու կյանքում (տես Ալմա 13.27), մենք սովորում ենք, որ այնտեղ ևս ապաշխարության ինչ-որ հնարավորություն կա (տես Վարդապետություն և Ուխտեր 138.58): («Տիրոջն ապավինիր», *Լիաժոնա*, Նոյեմբեր 2019, 26)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Հոգևոր աշխարհի մասին ճիշտ պատկերացում ունենալով, ինչպե՞ս կարող եք լավ ընտրություններ կատարել:

ԲԱԺԻՆ 2

Հարությանը հավատալով, ինչպե՞ս կարող եմ հույս ձեռք բերել:

Երբ Ալման ու Ամուդեկը ուսուցանում էին Ամմոնիայի ժողովրդին, Զիզրոմ անունով օրինագետը փորձեց աղավաղել Ամուդեկի խոսքերը և խաբլել Հիսուս Քրիստոսի մասին նրա ուսմունքների հիմքերը: Ի պատասխան՝ Ամուդեկը համարձակ վկայեց, որ Հարությունն ու մեղքից փրկությունը կարող են գալ միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 11.42–44-ը և փնտրեք օրինությունները, որոնք մենք կստանանք Հարության միջոցով:



Վկայելով Հարության կարևորության մասին, նախագահ Մյուզան Վ. Թաները՝ Երիտասարդ կանանց նախկին գերագույն նախագահը, ուսուցանել է.



Այս սրբազան մարմինները, որոնց համար մենք շատ երախտապարտ ենք, տառապում են բնական սահմանափակումներից: Ոմանք հաշմանդամ են ծնվում, իսկ ոմանք ողջ կյանքում տառապում են հիվանդության ցավերով: Բոլորիս մարմինները տարիքի հետ սկսում են աստիճանաբար խարխլվել: Երբ դա տեղի է ունենում, մենք երագում ենք այն օրը, երբ մեր մարմինները կբուժվեն և առողջ կլինեն: Մենք անհամբեր սպասում ենք Հիսուս Քրիստոսի հնարավոր Հարությանը: . . . Ես գիտեմ, որ Քրիստոսի միջոցով մենք կարող ենք ուրախության լիություն զգալ, որը մատչելի է միայն այն դեպքում, երբ ոգին և տարրը անբաժանորեն կապված կլինեն միմյանց հետ (տես Վ&Ու 93.33): ("The Sanctity of the Body," *Liahona*, Nov. 2005, 15)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Հարության մասին վկայություն ունենալով, ինչպե՞ս կարող եք ավելի մեծ հույսով և համարձակությամբ դիմագրավել կյանքի մարտահրավերներին:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի լավ պատրաստ լինեմ դիմավորել Աստծուն:

Ամմոնիայում ուսուցանելուց մի քանի տարի անց Ալման և Ամուդեկը մեկնեցին մեկ այլ միսիայի՝ այս անգամ հավատորաց գորամացիների մոտ: Ալման և Ամուդեկը սկսեցին հաջողություններ ունենալ ժողովրդի ավելի խոնարհ հատվածի շրջանում: Երբ Ամուդեկը ուսուցանեց մարդկանց նայել Հիսուս Քրիստոսին և հավատալ Նրա Քավության զորությանը, նաև հրավիրեց նրանց նախապատրաստվել հանդիպելու Աստծուն:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեք Աստծուն հանդիպելու համար, երբ կարդաք Ալմա 34.32–34-ը:



Անդրադառնալով մեր օրերում Աստծուն դիմավորելու նախապատրաստության կարևորությանը՝ Առաջին Նախագահությունից Հենրի Բ. Մյրինգն ուսուցանել է.



Վտանգ կա մի օր բառի մեջ, երբ այն նշանակում է «ոչ այսօր»: «Մի օր ես կապաշխարեմ»: «Մի օր ես կներեմ նրան»: . . .

Սուրբ գրությունները հստակեցնում են հետաձգման վտանգը: . . . Այս օրը Աստծո թանկագին պարգևն է: Այդ «Մի օր ես . . .» միտքը կարող է ժամանակի և հավերժության օրհնությունների հնարավորությունների գոլը լինել: («Այս օրը», *Լիահոնա*, մայիս 2007, 89)

Երբ Ալմա Կրոսները ծառայում էր ժողովրդին Ջարահեմլայի երկրում, նա մտածելու տեղիք տվող շատ հարցեր տվեց՝ օգնելով նրանց խորհել, թե ինչ պետք է անեն, որպեսզի պատրաստ լինեն կանգնել Աստծո ներկայության մեջ (տես Ալմա 5):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 5.15–17, 19, 27, 33 և խորհեք, թե ինչպես կպատասխանեիք Ալմայի հարցերին:



Գրի առեք ձեր մտքերը

Ալմայի հարցերի շուրջ խորհելուց հետո մտածեք, թե ինչպես կարող եք պատասխանել նախագահ Օուքսի հետևյալ հարցին. «Եթե [դուք] իմանայիք, որ վաղը կհանդիպեիք Տիրոջ հետ՝ [ձ]մեր վաղաժամ մահվան կամ Նրա անսպասելի գալուստի միջոցով, [դուք] ի՞նչ կանեիք այսօր»: (“Preparation for the Second Coming,” *Liahona*, May 2004, 9)

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Փրկության ծրագիրն ինչպե՞ս կարող է օգնել ինձ դիտարկել մահը հավերժության տեսանկյունից:

Դիտեք “What Happens to Our Bodies and Spirits after We Die?” (4:19) տեսանյութը՝ մահվան պարզ բացատրության համար:

Որտե՞ղից կարող եմ ավելին իմանալ Հարության նպատակի և կարևորության մասին:

3 Նեփի 11.1–17-ում մենք կարդում ենք հարության առաջ Քրիստոսի մասին պատմությունը, ով հայտնվեց Լիառատ երկրի մոտ 2500 մարդկանց:

Մորմոնի Գրքի հետևյալ մարգարեները հարության մասին լրացուցիչ ուսմունքներ են տալիս (տես 2 Նեփի 2.8), Հակոբ (տես 2 Նեփի 9.10–12), Աբիլադի (տես Մոսիա 15.20–24, 16.7–8), Սամուել Լամանացի (տես Հելաման 14.15–17) և Մորմոն (տես Մորմոն 7.5–7):

Այս տեսանյութում՝ «Finding Hope through the Resurrection of Christ» (4:41) Եկեղեցու անդամները կիսվում են, թե Փրկիչի Քավությունն ու Հարությունը ինչպես են հույս բերել նրանց:

Ի՞նչ պետք է անեմ, եթե մահից հետո կյանքի վերաբերյալ անպատասխան հարցեր ունենամ:



Իր ելույթում՝ «Ապավինիր Տիրոջը» (*Լիահոնա*, նոյեմբեր 2019, 26–29), նախագահ Օուքսը ուսուցանեց որոշ բաներ, որոնք մենք գիտենք հետմահու կյանքի մասին, և հորդորեց մեզ ապավինել Տիրոջը այն բաների վերաբերյալ, որոնք մենք դեռ չգիտենք:

ԴԱՍ 8. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Կյանք մահից հետո

Երբ ուսանողները եզրափակեն բաժին 2-ը՝ «Փրկագնման մեծ ծրագիրը», նրանք հնարավորություն կունենան բացատրել, թե հետմահու կյանքի ճիշտ ընկալումը ինչպես կարող է նրանց ավելի մեծ հարմարավետություն և հույս ապահովել այս կյանքում: Նրանք նաև կբացահայտեն այն գործողությունները, որոնք կարող են կատարել, որպեսզի ավելի լավ պատրաստվեն՝ հանդիպելու Աստծուն:

Ուսուցման առաջարկներ

Ալման և Ամուղեկը ուսուցանում են հոգիների աշխարհի և Հարության մասին:

Սկսեք դասը՝ կիսվելով հետևյալ սցենարով, և ուսանողներին հրավիրեք քննարկել, թե ինչ կասեն կամ ինչպես կպատասխանեն.

Պատկերացրեք, որ պատրաստվում եք այցելել մի մտերիմ ընկերուհու՝ Աննայի ընտանիքին, ով նոր է մահացել: Նա Եկեղեցուն է միացել մի քանի տարի առաջ: Նրա ընտանիքը կրոնասեր չէ: Երբ դուք կարեկցում եք Աննայի մորը, նա բռնում է ձեր ձեռքերը, նայում է ձեր աչքերի մեջ և ասում. «Կարո՞ղ եք ասել, թե ինչ է պատահում մեր մահից հետո»:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Ալմա 11.43–44 և Ալմա 40.11–14-ը՝ փնտրելով ճշմարտություններ հետմահու կյանքի մասին, որոնք կարող են մխիթարություն և հույս բերել Աննայի մորը: (Ուսանողները կարող են պարզել հետևյալ սկզբունքները. **Հիսուս Քրիստոսի շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն և կկանգնեն Աստծո առաջ դատվելու: Հարության մեջ մեր մարմինները կատարելագործվելու են: Եթե մենք արդար ենք, հոգիների աշխարհում մենք կհանգստանանք մեր բոլոր հոգսերից և վշտերից.)**

- Ի՞նչն է ձեզ համար ամենակարևորը Ալմայի և Ամուղեկի՝ Հարության վերաբերյալ ուսմունքների մեջ: Հարության մասին վկայություն ունենալով, ինչպե՞ս կարող ենք ավելի մեծ հույսով ու համարձակությամբ դիմագրավել մահկանացու մարտահրավերներին: (Կարդացեք Նախագահ Սյուզան Վ. Թանների հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
- Մուրբ գրություններից և ժամանակակից հայտնությունից ի՞նչ գիտենք հոգիների աշխարհի մասին: (Հանձնարարեք ուսանողներին վերանայել նախագահ Դալլին Հ. Օուքսի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)
- Տիրոջ վարդապետությունը հոգիների աշխարհի և Հարության մասին ինչպե՞ս է ցույց տալիս Նրա սերն ու ողորմությունը մեր հանդեպ:

Հրավիրեք ուսանողներին հանգիստ մտածել, թե ով կարող է կարիք ունենալ լսելու իրենց վկայությունը հետմահու կյանքի մասին, և նրանք ինչպես կարող են կիսվել իրենց վկայությամբ նրանց հետ, ովքեր այն լսելու կարիք ունեն: (Ժամանակ տրամադրեք ուսանողներին խորհելու իրենց պատասխանի մասին:)

Նշում. Ուսանողները գուցե լսել են տարբեր գաղափարներ հետմահու կյանքի մասին: Հիշեցրեք նրանց, որ այս գաղափարները զնահատելու համար մենք պետք է օգտագործենք աստվածայնորեն նշանակված աղբյուրներ, ինչպիսիք են՝ Մուրբ գրությունները և Եկեղեցու ղեկավարների ուսմունքները: Գուցե ձեզ համար օգտակար լինի կիսվել և քննարկել նախագահ Դալլին Հ. Օուքսի հետևյալ զգուշացումը.



Այսպիսով, մեր կանոնիկ սուրբ գրություններից սովորաձից բացի, մենք ուրիշ ինչ գիտենք հոգիների աշխարհի մասին: Եկեղեցու անդամներից շատերը տեսիլքներ կամ այլ ոգեշնչումներ են ունենում, ինչը տեղեկություն է հաղորդում այն մասին, թե ինչպես են գործերը վարում կամ կազմակերպում հոգիների աշխարհում, բայց այս անձնական հոգևոր փորձառությունները չպետք է հասկացվեն կամ ուսուցանվեն որպես Եկեղեցու պաշտոնական վարդապետություն: Եվ, իհարկե, այս թեմայով շատ շահարկումներ կան անդամների և այլոց կողմից հրատարակված աղբյուրներում, ինչպիսիք են ժամանակավոր մահվան վերաբերյալ գրքերը: («Տիրոջ ապավինիր», *Լիախոնա*, Նոյեմբեր 2019, 27)

Ալման և Ամուղեկը սովորեցնում են, որ մենք պետք է պատրաստվենք հանդիպել Աստծուն

Ցուցադրեք հետևյալ հայտարարությունները.

- Ես գիտեմ մարդկանց, ովքեր խախտում են պատվիրանները և ասում են. «Դա այնքան էլ կարևոր չէ, քանի որ ես միշտ էլ կարող եմ ապաշխարել հետագայում»:
- Աստված սիրող է: Նա ինձ հետ չի պահի սելեստիալ արքայությունից միայն այն պատճառով, որ ես հետաձգեցի ապաշխարությունը մի քանի մեղքերի համար:
- Ինչքան էլ փորձեմ, ես միշտ թերանում եմ, և երբեք պատրաստ չեմ հանդիպել Աստծուն:

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին խնդրեք ընտրել նախորդ հայտարարություններից մեկը, որը կցանկանային քննարկել: Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին կարդալ Ալմա 34.32–34-ը և օգտագործել այդ հատվածի ուսմունքները՝ գնահատելու իրենց ընտրած հայտարարությունը: Կարող եք յուրաքանչյուր խմբին տրամադրել հետևյալ հարցերը, որոնք կօգնեն ամրապնդել իրենց քննարկումը.

- Այս պնդման ո՞ր մասերն են ճիշտ, և ո՞ր մասերը կարող են կեղծ կամ ապակողմնորոշող լինել:
- Ալմա 34.32–34-ի ո՞ր սկզբունքներն են ամենաշատն առնչվում այս պնդմանը: Ինչպե՞ս կբացատրեք այս սկզբունքները մեկին, ով արել է այս հայտարարությունը: (Ուսանողները կարող են բացահայտել և բացատրել հետևյալ սկզբունքներից մի քանիսը. **Այս կյանքը ժամանակ է՝ պատրաստվելու հանդիպել Աստծուն և կատարելու մեր գործերը: Մենք պատրաստվում ենք հանդիպել Աստծուն՝ ապաշխարելով և կատարելագործվելով այսօր: Եթե հետաձգենք մեր ապաշխարությունը, մենք պատրաստ չենք լինի հանդիպել Աստծուն:**)

Երբ ուսանողները ժամանակ կունենան քննարկել այս հարցերը, որոշ խմբերի հրավիրեք դասարանի հետ կիսվել իրենց սովորածով:

- Ուրիշ ի՞նչ խնդիրներ են խանգարում մարդկանց պատրաստվել հանդիպելու Աստծուն: (Ուսանողների պատասխանները թվարկեք գրատախտակին:)

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Ուսանողներին ժամանակ տրամադրեք խորհելու համար:

Որպեսզի կարողանանք օգնել ուսանողներին ավելի լավ կիրառել իրենց սրտերը հասկացողության մեջ, նրանց ժամանակ տվեք՝ «դասարանում, որպեսզի ներանձնանան, խորհեն կամ գրեն այն ամենի մասին, որ նրանք հասկացել և զգացել են, մտածեն, թե ինչ յուրահատուկ գործողություններ նրանք պետք է կատարեն այն իրենց կյանքում կիրառելու համար:» (*Ավետարանի Ուսուցում և Ուսումնասիրություն. Ձեռնարկ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների Ուսուցիչների և Ղեկավարների համար* [2012], 2.5.4): Դիտեք տեսանյութը՝ «2.5.4 The Importance and Power of Pondering» (0:31), այս թեման ավելի լավ ըմբռնելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալման Ջարահեմ-լայի բնակիչներին մի քանի խորիմաստ հարցեր ուղղեց: (Ուսանողները վերանայեցին այս հարցերը, երբ ուսումնասիրեցին Ալմա 5.15–17, 19, 27, 33-ը գլուխները նախապատրաստական նյութի բաժին 3-ում:) Հրավիրեք ուսանողներին մի քանի թույլ տրամադրել և ավելի խորը ուսումնասիրել՝ ավելի շատ կարդալով և խորհելով Ալմայի հարցերի և ուսմունքների վերաբերյալ Ալմա 5.14–35-ում: Գուցե ցանկանաք օգնել նրանց հասկանալ, որ ավելի կարևոր է այն, ինչի շուրջ նրանք խորհում են, քան այն, թե քանի հատված են դրանք ընդգրկում:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո գուցե ցանկանաք, որ ուսանողները խորհեն հետևյալ հարցերից մեկի կամ երկուսի շուրջ:

- Ի՞նչ եղանակներով Փրկիչը կօգնի ձեզ, երբ ձգտեք պատրաստվել հանդիպել Աստծուն:
- Ի՞նչ փոփոխություն կամ փոփոխություններ պետք է կատարեք այսօր, որպեսզի ավելի պատրաստ լինեք Աստծուն հանդիպելու համար:

Կարող եք կիսվել նախագահ Օուքսի հետևյալ հայտարարությամբ.



Վերջին դատաստանը մեր *կատարած* բարի և չար գործերի հանրագումարի պարզ գնահատումը չէ: Դա մեր գործերի և մտքերի վերջնական ազդեցության գնահատումն է, այսինքն՝ նրա, ինչ մենք *դարձել ենք*: («The Challenge to Become», *Ensign*, Nov. 2000, 32)

Դուք կարող եք ուսանողներին խնդրել մտածել, թե իրենք ինչ են ցանկանում դառնալ:

Ուսանողների հետ կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ Երկնային Հայրը և Փրկիչը ցանկություն և ունակություն ունեն օգնելու նրանց դառնալ այնպիսի մարդ, որը խաղաղ է Իրենց ներկայության մեջ:

Խրախուսեք ուսանողներին խորհել, ծրագրել կամ գրել, թե նրանք ինչ հատուկ գործողություններ են ձեռնարկելու այսօր, որպեսզի ցույց տան իրենց անկեղծ ցանկությունը՝ ավելի պատրաստ լինել հանդիպել Աստծուն: (Օգտակար կլինի նաև վերանայել նախագահ Հենրի Բ. Այրինգի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ում:)

Կարող եք ավարտել դասը՝ հրավիրելով ուսանողներին կիսվել, թե ինչ են սովորել իրենց փորձառությունից, երբ միասին ուսումնասիրում էին Փրկագնման մեծ ծրագրի բաժին 2-ը: Կարող եք նաև ուսանողներին խնդրել վկայել, թե ինչպես է այս գիտելիքն ազդում Փրկիչի հանդեպ իրենց գնահատանքի և Նրան ավելի շատ նմանվելու իրենց ցանկությունների վրա:

Հաջորդ անգամ

Վկայեք, որ Տերը մեզանից յուրաքանչյուրի համար ճանապարհ է պատրաստել Աստծո ներկայությունը վերադառնալու համար: Նրա մոտ վերադառնալու մեր այս ճանապարհը կոչվում է Քրիստոսի վարդապետություն, և այդ թեման մեր ուշադրության կենտրոնում է լինելու հաջորդ բաժնում: Երբ ուսանողները պատրաստվեն հաջորդ դասին, հրավիրեք նրանց մտածել, թե Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը ինչպես է պատրաստում նրանց հանդիպել Աստծուն:

ՄԱՍ 3

Զրիստոսի վարդապետությունը



ԴԱՍ 9. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հավատ առ Հիսուս Քրիստոս

Երբևէ զգացե՞լ եք բարելավվելու և փոխվելու մեծ ցանկություն, որպեսզի կարողանաք ավելի նմանվել Փրկչին: Եղբայր Բրայան Ք. Էշթոնը՝ Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը, ուսուցանել է. «Քրիստոսի վարդապետությունն է, որ մեզ թույլ է տալիս ձեռք բերել հոգևոր ուժ, որը մեզ կբարձրացնի մեր ներկայիս հոգևոր վիճակից դեպի այն վիճակը, որտեղ մենք կարող ենք կատարելագործվել ու նմանվել Փրկչին» («Քրիստոսի վարդապետությունը», *Լիսինաս*, նոյեմբեր 2016, 106): Քրիստոսի վարդապետությունը հիմնվում է՝ Նրա և Նրա Քավության հանդեպ հավատի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարզևր ստանալու և մինչև վերջ համբերելու վրա (տես 2 Նեփի 31.2, 10–21, 3 Նեփի 27.13–22): Երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատով սկսեք ուսումնասիրել Նրա վարդապետությունը, մտածեք այն եղանակների մասին, որոնցով կցանկանայիք փոխվել, և այն վերափոխված մարդու մասին, որը կցանկանայիք դառնալ:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ կարող եմ անել՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հավատը ամրապնդելու համար:

Հետևյալ ամփոփումը բացատրում է, թե ինչ է նշանակում հավատ ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ ունենալ նշանակում է՝ ամբողջովին ապավինել

Նրան, վստահել Նրա անսահման զորությանը, խելքին և սիրուն: Այն ընդգրկում է նաև հավատալ Նրա ուսմունքներին: Դա նշանակում է հավատալ, որ, թեև մենք չենք հասկանում բոլոր բաները, սակայն Նա հասկանում է: . . . Նա միշտ պատրաստ է օգնել մեզ, երբ մենք հիշում ենք Նրա խնդրանքը. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք» (Վարդապետություն և Ուխտեր 6.36): («Հավատ Հիսուս Քրիստոսի հանդեպ», Ավետարանական թեմաներ, topics.ChurchofJesusChrist.org)

Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էջլին՝ Նախագահող Եպիսկոպոսության նախկին խորհրդականը, ասել է, որ «հավատը ընտրություն է, և այն պետք է փնտրել ու զարգացնել» («Հավատք՝ ընտրությունը ձերն է», *L'Espresso*, նոյեմբեր 2010, 32):

Ալմա մարգարեն գորեղ կերպով ուսուցանեց հավատի այս սկզբունքի մասին: Ալման անհանգստանում էր գորամացիների մասին, որոնք դադարել էին հավատալ Հիսուս Քրիստոսին և հեռացել էին Նրա Եկեղեցուց: Երբ Ալման իր միսիոներական գույզներին հետ գնաց քարոզելու նրանց, պարզեց, որ գորամացիներից ոմանք խոնարհվել էին իրենց աղքատության պատճառով և ընկալում էին նրա ուղերձը: Նա ցանկանում էր, որ նրանք հասկանային, թե Փրկիչն ինչպես կարող է փոխել իրենց կյանքը: (Տես Ալմա 31–32)

Զորամացիներին ուսուցանելիս Ալման Աստծո խոսքը համեմատեց սերմի հետ և բացատրեց, որ այն կաճի, երբ տնկենք մեր սրտերում և զգուշորեն սնուցենք հավատքի գործադրմամբ (տես Ալմա 32.26–33):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Երբ կարդաք Ալմա 32.21, 27–30-ը, նշեք բառեր կամ արտահայտություններ, որոնք ուսուցանում են, թե ինչպես կարող ենք մեծացնել մեր հավատը:

Մեկնաբանելով Ալմայի փոխաբերությունը Աստծո խոսքը ներկայացնող սերմերի մասին, Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստորֆը՝ այն ժամանակ Առաջին Նախագահությունից, ուսուցանել է.



Շատ հաճախ մենք ավետարանին մոտենում ենք այն հողագործի նման, ով առավոտյան սերմ է դնում գետնին, իսկ ցերեկը եգիպտացորեն է ակնկալում կողրի վրա: . . .

Գիտելիքն այն մասին, որ սերմը լավն է, բավարար չէ: Մենք պետք է «սնուցենք այն մեծ խնամքով, որպեսզի այն արմատ գցի» [Ալմա 32.37]:

Աշակերտությունը հանդիսատեսի սպորտ չէ: Մենք չենք կարող ակնկալել, որ հավատքի օրհնությունները կզգանք՝ անգործ մնալով և կողքից դիտելով, ավելի շատ, քան կարող ենք զգալ առողջության օգուտները բազմոցի վրա նստած՝ հեռուստացույցով սպորտային խաղեր դիտելով և խորհուրդ տալով մարզիկներին: («Աշակերտի ուղին», *L'Espresso*, մայիս 2009, 76, 77)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ խորհուրդ կարող եք տալ մեկին, որը հուսահատված է, քանի որ նա գործել է հավատքով, բայց դեռ չի զգացել հավատի պտուղները:

ԲԱԺԻՆ 2

Հավատի միջոցով Աստծո խոսքը սնուցելով, ինչպե՞ս կարող եմ ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին:

Ալման ուսուցանել է, որ երբ սերմը ծիլ տա և սկսի աճել, մենք կիմանանք, որ սերմը լավն է, և մեր հավատը կամրապնդվի: Այս նախնական աճից հետո Ալման նախազգուշացրեց, որ չպետք է «մի կողմ դնեք ձեր հավատը» և անտեսեք ծառը սնուցելը (տես Ալմա 32.30–38):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 32.41–43-ը՝ փնտրելով օրհնությունները, որոնք գալիս են, երբ ծառը սնուցում ենք կայուն, ցմահ հավատով:



Երբ Ալման ավարտեց ուսուցանել գործառնալիսին հավատքի մասին, նա նշեց, որ այն սերմը, որն ինքը ցանկանում էր, որ նրանք տնկեին իրենց սրտերում, այն ուղերձն էր, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, ով «պիտի տառապի ու մեռնի նրանց մեղքերը քավելու համար. և որ նա պիտի բարձրանա մեռելներից» (Ալմա 33.22–23): Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Զեֆրի Ա. Հոլլանդն գրել է.



Այս փայլուն ուսուցման մեջ Ալման ավարտում է հավատքի ընդհանուր մեկնաբանությունն առ այն, որ Աստծո խոսքը նման է սերմի, և ընթերցողին տեղափոխում է դեպի կենտրոնացած քննարկում Քրիստոսի՝ որպես Աստծո խոսքի հանդեպ հավատքի վերաբերյալ, որն աճում է ու դառնում պտղաբեր ծառ, որի պտուղը Քրիստոսի սիրո մասին Լեքիի ավելի վաղ ընկալումն է: . . . Քրիստոսը հավերժական կյանքի սերմն է, ծառը և պտուղը: (Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon [1997], 169)



Խորհեք դասին նախապատրաստվելիս

Հավատով գործելով և Հիսուս Քրիստոսին ու Նրա ավետարանը ձեր սրտում տնկելով, ինչպե՞ս է փոխվել ձեր վկայությունն ու դարձը:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ օրհնվել՝
հավատ գործադրելով Հիսուս
Քրիստոսի հանդեպ:

Երբ Մորմոնին ավարտեց իր աշխատանքը Մորմոնի Գրքի վերաբերյալ, նա ներառեց քարոզ, որը նրա հայրը՝ Մորմոնը, ասել էր շատ տարիներ առաջ (տես Մորմոնի 7.1): Այս քարոզում Մորմոնն ուսուցանեց, թե ինչ կարելի է իրականացնել հավատքի գործության միջոցով:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մորմոնի 7.25–26, 33-ը և քննարկեք այն օրհնություններն ու հրաշքները, որոնք մենք

կարող ենք զգալ, երբ հավատք ենք գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Աիչարդ Գ. Մքոթը սովորեցրել է, թե ինչպես է մեր հավատը Քրիստոսի հանդեպ լրացուցիչ ուժ բերում մեր կյանք.



Հիսուս Քրիստոսի հանդեպ անսասան հավատ ձեռք բերել նշանակում է՝ լցնել ձեր կյանքը Քրիստոսի լույսով: Դուք այլևս միայնակ չեք պայքարելու այն մարտահրավերների դեմ, որոնք գիտեք, որ չեք կարող ինքնուրույն լուծել կամ վերահսկել, քանի որ Նա ասել է. *«Եթե դուք հավատք ունենաք առ ինձ, ապա զորություն կունենաք՝ անելու ինչ-որ նպատակահարմար է ինձ»* [Մորոնի 7.33, շեղագիրն ավելացված է]:

Եթե հուսալքված եք, տանջվում եք զանցանքի հետևանքով, հիվանդ եք, միայնակ եք կամ մխթարության և աջակցության մեծ կարիք ունեք, ես հանդիսավոր կերպով վկայում եմ, որ Տերը կօգնի ձեզ, երբ դուք ուշադիր հնազանդվեք այն հոգևոր օրենքին, որի վրա նախանշվում է այդ օգնությունը: Նա ձեր Հայրն է: Դուք նրա զավակն եք: Նա սիրում է ձեզ: Նա երբեք չի հիասթափեցնի ձեզ: Ես գիտեմ, որ Նա կօրհնի ձեզ: (“Obtaining Help from the Lord,” *Ensign*, Nov. 1991, 86)



Գրի առեք ձեր մտքերը

Բացահայտեք Մորմոնի Գրքում մեկ կամ երկու մարդու, ովքեր հավատ են ցուցադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ և գրեք, թե ինչպես են նրանք օրհնվել: Պատրաստ եղեք դասի

ընթացքում կիսվել ձեր օրինակներով: Կարող եք նաև հաշվի առնել, թե ինչպես եք փորձել Տիրոջ զորությունը, երբ հավատ եք գործադրել Նրա հանդեպ:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Քրիստոսի վարդապետությունը մասին:

Դուք կարող եք ավելին իմանալ Քրիստոսի վարդապետության մասին՝ ուսումնասիրելով 2 Նեփի 31.2, 10–21 և 3 Նեփի 27.13–22-ը:



Եղբայր Բրայան Զ. Էշթոնը բացատրել է Քրիստոսի վարդապետությունը՝ «Քրիստոսի վարդապետությունը» իր ելույթում (*Լիաիհուա*, նոյեմբեր 2016, 106–9):

Ի՞նչ կարելի է կատարել Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով:

Ինչպես գրանցված է Եթեր 12.3–22-ում, Մորոնին ուսուցանեց հավատի կարևորության մասին և բերեց հրաշքների օրինակներ, որոնք իրականացվեցին Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով:

«Foundations of Faith» (4:13) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Քվենտին Լ. Քուլը քննարկում է, թե որքանով է անհրաժեշտ կայուն հավատը անհրաժեշտ տևական հոգևոր աճի համար:

ԴԱՍ 9. ՈՒՍՈՒՑԻ ՆՅՈՒԹ

Հավատ առ Հիսուս Քրիստոս

Քրիստոսի վարդապետությունը մեզ հնարավորություն է տալիս փոխվել, նմանվել մեր Փրկչին և ստանալ բոլոր օրհնությունները, որոնք Նա հասանելի է դարձրել Իր Քավության միջոցով: Այս դասում ուսանողները կքննարկեն Տիրոջ վարդապետության առաջին տարրը՝ հավատ առ Հիսուս Քրիստոս: Նրանք հնարավորություն կունենան բացահայտել հավատքի օրհնությունները և բացատրել, թե ինչպես հավատ զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ուսանողները կորոշեն նաև, թե ինչ կարող են անել Տիրոջ հանդեպ իրենց հավատն ամրապնդելու համար:

Ուսուցման առաջարկներ

Ալման սովորեցնում է զորամացիներին, թե ինչպես մեծացնել իրենց հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ

Դուք կարող եք դասը սկսել՝ ցուցադրելով նախապատրաստական նյութի ներածական պարբերությունը, և խնդրել որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Կարող եք վկայել, որ հավատը, ապաշխարությունը, մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ դիմանալը կարող են դուռ բացել Հիսուս Քրիստոսի առջև, որպեսզի Նա իսկապես վերափոխի մեզ և դարձնի մեզ սրբազան ու երջանիկ մարդիկ: Այս դասի քննարկման ընթացքում ուսանողներին հրավիրեք մտածել, թե ինչպես կարող են մեծացնել իրենց հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ, ինչպես նաև փոխելու, բժշկելու ու օգնելու Նրա գործության հանդեպ:

Հրավիրեք որևէ պատրաստակամ ուսանողի կիսվել, թե նա ինչպես կբացատրեր, թե ինչ է հավատը, և ինչո՞ւ է հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ այդքան կարևոր:

Ցուցադրեք և միասին կարդացեք հետևյալ սցենարը.

Քոլեջի ձեր ընկերուհին՝ Վիկտորիան, դաստիարակվել է քրիստոնեական ընտանիքում: Նա երբեք կասկածի տակ չէր դրել Հիսուս Քրիստոսի աստվածությունը, մինչև նրա դասախոսներից

մեկը կասկածի տակ դրեց Նրա հրաշքների, Քավության և Հարության իրականությունը: Վիկտորիան ցնցվեց իր լսածից: Քանի որ նա գիտի, որ դուք կրոնասեր եք և հավատում եք Հիսուս Քրիստոսին, ապա հարցնում է, թե որտեղից գիտեք, որ Հիսուսն իրականում Աստծո Որդին է և աշխարհի Փրկիչը: Նա նաև հարցնում է, թե ինչպես կարող է ավելի մեծ հավատ ձեռք բերել Նրա հանդեպ:

- Ինչպե՞ս կպատասխանեիք Վիկտորիայի հարցերին:

Երբ ուսանողները պատասխանեն, օգտագործեք սուրբ գրությունների հետևյալ հատվածներն ու հարցերը, որոնք կօգնեն խորացնել քննարկումը՝ ելնելով ձեր ուսանողների կարիքներից:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Դիտեք, լսեք և հասկացեք: Ոչ մի ուսանող կամ դասարան նման չէ մյուսին: Երբ դիտում և լսում եք ձեր ուսանողներին, փորձեք պարզել նրանց իրական հոգևոր հետաքրքրություններն ու կարիքները: Հարցեր տվեք, որոնք ժամանակին և տեղին են և հանգեցնում են արդար գործողության: Այս դասի ընթացքում հարցերը կարող են հուշել, ուղղորդել և ոգեշնչել ձեզ, երբ դեկավարում եք դասի քննարկումները: Ձեր հիմնարար հարցերից մի քանիսը կարող են լինել այն հարցերը, որոնք ձեր միտքն են գալիս

ուսուցանելիս: Բայց նաև հիշեք, որ ձեզանից չի ակնկալվում տալ բոլոր հարցերը: Ուսանողները կարող են նաև խորիմաստ հարցեր տալ, որոնք ցույց են տալիս ավետարանական ճշմարտությունների խորը ընկալումը:

Անհրաժեշտության դեպքում ուսանողներին հիշեցրեք, որ Ալման ուսուցանեց աղքատ գորամացիների մի խմբի, թե Աստծո խոսքի հանդեպ հավատով գործելով, ինչպես կարող ենք ամրացնել մեր հավատը: Կարող եք հրավիրել ուսանողներին վերանայել Ալմա 32.21, 27–30, 41–43-ը՝ փնտրելով սկզբունքներ, որոնք կարող են օգնել Վիկտորիային: Երբ ուսանողները կիսվեն Ալմայի ուսուցանած սկզբունքներով, տվեք հետևյալ հարցերից մի քանիսը:

- Ինչպե՞ս կբացատրեիք Ալմայի տված հավատի սահմանման իմաստն այնպես, որ նույնիսկ երեխան կարողանա հասկանալ: (Տես Ալմա 32.21:)
- Ըստ Ալմա 32. 27-30-ի, հավատի գործադրումը ինչպե՞ս կարող է հանգեցնել հավատի մեծացմանը: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Հավատ գործադրելով և Աստծո խոսքը փորձարկելով՝ մենք կստանանք հոգևոր հաստատում և մեր հավատը կամրապնդվի:** Գրատալստակին գրեք այս սկզբունքը կամ նմանատիպ մի սկզբունք՝ օգտագործելով ուսանողների բառերը: Ե՞րբ եք կիրառել այս սկզբունքը և զգացել, որ ձեր հավատն ամրապնդվում է: Ի՞նչ խորհուրդ կարող եք տալ մեկին, ով հուսալքված է, քանի որ հավատքով է գործել, բայց կարծում է, որ ինքը դեռ չի ունեցել հավատի պտուղները: (Օգտակար կլինի վերանայել Նախագահ Դիտեր Ֆ. Ուիտորֆի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)
- Համաձայն Ալմա 32.28-ի ինչպե՞ս կարող ենք իմանալ՝ արդյո՞ք այդ խոսքը լավն է մեր հավատի փորձարկման մեջ: (Ուսանողները կարող են բացահայտել այսպիսի արտահայտություններ՝ «ուռչելու շարժումները», «մեծացնել իմ հոգին», «լուսավորել իմ

հասկացողությունը» և «հրաշալի լինել ինձ համար»): Եթե դուք զգացել եք այս ազդեցություններից որևէ մեկը, ինչպե՞ս կբացատրեիք ձեր փորձառությունը մեկ ուրիշին:

- Ի՞նչ է ուսուցանել Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդը Հիսուս Քրիստոսի և սերմերի, պտուղների ու ծառերի հետ Նրա ամենօրյան վերաբերյալ: (Տես նախապատրաստական նյութի բաժին 2-ը) Հավատով գործելով և Հիսուս Քրիստոսին ու Նրա ավետարանը ձեր սրտում տնկելով, ինչպե՞ս է փոխվել ձեր վկայությունն ու դարձը: Ի՞նչ կարող եք անել ծառը ավելի մեծ խնամքով սնուցելու համար, որպեսզի այն ավելի խորը արմատ ձգի ձեր սրտում:
- Ի՞նչ եք դուք իմացել Փրկչի մասին, որը մեծացնում է ձեր ինքնավստահությունն ու վստահությունը Նրա հանդեպ:

Մորմոնը ուսուցանում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ գործադրելու գործության և օրհնությունների մասին

Հանձնարարեք ուսանողներին վերանայել Մորմոնի 7.25–26, 33-ը և վկայեք, որ **երբ մենք հավատ ենք գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ, մենք գործություն կունենանք անել այն, ինչը նպատակահարմար է Քրիստոսին:** (Բացատրեք, որ այս համատեքստում *նպատակահարմար* բառը նկարագրում է ինչ-որ բան, որը կօրինի մեզ, որը համահունչ է Աստծո կամքին: Նշեցրեք ուսանողներին, որ նրանց հանձնարարվել էր նախապատրաստական նյութում հայտնաբերել Մորմոնի Գրքի մարդկանց, ովքեր օրհնություններ են ստացել կամ հրաշքներ տեսել՝ հավատ գործադրելով Հիսուս Քրիստոսի հանդեպ (տես բաժին 3): Հրավիրեք ուսանողներին դասաբանով կամ քննարկման փոքր խմբերով կիսվել իրենց օրհնակներով: Հետևյալ հարցերը կարող են օգնել խորացնել նրանց քննարկումը.

- Այդ մարդիկ ինչպե՞ս գործադրեցին իրենց հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

- Որո՞նք են օրհնություններից կամ հրաշքներից մի քանիսը, որոնք նրանք ստացել են Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ գործադրելով:
- Ի՞նչ օրհնություններ կամ հրաշքներ եք տեսել՝ հավատք գործադրելով Հիսուս Քրիստոսի հանդեպ: (Կարող եք կրկնել երեց Ռիչարդ Գ. Սքոթի պնդումը նախապատրաստական նյութի բաժին 3-ում:)

Ուսանողներին ժամանակ տվեք խորհելու Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց սեփական հավատքի մասին և քննարկել, թե ինչ պետք է անեն Նրա հանդեպ հավատը գորացնելու և գործադրելու համար:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը, բնականաբար, տանում է դեպի ապաշխարություն, որը Քրիստոսի վարդապետության երկրորդ էական սկզբունքն է (տես Հելաման 14.13): Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել նախապատրաստական նյութը և խորհել, թե ապաշխարությունն ինչո՞ւ պետք է դիտարկվի որպես աստվածային նվեր, որը պետք է ընդունվի, այլ ոչ թե սարսափելի բեռ, որից պետք է խուսափել:



ԴԱՍ 10. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ապաշխարություն և ներում

Ապաշխարությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետության մասն է: Դա Նրա պարզևն է նրանց, ովքեր ցանկանում են փոխվել և մաքրվել մեղքից: Կարո՞ղ եք հիշել, թե ինչ եք զգացել, երբ անկեղծորեն ներողություն եք խնդրել և զղջացել անցյալում կատարած ինչ-որ բանի համար: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթը ուսուցանել է. «Հիշե՛ք, ապաշխարությունը պատիժ չէ: Դա հույսով լի ուղին է դեպի ավելի փառահեղ ապագա» («Անձնական գործություն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով», *Հիստորիա*, նոյեմբեր 2013, 84): Երբ դասի եք պատրաստվում, մտածեք, թե Փրկիչի ապաշխարության և ներման պարզևն ինչպես է ձեզ թույլ տալիս սովորել, աճել և ավելի նմանվել Նրան:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ իսկապես ապաշխարել և ստանալ Տիրոջ ներումը իմ մեղքերի համար

Ալմա Կրտսերը չէր հավատում իր հոր՝ Ալմա Ավագի ուսմունքներին: Մոսիա թագավորի որդիների հետ միասին Ալմա Կրտսերը եռանդուն կերպով փորձում էր ոչնչացնել Փրկիչի եկեղեցին: Մինչ նրանք զբաղված էին այս չար գործով, Տիրոջ հրեշտակը հայտնվեց նրանց և նախազգուշացրեց Ալմային դադարեցնել իր չար գործերը, այլապես նա «կվտարվեր» (Մոսիա 27.16): Այս փորձառությունից խիստ շփոթված՝ Ալման չէր կարողանում

խոսել կամ շարժվել: Մոսիայի որդիները Ալմա Կրտսերին տարան իր հոր մոտ և պատմեցին այն ամենը, ինչ պատահել էր: (Տես Մոսիա 27.8–20:)





Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ալմա Կրտսերի փորձառության մասին կարդացեք Մոսիա 27.35 և Ալմա 36.12–13, 17–21, 24-ում: Ընթերցելիս նշեք կամ կազմեք այս հատվածներում ուսուցանված ապաշխարության և ներման վերաբերյալ սկզբունքների ցուցակը: Պատրաստվեք և այս սկզբունքներով կիսվեք դասարանում: Հիշեք, որ Ալմայի փորձառությունն ավելի դրամատիկ է, քան այն, ինչի միջով անցնում ենք մեզանից շատերը, երբ ապաշխարում են: Այնուամենայնիվ, այս պատմություններից մենք կարող ենք հզոր սկզբունքներ սովորել:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդը հետևյալ դիտարկումն է կատարել մեր ապաշխարության մեջ Տիրոջ կարևոր դերի մասին.



Քրիստոսը զորությունն է բոլոր ապաշխարությունների համար: . . . Ալման հուզվել էր իր հոր ուսմունքով, բայց հատկապես կարևոր է, որ նրա հիշած մարգարեությունը վերաբերում էր «մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյանը»՝ քավելու համար աշխարհի մեղքերը:» (Ալմա 36.17) Դա է այն անունը, և դա է այն ուղերձը, որ յուրաքանչյուր մարդ պետք է լսի: . . . Որքան էլ տարբեր լինեն մեր աղոթքներն ու կարիքները, ամեն ինչ ինչ-որ կերպ կախված է այդ խնդրանքից. «Ո՛վ Հիսուս, դո՛ւ, Աստծո՛ Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ»: Նա պատրաստ է տալ այդ ողորմությունը: Նա իր կյանքով վճարեց՝ այն տալու համար: (Որքան էլ երկար ու դժվար լինի ճանապարհը [1985], 85)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ընտրեք հետևյալ հարցերից մեկը, որին կցանկանայիք ավելի լավ պատասխանել:

- Իրականում ի՞նչ է նշանակում ապաշխարել: Ես անցել եմ բոլոր քայլերով, բայց տարբերություն չեմ գտնում:
- Ինչպե՞ս կարող եմ ուժ գտնել իրապես փոխվելու համար: Ես հուսահատված եմ, քանի որ իրոք ջանում եմ առաջադիմել, բայց անընդհատ նույն սխալներն եմ թույլ տալիս:
- Ինչո՞ւ ես պետք է անգամ փորձեմ ապաշխարել: Ես այնքան վատ մեղքեր ունեմ, որ ինձ չեն կարող ներել:

Խորհեք Ալմայի փորձի և Մորմոնի Գրքի այլ պատմությունների մասին, որոնք կարող են պատասխանել ձեր ընտրած հարցին: Պատրաստված եկեք դասարան, որպեսզի կիսվեք այն սկզբունքներով ու հատվածներով, որոնք, ձեր կարծիքով, լավագույնս կանդադարեցնեն այս հարցին:

ԲԱԺԻՆ 2

Տիրոջը կոտրված սիրտ և փշրված հոգի նվիրելը ինչպե՞ս է հանդիսանում անկեղծ ապաշխարության մաս:

Նեփիազցիներն ապրում էին Մովսեսի օրենքով, մինչև Հիսուս Քրիստոսը անձամբ հայտնվեց նրանց: Որպես Մովսեսի օրենքի մաս, Փրկիչն Իր ժողովրդին պատվիրեց կենդանիների զոհեր մատուցել՝ որպես Իր քավիչ զոհաբերության խորհրդանիշ:



խնդրի իրենցից՝ առանց տատանման և հապաղման: Մենք դադարում ենք ամեն ինչ անել մեր ձևով և սովորում ենք անել դրանք Աստծո ձևով: Հնազանդվելու նման պայմանով է միայն Զավությունը ուժի մեջ մտնում, և տեղի է ունենում իսկական ապաշխարություն: («Կ ոտրված սիրտ և փշրված հոգի», *Լիահոնա*, նոյեմբեր 2007, 32)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Երբ Փրկիչը խոսեց Նեփիացիների հետ, ովքեր վերապրեցին Նրա մահվանն ուղեկցող կործանումից հետո, Նա հայտարարեց, որ այլևս չի ընդունի կենդանիների զոհաբերությունը: Կարդացեք 3 Նեփի 9.19-20-ը՝ փնտրելով նոր զոհաբերությունը, որը Փրկիչը պահանջեց Իր ժողովրդից:

Յոթանասունից Երեց Բրյուս Դ. Փորթերը բացատրել է «կոտրված սիրտ և փշրված հոգի» արտահայտության իմաստը (3 Նեփի 9.20):



Երբ մենք մեղք ենք գործում և ցանկանում ենք ներվել, կոտրված սիրտն ու փշրված հոգին պիտի զգան «Աստուծոյ ասված կերպով տրտմությունը [որ] ապաշխարություն է գործում» (Բ Կորնթացիս 7.10): Սա տեղի է ունենում, երբ մեղքից մաքրվելու մեր ցանկությունն այնքան խորն է, որ մեր սիրտը ցավում է, և մենք փափագում ենք խաղաղության մեջ լինել Երկնային Հոր հետ: Նրանք, ովքեր ունեն կոտրված սիրտ և փշրված հոգի, պատրաստ են անել ամեն ինչ, որ Աստված



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք անել, որպեսզի Տիրոջը ցույց տաք կոտրված սիրտ և փշրված հոգի առաջարկելու ձեր անկեղծ ցանկությունը:

ԲԱԺԻՆ 3

ԻՆՉՈ՞Ւ Է Փրկիչն այդքան պատրաստակամ՝ ներել ինձ իմ մեղքերի համար

Մոսիա թագավորի օրոք «աճող սերնդից շատերը» (Մոսիա 26.1) համոզեցին Եկեղեցու անդամներին լուրջ մեղքեր գործել: Զկողմնորոշվելով, թե ինչպես վարվել այս իրավիճակում, Ալմա Ավագը դիմեց Տիրոջը՝ առաջնորդության համար:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 26.22, 30-ը, փնտրելով, թե Ալմա Ավագը ինչ իմացավ Տիրոջ՝ Ներելու պատրաստակամության մասին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյլ Գ. Ռենլանդը ուսուցանել է.



Հիսուս Քրիստոսը *կարող է* Ներել, քանի որ Նա է վճարել մեր մեղքերի գինը (տես Եսայիա 53.5):

Մեր Քավիչը *ընտրում է* Ներել՝ Իր անգուգական կարեկցանքի, ողորմածության և սիրո շնորհիվ:

Մեր Փրկիչը *ցանկանում է* Ներել, որովհետև դա Նրա աստվածային հատկանիշներից մեկն է:

Եվ, ինչպես Բարի Հովիվը, Նա ուրախանում է, երբ մենք ընտրում ենք ապաշխարության ուղին (տես Ղուկաս 15.4–7; Վարդապետություն և Ուխտեր 18.10–13): («Ապաշխարություն. ուրախալի ընտրություն», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2016, 123, շեղագիրն ավելացված է)

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը նաև հավաստիացրել է.



Ապշած եմ Փրկիչի օղակող, զոջացողի համար կարեկցանքով և սիրով լի բազուկների վրա, անկախ այն բանից, թե որքան եսասեր է լքված մեղքը: Ես վկայում եմ, որ Փրկիչը կարող է և ձգտում է Ներել մեր մեղքերը: («Ապաշխարեք, . . . որ ես կարողանամ բժշկել ձեզ», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2009, 40)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Հավատալով և ընդունելով, որ Հիսուս Քրիստոսը պատրաստ է, ունակ է և ցանկանում է Ներել ձեր մեղքերն ու վերացնել ձեր մեղավորությունը, ինչպե՞ս կարող եք փոխել ձեր մոտեցումը ապաշխարության հանդեպ:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Ուրիշ ի՞նչ կարող եմ սովորել Մորմոնի Գրքի մարդկանցից, ովքեր ապաշխարել ու Ներվել են:

Կարդացեք հետևյալ հատվածները, որպեսզի ավելի շատ բան իմանաք Մորմոնի Գրքի մարդկանց մասին, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերի համար, Ներում են ստացել կամ Ներել են ուրիշներին.

Նեփիս Ներում է Լամանին և Լեմուելին (տես 1 Նեփի 7.16–21):

Ենովսը պայքարում է Ներում ստանալու համար (տես Ենովս 1.1–8):

Բենիամին թագավորի ժողովուրդը Ներում է ստանում (տես Մոսիա 4.1–3):

Զիզրոմի բազմաթիվ մեղքերը Ներվում են, և նա բուժվում է (տես Ալմա 15.1–11):

Թագավոր Լամոնիի հայրը թողնում է իր մեղքերը (տես Ալմա 22.15–27):

Հարյուրավոր լամանացիներ լսում են ապաշխարելու կոչը (տես Հելաման 5.20–52):

Կարո՞ղ եմ ես երբևէ Ներվել, եթե մի քանի անգամ կրկնում եմ նույն մեղքը:

Այս տեսանյութում՝ «Փրկիչը ցանկանում է Ներել», մի Նախկին թմրամոլ և դատապարտյալ Նկարագրում է, թե ինչպես է Փրկիչը բազմիցս Ներել իրեն,

Նույնիսկ այն բանից հետո, երբ նա վերադարձավ
Նախկին մեղքերին, բայց հետո շարունակեց
ապաշխարել:

**Ի՞նչ մեղքեր պետք է խոստովանեն
Եպիսկոպոսին:**



«Ինչո՞ւ և ինչ պետք է խոստովանեն իմ
Եպիսկոպոսին» (*New Era*, Oct. 2013, 28–30),
Երեց Ս. Սքոթ Գրոուն Յոթանասունից

ուսուցանում է ապաշխարության գործընթացում
Եպիսկոպոսի դերի մասին:

**Ես ի՞նչ պետք է անեմ, եթե մաքառում
եմ ինքս ինձ ներելու խնդրի հետ:**



«Ներել ինքներս մեզ» (*Ensign*, Mar. 2007,
30–33) հոդվածում, Երեց Դ. Չադ Ռիչարդ-
սոնը՝ Նախկին Տարածքային Յոթանասու-
նականը, քննարկում է, թե ինչ է նշանակում
Ներել ինքներս մեզ:

ԴԱՍ 10. ՈՒՍՈՒՑԻ ՆՅՈՒԹ

Ապաշխարություն և ներում

Մորմոնի Գիրքն առաջարկում է եզակի պատկերացումներ ապաշխարության և ներման վարդապետության վերաբերյալ: Ենովսի, Բենիամին թագավորի ժողովրդի և Ալմա Կրտսերի փորձառությունները ցույց են տալիս, որ Փրկիչը մեր ներման և խղճի խաղաղության վերջնական աղբյուրն է: Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան քննարկել հարցեր ապաշխարության գործընթացի վերաբերյալ և կսովորեն ավելի լավ հասկանալ, թե երբ է Փրկիչը ներել իրենց: Ուսանողները կքննարկեն նաև, թե ինչպես կարող են շարունակել ապաշխարել և ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

Ուսուցման առաջարկներ

Ալման բացատրում է, թե ինքն ինչպես է ստացել Փրկիչի ներումը:

Ցուցադրեք հետևյալ երեք հարցերը դասասենյակի տարբեր մասերում: Յուրաքանչյուր հարցի մոտ շրջանաձև դասավորեք մի քանի աթոռ: Նշեք, որ այս հարցերը նման են նախապատրաստական նյութի բաժին 1-ի հարցերին:

- Իրականում ի՞նչ է նշանակում ապաշխարել: Ի՞նչ խորհուրդ կտաք մեկին, ով անցնել է ապաշխարության բոլոր քայլերով, բայց տարբերություն չի զգում:
- Ինչպե՞ս կարող ենք ուժ գտնել իսկապես փոխվելու համար: Ի՞նչ կասե՞իք այն մարդուն, ով հուսալքված է, քանի որ իսկապես ջանացել է առաջադիմել, բայց պարզապես շարունակում են նույն սխալները թույլ տալ:
- Ինչ անել, եթե ինչ-որ մեկը զգում է, որ ինքն այլևս հաջողության չի հասնի: Ինչպե՞ս կարող եք օգնել մեկին, ով կարծում է, որ չպետք է անհանգստանա ապաշխարելու համար, քանի որ նրա մեղքերն այնքան վատն են, որ երբեք չեն կարող ներվել:

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք միսիոներներ են, ովքեր պատրաստվում են պատասխանել իրենց ունկնդիրների վերոնշյալ հարցերից մեկին կամ պատրաստվում են օգնել իրենց հարազատին, ով մաքառում է

ապաշխարելու համար: Դրանից հետո ուսանողներին խնդրեք նստել որևէ աթոռի վրա այն հարցերի մոտ, որոնք նրանք կցանկանային քննարկել: Խրախուսեք ուսանողներին օգտվել Ալմայի փորձառության պատմությունից և Մորմոնի Գրքի այլ հատվածներից, որոնք կարող են օգնել պատասխանել նրանց հարցերին:

Յուրաքանչյուր խմբում նշանակեք քննարկման ղեկավար և յուրաքանչյուր ղեկավարի տվեք հրահանգների օրինակը, որ գտնվում է այս դասի նյութի վերջում: Խմբերին տվեք բավարար ժամանակ՝ իմաստալի քննարկումներ անցկացնելու համար:

Ուսանողներին քննարկելու ժամանակ հատկացնելուց հետո խնդրեք յուրաքանչյուր խմբից մեկ կամ մի քանի կամավորների ներկայացնել կարճ քննարկումներ այն մասին, թե իրենց խմբերն ինչ են սովորել և զգացել քննարկումների ժամանակ:

Ենովսը, Բենիամին թագավորի ժողովուրդը և Ալման զգում են ներման բերկրանքը:

Խնդրեք ուսանողներին մտածել՝ արդյոք իրենք կամ իրենց ծանոթը երբևէ ցանկացել են իմանալ, թե ինչպես հասկանալ՝ արդյոք Փրկիչը ներել է իրենց մեղքերը: Հրավիրեք ուսանողներին Ենովս 1.4–8, Մոսիա 4.1–3 և Ալմա 36.19–21-ում փնտրել եղանակներ, որոնցով կիմանանք, որ մենք ներվել ենք:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Ճանաչեք Քրիստոսակենտրոն ուսուցման գործընթացը: Չադ Հ. Վեբը՝ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների ղեկավարը, ասել է ուսուցիչներին. «Միակ կանոնադրություն ուղի, որով մենք կարող ենք օգնել մեծացնել աճող սերնդի հավատքը, Հիսուս Քրիստոսին մեր ուսուցման և ուսումնառության կենտրոնում դնելն է, որպեսզի օգնենք մեր ուսանողներին սկսել ճանաչել Նրան, սովորել Նրանից և գիտակցաբար ձգտել դառնալ Նրա նման» («Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով» [Ելույթ՝ Կրոնի սեմինարիաների և ինստիտուտների ամենամյա ուսուցման հեռարձակման ժամանակ, հունիս 12, 2018], ChurchofJesusChrist.org): Երբ պատրաստվում եք ուսուցանել, հարցրեք ինքներդ ձեզ. Ինչպե՞ս կարող եմ օգնել ուսանողներին այս ուսումնական փորձառության միջոցով լիարժեք ճանաչել, սիրել և հետևել Փրկչին:

- Այս հատվածներում ո՞ր բառերն ու արտահայտություններն էին կարևոր ձեզ համար: Ձեր կարծիքով, այդ արտահայտություններն ինչո՞ւ գրավեցին ձեր ուշադրությունը:
- Ինչո՞ւ է կարևոր հավատալ և ընդունել, որ Հիսուս Քրիստոսը պատրաստ է, կարող է և ցանկանում է ներել մեր մեղքերն ու վերացնել մեր մեղքը: (Խնդրեք ուսանողներին կրկնել նախապատրաստական նյութի բաժին 3-ը:)
- Ինչպե՞ս կարող ենք մենք իմանալ, որ Փրկիչը ներել է մեր մեղքերը: (Օգնեք ուսանողներին ճանաչել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք և հավատում ենք Հիսուս Քրիստոսին, Նա մեզ ներում է մեզ և օրհնում ուրախությամբ ու խղճի խաղաղությամբ:**)
- Ե՞րբ եք զգացել Տիրոջ ներման ուրախությունն ու խաղաղությունը, և ինչպե՞ս է այս փորձառությունը փոխել ձեր կյանքը: (Խրախուսեք ուսանողներին խոսել ներման իրենց զգացումների մասին, այլ ոչ թե իրենց մեղքերի

առանձնահատկությունների մասին:): Որո՞նք են ձեր մտքերն ու ապրումները Փրկիչի՝ ձեզ ներելու ունակության և ցանկության վերաբերյալ:

Քննարկման ընթացքում ձեզ համար օգտակար կլինի օգտագործել Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը.



Նրանց, ովքեր իսկապես ապաշխարում են, սակայն չեն կարողանում հանգստություն զգալ, ես ասում եմ՝ շարունակեք պահել պատվիրանները: Ես խոստանում եմ ձեզ, հանգստությունը կգա ըստ Տիրոջ ժամանակի: Բժշկումը նույնպես ժամանակ է պահանջում: («Ապաշխարեք, . . . որպեսզի ես կարողանամ բժշկել ձեզ», *Լիահոնա*, Նոյեմբեր 2009, 42)

Նշում. Այն ուսանողներին, ովքեր, գուցե, հիասթափվել են ապաշխարության գործընթացից, քանի որ իրենց ջանքերը դեռ չեն հանգեցրել հանգստության, առաջարկեք քաջալերանքի խոսքեր և հրավիրեք նրանց շարունակել դիմել Տիրոջը և միգուցե իրենց հատուկ մտահոգություններով կիսվեն իրենց եպիսկոպոսի հետ:

Ժամանակ տրամադրեք ուսանողներին՝ գնահատելու իրենց կյանքը և հայտնաբերելու այն ամենը, ինչի համար իրենք պետք է ապաշխարեն: Հրավիրեք նրանց գրի առնել իրենց ցանկացած ոգեշնչում:

Կիսվեք ապաշխարության և ներման վարդապետության մասին ձեր վկայությամբ: Ուսանողներին նույնպես հրավիրեք կիսվել իրենց վկայություններով:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես են իրենց մկրտության և այլ ուխտերն օրհնել իրենց կյանքը: Մինչ նրանք ուսումնասիրում են հաջորդ դասի նախապատրաստական նյութը, հրավիրեք նրանց մտածել իրենց ուխտի ուղու և այն մասին, թե պատվելով ուխտերը, նրանք ինչպես են կապվում Փրկիչի և Նրա զորության հետ:

Փոքր խմբով քննարկում ապաշխարության վերաբերյալ

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի Նյութ. Դաս 10

Հիշեցում քննարկման ղեկավարին. Խնդրում ենք օգտագործել այս հրահանգները՝ ձեր խմբի անդամների հետ քննարկումը խթանելու համար: Խրախուսեք ձեր խմբի բոլոր անդամներին մասնակցել քննարկմանը: Այնուամենայնիվ, ոչ ոք չպիտի պարտադրված զգա կիսվելու համար:

Խմբի անդամներին մի քանի լրացնելիք տրամադրեք՝ վերանայելու Նախապատրաստական Նյութի բաժին 1-ը և դրան առնչվող սուրբգրային հատվածները (տես Մոսիա 27:35, Ալմա 36:12–13, 17–21, 24): Խնդրեք ուսանողներին փնտրել սկզբունքներ, որոնք վերաբերում են ձեր խմբի հարցին: Նաև հրավիրեք խմբի անդամներին պատրաստ լինել կիսվելու սուրբ գրությունների ցանկացած լրացուցիչ հատվածով, որը նրանք գտել են, երբ պատրաստվում էին այս դասին:

Միասին որոշեք, թե հետևյալ հարցերից ո՞րն է առավել կարևոր ձեր խմբի քննարկման համար: Այս գաղափարներն ավելի խորը հասկանալու

համար գուցե ավելի լավ է մանրամասն քննարկել մեկ կամ երկու հարց, քան փորձել մակերեսորեն ընդգրկել բոլոր հարցերը:

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել Ալմայի փորձից, որոնք վերաբերում են մեր հարցին: Ինչպե՞ս եք օրհնվել՝ հետևելով այս սկզբունքներին:
- Մորմոնի Գրքի ո՞ր սուրբգրային հատվածներն ու ուսմունքները կարող են օգնել պատասխանել այս հարցին: Այս հատվածներում ուսուցանված ճշմարտություններն ինչպե՞ս են օգնել ձեզ զգալ ապաշխարության զորությունը
- Ի՞նչ դեր ունի Հիսուս Քրիստոսը մեր ապաշխարության մեջ: Ինչպե՞ս եք վերաբերվում Փրկիչի՝ ձեր մեղքերը ներելու պատրաստակամությանը:
- Փրկիչին «կոտրված սիրտ և փշրված հոգի» առաջարկելու պատվիրանը ինչպե՞ս է (3 Նեփի 9:20) վերաբերում մեր հարցին: (Եթե դուք քննարկում եք այս վերջին կետը պարունակող հարցը, ձեզ համար օգտակար կլինի վերանայել 3 Նեփի 9:19–20-ը և Երեց Բոլորս Դ. Փորթերի հայտարարությունը Նախապատրաստական Նյութի բաժին 2-ից:)



ԴԱՍ 11. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Առաջ ընթանալ ուխտի արահետով

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է. «Ես ասում եմ Եկեղեցու յուրաքանչյուր անդամի՝ շարունակեք ուխտի ուղին: Փրկիչին հետևելու ձեր պարտավորվածությունը՝ Նրա հետ ուխտեր կապելով և պահելով այդ ուխտերը, ամենուր դուռ կբացի տղամարդկանց, կանանց և երեխաների համար նախատեսված հոգևոր բոլոր օրհնությունների և արտոնությունների առաջ» («Միասին առաջ ընթանալով», *Ensign*, ապրիլ 2018, 4): Քրիստոսի վարդապետության ուսումնասիրությունը շարունակելիս հաշվի առեք, թե կապելով և պահելով ձեր մկրտության ուխտը, ստանալով Սուրբ Հոգու պարգևը և համբերելով մինչև վերջ, ինչպե՞ս եք ավելի շատ նմանվում Երկնային Հորը:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող է իմ մկրտության ուխտն օրհնել ինձ և բոլոր նրանց, ում հետ շփվում եմ:

Տերը Աբինադի մարգարեին ուղարկեց Նոյ թագավորի և նրա ժողովրդի մոտ, որպեսզի նախազգուշացնի նրանց, որ եթե չզոջան, նրանք գերության մեջ կընկնեն: Նոյ թագավորը մերժեց Աբինադիի ուղերձը և սպանեց նրան: Ավամը՝ Նոյի քահանաներից մեկը, գրանցեց Աբինադիի խոսքերը, ապա գաղտնի ուսուցանեց դրանք ժողովրդին: Երբ Ավայի հավատացյալների խումբն աճում

էր, նրանք հավաքվեցին Մորմոնի ջրերի մոտ և մտան մկրտության ուխտի մեջ:





Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 18.8-10-ը՝ փնտրելով այն, ինչ մենք խոստանում ենք անել և դառնալ, երբ մկրտվում ենք: Ուշադրություն դարձրեք նաև, թե ինչ է սովորեցնում Ալման, որ Տերը կկատարի որպես այս ուխտի մի մաս:

Մեկնաբանելով ուրիշների հետ սգալու և սփոփելու մեր խոստումը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյլ Գ. Ռենլանդը բացատրել է.



Եկեղեցում ուրիշներին արդյունավետ ծառայելու համար մենք պետք է նրանց նայենք ծնողների աչքերով՝ Երկնային Հոր աչքերով: Միայն այդ ժամանակ մենք կհասկանանք հոգու իրական արժեքը: Միայն այդ ժամանակ մենք կկարողանանք նշմարել այն սերը, որ Երկնային Հայրն ունի Իր բոլոր զավակների հանդեպ: Միայն այդ ժամանակ մենք կարող ենք զգալ Փրկիչի հոգատար մտահոգությունը նրանց համար: Մենք չենք կարող լիովին իրականացնել մեր ուխտի պարտականությունը՝ սգալ սգացողների հետ և սփոփել նրանց, ովքեր սփոփանքի կարիք ունեն, եթե մենք նրանց չենք նայում Աստծո աչքերով: [Տես Մոսիա 18.8-10:] Այդ ընդլայնված հեռանկարը մեզ զգայուն կդարձնի ուրիշների հիասթափությունների, մտավախությունների և վշտերի նկատմամբ: («Աստծո աչքերով», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2015, 94)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք ձեր տեսած օրինակների մասին, երբ մարդիկ պատվում են իրենց մկրտության ուխտը: Ի՞նչ օրինակների մասին կարող եք հիշել Փրկիչի կյանքից, որտեղ Նա ցույց է տալիս, թե ինչպես

է հարգում մկրտության ուխտը: Պատրաստ եղե՞ք դասարանում կիսվելու ձեր օրինակներով:

ԲԱԺԻՆ 2

Սուրբ Հոգու պարգևը ինչպե՞ս կարող է փոխել իմ կյանքը:

Քրիստոսի վարդապետության վերաբերյալ իր գրություններում Նեփին ուսուցանել է, որ նրանց, ովքեր հետևում են Հիսուս Քրիստոսի օրինակին և մկրտվում են, Երկնային Հորից կտրվի Սուրբ Հոգին (տես 2 Նեփի 31.12):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացե՛ք 2 Նեփի 31.13, 17-ը, փնտրելով, թե Սուրբ Հոգու պարգևն ինչպես կարող է սրբագործել ձեր կյանքը:



Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Բ. Փաքերը ասել է հետևյալը հրեշտակների լեզվով խոսելու մասին.



Նեփին բացատրեց, որ հրեշտակները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ, և դուք կարող եք խոսել հրեշտակների լեզվով, ինչը

պարզապես նշանակում է, որ դուք կարող եք խոսել Սուրբ Հոգու գործությամբ: Այն հանդարտ կլինի: . . . Բայց կլինի հզոր: (“The Gift of the Holy Ghost: What Every Member Should Know,” *Ensign*, Aug. 2006, 49–50)

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է կրակով մկրտությունը:

Կատարեք այս վարժություններից մեկը կամ երկուսը.

1. Դիտեք տեսանյութը՝ «Կրակով մկրտությունը» (1:41):

1. Կարդացեք հետևյալ միտքը.



Սուրբ Հոգին սրբագործող է, ով կարծես, կրակի միջոցով մաքրում է և այրում է նստվածքն ու չարությունը հոգիների միջից: [Տե՛ս 3 Նեփի 27.19–21]: . . .

Որպես Տիրոջ վերականգնված Եկեղեցու անդամներ, մենք օրհնված ենք՝ ինչպես մեր *մեղքից սկզբնական մաքրագործմամբ*, որը կապված է մկրտության հետ, այնպես էլ *մեղքից շարունակական մաքրագործմամբ*, որը հնարավոր է դառնում Սուրբ Հոգու ընկերակցության և գործության միջոցով: . . .

. . . Երբ մենք պատրաստվում ենք բարեխոհորեն և մասնակցում ենք [հաղորդությանը] կոտրված սրտով և փշրված հոգով, ապա խոստումն այն է, որ մենք կարող ենք Տիրոջ Հոգին *միշտ* մեզ հետ ունենալ: Եվ Սուրբ Հոգու սրբագործող գործության միջոցով, որպես մեր մշտական ուղեկից, մենք *միշտ* կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը: («Միշտ պահե՛ք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա*, մայիս 2016, 61-62)



Խորհե՛ք դասին Նախապատրաստվելիս

Մկրտությանը պատրաստվող մարդուն ինչպե՞ս կբացատրեք, թե ինչ է կրակով մկրտությունը

ու հրեշտակների լեզվով խոսելը: Ինչպե՞ս եք գգացել Սուրբ Հոգու օրհնությունները

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ ավելի մեծ հույս և ուրախություն գտնել, երբ ձգտում եմ համբերել մինչև վերջ

Հավատի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարզևր ստանալուն գուգահե՞մ՝ Նեփին ուսուցանել է, որ մինչև վերջ համբերելը Քրիստոսի վարդապետության էական սկզբունքն է:



Ուսումնասիրե՛ք դասին Նախապատրաստվելիս

Կարդացե՛ք 2 Նեփի 31.15–16, 19–21-ը՝ փնտրելով, թե ինչ է նշանակում համբերել մինչև վերջ:

Դիտե՛ք կամ կարդացե՛ք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆի հետևյալ ուղերձը և հաշվի առե՛ք, թե ինչպես կարող եք մինչև վերջ դիմանալ ավելի մեծ ուրախությամբ:

Կարդացե՛ք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆի հետևյալ ուղերձը և մտածե՛ք, թե ինչպես կարող եք մինչև վերջ դիմանալ ավելի մեծ ուրախությամբ:



Աստծո արքայությունում փրկության համար հիմնարար պահանջն է՝ դիմանալ մինչև վերջ կամ հավատարիմ մնալ Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին և արարողություններին մեր ողջ կյանքի ընթացքում: Այս համոզմունքը առանձնացնում է Վերջին Օրերի Սրբերին քրիստոնեական շատ այլ դավանանքներից, որոնք սովորեցնում են, որ փրկություն է տրվում բոլոր նրանց, ովքեր պարզապես հավատում և խոստովանում են, որ Հիսուսը Քրիստոսն է: Փրկիչը հստակ հայտարարել է. «Եթե պահես իմ

պատվիրանները և համբերես մինչև վերջ, դու կունենաս հավերժական կյանք, պարզև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (Վ&Ու 14.7):

Այսպիսով, մինչև վերջ համբերելը լուկ կյանքի դժվարությունները պասիվորեն հանդուրժելը կամ դրանց «դիմանալը» չէ: Մերը ակտիվ կրոն է, որն օգնում է Աստծո զավակներին այս կյանքի ընթացքում նեղ ու անձուկ ճանապարհին զարգացնել իրենց ամբողջ ներուժը և մի օր վերադառնալ Նրա մոտ:

Այս տեսակետից մինչև վերջ համբերելը վեհացնող և փառահեղ է, ոչ թե՛ մռայլ ու խավար: Սա ուրախ կրոն է՝ հույսի, ուժի և ազատության կրոն: («Մի՞թե մենք պատճառ չունենք ուրախանալու» *Lhahhna*, Նոյեմբեր 2007, 20)



Գրի առեք ձեր մտքերը

Փրկիչի կյանքից, Մորմոնի Գրքի որևէ հերոսի կամ ձեր ծանոթի կյանքից բացահայտեք որևէ օրինակ այն մասին, թե ինչ է նշանակում համբերել մինչև վերջ: Գրանցեք, թե այս օրինակն ինչպես ազդել է ձեր հասկացողության վրա այն մասին, թե ինչ է նշանակում համբերել մինչև վերջ:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչո՞ւ Հիսուս Ջրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին չի կիրառում մանուկների մկրտություն:

Իր որդուն՝ Մորոնիին ուղղված մի նամակում, որը գրանցված է Մորոնի 8-ում, Մորմոնը կիսվեց իր ստացած մի հայտնությամբ, որը բացատրեց, թե ինչո՞ւ փոքր երեխաները չպետք է մկրտվեն: Ուսումնասիրելով Մորոնի 8-ը՝ ավելի լավ կհասկանաք այս վարդապետությունը:

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի Սուրբ Հոգին ավելի հաճախ ինձ հետ լինի:

Այս տեսանկյունից՝ «Ունենալով Սուրբ Հոգին» (2:55), Եկեղեցու անդամները կիսվում են, թե ինչ են անում Սուրբ Հոգին իրենց կյանք հրավիրելու համար:

Իր հետևյալ ելույթում՝ «Որպեսզի նրա հոգին միշտ մեզ հետ ունենանք», Երեց Բեդնարը նախագուշացնում է այն ամենի մասին, ինչը կարող է բաժանել մեզ Սուրբ Հոգուց (դիտեք ժամանակային ծածկագիր 4:38-7:24):

Ինչպե՞ս համբերեմ ու մնամ ուխտի ճանապարհին, երբ բախվում եմ դժվար ժամանակների:

«Unto All the World: Essa's Story» տեսանկյունից (5:23) Դին և Դանիել Ռիկերները պատմում են, թե ինչպես են դիմացել իրենց 15-ամյա դստեր՝ Եսայի ցավալի կորստին:



«Տոկալու ուժը» (*Lhahhna*, Նոյեմբեր 2013, 79–81) ելույթում երեց Ռիչարդ Ջ. Մեյնզը Յոթնաստուների նախագահությունից բացատրում է, թե համբերելու մեր կարողությունը ինչպես է համապատասխանում «մեր վկայության ուժին և մեր դարձի խորությամբ» (79):

ԴԱՍ 11. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Առաջ ընթանալ ուխտի արահետով

Հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և ապաշխարությունը մեր մեղքերի համար առաջին քայլերն են դեպի հավերժական կյանք տանող ուխտի ճանապարհին: Մկրտության արարողության միջոցով մենք ուխտի հարաբերությունների մեջ ենք մտնում մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ: Այս դասի ընթացքում ուսանողները կկարողանան կիսվել օրինակներով, թե ինչպես պահել իրենց մկրտության ուխտը առօրյա կյանքում, վկայել Սուրբ Հոգու սրբազործող ազդեցության մասին և պարզել, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի մեծ հույսով ու ուրախությամբ համբերեն մինչև վերջ:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Խրախուսենք ուսումնասիրության ոգին:

Առաջին Նախագահությունից Հենրի Բ. Այրինգը նկատել է. «Հարցեր տալը և պատասխանելը սովորելու և ուսուցանելու հիմքն է» («The Lord Will Multiply the Harvest» [satellite broadcast address to religious educators in the Church Educational System, Feb. 6, 1998, 5–6]): Մենք սովորաբար այս սկզբունքը կիրառում ենք այն ուսուցիչների համար, ովքեր հարցեր են տալիս և այն ուսանողների համար, ովքեր պատասխանում են դրանց: Չնայած ուսուցիչների արդյունավետ հարցերը կարող են նպաստել ուսանողների ուսմանը, ուսանողների հարցերը կարող են նաև հզոր դեր ունենալ ուսումնական փորձառության մեջ Ձգտեք ստեղծել ուսումնառության միջավայր, որտեղ ուսանողների հարցերը խրախուսվում են, հարգվում և ստանում խորամիտ արձագանք: Իմաստուն ուսուցիչը ինքնաբերաբար կամ անմիջապես չի պատասխանում ուսանողների տված յուրաքանչյուր հարցին: Նրանք կարող են հրավիրել այլ ուսանողների պատասխանել, ուղղորդել նրանց դեպի որևէ ոգեշնչված աղբյուր կամ հրավիրել նրանց դասաժամից դուրս ժամանակ հատկացնել՝ հետագա ուսումնասիրություն կատարելու համար, իսկ այնուհետև թույլ տալ, որ նրանք զեկուցեն իրենց սովորածի մասին:

Ալման և Նեփին ուսուցանում են մեր մկրտության ուխտի և Սուրբ Հոգու պարզևի կարևորության մասին:

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Բենիամին Մ. Ջ. Թայլի հետևյալ խոսքերը.



Մեզ համար Տիրոջ գործողությունների ծրագիրը՝ Քրիստոսի վարդապետությունը, առավել հստակ ուսուցանված է Մորմոնի Գրքում: Այն ներառում է՝ . . . Աստծո հետ ուխտեր *կապել ու պահել* արարողությունների միջոցով, ինչպես օրինակ՝ մկրտությունը: Սա կպահի մեզ ուխտի արահետի վրա, որն առաջնորդում է դեպի Աստված: («Մորմոնի Գրքի զորությունը դարձի գալու ընթացքում», *Լիահոնա*, մայիս 2020, 46)

- Ձեր մկրտությունն ինչպե՞ս է ազդել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին նմանվելու ձեր կարողության վրա:

Ցուցադրեք այս անավարտ հայտարարությունը. Երբ մկրտվում ենք մենք ուխտում ենք . . .

Հրավիրեք ուսանողներին վերանայել Մոսիա 18.8–10-ը՝ փնտրելով որոշ բաներ, որոնք մենք ուխտում ենք կատարել և դառնալ մկրտվելիս: (Ուսանողների պատասխաններն ընդգրկում են հետևյալը. **Երբ մենք մկրտվում ենք, մենք ուխտում ենք կրել մեկս մյուսի բեռը, սգալ նրանց հետ, ովքեր սգում են, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնել որպես Աստծո վկաներ, ծառայել Նրան ու պահել Նրա պատվիրանները:**)

Հիշեցրեք ուսանողներին, որ նրանց հասնաբար-վել էր մտածել իրենց տեսած օրինակների մասին, երբ մարդիկ պատվում են իրենց մկրտության ուխտերը: Մի քանի բույս ժամանակ տվեք ուսա-նողներին, որպեսզի հիշեն իրենց օրինակները և այնուհետև իրենց զաղափարներով կիսվեն զուգընկերոջ կամ փոքր խմբերի հետ: Երբ նրանք միմյանց հետ կիսվեն իրենց օրինակներով, ուսա-նողներին տվեք հետևյալ հարցերը.

- Որո՞նք են Հիսուս Քրիստոսի՝ Իր մկրտության ուխտով ապրելու մի քանի օրինակները՝ ուրիշ-ներին սփռվելու, զորացնելու և նրանց հետ սգալու համար:
- Ի՞նչ եք սովորել ձեր կյանքում՝ սգալով նրանց հետ, ովքեր սգում են կամ մխիթարելով նրանց, ովքեր սփռվանքի կարիք ունեն: (Կարող եք կրկնել Երեց Դեյլ Գ. Ռենլանդի մեջբերումը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)
Ի՞նչ տարբերություն եք զգացել, երբ փորձել եք տեսնել ուրիշներին այնպես, ինչպես Երկնային Հայրն է տեսնում նրանց:

Նշեք, որ մեր մկրտության ուխտը պահելու ընթացքում Տերը խոստանում է մեզ Սուրբ Հոգու ընկերակցությունը: Խնդրեք ուսանողներին կրկնել 2 Նեփի 31.13, 17-ը և փնտրեք, թե մենք ինչպես ենք օրհնվում, երբ ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը:

- Ինչպե՞ս կբացատրեք կրակով մկրտության իմաստը և հրեշտակների լեզվով խոսելը մկրտության պատրաստվող մարդուն: (Վերա-նայեք նախագահ Բոյդ Ք. Փաքերի և երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
Ինչպե՞ս եք զգացել այդ օրհնությունները:

Կարող եք ուսանողներին ժամանակ տալ խորհե-լու հետևյալ հարցերի շուրջ.

- Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի իմ կյանք հրավիրեմ Սուրբ Հոգու օրհնությունները: Ի՞նչ պետք է շարունակեմ անել, սկսեմ կամ դադա-րել անել, որպեսզի կարողանամ լիարժեք վայելել Սուրբ Հոգու սրբազործող զորությունը:

Նեփին ուսուցանում է մինչև վերջ համբերելու կարևորությունը:

Օգտագործեք Տասներկու Առաքյալների Քվորու-մից երեց Ռոբերտ Դ. Հեյլսի կամ ձեր սեփական պատմությունը, որը ցույց է տալիս դժվարին հան-գամանքներին դիմակայելու կարևորությունը.



1968 թ.-ին Ջոն Սթիվեն Ախվարի անունով մարաթոնի վազորդը Ներկայացնում էր Տան-գակիան միջազգային մրցույթում: «Երբ [հաղ-թողը] հատեց վերջնագիծը, մեկ ժամ անց Ջոն Սթիվեն Ախվարին. . . մոտեցավ մարգա-դաշտին. նա վերջին մարդն էր, ով ավարտեց ճանապարհը: [Չնայած նա ուժասպառ էր, ոտքերը ջղաձգվում էին, ջրազրկված էր և չէր կարողանում կողմնորոշվել,] Ներքին ձայնը դրդում էր շարունակել, և նա շարունակեց: . . . Այն հարցին, թե ինչո՞ւ է նա ավարտում մրցավազքը, որը երբեք չէր կարող հաղթել, Ախվարին պատասխանեց. «Իմ երկիրը ինձ 5000 մղոն չի ուղարկել, որ պարզապես *սկսեմ* մրցավազքը. իմ երկիրն ինձ ուղարկել է մրցավազքն *ավարտելու* համար»: («Behold, We Count Them Happy Which Endure,» *Ensign*, May 1998, 76)

- Ջոն Սթիվեն Ախվարին ի՞նչ պատճառներ ուներ մրցավազքը ավարտին չհասցնելու համար:
- Ջոնի փորձառությունն ինչպե՞ս կարող է համե-մատվել այն մարտահրավերների հետ, որոնց մենք կարող ենք բախվել, երբ ձգտում ենք պահել մեր ուխտերը:
- Ի՞նչ պատճառներով մարդը կարող է ընտրել հավատարիմ չմնալ իր ուխտերին:

Քննարկումը խթանելու համար ուսանողներին հրավիրեք փոքր խմբեր կազմել և կարդալ 2 Նեփի 31.15–16, 19–21-ը՝ փնտրելով, թե ինչ է նշանակում համբերել մինչև վերջ: (Կարող եք հանձնարարել նրանց կարդալ մի քանի սուրբ գրություններ, որոնք թվարկված են Սուրբ գրությունների ուղե-ցույցում «Համբերել» թեմայի տակ:)

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: (Ուսանողները կարող են բացահա-յտել մի նմանատիպ ճշմարտություն. **Երբ անձուկ**

արահետով մենք առաջ ենք մղվում Քրիստոսի հանդեպ հաստատականությամբ և համբերում ենք մինչև վերջ, Երկնային Հայրը մեզ կօրհնի հավերժական կյանքով։) Մտածեք, թե հետևյալ հարցերից որը կարող է լավագույնս օգնել ձեր ուսանողներին ավելի խորը հասկանալ այս սկզբունքը.

- Ձեզ համար ի՞նչ է նշանակում առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատականությամբ և հույսի պայծառությամբ:
- Որո՞նք են օրինակները Փրկիչի կյանքից, Մորմոնի Գրքի որևէ հերոսի կամ ձեր ծանոթի կյանքից, որոնք կարող են օգնել մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում համբերել մինչև վերջ: (Ուսանողները գուցե գրանցել են այս հարցի պատասխանները, երբ նրանք ուսումնասիրում էին նախապատրաստական նյութի բաժին 3-ի նյութը:)

- Ինչպե՞ս եք շարունակելու առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատականությամբ: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի մեծ հույսով և ուրախությամբ համբերեք մինչև վերջ:

Կարող եք եզրափակել՝ կիսվելով ձեր վկայությամբ կամ որևէ ուսանողի հրավիրելով կիսվել այս դասում հայտնաբերված ճշմարտությունների վերաբերյալ իրենց վկայությամբ:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին, թե ինչ կասեին այն մարդուն, ով նրանց հարցրեց, թե արդյոք նրանք վերստին ծնվել են: Հրավիրեք ուսանողներին կարդալ հաջորդ դասի նախապատրաստական նյութը և խորհել, թե ինչ է նշանակում հոգևորապես վերածնվել և իսկապես դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:



ԴԱՍ 12. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մեր հոգևոր վերածննդի կարիքը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկատել է. «Մորմոնի Գիրքը մեր ցուցումների ձեռնարկն է, երբ մենք ճամփորդում ենք վատից դեպի լավի, ապա՝ ավելի լավի ճանապարհով և ձգտում ենք փոխել մեր սրտերը: (“The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40): Մորմոնի Գրքում այս փոփոխությունը նկարագրվում է որպես՝ հոգևոր վերածնունդ, սրտի փոփոխություն և դարձ: Երբ այս նյութը ուսումնասիրում եք դասին պատրաստվելիս, մտածեք, թե Քրիստոսի վարդապետությունով ապրելով, ինչպես կարող եք խորացնել ձեր դարձը և ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

ԲԱԺԻՆ 1

Ապրելով Քրիստոսի վարդապետությունով, ինչպե՞ս կարող եմ խորացնել իմ դարձը:

Հետևյալ ամփոփումը նկարագրում է, թե ինչ է պատահում, երբ մենք իսկապես դարձի ենք գալիս.

Դարձը ներառում է վարքի փոփոխություն, բայց այն ավելին է, քան վարքի փոփոխությունը. դա փոփոխություն է անմիջապես

մեր բնույթի մեջ: Դա այնքան էական փոփոխություն է, որ Տերը և Նրա մարգարեները հիշատակում են որպես վերածնունդ, սրտի փոփոխություն և կրակով մկրտություն: («Դարձ», Ավետարանական թեմաներ», topics.ChurchofJesusChrist.org)

Օրինակ, երբ հրեշտակը ապաշխարության կանչեց Ալմա Կրտսերին, նա խիստ զղջաց իր մեղքերի համար: Երբ Ալման տառապում էր, նա դիմեց Տիրոջը օգնության համար, նրա մեղքերը ներվեցին, և նա հոգևոր վերածնունդ ապրեց (տես Մոսիա 27.11–23):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 27.25-26-ը՝ փնտրելով, թե Տերը ինչ է ուսուցանել Ալմային հոգևոր վերածննդի անհրաժեշտության մասին:

Հոգևոր վերածնունդը կամ դարձը անգործունյա վիճակ չէ: «Դարձը տեղի է ունենում Փրկիչին հետևելու արդար ջանքերի արդյունքում: Այդ ջանքերը ներառում են՝ հավատ գործադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարել մեղքերի համար, մկրտվել, ստանալ Մուրբ Հոգու պարգևը և հավատով համբերել մինչև վերջ [կիրառելով Քրիստոսի վարդապետությունը]» («Դարձ», Ավետարանական թեմաներ, topics. ChurchofJesusChrist.org):

Բենիամին թագավորի ժողովրդի փորձը ցույց է տալիս, թե Քրիստոսի վարդապետության կիրառումն ինչպես է հանգեցնում այս հոգևոր վերածննդին և դեպի Տերը դարձին:

Իր քարոզում Բենիամին թագավորը ուսուցանեց, որ մենք բոլորս «անպիտան ծառաներ» ենք և «հավերժ պարտական» ենք Աստծուն (Մոսիա 2.21–25, 34): Ապա նա վկայեց, որ մենք կարող ենք փրկագնվել միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Այս ուղերձով համակված՝ Բենիամին թագավորի ժողովուրդը երկյուղով և ակնածանքով ընկավ գետնին (տես Մոսիա 3.17–4.2):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 4.2–3-ը, և փնտրեք, թե ինչպես է Բենիամին թագավորի ժողովուրդը կիրառել Քրիստոսի վարդապետությունը և ինչ օրհնություններ է ստացել:

Մոսիա 4-ից մենք սովորում ենք, որ երբ իր ժողովուրդը ներում ստացավ իրենց մեղքերի համար, Բենիամին թագավորը սովորեցրեց նրանց հավատալ Աստծուն և հավատով ապրել, որպեսզի նրանք կարողանան «միշտ պահպանել [իրենց] մեղքերի թողությունը» (հատված 12): Ավարտելով իր քարոզը՝ Բենիամին թագավորը ցանկացավ իմանալ, թե արդյոք ժողովուրդը հավատում է իր ուսուցանածին (տես Մոսիա 5.1):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 5.2–7-ը՝ փնտրելով, թե Տերը ինչ արեց Բենիամին թագավորի ժողովրդի համար, երբ նրանք իրենց կյանքում կիրառեցին Քրիստոսի վարդապետությունը:



Մենք բոլորս պետք է ձգտենք փոխել մեր սիրտը և բուն էությունը, որպեսզի ցանկություն ունենանք ոչ թե հետևել աշխարհի ուղիներին, այլ գոհացնել Աստծուն: Ճշմարիտ դարձը գործընթաց է, որը տեղի է ունենում ժամանակի ընթացքում և հավատք գործադրելու կամք է պահանջում: Դրա համար հետևողականություն և ամենօրյա ջանքեր են հարկավոր: («Արդյո՞ք ես հավատում եմ» *Լիաիոնա*, մայիս 2016, 88):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանել է հետևյալը հոգևոր վերածննդի վերաբերյալ:



«Հնարավոր է՝ հարցնեք. «Ինչո՞ւ այդ փոփոխությունն ավելի արագ չի կատարվում ինձ հետ»: Պետք է հիշեք, որ սուրբ գրություններում Բենիամին թագավորի ժողովրդի, Ալմայի և որոշ այլ մարդկանց ուշագրավ օրինակները հենց դա են. ուշագրավ են և ոչ սովորական [see Ezra Taft Benson, “A Mighty Change of Heart,” *Ensign*, Oct. 1989, 2–5]: Մեզանից շատերի համար փոփոխություններն ավելի շուտ աստիճանական են և տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Վերստին ծնվելը, ի տարբերություն մեր ֆիզիկական ծնունդի, ավելի շուտ ընթացք է, քան իրադարձություն: Եվ այդ գործընթացի մեջ մտնելը մահկանացության առանցքային նպատակն է:

... Եկեք արժանավորությամբ ճաշակենք հաղորդությունից ամեն շաբաթ և շարունակենք մոտենալ Սուրբ Հոգուն՝ մեր միջից արմատախիլ անելով անմաքրության վերջին մոլախոտերը: Ես վկայում եմ, որ եթե դուք շարունակեք մնալ հոգևոր վերածննդի ճանապարհին, Հիսուս Քրիստոսի քավիչ շնորհը կհեռացնի ձեր մեղքերը և այդ մեղքերի բժերը. գայթակղությունները կկորցնեն իրենց գրավչությունը, և Քրիստոսի միջոցով դուք կդառնաք սուրբ, ինչպես որ Նա և մեր Հայրն են սուրբ»: («Վերստին ծնվել», *Լիաիոնա*, մայիս 2008, 78)

Բոննի Լ. Օսկարսոնը՝ Սփոփող միության նախկին գերագույն նախագահը, ասել է.



Գրի առեք ձեր մտքերը

Դիտեք տեսանյութը՝ «Բենիամին թագավորի ժողովուրդը ուխտ է կնքում (Մոսիա 5)» (3:41), և ապա գրանցեք ձեր անձնական պարտավորությունը, որը կարող եք ստանձնել՝ դարձի ճանապարհով շարունակելու համար: Գրանցեք անձնական պարտավորություն, որը կարող եք ստանձնել՝ դարձի ճանապարհով շարունակելու համար:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ Տիրոջը, որ իսկապես ուզում եմ սրտի փոփոխություն ունենալ:

Մտածեք, թե մենք ինչ կարող ենք սովորել **Անթի-Նեփի-Լեքինների** օրինակից՝ միտումնավոր կերպով սրտի հզոր փոփոխություն ձեռք բերելու և պահպանելու մեր ջանքերում: Այս նախկին լամանացիները եղել են «վայրի և կարծրացած ու կատաղի մի ժողովուրդ. ժողովուրդ, որը հրճվում էր Նեփիացիներին սպանելով, և նրանց կողոպտելով ու թալանելով» (Ալմա 17.14): Այնուամենայնիվ, **Անթի-Նեփի-Լեքինները** ստացան Հիսուս Քրիստոսի ավետարանը, երբ նրանց

ուսուցանեցին Ամմոնը և նրա եղբայրները, և շատերը «դարձի եկան առ Տերը, երբեք չհեռացան» (Ալմա 23.6):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 24.9–11, 15, 19-ը՝ փնտրելով, թե ինչ արեցին Անթի-Նեփի-Լեքինները, որպեսզի ամրապնդեն իրենց դարձը դեպի Տերը:



Մեկնաբանելով այս ժողովրդի սրտի հզոր փոփոխությունը՝ երեք Բեդնարը խորհուրդ է տվել.



Փայփայած «ապստամբության զենքերը», օրինակ՝ եսասիրությունը, հպարտությունը և

անհնազանդությունը, մի կողմ դնելու համար պահանջվում է ավելին, քան սոսկ հավատքը և գիտելիքը: Մեր ապստամբության զենքերը վայր դնելու համար անհրաժեշտ է համոզվածություն, համեստություն, ապաշխարություն և հնազանդություն: Արդյո՞ք դուք և ես դեռևս ունենք ապստամբության զենքեր, որոնք խոչընդոտում են դեպի Տերը դարձի գալուն: Եթե այդպես է, մենք պետք է այժմ ապաշխարենք: («Դարձ դեպի Տերը», *Լիախոնա*, Նոյեմբեր 2012, 108-9)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ապստամբության ո՞ր «զենքը» կարող է խանգարել ձեզ՝ զգալ սրտի փոփոխություն:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

**Ի՞նչ պատասխանեմ մեկին, ով
հարցնում է. «Դուք փրկվե՞լ եք»:**



Իր ելույթում՝ «Դուք փրկվե՞լ եք» (*Ensign*, May 1998, 55–57) Առաջին Նախագահության Նախագահ Դալլին Հ. Օուքսը բացատրում է *փրկվեց* և *փրկություն* բառերի վեց տարբեր իմաստները:

**Որտե՞ղ կարող եմ ավելին կարդալ
Մորմոնի Գրքի մարդկանց մասին,
ովքեր խորը և տևական դարձ
են ունեցել:**

4 Նեփի 1.1-18-ում մենք կարդում ենք մի խումբ մարդկանց մասին, ովքեր խորը և կայուն դարձ ապրեցին, ինչը հանգեցրեց գրեթե 200 տարվա խաղաղության:

Ինչպիսի՞ն կարող է լինել հոգևոր վերածնունդը և սրտի հզոր փոփոխությունը մեր օրերում:

Հետևյալ տեսանյութում՝ «Սրտի փոփոխություն» (4:39) մի երիտասարդ տղամարդ պատմում է, թե ինքն ինչպես է փրկվել մեղսալի կյանքից, երբ Նրա ընկերը իր հետ կիսվել է ավետարանով:

Մի տղամարդ տեսանյութում կիսվում է, թե ինչպես է հաղթահարել թմրամոլությունը և զգացել սրտի հուժկու փոփոխություն «Step 6: Change of Heart—Aram's Story about Drug Addiction Recovery» (4:04):

Ուրիշ ի՞նչ կարող են անել, որպեսզի պահպանեն իմ սրտի հզոր փոփոխությունը:



Իր ելույթում՝ «Անսասան նվիրվածություն առ Հիսուս Քրիստոս» (*Lhaholna*, նոյեմբեր 2019, 22–25), Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյլ Գ. Ռենլանդը քննարկել է, թե ինչ է նշանակում դարձի գալ դեպի Տերը և ընդմիշտ փոխվել Նրա ավետարանով:

ԴԱՍ 12. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Մեր հոգևոր վերաժննդի կարիքը

Մեր ընկած վիճակում մենք անարժան ենք բնակվելու Աստծո ներկայության մեջ: Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ գործության շնորհիվ մենք կարող ենք հոգևորապես վերաժնվել՝ որպես Նրա ուխտյալ զավակներ, և որակավորվել սելեստիալ փառքի համար: Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան խորացնել իրենց հասկացողությունը հոգևոր վերաժննդի վերաբերյալ և բացատրել, թե Հիսուս Քրիստոսն ինչպես կարող է փոխել մեր սրտերը: Ուսանողները նաև որոշելու են, թե իրենք ինչ կարող են անել Քրիստոսի վարդապետությունով ավելի լավ ապրելու համար, որպեսզի խորացնեն իրենց դարձը:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Օգնեք ուսանողներին պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար:
«Սովորելը պետք է կատարվի [ուսանողի] կողմից: Հետևաբար, [ուսանողը] պետք է գործի անցնի» (*Teaching the Gospel: A Handbook for CES Teachers and Leaders* [1994], 14): Քույր Վիրջինիա Հ. Փիրսը՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահության նախկին խորհրդակալը, նկատել է. «Հմուտ ուսուցիչը չի մտածում. Ի՞նչ պիտի անեմ այսօր դասարանում», այլ հարցնում է. «Ի՞նչ են անելու իմ ուսանողները դասարանում այսօր», ոչ թե «Ի՞նչ եմ ուսուցանելու այսօր», այլ «Ի՞նչպե՞ս եմ օգնելու ուսանողներիս հայտնաբերել այն, ինչ նրանք պետք է իմանան» [*Teaching the Gospel: A Handbook for CES Teachers and Leaders*, 13]" ("The Ordinary Classroom—a Powerful Place for Steady and Continued Growth," *Ensign*, Nov. 1996, 12):

Թագավոր Բենիամինի մարդիկ հոգևոր վերաժնունդ են ապրում:

Ցուցադրեք Նախագահ Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը. «Մեզ համար բավական չէ, որ *հասկոզված լինենք* ավետարանում, մենք պետք է գործենք և մտածենք, որպեսզի *դարձի զանք*

ավետարանով» ("The Challenge to Become," *Ensign*, Nov. 2000, 32):

- Ի՞նչ տարբերություն կա ավետարանի ճշմարտացիությունն իմանալու և նրանով դարձի գալու միջև: (Խնդրեք ուսանողներին վերանայել Մոսիա 27.25–26-ը և Ավետարանի թեմաների հայտարարությունը դարձի մասին նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութի բաժին 1-ում նրանք կարդում են Բենիամին թագավորի ժողովրդի հոգևոր վերաժննդի մասին պատմությունը: Անհրաժեշտության դեպքում ուսանողները կարող են կրկնել Մոսիա 4.2–3-ը և Մոսիա 5.2–7-ը՝ փնտրելով կապը Քրիստոսի վարդապետության և դարձի միջև: Կարող եք տալ հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը, որպեսզի ուսանողները խորացնեն իրենց կողմից հայտնաբերված ճշմարտությունները:

- Քրիստոսի վարդապետության ո՞ր կողմերը կիրառեցին Բենիամին թագավորի ժողովուրդը, և ինչպե՞ս դա ազդեց նրանց հոգևոր վերաժննդի վրա: (Օգնեք ուսանողներին գտնել մի սկզբունք, որը նման է հետևյալին. **Երբ մենք ձգտենք ապրել Քրիստոսի վարդապետությունով, Փրկիչը կփոխի մեր սրտերը և կօգնի մեզ հոգևորապես վերաժնվել:**)
- Ինչո՞ւ է կարևոր ճանաչել Փրկիչի դերը ձեր հոգևոր վերաժննդի և դարձի մեջ:

- Ի՞նչ գիտեք Հիսուս Քրիստոսի մասին, որը ոգեշնչում է ձեզ դիմել Նրան՝ ձեր սիրտը փոխելու համար:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը փոխել ձեր սիրտը: Ի՞նչ եք զգում Նրա հանդեպ այդ փոփոխությունը կատարելու ընթացքում ձեզ օգնելու համար: (Խրախուսեք ուսանողներին կիսվել փորձառություններով, որոնք խիստ անձնական չեն, կամ հանձնարարեք նրանց իրենց օրագրերում գրանցել որևէ փորձառություն):
- Քրիստոսի վարդապետության յուրաքանչյուր տարր (հավատք, ապաշխարություն, մկրտություն, Սուրբ Հոգու պարգև և համբերել մինչև վերջ) ինչպե՞ս է դուք բացում Փրկիչի առջև՝ ձեր սիրտը փոխելու համար:

Հրավիրեք ուսանողներին մտածել սրտի այն փոփոխության մասին, որը նրանք ուզում են զգալ և հարցրեք.

- Որքա՞ն արագ է սովորաբար տեղի ունենում սրտի այս փոփոխությունը: Ինչո՞ւ: (Անհրաժեշտության դեպքում վերանայեք Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի և Նախագահ Բոննի Լ. Օսկարսոնի հայտարարությունները Նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Անթի-Նեփի-Լեքինները թաղում են իրենց զենքերը:

Բացատրեք, որ նույնիսկ սրտի հզոր փոփոխություն ապրելուց հետո մարդու նվիրվածությունը կարող է մարել: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվ Գ. Ռենլանդի հետևյալ խոսքերը.



Բոլորս էլ գիտենք անհատների, ովքեր ունեցել են սրտի այս հզոր փոփոխությունը, բայց հետագայում ենթարկվել են բնական մարդու ազդեցությանը: Նրանք դարձան անտարբեր մարդիկ Աստծուն երկրպագելու և նվիրվածության գործում, նրանց սրտերը կարծրացան և դրանով վտանգեցին իրենց հավերժական փրկությունը: («Պահպանել սրտի հզոր փոփոխությունը», *Հիստորիա*, Նոյեմբեր 2009, 98)

- Ինչո՞ւ մարդը, ով սրտի հզոր փոփոխություն է ապրել, կարող է անտարբեր դառնալ Աստծու երկրպագության և նվիրվածության մեջ:

Երեց Ռենլանդի նկարագրած հակադրությունը անհատներին ցույց տալու համար ցուցադրեք հետևյալ նկարը: Հրավիրեք ուսանողներին բացատրել Անթի-Նեփի-Լեքինների պատմությունը և նկարագրել, թե ինչն էր պատճառը, որ Անթի-Նեփի-Լեքինները թաղեցին իրենց պատերազմական զենքերը:



Երբ ուսանողները կիսվեն Անթի-Նեփի-Լեքինների մասին իրենց խմացածով, կարող եք օգտագործել հետևյալ հատվածներից մի քանիսը՝ օգնելով ուսանողներին պարզել մարդկանց փոփոխության և դեպի Հիսուս Քրիստոսը դարձի խորությունը. Ավմա 23.6-7, Ավմա 24.9-11, 15 և Ավմա 27.27:

- Ի՞նչն էր խանգարում Անթի-Նեփի-Լեքիններին անտարբեր դառնալ Աստծուն երկրպագելու և նվիրվածություն ցուցաբերելու գործում:

- Այս հատվածներից ի՞նչ դասեր կարող են օգնել ձեզ բարելավել ձեր ջանքերը՝ «ամուր մնալու Քրիստոսի հավատքի մեջ, նույնիսկ մինչև վերջ» (Ալմա 27.27):

Կարող եք հրավիրել, որ ուսանողները խորհեն, թե ապստամբության ո՞ր զենքերը կարող են խանգարել նրանց, որպեսզի անձամբ զգան սրտի հզոր փոփոխություն:

Որպեսզի օգնենք ուսանողներին կիրառել այս դասին և այս բաժնում իրենց սովորածը, ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի համար նշանակեք քննարկման ղեկավար: Տրամադրեք հետևյալ նյութերը յուրաքանչյուր խմբին և համոզվեք, որ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան բովանդակալից քննարկում անցկացնելու համար: Եթե ժամանակը թույլ է տալիս, հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսել իրենց քննարկածը:

Փոքր խմբային քննարկում Հոգևոր վերածննդի վերաբերյալ

Մորմոսի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի Նյութ. Դաս 12

Հիշեցում քննարկման ղեկավարին. Խնդրում ենք ձեր խմբի անդամների հետ քննարկում վարել հետևյալ սցենարի վերաբերյալ: Խրախուսեք ձեր խմբի բոլոր անդամներին մասնակցել: Այնուամենայնիվ, ոչ ոք չպետք է պարտադրված զգա՝ կիսվելու իր մտքերով:

Պաբլոն սիրում էր իր միսիոներական ծառայությունը և զգում էր, որ ավետարանն արմատավորվել է իր սրտում: Նա տուն եկավ միսիայից՝ լի ուրախությամբ և ապագայի մեծ սպասումներով: Մի քանի շաբաթ տանը գտնվելուց հետո նա սկսեց իրեն ոչ անհրաժեշտ և մոլորված զգալ: Նա հաճախ իրեն միայնակ էր զգում: Այս զգացումները հաղթահարելու համար նա մասնակցեց բազմաթիվ տարբեր միջոցառումների և նախագծերի: Աստիճանաբար նա սկսեց անտեսել իր անձնական աղոթքները և սուրբ

գրությունների ուսումնասիրությունը: Նրա սկսեց հազվադեպ հաճախել եկեղեցի, իսկ վերջերս գայթակղվեց ու վերադարձավ մի շարք վատ սովորությունների, որոնք ձեռք էր բերել միսիայից առաջ:

Քննարկման հարցեր.

- Հոգևոր վերածննդի և սրտի փոփոխության վերաբերյալ ո՞ր ճշմարտություններն են առավել կարևոր Պաբլոյի իրավիճակի համար:
- Եթե Պաբլոն ձեր ընկերը լիներ, ինչո՞վ կկիսվեիք նրա հետ Հիսուս Քրիստոսի մասին, որը կարող է օգնել նրան վերականգնել սրտի փոփոխությունը:
- Պաբլոն ի՞նչ դասեր կարող էր սովորել Անթի-Նեփի-Լեքիներից:

Ուսանողներին մի քանի ռոպե տրամադրեք իրենց խմբային քննարկման ընթացքում սովորածի մասին զեկուցելու համար: Կարող եք նաև նրանց ժամանակ տալ խորհելու, թե նրանք ինչ են ոգեշնչվում անել՝ այսօրվա սովորածի և զգացածի շնորհիվ: Խնդրեք նրանց կիսվել, թե ինչպես է մեծացել իրենց հասկացողությունն ու վկայությունը Քրիստոսի վարդապետության վերաբերյալ, երբ նրանք ուսումնասիրել են այս բաժինը:

Հաջորդ անգամ

Դասի վերջում կարող եք ցուցադրել նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը. «Մենք կցանկանայինք ձեզ հետ խոսել Երկրի վրայի *մեծագույն* մարտահրավերի, *մեծագույն* նպատակի և *մեծագույն* աշխատանքի մասին: Եվ ցանկանում ենք հրավիրել, որ *դուք* կազմեք դրա մասը»: (Ռասսել Մ. Նելսոն և Վենդի Վ. Նելսոն, «Բարայելի հույսը» [համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018], supplement to the *New Era and Ensign*, 3, HopeofIsrael.ChurchofJesusChrist.org). Երբ ուսանողներն ուսումնասիրեն հաջորդ դասի նախապատրաստական նյութը, խրախուսեք նրանց մտածել իրենց դերի մասին այս մեծ գործում. Բարայելի հավաքման գործում:

ՄԱՍ 4

Իսրայելի հավաքումը



ԴԱՍ 13. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Իսրայել հավաքումը վերջին օրերում

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարել է. «Տերն արագացնում է Իսրայելի հավաքման Իր աշխատանքը: Այդ հավաքումն այսօր երկրի վրա տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն է: Ուրիշ ոչինչ չի համեմատվում մեծությամբ, կարևորությամբ և վեհությամբ» (Ռասսել Մ. Նելսոն և Վենդի Վ. Նելսոն, «Իսրայելի հույսը» [Երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք 3, 2018], supplement to the *New Era* and *Ensign*, 8, HopeofIsrael. ChurchofJesusChrist.org): Այս բաժնում դուք հնարավորություն կունենաք ուսումնասիրել Մորմոնի Գրքի տարբերակիչ ուսմունքները Իսրայելի հավաքման վերաբերյալ և դիտարկել, թե ինչպես է այս կարևոր աշխատանքը մարդկանց բերում դեպի Հիսուս Քրիստոսը: Ուսումնասիրելիս փնտրեք այն պարտականություններն ու հնարավորությունները, որոնք կարող են ձեզ համար լինել, երբ մասնակցում եք Իսրայելի հավաքմանը:

ԲԱԺԻՆ 1

Ինչո՞ւ է կարևոր Իսրայելի իսրայելի մասը կազմել:

Հասկանալու համար, թե որքան կարևոր է պատկանել Իսրայելի տանը, օգտակար է իմանալ, թե ինչպես է սկսվել Իսրայելի տունը: Մ.թ.ա. 2000 թ.-ից հետո Հիսուս Քրիստոսը հայտնվեց

Աբրահամին և նրա հետ հավիտենական ուխտ կապեց: Տերը խոստացավ Աբրահամին և Սառային, որ նրանց հետնորդներին կտրվի ավետարանի բոլոր օրհնությունները: Այդ խոստումներն ու օրհնությունները բոլորը միասին կոչվում են Աբրահամյան ուխտ: (Տես Աբրահամ 2.6–11-ը, Մուրբ գրքերի ուղեցույց, «Աբրահամյան ուխտ», scriptures.ChurchofJesusChrist.org:)



Տերը նորոգեց այս ուխտը Աբրահամի որդի Իսահակի և նրա թոռ Հակոբի հետ; Տերը Հակոբի անունը փոխեց Իսրայել: Իսրայելն ուներ 12 որդի, որոնց հետնորդները հայտնի են որպես Իսրայելի կամ իսրայելացիների տուն: (Տես Ծննդոց 26.24, 28.10–15-ը, Սուրբ գրքերի ուղեցույց, «Իսրայել», scriptures.ChurchofJesusChrist.org;))



Իսրայելի տունը Աստծո ուխտյալ ժողովուրդն է: Սուրբ քահանայության լիազորությամբ նրանք պատասխանատու են տանել Տիրոջ ավետարանը աշխարհի բոլոր մարդկանց, և հիմնական արարողություններն ու ուխտերը մատչելի դարձնել նրանց, ովքեր մահացել են առանց ավետարանի:

Երբ Իսրայելի ճշգրիտ հետնորդները հավատում են Հիսուս Քրիստոսին և ընդունում են Աբրահամյան ուխտը, նրանք հավաքվում են Իսրայելի տանը և դառնում Տիրոջ ուխտյալ ժողովրդի մի մասը: Նրանք, ովքեր Աբրահամի, Իսահակի և Հակոբի անմիջական հետնորդները չեն, կարող են ընդունվել Իսրայելի տուն՝ հավատք գործադրելով Հիսուս Քրիստոսի հանդեպ և ընդունելով Նրա ավետարանի արարողություններն ու ուխտերը (Տես Սուրբ գրությունների ուղեցույց, «Որդեգրում», scriptures.ChurchofJesusChrist.org):



Դիմելով Եկեղեցու անդամներին՝ նախագահ Նելսոնն ուսուցանել է.



Մենք . . . ուխտի զավակներ ենք: Մենք ստացել ենք սուրբ քահանայությունն ու հավիտենական ավետարանը, ճիշտ այնպես, ինչպես մարդիկ հնում: Աբրահամը, Իսահակը և Հակոբը մեր նախնիներն են: Մենք Իսրայելի մի մասն ենք: Մենք իրավունք ունենք ստանալու ավետարանը, քահանայության օրհնությունները և հավերժական կյանքը: Երկրի ազգերը կօրհնվեն մեր ջանքերով և մեր սերունդների աշխատանքով: Աբրահամի և Նրանց ընտանիքում որդեգրմամբ հավաքվածների անմիջական սերունդը ստանում է այս խոստացված օրհնությունները՝ հիմնված Տիրոջ ընդունման և Նրա պատվիրաններին հնազանդվելու վրա: («Ուխտի զավակները», *Ensign*, May 1995, 33)




Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս կբացատրեք մեկին, որը Եկեղեցու անդամ չէ, թե ինչ է Իսրայելի տունը, և ինչո՞ւ է այն կարևոր:

ԲԱԺԻՆ 2

Ինչո՞ւ ես պետք է մասնակցեմ Իսրայելի հավաքման գործին:

Երբ Լեքին ուսումնասիրեց արույրե թիթեղները, նա ավելին իմացավ իր տոհմաբանության և Իսրայելի տան մեջ իր տեղի մասին (տես 1 Նեփի 5.14): Որպեսզի օգնի իր ընտանիքին հասկանալ Իսրայելի տան մասը լինելու կարևորությունը, Լեքին Իսրայելի տունը համեմատեց ձիթենու ծառի հետ: Նա բացատրեց, որ ինչպես ճյուղը կարող է հատվել ձիթենու ծառից, այնպես էլ Իսրայելի ժողովուրդները կկտրվեն և կցրվեն հեռավոր երկրներ: Եվ ինչպես մեկ ծառից ձիթապտղի ճյուղը կարող է պատվաստվել և դառնալ այլ ծառի մաս, այնպես էլ ցրված Իսրայելը, ի վերջո, կհավաքվի միասին և կդառնա Տիրոջ ուխտյալ ժողովրդի մի մասը: (Տես 1 Նեփի 18.24-14:)



*Պատվաստումը գործընթաց է, երբ մեկ ծառից կտրված ճյուղը միանում է մեկ այլ ծառի այնպիսի ձևով, որ ճյուղը դառնում է այդ ծառի մշտական մաս:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 10.12–14-ը, և նշեք ճշմարտությունները Իսրայելի հավաքման մասին: (Նշում. Մորմոնի Գրքում *հեթանոսներ* եզրույթը հիմնականում նշանակում է «ավետարանը չունեցող ազգեր, նույնիսկ եթե այդ մարդկանց մեջ կա իսրայելացու արյուն» [Սուրբ գրքերի ուղեցույց, «Հեթանոսներ», scriptures.ChurchofJesusChrist.org]:)

Իսրայելի ցրման և հավաքման վերաբերյալ Լեքիի ուսմունքներից շատ չանցած, Նեփին տեսավ, որ իր եղբայրները վիճում են միմյանց հետ այն մասին, թե ինչ է ուսուցանել իրենց հայրը: Նրանք ասացին Նեփիին, որ չեն կարողանում հասկանալ Լեքիի ուսմունքները «ձիթենու բնական ճյուղերի վերաբերյալ և նաև հեթանոսների վերաբերյալ» (1 Նեփի 15.7):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Նեփիի բացատրությունը 1 Նեփի 15.12–15-ում և նշեք ճշմարտություններ, որոնք կօգնեն ձեզ ավելի լավ հասկանալ Իսրայելի հավաքումը:

Իսրայել հավաքման մասին նախազգահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է.



Երբ մենք խոսում ենք *հավաքման* մասին, մենք պարզապես ասում ենք այս հիմնարար ճշմարտությունը. մեր Երկնային Հոր գավակներից յուրաքանչյուրը վարագույրի երկու կողմերում արժանի է լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը: («Իսրայելի հույսը», 8)

Վարագույրի երկու կողմերում գտնվող անհատների թվում կան նրանք, ովքեր ողջ են և նրանք, ովքեր մահացել են:



Գրի առեք ձեր մտքերը

Մի թույլ հատկացրեք, որպեսզի արձանագրեք, թե ձեր կամ ձեր ընտանիքի անդամների կյանքը ինչպես է օրհնվել Իսրայելի հավաքմամբ: Մտածեք մի անձի մասին, որը վարագույրի այս կամ այն կողմում է, և գուցե կարիք ունի ստանալու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի օրհնությունները: Գրանցեք այս անձի անունը, և ինչո՞ւ է նա ձեզ համար կարևոր: Մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի օգնենք այս մարդուն ստանալ այդ օրհնությունները:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ մասնակցել Իսրայելի հավաքման գործին

Հակոբը՝ Նեփիի կրտսեր եղբայրը, ուսուցանեց Իսրայելի ցրման և հավաքման մասին, մեջբերելով Ջենոսի այլաբանությունը ընտանի և վայրի ձիթենիների մասին: Այլաբանության մեջ խաղողի այգու Տերը ներկայացնում է Հիսուս Քրիստոսին, իսկ ծառաները ներկայացնում են Նրա մարգարեներին և մյուս աշակերտներին, ովքեր կանչվել են հավաքելու Իսրայելը: Խաղողի այգում տնկված զանազան ձիթենիները ներկայացնում են Աստծո զավակների խմբեր, այդ թվում՝ Իսրայելի տան անդամներին: (Տես Հակոբ 5:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Հակոբ 5.61–62, 70–72-ը և փնտրեք, թե ինչ է ակնկալում Տերը նրանցից, ովքեր կանչվել են հավաքելու Իսրայելը:

Նախագահ Նելսոնը բացատրել է, թե որքան պարզ կարող է լինել Իսրայելի հավաքումը.



Ցանկացած ժամանակ, երբ ինչ-որ բան եք անում վարագույրի երկու կողմերում գտնվող որևէ մեկին օգնելու համար, մեկ քայլ առաջ եք գնում Աստծո հետ ուխտեր կապելու և նրանց մկրտության ու տաճարային կարևոր արարողությունների ուղղությամբ և օգնում եք հավաքել Իսրայելը: Դա այդքան պարզ է: («Իսրայելի հույսը», 15)



Ծրագիր կազմեք

Մտածեք վարագույրի երկու կողմերում գտնվող մարդու մասին, որի մասին գրել եք բաժին 2-ում. Պարզ ծրագիր կազմեք այն մասին, թե ինչ եք անելու, որպեսզի օգնեք այս մարդուն քայլեր ձեռնարկել Աստծու հետ ուխտեր կապելու ուղղությամբ: Օրինակ՝ կարող եք ինչ-որ մեկին հրավիրել Եկեղեցու միջոցառման, ինչ-որ մեկին հետ կիսվել սուրբ գրություններով, կամ կարող եք ներբեռնել և սկսել օգտագործել FamilySearch Family Tree mobile app-ը: Ուշադրություն դարձրեք, թե այս հավելվածի քանի գործիքներ կարող են օգնել ձեզ հավաքել Իսրայելը՝ որտեղ էլ որ լինեք:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

**Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել
այն մասին, թե ինչ է սովորեցնում
Մորմոնի Գիրքը Իսրայելի
հավաքման մասին:**

Իսրայելի հավաքման մասին Եսայիայի մարգարեությունը մեջբերելուց հետո (տես 1 Նեփի 21.17–26) Նեփին բացատրեց, թե Եսայիայի մարգարեությունն ինչպես կկատարվեր վերջին օրերում (տես 1 Նեփի 22.3–5, 8–12): Կարող եք ավելին կարդալ Իսրայելի ցրման և հավաքման մասին Հակոբ 5-ում: 3 Նեփի 20.13, 29–31-ում մենք սովորում ենք նաև կարևոր ճշմարտություններ, որոնք Հիսուս Քրիստոսը ուսուցանեց նեփիացիներին Իսրայելի հավաքման մասին:

**Ի՞նչ դեր է խաղում Մորմոնի Գիրքը
Իսրայելի հավաքման գործում:**



«Մորմոնի Գիրքը, Իսրայելի հավաքումը և Երկրորդ Գալուստը» (*Ensign*, July 2014, 26–31) հոդվածում Նախագահ Նելսոնը քննարկում է Մորմոնի Գրքի կենտրոնական դերը Իսրայելի հավաքման գործում:

**Հայրապետական օրհնությունն ինչ
կարող է սովորեցնել ինձ Իսրայելի
տանը իմ տեղի մասին:**

Հայրապետական օրհնություններում տոհմ հռչակելու մասին ավելին կարող եք իմանալ Ավետարանի թեմաների «Հայրապետական օրհնություն» հոդվածում (topics.ChurchofJesusChrist.org):

«Տոհմի հռչակումը հայրապետական օրհնության մեջ» (1:48) տեսանյութում Առաջին Նախագահության Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը բացատրում է, թե ինչո՞ւ է տոհմի հռչակումը հանդիսանում հայրապետական օրհնության կարևոր մասը:

ԴԱՍ 13. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Իսրայել հավաքումը վերջին օրերում

Այս բաժնում մենք կքննարկենք Մորմոնի Գրքի տարբերակիչ ուսմունքները Իսրայելի ցրման և հավաքման վերաբերյալ: Տերը ցրեց հին Իսրայելը, քանի որ նրանք մերժեցին Իր ուխտը, բայց Նա խոստացավ հավաքել նրանց վերջին օրերում: Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան բացատրել Իսրայելի տան մասը լինելու օրհնություններն ու պարտականությունները: Նրանք նաև կքննարկեն, թե ինչպես կարող են օգնել ինչ-որ մեկին «վարագույրի երկու կողմերում» . . . քայլ անել Մատթ Էստ ուխտեր կապելու ուղղությամբ» (Ռասսել Մ. Նելսոն և Վենդի Վ. Նելսոն, «Իսրայելի հույսը» [worldwide youth devotional, June 3, 2018], supplement to the *New Era and Ensign*, 15, ChurchofJesusChrist.org):

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Օգնեք ուսանողներին բացահայտել կարևորությունը: Երբ ուսանողները զգան, որ այն, ինչ իրենք ուսումնասիրում են, վերաբերվում է իրենց կյանքի հանգամանքներին, ամենայն հավանականությամբ, նրանք կսովորեն, ինչը կօգնի նրանց արդար գործեր կատարել: Դասերը պատրաստելիս հաշվի առեք ձեր ուսանողների ծագումը, մշակութային փորձը, հետաքրքրությունները, հարցերն ու դժվարությունները: Ուշադիր եղեք, որ ուսանողներին չասեք, թե ինչն է կարևոր նրանց կյանքի համար, ավելի շուտ օգնեք նրանց կարևորություն գտնել իրենց համար:

Էստո դուք հարցնում եք նրան, թե նա ինչպես է վերաբերվում դրան: Նա պատասխանում է. «Մարդիկ բարյացակամ էին և զրույցները հետաքրքիր էին, բայց ես իսկապես շփոթվեցի, երբ մի խոսակ խոսեց Իսրայելի հավաքման մասին և ասաց, որ դա ամենակարևորն է, որն այսօր տեղի է ունենում երկրի վրա»: Հետո նա հարցնում է. «Ի՞նչ է Իսրայելի հավաքումը, և ինչո՞ւ է դա այդքան կարևոր ձեր եկեղեցու համար»:

Առաջարկեք ուսանողներին իրենց զուգընկերների հետ քննարկել, թե ինչպես կպատասխանենին Բեթիի հարցին: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խրախուսեք վերանայել նաև նախապատրաստական նյութի բաժին 1-ը:) Ուսանողների պատասխանից հետո մի քանիսին հրավիրեք պատմել, թե նրանք ինչ են սովորել կամ զգացել Իսրայելի տան մասին, երբ զրուցում էին միասին:

Լեքին և Նեփին ուսուցանում են Իսրայելի ցրման և հավաքման մասին:

Ցուցադրեք հետևյալ սցենարը.

Ձեր ընկերը՝ Բեթին, հենց նոր է մասնակցել հաղորդության առաջին ժողովին: Եկեղեցուց

Ցուցադրեք ուղեկցող նկարը: Հանձնարարեք ուսանողներին կրկնել նախապատրաստական նյութի բաժին 2-ը (հատկապես 1 Նեփի 10.12–14 և 1 Նեփի 15.12–15-ը): Հետո ուսանողներից մեկին խնդրեք համառոտ բացատրել, թե Լեքին և Նեփին ինչպես օգտագործեցին ձիթենու ծառը՝ Իսրայելի ցրման և հավաքման մասին խոսելու համար:



Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ հայտարարությունը. *Մարդը դառնում է Իսրայելի տան մասը, երբ նա . . .*

Երբ ուսանողները կիսվեն իրենց պատկերացումներով, գրանցեք նրանց պատասխանները, որոնք կարող են ներառել հետևյալ ճշմարտությունը. **Մարդը դառնում է Իսրայելի տան մասը, երբ նա ստանում է ավետարանի լրիվությունը, ստանում է այն գիտելիքը, որ Հիսուս Քրիստոսը մեր Տերն է ու Քավիչը, և կապում ու պահում է ավետարանի ուխտերը:** Կարող եք օգտագործել հետևյալ հարցերից մի քանիսը՝ օգնելով ուսանողներին խորացնել Իսրայելի հավաքման վերաբերյալ իրենց հասկացողությունը.

- Որքանո՞վ է Իսրայելի հավաքումը վերաբերում կենդանի մարդկանց և նրանց, ովքեր մահացել են:
- Ձեր կարծիքով, նախագահ Նելսոնն ինչո՞ւ ասաց, որ Իսրայելի հավաքումը «այսօր երկրի վրա տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն է» («Իսրայելի հույսը», 8): (Կարող եք կրկնել նրա հայտարարությունը ներածությունից և բաժին 1-ից, ինչպես նաև նախապատրաստական նյութի բաժին 2-ից:)
- Մենք ինչպե՞ս ենք պատվում Հիսուս Քրիստոսի կյանքն ու զոհաբերությունը, երբ մասնակցում ենք Իսրայելի հավաքմանը:

- Իսրայելի հավաքումն ինչպե՞ս է ազդել ձեր կյանքի վրա կամ ինչպե՞ս է ձեր ընտանիքի անդամների կյանքն օրհնվել Իսրայելի հավաքմամբ:

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են զգալ և ինչպես կարող են արձագանքել, եթե մարգարեն անձամբ նրանց ուղղի այս հարցը. «Կցանկանայի՞ք այսօր լինել երկրի վրա *մեծագույն* մարտահրավերի, *մեծագույն* նպատակի և *մեծագույն* աշխատանքի մի մեծ մասը» («Իսրայելի հույսը», 8):

Հիսուս Քրիստոսը ծառաներին կոչ է անում օգնել Իսրայելի հավաքման գործին

Հակիրճ վերանայեք, թե ինչպես է Հակոբը օգտագործել Ջենոսի ձիթենու ծառի այլաբանությունը՝ Իսրայելի հավաքման և ցրման մասին ուսուցանելու համար (տես նախապատրաստական նյութի բաժին 3-ը): Նշեք, որ այլաբանության կեսում խաղողի այգու Տերը վշտացավ, քանի որ ձիթենիները (որոնք ներկայացնում են Տիրոջ ժողովրդին) լավ պտուղ չէին տալիս: Հրավիրեք ուսանողներին կարդալ Հակոբ 5.47, 51-ը՝ փնտրելով Տիրոջ զգացումները Իսրայելի տան վերաբերյալ:

- Այս հատվածներն ի՞նչ են ուսուցանում մեզ Հիսուս Քրիստոսի բնավորության մասին:
- Իմանալով մեր հանդեպ Տիրոջ խորը հոգատարության մասին, ի՞նչ զգացումներ ունեք Նրա հանդեպ:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Հակոբ 5.61–62, 70–72-ը, փնտրելով մեր դերը Իսրայելի հավաքման համար Տիրոջն օգնելու գործում: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ջանասիրաբար աշխատում ենք Տիրոջ հետ՝ օգնելով Իսրայելի հավաքմանը, մենք կօրհնվենք ուրախությամբ:**)

- Ինչո՞ւ է մեզանից յուրաքանչյուրի համար կարևոր օգնել Տիրոջը Իսրայելի հավաքման գործում:

- Ի՞նչ կարող ենք անել Իսրայելը հավաքելու համար: (Ուսանողները կարող են որոշ ժամանակ ծախսել՝ թվարկելով գաղափարներ և խոսելով այն մասին, թե նրանք ինչպես են մասնակցել Իսրայելի հավաքմանը: Կարող եք վերանայել նախագահ Նելսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ում:)
- Ի՞նչ եք զգացել, երբ օգնել եք ինչ-որ մեկին վարագույրի երկու կողմերում հավաքվել Իսրայելի տանը:

Դասի վերջում կարող եք կիսվել հետևյալ հայտարարությունով կամ ցուցադրել նախագահ Նելսոնի ելույթից հետևյալ հայտարարության տեսահոլովակը (ժամանակի ծածկագիր 32:19-33:37) «Իսրայելի հույսը».



Բոլոր մարգարեները խոսել են *մեր* օրերի մասին, երբ Իսրայելը կհավաքվի և աշխարհը կպատրաստվի Փրկիչի Երկրորդ Գալուստին: Մտածե՛ք այդ մասին: Երկիր մոլորակի վրա երբևէ ապրած բոլոր մարդկանցից *մենք* ենք այն մարդիկ, ովքեր մասնակցում են այս վերջին, մեծ հավաքման իրադարձությանը: Որքա՞ն ոգևորիչ է սա: («Իսրայելի հույսը», 8)

Հիշեցրեք ուսանողներին, որ այս դասին նախապատրաստվելու համար նրանց խնդրել էին գտնել ինչ-որ մեկին վարագույրի երկու կողմերում. նրանք կարող էին օգնել քայլեր ձեռնարկել Աստծու հետ ուխտեր կապելու ուղղությամբ (տես նախապատրաստական նյութի բաժին 2 և 3-ը): Ուսանողներին ժամանակ տվեք՝ խորհելու, իրենց տպավորությունները գրանցելու և վերջնական տեսքի բերելու իրենց գործողությունների ծրագիրը: Եթե տեղին եք համարում, հրավիրեք որոշ ուսանողների կիսվել այն ամենով, ինչ նրանք ոգեշնչված են անել:

Հաջորդ անգամ

Ուսանողներին բացատրեք, որ Իսրայելի հավաքման համար մեզ հրավիրում են գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում և Նրա ավետարանով կիսվել բոլոր մարդկանց հետ: Երբ ուսանողները կարդան հաջորդ դասի նախապատրաստական նյութը, հրավիրեք նրանց մտածել, թե ինչ կարող են անել, որպեսզի Աստծո ձեռքերում լինեն ավելի արդյունավետ գործիքներ՝ ավետարանով կիսվելու համար:



ԴԱՍ 14. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում

Մտածեք, թե քանի մարդու եք հանդիպում ամեն օր, ովքեր ներկայումս չեն վայելում Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները: Ինչպե՞ս կարող էր փոխվել նրանց կյանքը, եթե նրանք ավելին իմանային իրենց երջանկության համար Երկնային Հոր ծրագրի մասին: Երբ դուք ուսումնասիրում եք Մորմոնի Գրքի միսիոներների օրհնակները, աղոթքով մտածեք մեկի մասին, ում հետ կարող եք կիսվել ավետարանով: Հիշեք, որ ավետարանով ուրիշների հետ կիսվելիս դուք մասնակցում եք Իսրայելի հավաքմանը:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող է իմ դարձի խորացումը մեծացնել ավետարանով կիսվելու իմ ցանկությունը:

Մոսիայի չորս որդիները (Ամմոն, Միաբոն, Օմներ և Հիմնի) Ալմա Կրտսերի հետ էին, երբ մի հրեշտակ հայտնվեց և նրան ապաշխարության կանչեց: Բոլոր հինգ երիտասարդները խորապես վշտացան իրենց արարքների համար, ապաշխարեցին իրենց մեղքերից և դարձի եկան դեպի Տերը: Դարձի գալուց հետո «նրանք գործիքներ էին Աստծո ձեռքերում՝ շատերին ճշմարտության իմացությանը բերելիս, այո, իրենց Քավիչի իմացությանը» (Մոսիա 27.36):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 28.1–3-ը՝ փնտրելով, թե Մոսիայի որդիների դարձի գալն ինչպես ազդեց ավետարանով կիսվելու և Աստծո ձեռքում գործիք լինելու նրանց ցանկության վրա:

Տարիներ շարունակ լամանացիների շրջանում միսիոներական ծառայության անցնելուց հետո Ամմոնն ասաց իր եղբայրներին. «Եվ այս է օրհնությունը, որը պարգևեց մեզ, որ մենք Աստծո ձեռքում գործիքներ դարձանք՝ իրականացնելու [փրկության] այս մեծ աշխատանքը» (Ալմա 26.3):

Առաջին Նախագահությունից նախագահ Դավիթ Զ. Օուքսը հետևյալը սովորեցրեց այն մասին, թե մեր դարձն ինչպես է ազդում ավետարանով կիսվելու մեր ցանկության վրա.



Ավետարանով կիսվելը բեռ չէ, այլ՝ ուրախություն: Այն, ինչ անվանում ենք «անդամ-միսիոներական աշխատանք», ծրագիր չէ, այլ՝ սիրո և մեզ շրջապատողներին հասնելու վերաբերմունք: Այն նաև հնարավորություն է վկայելու, թե ինչ վերաբերմունք ունենք Փրկիչի վերականգնված ավետարանի հանդեպ: Ինչպես երեց Բալլարդն է ուսուցանել. «Մեր դարձի ամենանշանակալից ապացույցը և մեր կյանքում ավետարանի հանդեպ վերաբերմունքն արտահայտվում է ուրիշների հետ այն կիսվելու մեր պատրաստակամությամբ» [Մ. Ռասսել Բալլարդ, «Հիմա է ժամանակը», *Liahona*, հունվ. 2001, 89]: («Կիսվել վերականգնված ավետարանով», *Liahona*, նոյեմբեր 2016, 60)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Բացահայտեք սուրբ գրությունների կամ Եկեղեցու պատմությունից մի օրինակ, թե ինչպես դարձը մեծացրեց ինչ-որ մեկի ցանկությունն ու պատրաստակամությունը՝ գործիք լինելու Աստծո ձեռքերում և կիսվելու ավետարանով: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր օրինակով կիսվելու համար:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ գործիք դառնալ Աստծո ձեռքերում

Մոսիայի որդիները և նրանց հետ գնացողները առճակատվեցին «վայրի և կարծրացած ու կատաղի մի ժողովրդի» հետ, երբ գնացին

ուսուցանելու լամանացիներին (Ալմա 17.8, 14): Երբ այս միսիոներներն աշխատում էին նրանց մեջ, նրանք «շատ էին տառապել և՛ մարմնով, և՛ մտքով, ինչպես օրինակ՝ քաղց, ծարավ և հոգնածություն, և նաև շատ հոգեկան ապրումներ» (Ալմա 17.5):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 17.2–3, 9–11-ը՝ փնտրելով, թե ինչ արեցին Մոսիայի որդիները՝ հայտնության ոգին ստանալու և Աստծո ձեռքերում արդյունավետ գործիքներ դառնալու համար: Կարող եք նշել այն, ինչ գտաք:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ո՞ր գործողություններն են առավելապես օգնել ձեզ արժանի լինել Հոգուն, որպեսզի ավելի արդյունավետ գործիք դառնաք Աստծո ձեռքերում:

ԲԱԺԻՆ 3

Հոգին ինչպե՞ս կարող է օգնել ինձ ավելի լավ ծառայել ուրիշներին և կիսվել ավետարանով:

Մոսիայի որդիները գործիքներ դարձան Աստծո ձեռքում՝ օգնելով լամանացիներից շատերին գալ Փրկիչի մոտ: Ամմոնը միայնակ ճամփորդեց դեպի Իսմայելի երկիրը, նրան կապեցին և բերեցին Լամոնի թագավորի առաջ: Թագավորը հարցրեց Ամմոնին նրա մտադրությունների մասին, և Ամմոնն ասաց, որ ցանկանում է ապրել լամանացիների մեջ՝ գուցե իր ողջ կյանքում: Դա ուրախացրեց թագավորին, և Ամմոնը դարձավ նրա ծառաներից մեկը: (Տես Ալմա 17.19–25)

Ամմոնին ուղարկեցին թագավորի հոտերը հսկելու: Երբ գողերը փորձեցին ցրել ոչխարները, Ամմոնը խափանեց նրանց ջանքերը իր պարսատիկով ու թրով: Ավագակները զարմացան Ամմոնի զորությունից և փախան: (Տես Ալմա 17.25, 33–38)



Երբ թագավոր Լամոնին իմացավ Ամմոնի հաջողության մասին իր հոտերը պաշտպանելիս, նա զարմացավ և մտածեց՝ արդյո՞ք Ամմոնը «Մեծ Հոգի»ն չէ, որն այսպիսի մեծ պատիժներ է ուղարկում այս ժողովրդի վրա» (Ալմա 18.2): «Ամմոնը, լցված լինելով Աստծո Հոգով» (հատված 16),

կարողացավ ընկալել թագավորի մտքերը, հասկանալ նրա մտաճանապարհները, ապա սկսեց ուսուցանել նրան ավետարանը (տես Ալմա 18.15–24):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 18.33–35 և մտածեք, թե ինչ կարող եք սովորել Ամմոնից՝ Աստծո ձեռքում գործիք լինելու մասին:



Թագավոր Լամոնին հավատաց Ամմոնի խոսքերին և դարձի եկավ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Ամմոնը կարողացավ ուսուցանել նաև Լամոնիի կնոջը և թագավորի ծառաներին: Նրանցից շատերը հավատացին Ամմոնի ուսմունքներին և վկայեցին, որ «նրանց սրտերը փոխվել էին» (Ալմա 19.33): Քանի որ Ամմոնը գործիք էր դարձել Աստծո ձեռքերում, «Տիրոջ գործը սկսվեց [այդ] լամանացիների մեջ» (Ալմա 19.36):

Չնայած մեր փորձառությունը կարող է այնքան էական չլինել, որքան Ամմոնի փորձառությունը, սակայն մենք կարող ենք փոխել ուրիշների կյանքը, երբ պատրաստվենք գործիք դառնալ Աստծո ձեռքերում:



Տասներկու Առաքյալների Քվիրումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է, թե մենք ինչպես կարող ենք ավետարանով կիսվել ուրիշների հետ.



Որտեղ էլ գտնվեք այս աշխարհում, կան շատ հնարավորություններ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրով կիսվելու այն մարդկանց հետ, ում հանդիպում եք, ում հետ սովորում, ապրում, աշխատում և շփվում եք: . . .

Ձեզ համար սովորական և բնական եղանակներով մարդկանց հետ կիսվեք, թե Հիսուս Քրիստոսն ու Նրա Եկեղեցին ինչո՞ւ են կարևոր ձեզ համար: . . .

Աղոթեք, որ ոչ միայն միսիոներները գտնեն ընտրյալներին: Ամեն օր ձեր ամբողջ սրտով աղոթեք, որ գտնեք նրանց, ովքեր *կզան և կտեսնեն, կզան և կօգնեն և կզան ու կմնան*: («Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում», *Լիաիոնա* մայիս 2019, 17)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ եք դուք արել ավետարանով «բնական և նորմալ» ձևերով կիսվելու համար: Ու՞մ եք մտաբերում, երբ մտածում եք հրավիրել ինչ-որ մեկին ավելի մոտենալ Փրկիչին: Ի՞նչ կարող եք անել Տիրոջ ձեռքերում գործիք լինելու համար, որ օգնեք նրանց, ում մասին մտածել եք:

**Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)**

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Մոսիայի որդիների միսիոներական ջանքերի մասին:

Մորմոնի Գրքի տեսանյութում պատկերվում է Ամմոնի փորձառությունը Լամոնի թագավորի հետ Ammon Serves and Teaches King Lamoni (Alma 17–19) (23:04):

Դուք կարող եք կարդալ պատմությունն այն մասին, թե ինչպես է Ահարոնը ուսուցանում Լամոնիի հորը Ալմա 21–22: Ալմա 26-ում դուք կարող եք կարդալ Ամմոնի հաջողության նկարագրությունը, որ նա և իր եղբայրներն ունեցան լամանացիների շրջանում, ինչպես նաև Քրիստոսի մոտ հոգիներ բերելու ուրախության մասին:

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի բնական և հավաստի լինեմ ավետարանով կիսվելու իմ ջանքերում:

Կիսվեք ավետարանով հարթակում կարող եք սովորել սոցիալական ցանցերի միջոցով սովորական և բնական եղանակներով ավետարանով կիսելու մասին:

«Sharing the Gospel» (1:30) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվիրումից Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը խոսում է այն մասին, թե ինչպես կարող ենք սովորական և բնական եղանակներով ավետարանով կիսվել մեր ընկերների և գործընկերների հետ:

«Inviting Others to ‘Come and See’» (1:17) տեսանյութում տրված են որոշ առօրյա եղանակներ, որոնցով մենք կարող ենք հրավիրել մեր ընկերներին զգալ Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները:

«Sharing the Gospel» տեսանյութում (3:49) երիտասարդներն ու մեծահասակները խոսում են ուրիշների հետ ավետարանով կիսվելու փորձառությունների և զգացումների մասին:

ԴԱՍ 14. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում

Երբ Մոսիայի որդիները ապաշխարեցին և դարձան դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը, նրանք դարձան հզոր միսիոներներ և օգնեցին շատ լամանացիների գալ Նրա մոտ: Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա կիսվել, թե իրենց սեփական դարձի ամրապնդումն ինչպես կարող է մեծացնել ավետարանով ուրիշների հետ կիսվելու նրանց ցանկությունը: Ուսանողները կքննարկեն, թե ինչ կարող են անել Աստծո ձեռքերում ավելի արդյունավետ գործիքներ դառնալու համար, երբ հավաքում են Իսրայելը՝ պատրաստվելով Տիրոջ Երկրորդ Գալուստին:

Ուսուցման առաջարկներ

Ալման և Մոսիայի որդիները դարձի են եկել և գնում են լամանացիներին քարոզելու:

Ցուցադրեք հետևյալ հայտարարությունները: Խնդրեք ուսանողներին մտքում գնահատել յուրաքանչյուր հայտարարությունը 1-5 սանդղակով (1 = բոլորովին համաձայն չեմ, իսկ 5 = լիովին համաձայն եմ):

1. Ես ցանկանում եմ ուրիշների հետ կիսվել ավետարանով:
2. Ես աղոթում եմ ավետարանով կիսվելու հնարավորությունների համար:
3. Ավետարանով կիսվելը իմ կյանքի սովորական և բնական մասն է:
4. Ես ձգտում եմ արդյունավետ գործիք լինել Աստծո ձեռքերում՝ կիսվելով Նրա ավետարանով:

Երբ ուսանողները ժամանակ կունենան կատարել այս ինքնագնահատումը, ցուցադրեք հետևյալ հարցը. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի արդյունավետ գործիք դառնամ Հիսուս Քրիստոսի ավետարանով կիսվելու գործում: Հրավիրեք ուսանողներին լսել և գրանցել ցանկացած հուշում, որը կարող է օգնել նրանց պատասխանել այս հարցին:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մոսիայի որդիները գործիքներ դարձան Աստծո ձեռքերում, երբ նրանք ծով էին պահում, աղոթում էին Նրա Հոգու համար և քարոզում էին Նրա ավետարանը (տես Ալմա 17.3, 9, 11, 26.3, 15): Հանձնարարեք ուսանողներին կարդալ Մոսիա 27.35–36-ը և Մոսիա 28.1–3-ը՝ փնտրելով, թե ինչպես փոխվեցին Մոսիայի որդիների սրտերը դարձի գալուց հետո:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Հարցեր տվեք, որոնք օգնում են խորապես հասկանալ նյութը: Երբ նկատում եք, որ ուսանողներն իրենց մտքում հասկանում են ավետարանի սկզբունքը, տվեք հարցեր, որոնք կարող են օգնել նրանց լիովին հավատալ այդ սկզբունքին: Այսպիսի հարցերը ուսանողներին թույլ են տալիս օգտվել իրենց սեփական փորձից և կիսվել իրենց սեփական վկայություններով: Նման հարցերը կարող են ունենալ հետևյալ ձևերից մեկը. «Ե՞րբ եք զգացել. . .»: «Որտեղի՞ց գիտեք. . . » կամ «Ինչպե՞ս եք վերաբերվում. . . -ին»:

- Ի՞նչ նկատեցիք Մոսիայի որդիների ցանկություններում: Ի՞նչ կարող ենք սովորել նրանից, թե նրանց դարձն ինչպե՞ս ազդեց Աստծո ձեռքերում գործիքներ լինելու նրանց ցանկության վրա: (Հանձնարարեք ուսանողներին վերանայել նախագահ Դալլին Հ. Օուքսի

հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում: Օգտագործելով ուսանողների պատասխանները, գրատախտակին գրեք նմանատիպ մի սկզբունք: **Երբ մեր դարձը խորանում է, Աստծո ձեռքերում գործիք լինելու և ավետարանով կիսվելու մեր ցանկությունն ու պատրաստակամությունը մեծանում է:**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է մեր դարձի խորացումը ուժեղացնում ավետարանով կիսվելու մեր ցանկությունը: Հասկանալով այս սկզբունքը, ինչպե՞ս կարող ենք պատրաստվել միսիայի կամ ավելի լավ կիսվել ավետարանով մեր առօրյա կյանքում:
- Մուրբ գրություններից կամ եկեղեցու պատմությունից ի՞նչ օրինակներ գիտեք, որոնք ցույց են տալիս այս սկզբունքը: Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ իմանալ, որ այս սկզբունքը ճշմարիտ է: (Հրավիրեք ուսանողներին իրենց գույքակերտը հետ կիսվել իրենց օրինակներով և անձնական փորձով:)

Մի քանի բաժնի ժամանակ տվեք ուսանողներին՝ վերանայելու իրենց կողմից տրված ինքնագնահատականը և խորհելու այն հարցի շուրջ, որը ներկայացվել է դասի սկզբում: Խնդրեք նրանց գրանցել մտքերն ու զգացումները, որոնք ունեցել են դասի ժամանակ:

Մոսիայի որդիները գործիքներ են դառնում Տիրոջ ձեռքերում:

Հրավիրեք ուսանողներին կիսվել դժվարություններով, որոնց բախվել են, երբ փորձել են կիսվել ավետարանով: (Կարող եք գրատախտակին ցուցադրել նրանց պատասխանները և քննարկել, թե ինչպես են այս մարտահրավերները խանգարում մեզ կիսվել ավետարանով:)

Հետևյալ անավարտ նախադասությունը գրեք գրատախտակին. *Մենք կաշտող ենք ավելի արդյունավետ գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում, երբ մենք...*

Հակիրճ վերանայեք այն դժվարությունները, որոնց բախվեցին Մոսիայի որդիները, երբ սկսեցին ավետարանը քարոզել լամանացիների մեջ

(տես նախապատրաստական նյութի բաժին 2-ը): Հրավիրեք ուսանողներին վերանայել Ալմա 17:2–3, 9–11-ը՝ փնտրելով, թե ինչ արեցին Մոսիայի որդիները իրենց դժվարությունները հաղթահարելու և Աստծո ձեռքերում արդյունավետ գործիքներ դառնալու համար:

- Օգտագործելով այն, ինչ սովորել ենք Մոսիայի որդիներից, ինչպե՞ս կարող ենք ավարտել գրատախտակի հայտարարությունը՝ սկզբունք ձևավորելու համար: (Օգտագործելով ուսանողների բառերը, լրացրեք հայտարարությունն այնպես, որ այն ձևավորի նմանատիպ մի սկզբունք. **Մենք կարող ենք ավելի արդյունավետ գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում, երբ աղոթենք, ծոմ պահենք և ուսումնասիրենք սուրբ գրությունները:**)

Հանձնարարեք ուսանողներին Ալմա 17.2–3-ում գտնել, թե ինչ հոգևոր օրհնություններ ստացան այս միսիոներները, երբ նրանք աղոթում էին, ծոմ էին պահում և ուսումնասիրում սուրբ գրությունները: (Օգնեք ուսանողներին գտնել նմանատիպ մեկ այլ սկզբունք. **Երբ աղոթում ենք, ծոմ պահում և ուսումնասիրում սուրբ գրությունները, մենք կարող ենք ստանալ հայտնության ոգին:**)

- Հայտնության ոգին ինչպե՞ս օգնեց Ամմոնիի արդյունավետ գործիք լինել Աստծո ձեռքերում: (Կարող եք մի ուսանողի հրավիրել հակիրճ պատմել Ամմոնի փորձառությունը թագավոր Լամոնիի հետ, ապա կարդալ Ալմա 18.33–35-ը:)
- Ինչո՞ւ է կարևոր ունենալ հայտնության ոգին, երբ մենք ձգտում ենք գործիքներ լինել Աստծո ձեռքերում:
- Հայտնության ոգին ինչպե՞ս է օգնել ձեզ ավելի արդյունավետ գործիք լինել Աստծո ձեռքերում:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.



Երբ մենք ձգտում ենք լսել, իսկապես լսել [Հիսուս Քրիստոսին], մենք առաջնորդվում և իմանում ենք, թե ինչ անել ցանկացած պարագայում: . . .

Ես կրկին խնդրում եմ, որ դուք անեք *այն ամենը*, ինչ անհրաժեշտ է՝ ձեր հոգևոր ունակությունն ավելացնելու համար, որպեսզի ստանաք անձնական հայտնություն: («Լսի՛ր Նրան», *Lhaholna*, մայիս 2020, 89, 90)

Հրավիրեք ուսանողներին վերանայել Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆի հայտարարությունը բաժին 3-ում և խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ո՞ւմ կարող եմ հրավիրել մոտենալ Փրկիչին:
- Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի գործիք լինեմ Տիրոջ ձեռքերում՝ օգնելու այդ մարդկանց ավելի մոտենալ Քրիստոսին:

Կարող եք ուսանողներին ժամանակ տրամադրել՝ իրենց մտքերն ու զգացումները գրանցելու համար: Կարող եք նաև բոլոր պատրաստակամ ուսանողներին հրավիրել կիսվել այն ամենով, ինչ իրենք ծրագրում են անել:

Նշեք, որ իրենց նախապատրաստության շնորհիվ Մոսիայի որդիները նույնպես ստացան մարգարեության ոգին և կարողացան ուսուցանել զորությամբ և իշխանությամբ: (Օգտակար կլինի բացատրել, որ «մարգարեության հոգին»

արտահայտությունը կարող է վերաբերել «Յիսուս Քրիստոսի վկայութիւնն» արտահայտությանը [Հայտնություն 19.10]:) Հավաստիացրեք ուսանողներին, որ մենք նույնպես կարող ենք նմանատիպ օրհնություններ ստանալ, երբ պատրաստվում ենք գործիքներ դառնալ Աստծո ձեռքերում:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ Տիրոջ օգնությամբ մեզանից յուրաքանչյուրը կարող է գործիք լինել Նրա ձեռքերում և օգնել հավաքել Իսրայելը:

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին մտածել, թե որքանով են նրանք պատրաստ զգում Քրիստոսի Երկրորդ Գալուստին: Բացատրեք, որ հաջորդ դասում նկարագրվում է Փրկիչի այցը Ամերիկայի նեփիացիներին: Երբ ուսանողները պատրաստվեն հաջորդ դասին, խրախուսեք նրանց փնտրել, թե նեփիացիներին հայտնվելու նախորդող իրադարձություններն ինչ կարող են ուսուցանել վերջին օրերում Փրկիչի վերադարձին պատրաստվելու վերաբերյալ:

ԾԱՌ 5

Հիսուս Քրիստոսի Ժառանգությունը



ՐԱՍ 15. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի Գալուստին

Այս բաժինը կկենտրոնանա Հիսուս Քրիստոսի՝ «Նեփիի ժողովրդին» հայտնվելու և նրանց մեջ ծառայելու վրա (3 Նեփի 11.1): Այս խումբը բաղկացած էր՝ ինչպես արդար Նեփիացիներից, այնպես էլ Լամանացիներից, ովքեր դարձի էին եկել դեպի Տերը (տես 3 Նեփի 10.18–19): Երբ մտածեք Փրկիչի հետ նրանց ունեցած փորձառությունների շուրջ, ձգտեք լավացնել ձեր սեփական վկայությունը Նրա բնավորության, հատկանիշների և աստվածային առաքելության վերաբերյալ:

Տիրոջ աստվածային առաքելության շատ սպասված մասը Նրա Երկրորդ Գալուստն է: Նախագահ Էզրա Թավո Բենսոնն ուսուցանել է. «Մորմոնի Գրքում մենք գտնում ենք Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու մի օրինակ» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Էզրա Թավո Բենսոն* [2014], 140): Այս դասին դուք հնարավորություն կունենաք մտածել, թե այդ ժողովրդի մեջ Փրկիչի հայտնվելուն նախորդող մարգարեությունների և իրադարձությունների ուսումնասիրությունն ինչպես կարող է օգնել ձեզ նախապատրաստվել Նրա Երկրորդ Գալուստին:

ԲԱԺԻՆ 1

Ես որքանո՞վ եմ պատրաստ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին

Մորմոնի Գրքում սերունդներ շարունակ մարգարեները կանխագուշակել են Հիսուս Քրիստոսի Գալուստը Երկիր: Երուսաղեմի մոտ Քրիստոսի ծնվելուց վեց տարի առաջ Սամուել Լամանացին ուղարկվեց Տիրոջ կողմից, որպեսզի ամբարիշտ Նեփիազիներին նախապատրաստի Քրիստոսի գալուստին: Սամուելը մարգարեացավ մի քանի նշանների և հրաշքների մասին, որոնք ուղեկցելու էին Հիսուս Քրիստոսի ծնունդին ու մահվանը: (Տես Հեղաման 13–15)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ընթերցեք Հեղաման 14.6–13-ը և մտածեք, թե Սամուելի ուղերձը ինչպես էր նախատեսված՝ Նեփիազիներին Տիրոջ գալուստին նախապատրաստելու համար:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է, որ մարգարեները կարող են օգնել մեզ նախապատրաստվել Տիրոջ Գալուստին:



Նախքան Բեթլեհեմի այդ սուրբ գիշերը, պատմության իրադարձությունները և բոլոր տնտեսությունների մարգարեների խոսքերը ուղի նախապատրաստեցին Տիրոջ առաջին գալուստի և Նրա Զավության համար: . . . Արդյո՞ք մենք աչքեր ունենք, որ տեսնենք, որ մեր ժամանակի իրադարձությունները և մարգարեությունները նախապատրաստում են մեզ Փրկիչի Երկրորդ Գալուստին («Պատրաստություններ Վերականգնման և Երկրորդ Գալուստի համար. «Իմ ձեռքը պիտի լինի քո վրա»,» *Liahona*, նոյեմբեր 2005, 92)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Մի քանի թույլ տրամադրեք՝ ուսումնասիրելու «Ժամանակների նշանները» վերնագիրը Սուրբ Գրքերի ուղեցույցում (տես scriptures. ChurchofJesusChrist.org), փնտրելով, թե մարգարեները սուրբ գրություններում ի՞նչ նշաններ են հայտնել Տիրոջ Երկրորդ Գալուստի վերաբերյալ: Դուք կնկատեք, որ այդ մարգարեություններից մի քանիսը կարող են անհանգստություն կամ վախ պատճառել մարդկանց: Այնուամենայնիվ, այդ մարգարեական նշանները նույնպես ցույց են տալիս Իր զավակների հանդեպ Աստծո սերը:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ո՞ր մարգարեական ուսմունքը կամ Երկրորդ Գալուստի նշանն է ավելի շատ ոգեշնչում ձեզ նախապատրաստվել Տիրոջ վերադարձին: Ի՞նչ փոփոխություններ պետք է կատարեք, որպեսզի ավելի լավ պատրաստվեք Փրկիչի վերադարձին:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հավատարիմ մնամ այնպիսի ուղերձներ լսելիս, որոնք կասկածներ են առաջացնում Հիսուս Քրիստոսի աստվածայնության և Նրա Երկրորդ Գալուստի իրողության վերաբերյալ

Որոշ Նեփիացիներ հավատացին Մամուելի խոսքերին: Մյուսները մերժեցին Մամուելի ուղերձը և փորձեցին սպանել նրան քարերով և նետերով: Քանի որ նրանք չկարողացան հարվածել նրան, ավելի շատ մարդիկ հավատացին նրա ուղերձին և գնացին Նեփիի մոտ՝ մկրտվելու: Հետագայում, երբ Քրիստոսի ծննդյան հետ կապված նշաններն ու հրաշքները սկսեցին իրականանալ, հավատացյալներն ուրախություն զգացին, իսկ անհավատները կարծրացրին իրենց սրտերը: (Տես Հեղաման 16.1-15)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ընթերցեք Հեղաման 16.13-23-ը և նշեք բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե անհավատներն ինչպես կասկածներ առաջացրին Քրիստոսի ծննդյան նշանների հանդեպ:

Անդրադառնալով կասկածի ձայներին՝ Երիտասարդ կանանց նախկին գերագույն նախագահ քույր Բոննի L. Օսկարսոնն ուսուցանել է.



Մենք պետք է շարունակենք ուրախանալ [կենաց ծառի պտղով] և ուշադրություն չդարձնենք նրանց, ովքեր կծաղրեն մեր համոզմունքները, կուրախանան կասկածներ հարուցելով, կամ ովքեր կփնտրեն Եկեղեցու ղեկավարներին և վարդապետությունը: Դա ընտրություն է, որը մենք կայացնում ենք ամեն օր՝ կասկածի փոխարեն ընտրելով հավատը: («Հավատում եմ արդյո՞ք» *Լիահոնա*, մայիս 2016, 89):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ ուղերձներ եք լսել, որոնք միտում ունեն կասկած հարուցել Հիսուս Քրիստոսի, Նրա ընտրյալ ղեկավարների կամ Նրա վերականգնած եկեղեցու հանդեպ:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Երբ մտածեք այն կասկածների մասին, որոնց դուք հանդիպել եք, կարդացեք 3 Նեփի 1.4–15, 22-ը և փնտրեք, թե ինչպես են որոշ հավատացյալներ անսասան մնում, չնայած իրենց հավատքին ուղղված անհավատների ծաղրանքին:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է հետևյալը՝ Քրիստոսի հանդեպ մեր հավատքում հաստատուն մնալու մասին.



Քրիստոսի հավատքում կայուն և հաստատուն լինելու համար անհրաժեշտ է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ներթափանցի մարդու սիրտը և հոգին, որը նշանակում է, որ ավետարանը ոչ միայն պիտի դառնա այդ մարդու կյանքի ազդակներից մեկը, այլև Նրա կյանքի ու բնավորության որոշիչ կիզակետը: . . .

Միշտ հիշեք այն խոստումը, որ թե՛ հիմա, թե՛ դրանից հետո լավ բաներ են ստանում նրանք, ովքեր ամուր են և հաստատուն՝ Քրիստոսի հավատքում: («Կայուն և հաստատուն Քրիստոսի հավատքում», *Լիահոնա*, նոյեմբեր 2018, 31, 33)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք անել, որպեսզի հաստատուն մնաք Քրիստոսի հավատքում, երբ նախապատրաստվում եք Նրա վերադարձին:

**Ցանկան՞ում եք ավելին:
(Ոչ պարտադիր)**

Ի՞նչ ուսուցանեց Հիսուս Քրիստոսը Նեփիացիներին և Լամանացիներին Իր Երկրորդ Գալուստի մասին:

3 Նեփի 24–25-ում դուք կարող եք կարդալ Հին Կտակարանի մարգարե Մաղաքիայի խոսքերը, որոնք Տերը պատվիրեց Ներառել Մորմոնի Գրքում: Այս ուսմունքները կարող են օգնել մեզ պատրաստվել Երկրորդ Գալուստին: (Գլուխ 45-ը *Մորմոնի Գրքի ուսանողի ձեռնարկում* [(Եկեղեցու կրթական համակարգի ձեռնարկ, 2009), 331–36] տալիս է որոշ օգտակար մեկնաբանություն այդ գլուխների վերաբերյալ:)

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի մեծացնեմ կասկածը հաղթահարելու իմ զորությունը:



«Հաղթահարելով կասկածի վտանգը» հոդվածում (*Ensign*, June 2017, 46–49) երեց Հյուգո Մոնթոյան Յոթանասունից խորհուրդ է տվել, թե ինչպես կանխել կասկածը, որը թուլացնում է մեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ:

Մենք կարող ենք մեծացնել կասկածը հաղթահարելու մեր զորությունը՝ հավատով սպասելով Նրա Երկրորդ Գալուստին: Լսեք Տաճարային Հրապարակում Թաբերնակլի երգչախմբի կողմից «Երբ Նա նորից գա» (4.12) հիմնի կատարումը 2013 թ. գերագույն համաժողովում և պատկերացրեք, թե ինչպիսին կլինի աշխարհի Փրկիչի գալուստը:

**Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել,
թե ժամանակակից մարգարեներն
ինչ են ասում Երկրորդ Գալուստին
Նախապատրաստվելու մասին:**



Երեց Զրիստոֆերսոնը տեղին ու ճիշտ
խորհուրդ է տվել, որպեսզի օգնի մեզ
պատրաստվել Երկրորդ Գալուստին՝

«Պատրաստվել Տիրոջ վերադարձին» իր
ելույթում, (*Լիափոնա*, մայիս 2019, 81–84):



«Նախապատրաստվել Երկրորդ Գալուս-
տին» (*Լիափոնա*, մայիս, 2004, 7–10) իր
ելույթում Առաջին Նախագահությունից
Նախագահ Դավիթ Ն. Օռքսը խոսել է ժամա-
նակների նշանների մասին, և ինչպես կարող ենք
պատրաստվել Տիրոջ Գալուստին:

ԴԱՍ 15. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին

Այս բաժնում ուսանողները կուսումնասիրեն Նեփիացիների և Լամանացիների շրջանում Հիսուս Քրիստոսի ծառայության հետ կապված կարևոր իրադարձություններ և ուսմունքներ: Մինչ նախապատրաստվում եք քննարկել այս բաժնի նյութը, փնտրեք ուղիներ՝ օգնելու ուսանողներին խորացնել իրենց վկայությունը Նրա աստվածային առաքելության վերաբերյալ:

Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան ուսումնասիրել, թե Մորմոնի Գիրքը ինչպես է օրինակ տրամադրում Փրկիչի Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու համար: Նրանք կքննարկեն, թե իրենք ինչ կարող են անել՝ հաղթահարելու վախի զգացումը և հետ մղելու ուղերձները, որոնք կարող են կասկած առաջացնել, որպեսզի նրանք ավելի լավ պատրաստված զգան Նրա վերադարձի համար:

Ուսուցման առաջարկներ

Սամուել Լամանացին մարգարեացավ նշանների մասին, որոնք կնախորդեն Հիսուս Քրիստոսի ծնունդին



Ցուցադրեք Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստի կից պատկերը և հարցրեք.

- Վերջին օրերին և Երկրորդ Գալուստին առնչվող ո՞ր մարգարեացած նշաններն ու պայմանները կարող են մարդկանց մեջ անհանգստության զգացում առաջացնել: (Եթե ուսանողները դժվարանում են որոշել ժամանակի նշանները, կարող եք հրավիրել նրանց համառոտակի վերանայել «Ժամանակի

նշանները» վերնագիրը Մուրֆ գրքերի ուղեցույցում [տես scriptures.ChurchofJesusChrist.org]:)

- Ի՞նչ կարող ենք սովորել այն փաստից, որ Տերը նշաններ է բացահայտում՝ նախքան Իր ժողովրդի մոտ գալը:
- Մորմոնի Գիրքն ինչպե՞ս կարող է օգնել մեզ ավելի քիչ անհանգստանալ, ավելի լավ պատրաստվել և ավելի ուրախ զգալ դեպի Երկիր Տիրոջ վերադարձի առթիվ: (Գուցե կամենաք վերանայել նախագահ Բենսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի ներածության մեջ:)

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Երիտասարդներին հնարավորություն տվեք զորացնել միմյանց:

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք հանդիպում ենք ոչ միայն սովորելու ինքներս մեզ համար, այլև օգնելու և զորացնելու միմյանց (տես Մորոնի 6.4–5): Դասի ժամանակ փնտրեք ուղիներ, որպեսզի ուսանողներին հնարավորություններ տաք զրույցներ վարել համադասարանցիների հետ: Այդ զրույցների համար հիանալի պահեր կարող

են ծառայել, երբ ուսանողները հրավիրվում են խոսելու որևէ ընկերակցի հետ կամ կազմում են փոքրիկ քննարկման խումբ: Դասարանական քննարկումների ընթացքում խուսափեք գերիշխող դիրքից: Օրինակ՝ նախքան որևէ ուսանողի հարցին կամ մտահոգությանը արձագանքելը, խնդրեք նրա հասակակիցներին առաջինը պատասխանել: Ձեր սիրելի անձնական փորձառություններով կիսվելու փոխարեն քաջալերեք ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով: Մի փնտրեք միայն ձեր վկայությունը բերելու հնարավորություններ, այլ ուսանողներին ևս հնարավորություններ ընձեռեք՝ բերելու իրենց վկայությունը:

Ցուցադրեք հետևյալ հարցը. Համաձայն Հելաման 14.9–13-ի, Մամուլը ինչո՞ւ եկավ քարոզելու և մարգարեանալու Նեփիացիներին:

Ուսանողներին հրավիրեք աշխատել զույգերով, որպեսզի ուսումնասիրեն հանձնարարված հատվածը և քննարկեն, թե ինչպես կպատասխանեին այդ հարցին: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց սովորածով: Հիմնվելով ուսանողների մեկնաբանությունների վրա՝ մտածեք, թե հետևյալ հարցերից որոնք կուղղեիք՝ օգնելու ուսանողներին պատրաստվել կիրառել իրենց սովորածը:

- Իմանալով և հավատալով Քրիստոսի Գալուստի նշաններին ու հրաշքներին, ինչպե՞ս կարող ենք փոխել մեր կյանքը: (Ուսանողներին ժամանակ տվեք քննարկել այս հարցը միմյանց հետ, իսկ հետո հրավիրեք նրանց կիսվել իրենց գաղափարներով դասարանի մնացած մասի հետ: Օգնեք ուսանողներին գտնել նմանատիպ մի սկզբունք. **Քրիստոսի Գալուստի նշանները իմանալը և ճանաչելը կարող է օգնել մեզ հավատալ Նրան և ապաշխարել մեր մեղքերի համար:**)
- Տիրոջ Երկրորդ Գալուստի հետ կապված նշաններն ու հրաշքները ինչո՞ւ պետք մեծացնեն մեր հույսը և չավելացնեն մեր վախերը: Երկրորդ Գալուստի հետ կապված նշաններն ու հրաշքներն ինչպե՞ս են ցույց տալիս Իր գավալների հանդեպ Աստծո սերն ու մտահոգությունը:

- Երկրորդ Գալուստի ո՞ր մարգարեական ուսմունքը կամ նշանն է ոգեշնչել ձեզ ավելի լավ պատրաստվել Տիրոջ վերադարձի համար: (Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել, թե ինչպես է Աստծո սերը արտահայտվում մեր օրերում, կարող եք հրավիրել նրանց կիսվել կամ փնտրել, թե ապրող մարգարեներն ու առաքյալները վերջերս ինչ են ուսուցանել Տիրոջ վերադարձին նախապատրաստվելու մասին:)

Ցուցադրեք Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ հայտարարությունը.



Առաջինը՝ Տիրոջ վերադարձի համար այս երկրի վրա անհրաժեշտ է այն մարդկանց ներկայությունը, ովքեր պատրաստ են ընդունել Նրան Նրա գալուստի ժամանակ: («Պատրաստվել Տիրոջ վերադարձին», *Liahona*, մայիս 2019, 82)

Ուսանողներին հատկացրեք մի քանի րոպե՝ խորհելու և գրի առնելու իրենց մտքերը հետևյալ հարցի վերաբերյալ.

- Ի՞նչ պետք է սկսեք անել կամ դադարեք անել, որպեսզի կարողանաք ավելի լավ նախապատրաստվել՝ ընդունելու Հիսուս Քրիստոսին Իր գալուստի ժամանակ:

Հավատացյալների հավատքը ստուգվում է, երբ նրանք անսասան սպասում են մարգարեացած նշանների իրականացմանը

Դասարանը բաժանեք քննարկման փոքր խմբերի: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի միասին վերանայել Հելաման 16.13–22 և 3 Նեփի 1.4–15, 22 հատվածները, փնտրելով, թե ինչպես էր սատանան կասկած հարուցում Փրկիչի ծնունդի հանդեպ, և ինչպես էին հավատարիմները պատասխանում: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո յուրաքանչյուր խմբից մեկական ուսանողի հրավիրեք կիսվել իր գտածով: Մինչ ուսանողները կիսվում են իրենց գաղափարներով, հետևյալ հարցերը ուղղեք մի քանիսին կամ բոլորին՝ օգնելով խորացնել քննարկումը:

- Ինչպե՞ս է կասկածներ տարածելու այս նույն գործելակերպն օգտագործվում մեր օրերում:
- Ի՞նչ արեցին մի քանի Նեփիացիներ և Լամանացիներ, որպեսզի հավատարիմ մնային, երբ նրանք հանդիպեցին կասկածի և ընդդիմության անհավատների կողմից: (Դուք կարող եք ցուցադրել նմանատիպ մի սկզբունք: **Ապավինելով Տիրոջը և անսասան հետևելով Նրա գալուստին՝ կարող ենք օգնել մեզ հավատքով պատասխանել հոռետեսությանը և կասկածին:**)
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ամուր և անսասան մնանք, երբ անհամբեր սպասում ենք Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին: (Վերանայեք նախագահ Բոննի Լ. Օսկարսոնի և Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի ելույթները նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
- Տիրոջն ապավինելը ինչպե՞ս է օգնել ձեզ, երբ հանդիպել եք թերահավատների և ուղերձների, որոնք կարող էին կասկած հարուցել: Ինչպե՞ս

կարող ենք օգնել միմյանց անսասան մնալ, մինչ պատրաստվում ենք Տիրոջ վերադարձին:

Հրավիրեք ուսանողներին լուռ խորհրդածել այն ամենի շուրջ, ինչ իրենք սովորել և զգացել են Հիսուս Քրիստոսի և Երկրորդ Գալուստի վերաբերյալ, երբ պատրաստվում և մասնակցում էին այս դասին: Ապա ուսանողներին ժամանակ տվեք կիսվելու Տիրոջ մասին իրենց վկայություններով և հույսով, գիտենալով, որ Նա վերադառնալու է:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ հաջորդ դասին ուսանողները հնարավորություն կունենան մտածել, թե ինչ կզգան՝ լինելով Փրկիչի ներկայությամբ և հաղորդակցվելով Նրա հետ: Մինչ ուսանողներն ուսումնասիրում են դասի նախապատրաստական նյութը, նրանց հրավիրեք փնտրել, թե ինչ կարող են սովորել Հիսուս Քրիստոսի էության և բնավորության մասին՝ Ամերիկայի ժողովրդի մեջ Նրա ծառայությունից ելնելով:



ԴԱՍ 16. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսը սպասավորում է մեկ առ մեկ

Լիառատ երկրում հարություն առած Քրիստոսի սպասավորումը մեզ հզոր ապացույց է տալիս Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին և մի խորիմաստ օրինակ, թե ինչպես սպասավորել մյուսներին: Երբ ուսումնասիրեք այս նյութը, խորհեք թե ինչ կարող եք անել՝ ամրապնդելու ձեր վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը ձեր Փրկիչն է: Երբ խորհրդածեք այն մասին, թե Նա ինչպես սպասավորեց, աղոթքով պարզեք, թե ով կարիք ունի զգալու Փրկիչի սերը ձեր միջոցով:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ ամրապնդել իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը իմ Փրկիչն է

Երեք օրվա խավարից և մեծ կործանումից հետո, որն ազդանշան եղավ այդ ժողովրդին, որ Փրկիչը մահացել էր, մոտ 2500 տղամարդիկ, կանայք ու երեխաներ հավաքվեցին Լիառատ երկրի

տաճարի շուրջը: Նրանք մի ձայն լսեցին, որը սկզբում չհասկացան: Երբ նրանք շարունակեցին ականջ դնել, հասկացան, որ դա Երկնային Հոր ձայնն էր, որը ներկայացնում էր Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: (Տես 3 Նեփի 11.1-10) Ապա Փրկիչը իջավ երկնքից և հայտարարեց. «Մհա, ես եմ Հիսուս Քրիստոսը, ում մասին մարգարեները վկայել էին, որ պիտի գա աշխարհ» (3 Նեփի 11.10):



Այս պահի մասին Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ասել է.



«Այդ հայտնությունը և այդ հայտարարությունը Մորմոնի Գրքի ամբողջ պատմության ամենակարևոր և բարձրագույն կետն է: Դա ապացույցն էր և որոշումը, որը հայտնվել և ոգեշնչել էր յուրաքանչյուր Նեփիացի մարգարեի նախորդ վեց հարյուր տարիների ընթացքում: . . .

Բոլորը նրա մասին էին խոսում, երգում ու երազում էին նրա մասին և աղոթում նրա հայտնվելու համար, և ահա նա փաստորեն այստեղ էր: Ամենակարևոր օրը նրանց համար: Աստված, ով դարձնում է ամեն խավար գիշերը առավոտվա լույս, ժամանել էր: «Քրիստոսը և Նոր Ուխտը. Մորմոնի Գրքի Մեսիական ուղերձը [1997], 250-51)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ընթերցեք 3 Նեփի 11.13–17-ը, և փնտրեք, թե ինչ արեցին մարդիկ՝ ամրապնդելու իրենց վկայությունները, որ Հիսուսը հարություն առած Քրիստոսն էր:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Հիսուս Քրիստոսի բնավորության մասին Նեփիացիների և Լամանացիների հետ ունեցած Նրա հաղորդակցություններից:

Երեց Վուլթեր Ֆ. Գոնզալեսը Յոթանասուներեք ուսուցանել է հետևյալը այն մարդկանց փորձառության մասին, ովքեր տեսել էին հարություն առած Քրիստոսին.



«Եկեք ինձ մոտ, որպեսզի կարողանաք շոշափել և տեսնել» [3 Նեփի 18.25]: Սա պատվիրան էր, որ Փրկիչը տվեց հնագույն Ամերիկայի բնակիչներին: Նրանք իրենց

ձեռքերով շոշափեցին և իրենց աչքերով տեսան, որ Հիսուսը Քրիստոսն էր: Այս պատվիրանը նույնքան կարևոր է մեզ համար այսօր, որքան նրանց համար իրենց օրերում: Գալով դեպի Քրիստոսը՝ մենք կարող ենք զգալ և «իմանալ անկասկած» [3 Նեփի 11.15], ոչ թե մեր ձեռքերով և աչքերով, այլ ողջ սրտով ու մտքով, որ Հիսուսը Քրիստոսն է:

Քրիստոսի մոտ գալու մի միջոց է՝ ձգտել սրտով սովորել հիմնական ճշմարտությունները: Այդ ժամանակ Աստծո կողմից եկող տալանտությունները մեզ գիտելիք կպարգևեն, որը մենք չենք ստանա այլ միջոցներով: («Սովորել մեր սրտով», *Liahona*, նոյեմբեր 2012, 81)



Գրի առեք ձեր մտքերը

Երբ խորհրդածեք Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայության շուրջ, ձեր անձնական օրագրում գրի առեք մի փորձառություն, որն ամրապնդել է ձեր վկայությունը Նրա մասին: Կամ, փոխարենը, դուք կարող եք գտնել մի օրհներգ, որն արտացոլում է, թե ինչ եք զգում Փրկիչի հանդեպ, ապա գրի առեք զգացումները, որ ունենում եք այդ օրհներգը լսելիս կամ երգելիս:

եմ, որ . . . դուք չեք կարող հասկանալ իմ բոլոր խոսքերը», և Նա կոչ արեց ժողովրդին վերադառնալ իրենց տները, խորհել այն ամենի շուրջ, ինչ Ինքն ուսուցանել էր, և պատրաստվել Իր վերադարձին հաջորդ օրը (3 Նեփի 17.1-3):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ընթերցեք 3 Նեփի 17.5-10-ը և փնտրեք, թե Տերն ինչպես բարության և կարեկցանքի օրինակ հանդիսացավ, երբ սպասավորում էր ժողովրդի մեջ:

Հետո, երբ Փրկիչը բազմությանը բժշկեց, Նա պատվիրեց, որ բոլոր «նրանց փոքր երեխաները բերվեին» (3 Նեփի 17.11) Իր մոտ, իսկ մյուսները ծնկի իջնեին: Մալա Նա աղոթեց նրանց համար, որն այնքան «մեծ և սքանչելի» էր (հատվածներ 16-17), որ բազմությունը տոգորվեց ուրախությամբ: (Տես 3 Նեփի 17.10-19)



ԲԱԺԻՆ 2

Փրկիչի օրինակից ի՞նչ կարող եմ սովորել սպասավորման մասին

Հետո, երբ Փրկիչը յուրաքանչյուր անձի թույլ տվեց շոշափել վերքերը Իր ձեռքերի և ոտքերի վրա, Նա կանչեց տասներկու աշակերտների և բազմությանն ուսուցանեց բազմաթիվ կարևոր ճշմարտություններ (տես 3 Նեփի 11-16): Երբ Հիսուսը պատրաստվում էր հեռանալ, Նա ասաց. «Ես զգում



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ընթերցեք 3 Նեփի 17.19-24-ը կամ դիտեք տեսաֆիլմը՝ «Իմ ցնծությունը լիակատար է» (4:04), և խորհեք, թե սպասավորումը ինչու ցնծություն բերեց Փրկիչին:

Նախագահ Զին Բ. Բինգհեմը՝ Սփոփող միության գերագույն նախագահը, ուսուցանել է Փրկիչի օրինակին հետևելու կարևորության մասին, երբ մենք սպասավորում ենք.



Ամենից կարևորն այն է, որ իսկական ծառայությունն իրականացվում է մեկ առ մեկ, և դրա շարժառիթը սերն է: Անկեղծ ծառայության արժեքն ու հրաշքը կայանում են նրանում, որ այն իսկապես կյանքեր է փոխում: Երբ մեր սրտերը բաց են և կամենում ենք սիրել ու ընդունել, քաջալերել ու մխիթարել, մեր ծառայության զորությունը անդիմադրելի կլինի: Սերն ունենալով որպես շարժառիթ, հրաշքներ կգործենք: . . .

Փրկիչը մեր օրինակն է ամեն ինչում. ոչ միայն նրանում, թե ինչ պետք է անենք, այլև նրանում, թե ինչո՞ւ պետք է անենք դա [տես Եփեսացի 5.2]: («Սպասավորել՝ ինչպես Փրկիչն է անում», *Liahona*, մայիս 2018, 106)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք մեկի մասին, ով գուցե ձեր օգնության կարիքն ունի: Ինչպե՞ս կարող եք հետևել Փրկիչի օրինակին և ցույց տալ բարություն ու կարեկցանք այդ անձնավորության հանդեպ:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ի՞նչ կարող եմ անել՝ խորացնելու իմ երախտագիտությունը Փրկիչի մեկ առ մեկ Իր մոտ գալու հրավերի համար:

Տասներկու Առաքյալների Զվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարը գրել է երգի խոսքերը, որը կոչվում է «Մեկ առ մեկ» (տես music.ChurchofJesusChrist.org): Այդ երգում նա կիսվում է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Փրկիչի սիրո մասին ուղերձով: Դուք կարող եք ունկնդրել Nathan Pacheco and the Lyceum Philharmonic-ի (6:44) կողմից կատարվող երգը.

Ի՞նչ կարող եմ անել՝ ավելի լավ տեղյակ լինելու ուրիշների կարիքների մասին:

«Նախ նկատեք, ապա ծառայեք» ելույթում (*Liahona*, նոյեմբեր 2012, 78–80), Նախագահ Լինդա Բ. Բըրթընը՝ Սփոփող միության Նախկին գերագույն նախագահը, բացատրել է, թե ինչ կարող ենք անել՝ ավելի տեղյակ լինելու ուրիշների կարիքներից:

Տիրոջ ձևով սպասավորելու ի՞նչ օրինակներ կան:

Որպեսզի իմանաք, թե Տերն ինչպես մեկ առ մեկ սպասավորեց Իր տասներկու առաքյալներին Նեփիացիների և Լամանցիների մեջ, կարդացեք 3 Նեփի 18.36–39, 28.1–12-ը:

«Կենտրոնացեք մեկի վրա» տեսաֆիլմում (2:32) Նախագահ Բինգհեմը խոսում է այն մասին, թե ինչպես է մեր կյանքը հարստանում, երբ մենք մի կողմ ենք դնում մեր կանխակալ կարծիքները և ընկերասիրության ձեռք մեկնում նրանց, ովքեր տարբերվում են մեզանից:

«Սպասավորել՝ ինչպես Փրկիչն է անում» տեսաֆիլմում (6:08), Եկեղեցու կանայք օրինակ են ծառայում, թե մենք ինչպես կարող ենք սպասավորել մյուսներին՝ փոքր և հասարակ ուղիներով:

ԴԱՍ 16. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսը սպասավորում է մեկ առ մեկ

Հիսուս Քրիստոսի հայտնվելը Նեփիացիներին և Լամանացիներին հզոր վկայություն է տալիս Նրա աստվածայնության մասին: Երբ Հիսուսը սպասավորում էր մեկ առ մեկ, Նա բարության և կարեկցանքի օրինակ էր տալիս: Այս դասին ուսանողներին կհանձնարարվի գտնել տարբեր ուղիներ, որոնցով նրանք կարող են գալ դեպի Քրիստոսը, և ձեռք բերել ավելի խորը անձնական վկայություն, որ Նա է իրենց Փրկիչը: Ուսանողները նաև կմտածեն, թե ինչ կարող են անել, որպեսզի ընդօրինակեն Փրկիչի սպասավորման ձևը:

Ուսուցման առաջարկներ

Հարություն առած Քրիստոսը հայտնվում է Նեփիացիներին ու Լամանացիներին և հրավիրում է նրանց շոշափել Իր ձեռքերի և ոտքերի վերքերը

Կարող եք սկսել դասը՝ ցուցադրելով կից պատկերը և խնդրելով որևէ ուսանողի պատմել այն իրադարձությունները, որոնք հանգեցրին Նեփիացիների և Լամանացիների մեջ Հիսուս Քրիստոսի հայտնվելուն:



Հրավիրեք ուսանողներին վերանայել երեց Ջեֆրի Ա. Հոլլանդի մեջբերումը նախապատրաստական նյութի բաժին 1-ում և հարցրեք նրանց, թե ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի հայտնվելը ժողովրդի մեջ ամենակարևոր իրադարձությունը Մորմոնի գրքում:

Խնդրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 11.13–17-ը, փնտրելով դասեր, որոնք մենք կարող ենք քաղել Իր ժողովրդի հետ Քրիստոսի համագործակցության այս պատմությունից: Մտածեք,

թե հետևյալ հարցերից որը կկամենայիք տալ՝ օգնելով ձեր ուսանողներին հասկանալ և կիրառել իրենց սովորածը:

- Այս հատվածներից ի՞նչ ենք սովորում Հիսուս Քրիստոսի բնավորության մասին:
- Ի՞նչ կզգայիք, եթե ձեզ հրավիրեին շոշափել Փրկիչի ձեռքերի և ոտքերի վերքերը:
- Ի՞նչ կարող ենք սովորել Փրկիչի մասին մարդկանց ուղղված Նրա հրավերից՝ մեկ առ մեկ գալ և շոշափել Իր ձեռքերի ու ոտքերի վերքերը: (Եթե անհրաժեշտ է, հիշեցրեք ուսանողներին, որ 2500 մարդ էր ներկա:)
- Ինչպե՞ս կարող է այս փորձառությունը ներկայացնել այն, ինչ Հիսուս Քրիստոսն է հրավիրում մեզանից յուրաքանչյուրին անել: (Օգտագործելով ուսանողների պատասխանները՝ գտեք մի ճշմարտություն, որը նման է հետևյալին. **Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ գալ դեպի Իրեն և ստանալ անձնական վկայություն, որ Նա մեր Փրկիչն է:**)
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի գանք դեպի Քրիստոսը և ստանանք մեր սեփական վկայությունը, որ Նա մեր Փրկիչն է: (Լրացուցիչ գաղափարների համար օգտակար կլինի վերանայել երեց Վոլթեր Ֆ. Գոնզալեսի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Հրավիրեք ուսանողներին վերանայել կամ լրացնել նախապատրաստական նյութի բաժին 1-ում գտնվող «Գրի առեք ձեր մտքերը» վարժությունը: Ուսանողներին տրամադրեք մի քանի րոպե՝

վերանայելու այն, ինչ իրենք պատրաստել են, իսկ հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով: Եթե ժամանակ ունենաք, հրավիրեք մեկ կամ երկու ուսանողի գտնել մի հատված իրենց ընտրած օրիներգից և կիսվել, թե ինչու է այն իմաստավոր իրենց համար: Կարող եք նաև միասին երգել հիմներ:

Ցուցադրեք հետևյալ հարցը և խրախուսեք ուսանողներին խորհել և գրի առնել իրենց մտքերն ու զգացումները:

- Ի՞նչ կարող եմ անել, որ ամրացնեմ իմ վկայությունն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը իմ Փրկիչն է:

Հիսուս Քրիստոսը սպասավորում է մեկ առ մեկ

Հիշեցրեք ուսանողներին, որ ժողովրդի մեջ Իր առաջին օրվա ավարտին Փրկիչը հրավիրեց բազմությանը վերադառնալ իրենց տները և պատրաստվել հաջորդ օրվա Իր վերադարձին (տես 3 Նեփի 17.1–3):

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Խրախուսեք ուսանողներին ուսումնասիրել և ընդօրինակել Փրկիչի օրինակը: Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսթորֆը՝ այն ժամանակ Առաջին Նախագահությունից, ասել է սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչներին. «Ձեր երիտասարդները ցանկանում են հավատալ, նրանք տենչում են ավելին իմանալ Փրկիչի մասին» (“A Teacher of God’s Children,” *Religious Educator*, vol. 12, no. 3 [2011], 7): Ուսանողները կարող են ավելի շատ բան իմանալ Փրկիչի մասին՝ կենտրոնանալով Նրա կատարյալ օրինակի վրա: Երբ ուսանողները ուսումնասիրում են Հիսուս Քրիստոսի օրինակը, հրավիրեք նրանց մտածել, թե ինչպես ընդօրինակեն Նրան: Տասներկու Առաքյալների Զվորումից երեք Նիլ Ա. Մաքսվելը դիտարկել է. «Այդ ընդօրինակումն ուղղակիորեն ուժեղացնում է Հիսուսի հանդեպ

մեր պաշտամունքը» («Դառնալ աշակերտ», *Ensign*, June 1996, 12):

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի: Հրավիրեք նրանց վերանայել 3 Նեփի 17.5–9, 20–24-ը և քննարկեք, թե ինչպես է Փրկիչը սպասավորում ժողովրդին: Իրենց քննարկման ընթացքում խրախուսեք ուսանողներին մտածել տարբեր ուղիներ՝ հետևյալ միտքն ավարտելու համար. «Մենք սպասավորում ենք Փրկիչի նման, երբ . . .»

Երբ ուսանողները շատ ժամանակ կունենան միմյանցից սովորելու, խնդրեք նրանց կիսվել նախորդ ոչ լրիվ նախադասությունն ավարտելու մի քանի եղանակներով: Մինչ ուսանողները կիսվում են իրենց գաղափարներով, մի քանիսին կամ բոլորին ուղղեք հետևյալ հարցերը՝ օգնելով խորացնել նրանց քննարկումը.

- Ի՞նչ դեր է խաղում սերը սպասավորման մեջ: (Գուցե կամենաք վերանայել Նախագահ Ջին Բ. Բինգհեմի մեջբերումը Նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
- Ինչո՞ւ եք կարծում, որ սպասավորելը Փրկիչին ուրախություն էր բերում: Ե՞րբ եք ուրախություն զգացել, երբ ծառայել եք կարիքի մեջ գտնվող որևէ մարդու:
- Ինչո՞ւ է կարեկցանք զգալը սպասավորման կարևոր մաս հանդիսանում: Ե՞րբ եք զգացել Փրկիչի կարեկցանքը՝ մեկ այլ անձի սպասավորման ջանքերի միջոցով: Ինչպե՞ս եք կարողացել փոխանցել Քրիստոսի կարեկցանքը ուրիշների հանդեպ՝ ձեր սեփական սպասավորման ջանքերի միջոցով:
- Ինչպե՞ս կարող եք օգնել ինչ-որ մեկին զգալ Տիրոջ բժշկող զորությունը, երբ մենք սպասավորում ենք:

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել սպասավորման մասին իրենց սովորածը, կիսվեք հետևյալ սցենարով.

Ալեխանդրոն երիտասարդ ամուրի է: Նա հրավեր է ստացել՝ սպասավորելու Պաբլոյին ու Խոսեին:

Նա խոսել է Պաբլոյի հետ մի քանի անգամ եկեղեցում, բայց երբեք չի հանդիպել Խոսեին: Երեցների քվորումի նախագահի հետ խոսելուց հետո Ալեխանդրոն իմանում է, որ Պաբլոն պայքարում է առողջական խնդրի հետ, և որ Խոսեն եպիսկոպոսին ասել է, որ ինքը հետաքրքրված չէ եկեղեցի հաճախել հենց հիմա: Ալեխանդրոն ցանկանում է կատարել իր կոչման պարտականությունները, բայց համոզված չէ, թե որտեղից սկսել:

Հրավիրեք ուսանողներին նայել Փրկիչի օրինակին և կիսվել, թե ինչ խորհուրդ կտային Ալեխանդրոյին: Խրախուսեք ուսանողներին ևս կիսվել սպասավորման իրենց սեփական փորձառություններով:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստվելով այս դասին, նրանք հրավիրվել էին մտածել մեկի մասին, ում կարող էին սպասավորել (տես նախապատրաստական նյութի 2-րդ բաժինը): Հրավիրեք ուսանողներին մտածել այդ մարդու

իրավիճակի մասին: Ապա ուսանողներին հատկացրեք մի քանի բուպե՝ խորհելու և գրի առնելու իրենց տպավորությունները հետևյալ հարցի վերաբերյալ.

- Ի՞նչ կանեք դուք, որպեսզի հետևեք Փրկիչի օրինակին և սպասավորեք այդ մարդուն բարությամբ ու կարեկցանքով:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել այն մարտահրավերների մասին, որոնց բախվում են Եկեղեցու անդամները կամ լսողները, երբ ընդունված չեն զգում Եկեղեցու մյուս անդամների կողմից: Խրախուսեք ձեր ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը, փնտրելով, թե մենք ինչպես կարող ենք օգնել ուրիշներին զգալ, որ մեզ բոլորիս համար տեղ կա Հիսուս Քրիստոսի Եկեղեցում:



ԴԱՍ 17. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Պատկանել Տիրոջ Եկեղեցուն

Հիսուս Քրիստոսի ծառայության հիմնական մասը Նեփիացիների և Լամանացիների մեջ Իր Եկեղեցու կազմավորումն էր: Փրկիչն ասաց, որ Եկեղեցին պետք է կոչվի Իր անունով և կառուցվի Իր ավետարանի վրա (3 Նեփի 27.7–9): Երբ նախապատրաստվում եք դասին, խորհեք այն օրհնությունների մասին, որոնք տրվում են նրանց, ովքեր միանում են Նրա Եկեղեցուն: Երբ մտածեք այդ օրհնությունների մասին, հաշվի առեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի օգնեք, որ Եկեղեցին Աստծո բոլոր զավակների համար հյուրընկալ վայր դառնա:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ օրհնություններ կարող եմ ստանալ միայն Տիրոջ Եկեղեցու միջոցով

Լիառատի տաճարի մոտ Նեփիացիներին Իր այցելության ընթացքում Փրկիչը քահանայության իշխանություն տվեց Իր տասներկու աշակերտներին և լիազորեց նրանց մկրտել, տալ Սուրբ Հոգու

պարգևը և ղեկավարել Իր Եկեղեցին (տես 3 Նեփի 11.18–22, 12.1, 18.5, 37): Փրկիչը նաև ուսուցանեց Նեփիացիներին, որ Աստծո արքայությունը մտնելու համար մենք պետք է ապաշխարենք, հավատանք Նրան և ստանանք փրկության և վեհացման արարողություններ, որոնք մատուցվում են միայն Իր Եկեղեցում, ինչպես օրինակ՝ մկրտությունը և հաստատումը (տես 3 Նեփի 11.32–41):



Քննարկելով Հիսուս Քրիստոսի եկեղեցու նպատակը ինչպես հին, այնպես էլ նոր ժամանակներում՝ Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանել է.



Հնագույն նպատակը մնում է Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրի քարոզումը և փրկության արարողությունների սպասավորումը, այլ կերպ ասած, մարդկանց դեպի Քրիստոսը բերելը: («Ինչո՞ւ եկեղեցին», *Լիահոնա*, նոյեմբեր 2015, 108)



Խորհե՛ք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս է եկեղեցուն միանալը օգնել ձեզ գալ դեպի Քրիստոս:

ԲԱԺԻՆ 2

ճաշակելով հաղորդությունը, ինչպե՞ս կարող եմ օգնել ինձ Հիսուս Քրիստոսին ավելի շատ նմանվելու իմ ջանքերում

Երբ Փրկիչը եզրափակեց առաջին օրվա Իր ծառայությունը Լիառատ երկրում, Նա սպասավորեց

հաղորդությունը Իր տասներկու աշակերտներին և ժողովրդին: Նա կրկնեց այդ արարողությունը հաջորդ օրը՝ հրաշագործ ձևով ապահովելով հաց և գինի: (Տես 3 Նեփի 18.1-9, Եթեր 20.3-8)



Ուսումնասիրե՛ք դասին Նախապատրաստվելիս

Ուսումնասիրե՛ք 3 Նեփի 18.3–12-ը և 3 Նեփի 20.8–9-ը և մտածե՛ք, թե Հիսուսը ինչ ուսուցանեց հաղորդության սրբազան նպատակների մասին:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է, թե ինչպես է այս արարողությունը մեզ թույլ տալիս Սուրբ Հոգին ունենալ որպես մշտական ուղեկից.



Հաղորդության արարողությունը սուրբ և կրկնվող հրավեր է՝ անկեղծորեն ապաշխարելու և հոգեպես նորոգված լինելու համար: Բայց, երբ մենք պատրաստվում ենք բարեխղճորեն և մասնակցում ենք այս սուրբ արարողությանը կոտրված սրտով և փշրված հոգով, ապա խոստացվում է, որ մենք *միշտ* կարող ենք Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալ: Եվ Սուրբ Հոգու՝ որպես մեր մշտական ուղեկցի սրբագործող զորության միջոցով մենք *միշտ* կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը: («Միշտ պահե՛ք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա*, մայիս 2016, 61–62)



Երեց Քրիստոֆերսոնն ուսուցանել է, որ հաղորդությունից ճաշակելը կարող է նաև օգնել մեզ կենտրոնանալ Փրկիչին ավելի շատ նմանվելու վրա:



Հացը և ջուրը ներկայացնում են Նրա միսն ու արյունը, ով Կյանքի հացն է և Կենդանի ջուրը [տես Հովհաննես 4.10], նրբանկատորեն հիշեցնելով մեզ այն գինը, որը Նա վճարեց մեզ փրկագնելու համար: . . .

. . . Փոխաբերականորեն՝ Նրա մարմինն ուտելը և Նրա արյունը խմելը ունի լրացուցիչ իմաստ, այն է՝ անձնավորել Քրիստոսի հատկանիշներն ու բնավորությունը, հանելով բնական մարդուն և դառնալով Սուրբ՝ «Տեր Քրիստոսի քավության միջոցով» [Մոսիա 3.19]: Երբ մենք ամեն շաբաթ ճաշակում ենք հաղորդության ջուրն ու հացը, լավ կլինի ուշադրություն դարձնենք, թե ինչպիսի լիարժեքությամբ և ամբողջությամբ ենք միավորում Նրա բնավորությունը և Նրա անմեղ կյանքի օրինակը մեր կյանքի ու մեր գոյության հետ: . . .

ճաշակել Փրկիչի միսը և խմել Նրա արյունը նշանակում է՝ մեր կյանքից վանել ամեն բան, ինչն անհամապատասխան է Քրիստոսանման հատկանիշներին, և Նրա հատկանիշները դարձնել մեր սեփականը: («Կենդանի հացը, որն իջնում է երկնքից», *Լիափոխա*, նոյեմբեր 2017, 37, 39)



Գրի առեք ձեր մտքերը

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսը բացատրել է, որ «հաղորդության արարողությունը հաղորդության ժողովը դարձնում է Եկեղեցու ամենասուրբ և կարևոր ժողովը» («Հաղորդության ժողովը և հաղորդությունը», *Լիափոխա*, նոյեմբեր 2008, 17): Գրի առեք մի քանի գործողություններ, որոնք կարող եք կատարել՝ դարձնելով հաղորդությունը և հաղորդության ժողովը կիրակնօրյա երկրպագության ամենասրբազան մասը:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի օգնեմ բոլորին զգալ, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցում նրանց համար տեղ կա

Նեփիացիների և Լամանացիների մեջ հաղորդությունը հաստատելուց հետո Հիսուսն ուսուցանեց Եկեղեցու ժողովները հյուրընկալ և ներգրավող դարձնելու կարևորությունը:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Ընթերցեք 3 Նեփի 18.22–25-ը և նշեք բառեր կամ արտահայտություններ, որոնք արտահայտում են Տիրոջ ուսմունքներն այն մասին, թե մենք ում պետք է ընդգրկենք Նրա Եկեղեցում:



Դիտեք «Lifting Others» տեսաֆիլմը (2:49) կամ ընթերցեք դրա տեքստը: Տեսաֆիլմում Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահության նախկին խորհրդակցանը, կիսվում է, թե մենք ինչ կարող ենք անել, որպեսզի

համոզված լինենք, որ բոլոր մարդիկ իրենց ընդունված են զգում Տիրոջ Եկեղեցում:

Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահության նախկին խորհրդականը, կիսվել է, թե ինչ կարող ենք անել, որպեսզի համոզվենք, որ բոլոր մարդիկ իրենց ընդունված են զգում Տիրոջ Եկեղեցում:



Ես գիտեմ մարդկանց, ովքեր եկեղեցի են գալիս ամեն կիրակի, որպեսզի կարողանան ոգեշնչվել և վեհանալ, բայց ովքեր ուղղակի հեռանում են՝ պարզապես զգալով դատապարտված, չսիրված ու ոչ պիտանի: . . .

Մենք պետք է խորապես գիտակցենք, թե որն է կիրակի օրը եկեղեցի գալու նպատակը և համոզվենք, որ յուրաքանչյուրը, ով գալիս է, իրեն զգում է սիրված, անհրաժեշտ, ընդունված և ոգեշնչված:

Բոլոր էլ ունեն մաքառումներ, որոնց մասին մենք Նույնիսկ չգիտենք, և այնքան կարևոր է, որ գիտակցենք, որ մեր շրջապատում բոլորը սիրված են Աստծո կողմից, և մենք պետք է տեսնենք Նրանց Քրիստոսանման աչքերով: Եվ մենք չենք կարող թույլ տալ, որ դատողությունը թելադրի մարդկանց հետ փոխգործակցության ձևը: . . .

Հիսուս Քրիստոսի ավետարանը չի սահմանազատում մարդկանց: Մարդիկ են սահմանազատում մարդկանց, և մենք պետք է ուղղենք դա: Մենք պետք է նրբանկատ լինենք, սիրենք մարդկանց և թույլ տանք, որ Նրանք աճեն, բարգավաճեն և դառնան իրենց լավագույն շնորհ: Նրանք ունեն տաղանդներ, ունակություններ և անհատականություն, որոնք անհրաժեշտ են Աստծո արքայությունում: Եվ, եթե մենք պատրաստվում ենք կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա, մենք յուրաքանչյուրի գալու կարիքն ունենք: («Բարձրացնել ուրիշներին» [video], ChurchofJesusChrist.org)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի հրավիրող և ներգրավող լինեմ՝ օգնելով Աստծո զավակներին զգալ, որ իրենք տեղ ունեն Տիրոջ Եկեղեցում:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի իմաստալի փորձառություն ունենամ, երբ ընդունում եմ հաղորդությունը:

«Միշտ հիշեք Նրան» (5:27) տեսաֆիլմում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը քննարկել է, թե մենք ինչ կարող ենք անել, որպեսզի հաղորդությունը դարձնենք ավելի սուրբ և անհատական փորձառություն («This Do in Remembrance of Me,» Ելույթից *Ensign*, Nov. 1995, 67–69). Երեց Հոլլանդը իր Ելույթում ուսուցանել է Նաև հաղորդության սրբազան նշանակության մասին՝ «Ահա Աստծո Գառը» (*Liahona*, մայիս 2019, 44–46).

«Նախ նկատեք, ապա ծառայեք» Ելույթում (*Liahona*, նոյեմբեր 2019, 44–46) Նախագահ Լինդա Բ. Բրոքնընը՝ Սփոփող միության նախկին գերագույն նախագահը, բացատրել է, թե մենք ինչ կարող ենք անել, որպեսզի հաղորդությունը դարձնենք մեր ամենաբաթյա երկրպագության կենտրոնը:

Ի՞նչ կարող եմ անել, եթե ես ընդունված չեմ զգում Եկեղեցում կամ, եթե գիտեմ որևէ մեկին, ով իրեն ընդունված չի զգում:

«To Love Them All» (3:22) տեսաֆիլմում, Յոթանասուհի Նախագահությունից Երեց Պատրիկ Կիրոնը խորհուրդ տվեց, թե ինչ կարող ենք անել, երբ մենք մեզ Եկեղեցուց դուրս ենք զգում:

«We Can Do Better: Welcoming Others into the Fold» (*Ensign*, Sept. 2017, 38–43) հոդվածը տալիս է մի քանի գաղափարներ այն ուղիների վերաբերյալ, որոնցով կարող եք օգնել մարդկանց զգալ այնպես, կարծես իրենք պատկանում են Եկեղեցուն:

Ի՞նչ է սովորեցնում Մորմոնի Գիրքը ռասայական և էթնիկ պատկանելության մասին:

Ռասայական և էթնիկ պատկանելության վերաբերյալ Մորմոնի Գրքի միավորող ուղերձի մասին ավելին իմանալու համար կարդացեք՝ 2 Նեփի 26.23–28, 33, Ալմա 5.33–34, Ալմա 19.36 և 4 Նեփի 1.2, 15–17-ը: Դուք կարող եք նաև կարդալ «He Denieth None That Come unto Him» (Oct. 13, 2014,

history.ChurchofJesusChrist.org-ում) հոդվածը, որը գրվել է եղբայր Ահմադ Ս. Քորբիթի՝ Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահության առաջին խորհրդականի կողմից, կամ դիտել “Till We All Come in the Unity of the Faith” տեսաֆիլմը (2:22):

Ինչո՞ւ է կարևոր օգտագործել Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը:

Որպեսզի ավելի շատ բան սովորեք Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը օգտագործելու կարևորության մասին, ուսումնասիրեք 3 Նեփի 27.1–10-ը և ընթերցեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ելույթը «Եկեղեցու ճիշտ անունը» (*Liahona*, նոյեմբեր 2018, 87–90):

ԴԱՍ 17. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Պատկանել Տիրոջ Եկեղեցուն

Ինչպես Իր հետևորդների համար Պաղեստինում, այնպես էլ Նեփիացիների և Լամանացիների մեջ Հիսուս Քրիստոսը կազմավորեց Իր Եկեղեցին: Նա կանչեց տասներկու աշակերտների և նրանց քահանայության իշխանություն տվեց: Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա կենտրոնանալ հաղորդության արարողության վրա և պարզել, թե ինչ կարող են անել՝ այն ավելի իմաստալի և Քրիստոսակենտրոն դարձնելու համար: Ուսանողները նաև կորոշեն, թե ինչ կարող են անել, որ օգնեն մյուսներին իրենց ծխերում կամ ճյուղերում ունենալ պատկանելության և ընկերակցության զգացում:

Ուսուցման առաջարկներ

Հիսուս Քրիստոսը հաստատում է հաղորդությունը և պատվիրում մարդկանց միմյանց հաճախ հանդիպել և ոչ մեկին չարգելել մասնակցել իրենց երկրպագությանը

Ցույց տվեք հետևյալ պատկերը և հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիացիների և Լամանացիների մեջ որպես Իր ծառայության մաս, Հիսուս Քրիստոսը քահանայության իշխանությամբ օժտեց Իր տասներկու աշակերտներին և կազմավորեց Իր Եկեղեցին (տես 3 Նեփի 11.18–22, 12.1, 18.5, 37, 26.17–21):



- Ի՞նչ եք կարծում, ինչու է կարևոր, որ Տերը այդպիսի բարձր առաջնահերթություն է դրել Իր Եկեղեցին հաստատելու վրա՝ ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում: (Հրավիրեք ուսանողներին վերանայել երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Նշեք, որ չնայած Եկեղեցու մասին կան շատ տեսակետներ, որոնց վերաբերյալ մենք կարող ենք ավելին իմանալ, այս դասը կկենտրոնանա միայն երկու տեսակետների վրա: Ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին ընտրել այն հարցը, որն իրենք կկամենան խորապես հետազոտել:

- Ի՞նչ կարող են անել, որպեսզի հաղորդությունը դառնա իմ եկեղեցական փորձառության ավելի իմաստալի մասը:
- Ինչպե՞ս կարող են օգնել Եկեղեցում ստեղծել ավելի հյուրընկալ և ներգրավող փորձառություն բոլոր մարդկանց համար:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Փոքր խմբերով քննարկումներն ու հանձնարարությունները կարող են օգնել ուսանողներին ավելի խորը սովորել: Փոքր խմբեր ձևավորելը կարող է թույլ տալ ավելի մեծ թվով ուսանողների մասնակցել և կարող է ապահովել կայուն մթնոլորտ, որտեղ նրանք կարող

Են միմյանց հետ կիսվել մտքերով, զգացումներով, և փորձառություններով: Փոքր խմբերը կարող են նաև զարգացնել բարեկիրթ շփման և հաղորդակցության հմտություններ: Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի իմաստալի փորձառություն ունենալ փոքր խմբերում, օգտակար կլինի տրամադրել հետևյալը. (1) սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են՝ մեջբերումներ, գերագույն համաժողովի ելույթների պատճեններ կամ այլ օժանդակ նյութեր, (2) հստակ հրահանգներ և մտածելու տեղիք տվող հարցեր և (3) քննարկման համար շատ ժամանակ:

Հրավիրեք ուսանողներին փոքրիկ խմբեր կազմել (երեք-չորս մարդ ամեն խմբում) նրանց հետ, ովքեր ընտրել են նույն հարցը: Յուրաքանչյուր խմբին տվեք օժանդակ նյութը, որը համապատասխանում է իրենց հարցին: (Երկու օժանդակ նյութերն էլ գտնվում են այս դասի վերջում:) Հրավիրեք ուսանողներին օգտագործել օժանդակ նյութին վերաբերող հարցերը և սկզբնաղբյուրները՝ իմաստալի քննարկում ծավալելու համար: Մինչ խմբերը քննարկում են, շրջեք սենյակում և, անհրաժեշտության դեպքում, ուղղորդում և աջակցություն առաջարկեք:

Իրենց թեմայի քննարկման համար խմբերին բավական ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք ուսանողներին կիսվել դասարանի հետ որոշ սկզբունքներով, որոնք նրանք սովորեցին Փրկիչի կատարած ուսուցումներից: Օգտակար կլինի, եթե մի քանի բույս կենտրոնանաք մեկ թեմայի վրա, իսկ հետո անդրադառնաք հաջորդ թեմային:

Ուսանողները, հնարավոր է, գտնեն սկզբունքներ, որոնք նման են հետևյալին.

Երբ ճաշակում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Երկնային Հորը՝ Հիսուս Քրիստոսին միշտ հիշելու և Նրա պատվիրաններին հնազանդվելու մեր հոժարակամությունը:

Եթե մենք ճաշակենք հաղորդությունը և միշտ հիշենք Հիսուս Քրիստոսին, մենք Նրա Հոգին մեզ հետ կունենանք:

Տերը պատվիրում է մեզ հրավիրող և ներգրավող լինել Աստծո բոլոր զավակների հանդեպ և օգնել նրանց գալ Իր մոտ:

Երբ ուսանողները գտնեն սկզբունքները, խնդրեք նրանց գրել դրանք գրատախտակին: Խնդրեք ուսանողներին կիսվել մտքերով կամ հարցերով, որոնք իրենք ունեն այս սկզբունքներից որևէ մեկի վերաբերյալ:

Ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին ընտրել մեկը կամ երկուսը՝ դրանց շուրջ խորհելու համար: Կարող եք խրախուսել ուսանողներին գրի առնել այն մտքերն ու տպավորությունները, որոնք նրանք ստանում են:

- Ի՞նչ եմ անելու, որպեսզի նախապատրաստվեմ հաղորդությունը ճաշակելուն և դարձնեմ այն ավելի իմաստալի և Քրիստոսակենտրոն փորձառություն:
- Ի՞նչ եմ անելու, որպեսզի օգնեմ մյուսներին իրենց ընդունված զգալ և Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն պատկանելու զգացում ունենալ:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց շրջապատող աշխարհի որոշ պայմանների մասին, որոնք կարող են դժվարացնել ավետարանով ապրելը: Խրախուսեք ձեր ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը, որոնեով, թե մենք ինչպես կարող ենք օգնել ուրիշներին զգալ, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցում մեզ բոլորիս համար տեղ կա:

Հաղորդության օրհնությունները

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի Նյութ: Դաս 17

Հրահանգներ քահանայության ղեկավարների համար

Օգտագործեք հետևյալ հրահանգները, որպեսզի հեշտացնեք քննարկումը ձեր խմբի անդամների հետ: Խրախուսեք ձեր խմբի բոլոր անդամներին մասնակցել: Այնուամենայնիվ,

ոչ ոք չպետք է պարտադրված զգա՝ կիսվելու իր մտքերով:

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հաղորդությունը դառնա իմ եկեղեցական փորձառության ավելի իմաստալի մասը:

Վերանայեք 3 Նեփի 18.6–12, 20.8–9-ը և երեք Ա. Բեդնարի և Դ. Թոդ Քրիստոֆերսոնի ուսմունքները՝ նախապատրաստական նյութի բաժին 2-ում: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ենք մենք վկայում Երկնային Հորը, երբ ճաշակում ենք հաղորդությունը:
- Ինչպե՞ս կարող է հաղորդությունը մեզ ավելի մոտեցնել Փրկիչին: Ինչո՞ւ է ձեր կյանքը առանձնահատուկ, երբ դուք ավելի կենտրոնացած եք Հիսուս Քրիստոսի վրա և ավելի մոտ եք զգում Նրան:
- Ըստ երեք Բեդնարի և երեք Քրիստոֆերսոնի, ինչպե՞ս պետք է հաղորդությունը ազդի մեր կյանքի և բնավորության վրա ամեն շաբաթ: Արդյոք որևէ մեկը կկամենար վկայել այդ օրհնությունների մասին՝ իրենց սեփական փորձառություններից ելնելով:
- Ի՞նչն է ամենից շատն օգնել ձեզ հաղորդությունը իմաստալի և Քրիստոսակենտրոն փորձառություն դարձնելու համար:

Ողջունել բոլոր մարդկանց եկեղեցում

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի նյութ: Դաս 17

Հրահանգներ քահանայության ղեկավարների համար

Օգտագործեք հետևյալ հրահանգները, որպեսզի հեշտացնեք քննարկումը ձեր խմբի

անդամների հետ: Խրախուսեք ձեր խմբի բոլոր անդամներին մասնակցել: Այնուամենայնիվ, ոչ ոք չպետք է պարտադրված զգա՝ կիսվելու իր մտքերով:

Ինչպե՞ս կարող եմ օգնել եկեղեցում ստեղծել ավելի հյուրընկալ և ներգրավող փորձառություն բոլոր մարդկանց համար:

Գուցե կամենաք սկսել ձեր քննարկումը՝ գտնելով մի քանի ընդհանուր պատճառներ, թե մարդիկ ինչու կարող են ներգրավված չզգալ իրենց ծխում կամ ճյուղում: Տրամադրեք որոշ ժամանակ՝ վերանայելու 3 Նեփի 18.22–25-ը և քույր Քերոլ Ֆ. Մակքոնկիի հայտարարությունը բաժին 3-ի նախապատրաստական նյութում: Ապա քննարկեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, այս հատվածներում ո՞ր ուսմունքներն ու սկզբունքներն են կարևոր, որ հասկանան Եկեղեցու բոլոր անդամները: Ինչո՞ւ:
- Ձեզ համար ի՞նչն էր կարևոր քույր Մակքոնկիի հայտարարության մեջ: Ի՞նչ եք կարծում, ինչ է նշանակում «տեսնել [ուրիշներին] Քրիստոսանման աչքերով» (Carol F. McConkie, “Lifting Others” [video], Church of Jesus Christ.org):
- Փրկիչի կյանքից ի՞նչ օրինակներ են ցույց տալիս Աստծո բոլոր զավակներին հրավիրելու և ներառելու Նրա ցանկությունը՝ անկախ նրանց հանգամանքներից:
- Ինչպե՞ս կարող ենք հետևել Փրկիչի օրինակին՝ լինել ավելի ներգրավող և հրավիրող անդամների և այցելուների հանդեպ, ովքեր հաճախում են մեր ծխերը կամ ճյուղերը: Ի՞նչ են արել մարդիկ, որն օգնել է ձեզ ներգրավված և ընդունված զգալ եկեղեցում:



ԴԱՍ 18. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին

Նեփիացիներին և Լամանցիներին ծառայելու ընթացքում Հիսուսը հարցրեց Իր տասներկու աշակերտներին. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել» (3 Նեփի 27.27): Եթե Տերը ձեզ ուղղեր այս հարցը, ինչպե՞ս կպատասխանեիք: Ինչպե՞ս կարող եք հասնել ձեր լիակատար ներուժին: Երբ նախապատրաստվեք դասին, մտածեք թե Փրկիչի ուսմունքներն ինչպե՞ս կարող են օգնել ձեզ պատասխանել այդ հարցերին: Ընտրեք որևէ առանձնահատուկ քայլ, որը կատարելով՝ ավելի կնմանվեք Նրան:

ԲԱԺԻՆ 1

Արդյո՞ք իսկապես կարող եմ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի նման կատարյալ դառնալ

Նոր Կտակարանում մենք կարդում ենք, որ Հիսուսը ասաց Լեռան քարոզը, որը ներառում է ուսմունքներ, որոնք, ի վերջո, օգնելու էին Նրա աշակերտներին կատարյալ դառնալ (տես Մատթեոս 5-7): Իր Հարությունից հետո Հիսուսը հայտնվեց Լիառատ երկրում և ներկայացրեց նմանատիպ մի քարոզ (տես 3 Նեփի 12-14):

Մարդկանց ուղղված Իր ուղերձի սկզբում, Հիսուսը վկայեց, որ նրանք, ովքեր Իր ընտրած աշակերտների «խոսքերին ուշք դարձնեն», կօրհնվեն

(3 Նեփի 12.1): Նա ուսուցանեց Երանելիները, հայտարարեց, որ Ինքը կատարել էր Մովսեսի օրենքը և հաղորդեց ավետարանի ավելի բարձր օրենքը:





Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 3 Նեփի 12.19–20, 46–48-ը, փնտելով, թե մենք ինչ կարող ենք դառնալ, երբ գալիս ենք դեպի Քրիստոսը և ձգտում ենք ապրել Նրա ավելի բարձր օրենքով:

Որոշ մարդիկ կարող են շփոթված կամ ճնշված զգալ Փրկիչի՝ կատարյալ եղբ պատվիրանից: Օգտակար է իմանալ, որ սուրբ գրություններում կատարյալ բառը կարող է նշանակել «լրիվ, ամբողջական և լիովին զարգացած, բացարձակ արդարակյաց», և որ «Քրիստոսի ճշմարիտ հետևորդները կարող են կատարյալ դառնալ Նրա շնորհի և Քավության միջոցով» (Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Կատարյալ», scriptures. ChurchofJesusChrist.org).



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մորոնի 10.32–33-ը և փնտրեք, թե կատարելագործումն ինչպես է պահանջում՝ թե՛ մեր ջանքը, թե՛ Տիրոջ շնորհը:



Շնորհի սահմանումներից մեկն է. «Շնորհ բառը, ինչպես օգտագործվում է սուրբ գրություններում, առաջին հերթին վերաբերում է արտոնող զորությանն ու հոգևոր բժշկմանը, որն առաջարկվում է Հիսուս Քրիստոսի ողորմածության և սիրո միջոցով: . . . Այդ արտոնող զորությունը ստանալու համար մենք պետք է հնազանդվենք Հիսուս Քրիստոսի ավետարանին: . . . Տերը խոստացել է, որ եթե մենք խոնարհեցնենք մեզ Նրա առջև և հավատք ունենանք Նրա հանդեպ, Նրա շնորհը կօգնի մեզ հաղթահարել մեր բոլոր անձնական թուլությունները (տես Եթեր 12.27)» («Շնորհ», Ավետարանական թեմաներ, topics. ChurchofJesusChrist.org):

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.



ճշմարիտ կատարելության համար մեր միակ հույսը երկնքից այն որպես պարզև ստանալն է, մենք չենք կարող «վաստակել» այն: Ուստի, Քրիստոսի շնորհը մեզ առաջարկում է ոչ միայն փրկություն վշտից, ցավից ու մահից, այլև փրկություն մեր մշտական ինքնաքննադատությունից: . . .

. . . Եթե մենք հաստատական շարունակենք, հավերժության մեջ մեր գտումը կավարտվի ու կամբողջացվի: . . .

Ես վկայում եմ, որ այս և ամեն ժամ Նա մեխերի սպիներով պատված իր ձեռքերով մեզ է մեկնում այդ նույն շնորհը, առանց անձնատուր լինելու, քաջալերելով մեզ, հրաժարվելով արձակել մեզ, մինչև մենք մի օր ապահով տուն կվերադառնանք Նրա հետ՝ մեր Երկնային Օնոլների գիրկը: («Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո», *Լիաինա*, նոյեմբեր 2017, 41, 42)



Խորհեք դասին նախապատրաստվելիս

Ձեզ համար ի՞նչ է նշանակում, որ Հիսուս Քրիստոսը տարածում է Իր շնորհը դեպի ձեզ և ձեզ

համար նախապատրաստել է մի ուղի, որ դառնաք Իր և Իր շոր նման:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել Հիսուս Քրիստոսին նման դառնալու համար

Երբ Հիսուսը շարունակում էր ուսուցանել Նեփիացիներին, Նա կիսվեց հիմնարար սկզբունքներով, որոնք վերաբերում էին նրան, թե ինչպես ապրել համաձայն Իր ավետարանի ավելի բարձր օրենքի: Նախագահ Հարիլդ Բ. Լին ասել է.



Քրիստոսը աշխարհ եկավ ոչ միայն քավություն գործելու մարդկության մեղքերի համար, այլև օրինակ սահմանելու աշխարհի առջև Աստծո օրենքի կատարելության և շորը հնազանդվելու չափանիշի վերաբերյալ: Լեռնան քարոզում Վարդապետը մեզ որոշակիորեն բացահայտել է Իր սեփական բնավորությունը, որը կատարյալ էր . . . և դրանով մեզ ծրագիր է տվել մեր սեփական կյանքի համար: (*Decisions for Successful Living* [1973], 55–56)



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Այս ուսմունքներով ապրելու ձգտումը կօգնի մեզանից յուրաքանչյուրին ի վերջո դառնալ Փրկիչի նման կատարյալ: Համառոտակի վերանայեք թեմաների հետևյալ ցուցակը, որը գտնվում է 3 Նեփի 12–14-ում, և նշեք մեկ կամ երկու ոլորտ, որոնց վրա դուք կկամենայիք կենտրոնանալ:

Ձեր թեման կամ թեմաները ընտրելուց հետո ուշադիր ուսումնասիրեք և խորհեք կից սուրբ գրությունների հատվածների շուրջ: Որպեսզի խորացնեք թեմաների ձեր ըմբռնումը, նայեք խաչաձև հղումները այն հատվածների համար, որոնք ուսումնասիրում եք:

Քրիստոսանման հատկանիշներ (Երանելիներ) (3 Նեփի 12.3–12)

Զայրույթ (3 Նեփի 12.21–24)

Սեռական մաքրություն (3 Նեփի 12.27–28)

Ազնվություն և անկեղծություն (3 Նեփի 12.33–37)

Սիրել թշնամիներին (3 Նեփի 12.38–44)

Ծառայել ճիշտ պատճառների համար (3 Նեփի 13.1–4)

Աղոթք և ծոմապահություն (3 Նեփի 13.5–18)

Գանձեր երկնքում (3 Նեփի 13.19–24)

Դատել ուրիշներին (3 Նեփի 14.1–5)



Գրի առեք ձեր մտքերը

Նշեք ձեր կարդացած հատվածում ուսուցանվող մեկ կամ ավելի սկզբունքներ, որոնք կարող են օգնել ձեզ՝ ավելի շատ նմանվել Փրկիչին: Գրի առեք ձեր տպավորությունները, երբ մտածեք հետևյալ հարցերի մասին.

- Ապրելով այս սուրբ գրության հատվածի սկզբունքներով, ինչպե՞ս կարող եմ ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

- Հիսուս Զրիստոսն ինչպե՞ս է այս սկզբունքի օրինակը ծառայել:
- Ինչպե՞ս է այդ սկզբունքն օրինել իմ կամ ուրիշների կյանքը:
- Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի լավ կիրառեմ այդ սկզբունքն իմ կյանքում:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Նեփիացիներին ուղղված Փրկիչի քարոզի մասին:

3 Նեփի 12–14-ի վերաբերյալ ավելի շատ տեղեկության համար տես գլուխ 41-ը *Մորմոնի Գրքի ուսանողի ձեռնարկից* (Եկեղեցու կրթական համակարգի ձեռնարկ, 2009), 302–11, կամ գլուխ 3-ը *Նոր Կտակարանի ուսանողի ձեռնարկից* (Եկեղեցու կրթական համակարգի ձեռնարկ, 2018), որը քննարկում է Լեռան քարոզը (տես Մատթեոս 5–7-ը):

Ի՞նչ պետք է անեմ, եթե մաքառում եմ այս կյանքում կատարյալ լինելու գաղափարի հետ:



«Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո» (*Լիա-հոնա*, նոյեմբեր 2017, 40–42) իր ելույթում երեց Հոլլանդը կարևոր խորհուրդ է տալիս նրանց, ովքեր հուսահատված են, քանի որ կարծում են, որ իրենք երբեք կատարյալ չեն լինի:

«Gather to Be Perfected but Not Perfect» (29:39) տեսաֆիլմում քույր Գեյլըմըրի Ռոզենբերգը՝ Բրիգամ Յանգի համալսարանի մի օգնական հրահանգիչ, տալիս է առաջարկներ՝ հաղթահարելու ամեն ինչում կատարելության հասնելու ճգնաժամը և անվստահությունը սեփական ուժերի հանդեպ: Այս ելույթը տրվել է 2020թ.-ի մայիսի 1-ին, ԲՅՀ-ի կանանց համաժողովում:

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել մեր աստվածային ներուժի վերաբերյալ Եկեղեցու ուսմունքների մասին:

Ավետարանական թեմաների ակնարկը «Դառնալ Աստծո նման» (ChurchofJesusChrist.org) տալիս է խորքային քննարկում Եկեղեցու ուսմունքների վերաբերյալ, որ յուրաքանչյուր մարդ Աստծո գավակն է և ունի Նրա նման դառնալու աստվածային ներուժ:

ԴԱՍ 18. ՈՒՍՈՒՑՈՒ ՆՅՈՒԹ

Նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին

Լիառատ երկրում Հիսուս Քրիստոսն ասաց Նեփիացիներին և Լամանացիներին, որ Ինքը կատարել էր Մովսեսի օրենքը: Երբ Նա սովորեցնում էր մի ավելի բարձր օրենք, հրավիրեց ժողովրդին լինել կատարյալ՝ ինչպես Ինքը և Երկնային Հայրն էին կատարյալ: (Տես 3 Նեփի 12.17-48) Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան բացատրել Տիրոջ ուսմունքները կատարելագործման վերաբերյալ: Ուսանողները կուսումնասիրեն նաև ավելի բարձր օրենքի տարբեր կողմերը և կնշեն մի բան, որն իրենք կարող են անել՝ այդ օրենքով ավելի լավ ապրելու և Հիսուս Քրիստոսին ավելի շատ նմանվելու համար:

Ուսուցման առաջարկներ

Փրկիչն ուսուցանում է Նեփիացիներին և Լամանացիներին, թե ինչպես կատարյալ դառնան

Ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին խորհել դրանց շուրջ:

- Մտածելով ձեր աստվածային ներուժի մասին, Քրիստոսանման ո՞ր հատկանիշները հույս ունեք զարգացնել հաջորդ տարի, հաջորդ 10 տարիներին:
- Ի՞նչ հատկանիշներ հույս ունեք զարգացնել մինչև ձեր կյանքի վերջը:

Եթե հարմար է, խնդրեք ուսանողներին իրենց պատասխաններով կիսվել մի հասակակցի հետ կամ հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների իրենց պատասխաններով կիսվել դասարանի հետ:

Նեփիացիների և Լամանացիների մեջ Իր ծառայության ընթացքում Հիսուսն ուսուցանեց կարևոր ճշմարտություններ մեր աստվածային ներուժի մասին: Հրավիրեք ուսանողներին վերանայել 3 Նեփի 12.19–20, 46–48 հատվածները, փնտրելով, թե ըստ Տիրոջ, մենք ինչպիսին պետք է լինենք:

- Համաձայն այս հատվածների, Տերն ի՞նչ ներուժ է տեսնում մեր մեջ:

- Ի՞նչ են սովորեցնում այս հատվածներն այն մասին, թե ինչպե՞ս կարող ենք կատարյալ դառնալ Հիսուս Քրիստոսի և Երկնային Հոր նման: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք գալիս ենք դեպի Հիսուս Քրիստոսը և հետևում Նրա օրենքին ու պատվիրաններին, մենք կարող ենք կատարյալ դառնալ, ինչպես Նա և Հայրն են կատարյալ:**)

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Օգնեք ուսանողներին օգտագործել սուրբ գրությունների ուսումնասիրության օժանդակ նյութերն ու սկզբնաղբյուրները:

Եկեղեցին տրամադրել է ուսումնասիրության օժանդակ նյութեր և սկզբնաղբյուրներ, որպեսզի խորացնենք սուրբ գրությունների մեր ուսումնասիրությունը: Ուսումնական օժանդակ նյութերը, ինչպիսիք են՝ Սուրբ Գրքերի Ուղեցույցը, Թեմատիկ ուղեցույցը, Աստվածաշնչի բառարանը, Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը, տողատակի Ժանդագրությունները, գլխի վերնագրերը և քարտեզները կարող են օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե իրենք ինչ են կարդում: Դասի ընթացքում հնարավորություններ փնտրեք՝ օգնելով ուսանողներին օգտագործել այս օժանդակ նյութերն ու սկզբնաղբյուրները:

Նշեք, որ որոշ մարդիկ դժվարությամբ են հասկանում կատարյալ լինելու պատվիրանը: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել «կատարյալ» վերնագրով թեման Սուրբ գրքերի ուղեցույցում: Կարող եք նաև խնդրել ուսանողներին վերանայել Մորոնի 10:32–33-ը և Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում: Ուղղեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս է օգտակար հասկանալ, որ կատարյալ նշանակում է «լրիվ, ամբողջական և լիովին զարգացած»: (Սուրբ գրքերի ուղեցույց, «Կատարյալ», scriptures.ChurchofJesusChrist.org): Ե՞րբ և ինչպե՞ս կարելի է հասնել կատարելության:
- Ինչպե՞ս կամփոփեք այն ամենը, ինչ Մորոնին սովորեցրեց կատարյալ դառնալու մասին: Այս ուսմունքի ըմբռնումը ինչպե՞ս կարող է ձեզ հույս տալ, երբ անհաջողություն եք ունենում և սխալներ գործում: Ե՞րբ եք զգացել, որ Տերն աստվածային օգնություն և ուժ է տվել ձեզ:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար այն, որ Հիսուս Քրիստոսը տարածում է Իր շնորհը ձեզ վրա, և ձեզ համար ուղի է նախապատրաստել, որ դառնաք Իր և Իր Հոր նման:

Որպեսզի օգնեք ուսանողներին կիրառել իրենց սովորածը, ցուցադրեք հետևյալ սցենարը.

Ջոանը Եկեղեցու հավատարիմ անդամ է: Չնայած նա ավետարանի մասին վկայություն ունի, սակայն անհանգստանում է, որ ինքը երբեք կատարյալ չի լինի: Երբ խոսքը վերաբերում է կատարելությանը, նա մտածում է միայն իր թերությունների ու սխալների մասին: Նա կարծում է, որ ինքը բավականաչափ լավը չէ սելեստիալ արքայությանը հասնելու համար:

- Մտածելով այն մասին, ինչ սովորեցիք այսօր, ի՞նչ ճշմարտություններով կարող եք կիսվել Ջոանի հետ, որպեսզի օգնեք նրան ավելի մեծ հավատք ունենալ Տիրոջ՝ կատարյալ լինելու հրավերի հանդեպ:

Հիսուս Քրիստոսն ուսուցանում է Իր ավետարանի ավելի բարձր օրենքը

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Փրկիչը մարդկանց բացատրեց, որ Ինքը կատարել էր Մովսեսի օրենքը, այնուհետև ուսուցանեց ավետարանի ավելի բարձր օրենքը:

- Ինչպե՞ս կսահմանեիք ավելի բարձր օրենքը: Ո՞րն է այդ ավելի բարձր չափանիշների նպատակը: (Անհրաժեշտության դեպքում ուսանողները կարող են անդրադառնալ նախապատրաստական նյութի բաժին 2-ին:)

Ուսանողներին հրավիրեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 2-ում իրենց ուսումնասիրած սուրբ գրությունների հատվածները: (Եթե որոշ ուսանողներ չեն պատրաստվել նախապես, հրավիրեք նրանց ընտրել մի հատված և ուսումնասիրել այն այժմ:) Վերանայելու համար բավական ժամանակ ունենալուց հետո ընտրեք հետևյալ վարժություններից մեկը կամ ստեղծեք ձեր սեփականը, որը ուսանողներին կտա լավագույն հնարավորությունը՝ իրենց հայտնաբերածով կիսվելու և քննարկելու համար.

Տարբերակ 1. Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի: Հրավիրեք ուսանողներին հերթով կիսվել իրենց խմբերի հետ, թե ինչ սովորեցին իրենց ուսումնասիրած հատվածից: Երբ ուսանողներն իրենց խմբերում ավարտեն քննարկումը, հրավիրեք նրանց իրենց հայտնաբերածով կիսվել դասարանի հետ:

Տարբերակ 2. Ցուցադրեք հարցերը, որոնք ներառված են նախապատրաստական նյութի բաժին 2-ի «Գրի առեք ձեր մտքերը» վարժությունում: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե նրանք ինչպես կպատասխանեին իրենց ուսումնասիրած հատվածի վրա հիմնված հարցերին: Առաջարկեք ուսանողներին կիսվել իրենց գուզրնկերոջ կամ փոքրիկ խմբի հետ, թե ինչպես կպատասխանեին հարցերին:

Տարբերակ 3. Հրավիրեք ուսանողներին մտածել մի սցենար, որի ընթացքում իրենք կարող են կիրառել մի ուսմունք իրենց ընտրած հատվածից: Հնարավորություն ընձեռեք ուսանողներին ներկայացնել իրենց սցենարները ինչպես

փոքրիկ խմբերում, այնպես էլ դասարանում, և բացատրել, թե ինչպես կկիրառեն իրենց ընտրած ուսմունքները:

Ուսանողներին հանձնարարեք ընտրել մեկ սկզբունք կամ Քրիստոսանման հատկանիշ, որով կկամենային ավելի լավ ապրել: Խրախուսեք ուսանողներին գրի առնել, թե ինչպե՞ս կարող են կատարելագործվել՝ ապրելով այդ սկզբունքով կամ զարգացնելով այդ հատկանիշը: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողի դասարանի հետ կիսվել իրենց վկայություններով Հիսուս Քրիստոսի բարության և շնորհի մասին:

Հաջորդ անգամ

Նշեք, որ նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից ասել է, որ երիտասարդները մեր օրերում «մեծանում են թշնամու տարածքում», որովհետև հակառակորդի ազդեցությունը ամենուրեք է («How to Survive in Enemy Territory,” *New Era*, Apr. 2012, 2): Երբ ուսանողները սկսեն «Հոգևոր վտանգները մեր օրերում» բաժինը և ուսումնասիրեն հաջորդ դասի նախապատրաստական նյութը, հրավիրեք նրանց փնտրել, թե Մորմոնի գիրքը ինչպես կարող է օգնել նրանց արդար ապրել ամբարիշտ աշխարհում:

ՄԱՍ 6

Բացահայտել հոգևոր վտանգները մեր օրերում



ՀԱՍ 19. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Արդար ապրել ամբարշտության օրերում

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է, որ Մորմոնի Գիրքը «ամրապնդում է Քրիստոսի խոնարհ հետևորդներին չարի հնարքների, ռազմավարության և դևի վարդապետությունների դեմ մեր օրերում» («The Book of Mormon Is the Word of God» *Ensign*, Jan. 1988, 3): Այս բաժնում դուք հնարավորություն կունենաք ուսումնասիրել, թե ինչպես է Մորմոնի Գիրքը բացահայտում այդ վտանգները, որպեսզի դուք ավելի լավ պաշտպանվեք: Երբ ուսումնասիրեք այս դասը, փնտրեք սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ արդար ապրել ամբարշտության օրերում:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ հավատարիմ մնալ Տիրոջը, երբ ես հալածանքի եմ հանդիպում ավետարանով ապրելու համար

Երբ Հելամանը՝ Հելամանի որդին, զբաղեցրեց դատավորի աթոռը, Նեփիացիները ապրեցին խաղաղության մի ժամանակահատված և տասնյակ հազարավոր մարդիկ միացան Եկեղեցուն: Մինչ Եկեղեցին բարգավաճում էր, որոշ անդամներ դարձան հպարտ և սկսեցին հալածել Հիսուս

Քրիստոսի խոնարհ հետևորդներին: (Տես Հելաման 3.20–34)





Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Ընթերցեք Հեւման 3.33–35-ը և փնտրեք, թե Քրիստոսի խոնարհ հետևորդներն ինչպես էին արձագանքում Եկեղեցու մյուս անդամների հալածանքին:



Խորհեք դասին նախապատրաստվելիս

Մտածեք մի ժամանակի մասին, երբ Եկեղեցու մյուս անդամների կողմից զգացել կամ ակա-
նատես եք եղել վիրավորական վերաբերմունքի
կամ անբարյաղակամ խոսքերի: Ինչպե՞ս եք
արձագանքել: Ի՞նչ ենք մենք սովորում խոնարհ
Սրբերից այն մասին, թե ինչպե՞ս դիմակայել
այդպիսի հալածանքին:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ լինել արդար, երբ շրջապատված եմ ամբարշտությամբ

Մորմոն մարգարեն և նրա որդի Մորմոնին դիմա-
կայեցին համատարած ամբարշտության մի
ժամանակի: Մեղքի և ամբարշտության պատ-
ճառով հրաշքները դադարել էին, և Մուրբ Հոգին
այլևս մարդկանց հետ չէր: Ամբողջ երկրում
գերիշխում էր սատանայի գործությունը: (Տես
Մորմոն 1.13–19) Իր որդի Մորմոնին գրած մի
նամակում Մորմոնը նկարագրում է մարդկանց
վիճակը և եզրակացնում, որ նրանք այնքան
այլասերված էին, որ «առանց քաղաքակրթության»
էին: (Մորմոնի 9.11): Բռնությունը, պատերազմը և
կոտորածը սրբեցին երկիրը, մինչ Լամանացիները
և Նեփիացիները անընդհատ կռվում էին միմյանց

դեմ: Ի վերջո, Լամանացիները գերիշխեցին, և
Մորմոնն ու Մորմոնին ականատես եղան Նեփիա-
ցիների լիակատար կործանմանը (տես Մորմոն
2–6, 8.1–3, 7):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մորմոն 1.1–2, 15 և Մորմոնի 9.25–26-
ը, փնտրելով մի քանի պատճառներ, թե ինչու
Մորմոնը և Մորմոնին կարողացան հավատարիմ
մնալ Տիրոջը, երբ նրանք շրջապատված էին
ամբարշտությամբ:

Անդրադառնալով մեղսավոր աշխարհում Փրկիչի
վրա կենտրոնանալու գործությանը՝ նախագահ
Ջոյ Դ. Ջոնսը՝ Երեխաների միության գերագույն
նախագահը, ուսուցանել է.



Եթե աշխարհն ավելի ուժեղ է ձգում, քան
հավատքը և վստահությունը, որը մենք
ունենք Փրկիչի հանդեպ, ապա աշխարհի
ձգողականությունը կգերիշխի ամեն անգամ:

...

... Չնայած հաճախ ավելի հեշտ է հոգևո-
րապես պասիվ լինել, քան հոգևոր ջանք
գործադրել հիշելու և ընդունելու մեր
աստվածային ինքնությունը, մենք չենք
կարող թույլ տալ այդ հանդուրժողությունը
այս վերջին օրերում: Թող որ . . . «մենք
հավատարիմ լինենք Քրիստոսին, . . . թող
Քրիստոսը [մեզ] վեր բարձրացնի, և թող

Նրա տառապանքներն ու մահը, . . . Նրա ողորմությունն ու երկայնամտությունը, և Նրա փառքի ու հավերժական կյանքի հույսը մնա [մեր] մտքում հավիտյան» [Մորոնի 9.25]:
Երբ Փրկիչը բարձրացնի մեզ ավելի բարձր մակարդակի, մենք ավելի հստակ կարող ենք տեսնել ոչ միայն այն, թե ով ենք մենք, այլ որ մենք ավելի մոտ ենք Նրան, քան երբևէ պատկերացրել ենք: («Անչափելի արժեք», *Liahona*, նոյեմբեր 2017, 15)



Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Նիլ Լ. Անդերսենը տվել է հետևյալ վկայությունն այն մասին, թե Տերն ինչպես կօգնի հավատարիմներին դիմակայել ամբարիշտ աշխարհին.



Մեր օրերն անսպասելի օրեր չեն, և Տերն ապահովել է մեր հոգևոր անվտանգությունը: . . . Աշխարհում չարիքի մեծացմանը զուգընթաց գոյություն ունի հայտնությանը և արդարներին տրված հոգևոր պարգևների փոխհատուցող ուժ: Տերը մեզ հավելյալ ուժ է տալիս, երբ պատրաստակամ ենք արդար մնալ այս ամբարիշտ աշխարհում: («Լ սարան

հավատքի, հույսի և գթության» [Երեկո Բարձրագույն իշխանության հետ, փետ. 28, 2014], ChurchofJesusChrist.org)



Գրի առեք ձեր մտքերը

Մորմոնի Գրքից Նշեք մի անհատի կամ մարդկանց խմբի, ովքեր Մորմոնի կամ Մորմոնիի նման դիմակայեցին ամբարշտությանը, բայց հավատարիմ մնացին Տիրոջը: Երբ մտածեք այս օրինակի մասին, փնտրեք սուրբ գրության որևէ հատված, որը կարող է հավելյալ ներդրմունքով ավելացնել այդ անհատի (կամ մարդկանց խմբի) մասին: Ապա գրի առեք ձեր մտքերը հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս կնկարագրեք այն ամբարշտությունը, որին այդ մարդը (կամ մարդկանց խումբը) դիմակայեց:
- Ի՞նչ արեց այդ մարդը կամ (մարդկանց խումբը), որը դուք էլ կարող եք անել՝ հավատարիմ մնալով Տիրոջը, երբ դիմակայեք աշխարհի ամբարշտությանն ու գայթակղություններին:

Դասարան եկեք պատրաստված՝ ձեր օրինակով կիսվելու համար: Նախապատրաստվեք նաև կիսվել ինչ-որ մեկի օրինակով, ում դուք գիտեք անձնապես, ով դիմակայել է ամբարշտությանը և հավատարիմ է մնացել Տիրոջը:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող եմ օրինվել՝ սիրտս Աստծուն հանձնելով:

Կարդացեք շեկաման 7–9 գլուխների վերնագրերը: Ապա ընթերցեք շեկաման 10.1–5-ը, և մտածեք, թե

ինչպես օրինվեց Հելամանի որդի Նեփին՝ Տիրոջ կամքին հնազանդ լինելու համար:



Իր ելույթում՝ «Ենթարկենք մեր սրտերը Աստծուն» (*Լիափոնա*, նոյեմբեր 2015, 30–32), քույր Նեյլ Ֆ. Մերիթը՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահության մի նախկին խորհրդական, ուսուցանել է, թե մենք ինչպես կարող ենք մեծացնել մեր արդար ապրելու զորությունը, երբ մեր սրտերը ենթարկում ենք Աստծուն (տես նաև Հելաման 3.35):

Ինչո՞ւ է կարևոր քաջություն ունենալ, երբ դիմակայում ենք իրավիճակների, որոնք համապատասխան չեն Հիսուս Քրիստոսի ուսմունքներին:

«Leave the Party» (6:26) տեսաֆիլմում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Գարի Ի. Սթիվենսոնը կիսվում է մի երիտասարդի պատմությամբ, ով արդար քաջություն ցուցաբերեց՝ բախվելով գայթակղության:



«Որպեսզի մենք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենանք» (*Լիափոնա*, մայիս 2006, 28–31-ի) իր ելույթում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարը զգուշացրել է այն բաների մասին, որոնք կարող են բաժանել մեզ Սուրբ Հոգուց (time code 4:40–7:24):

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել այն մասին, թե ինչպես ունենալ երջանիկ կյանք ամբարիշտ աշխարհում:



Իր ելույթում՝ «Ինչպես լավ ապրել աճող չարիքի մեջ» (*Լիափոնա*, May 2004, 100–102), Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռիչարդ Գ. Սքոթը քննարկել է, թե Հիսուս Քրիստոսի վրա կենտրոնանալն ինչպես է հնարավոր դարձնում, որ Փրկիչը ձեզ համար ապահովի «հարուստ և լիարժեք կյանք՝ անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում ձեզ շրջապատող աշխարհում» (101):

ԴԱՍ 19. ՈՒՍՈՒՑՅԻ ՆՅՈՒԹ

Արդար ապրել ամբարշտության օրերում

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նկատել է. «Մորմոնի Գիրքը լուսաբանում է Տիրոջ ուսմունքները և բացահայտում է հակառակորդի մարտավարությունը» («Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա» *Liahon*, նոյեմբեր 2017, 62, տես նաև 2 Նեփի 26–33): Բաժին 6-ը կօգնի ուսանողներին ավելի լավ նկատել հակառակորդի մարտավարությունը և որոշել, թե ինչ կարող են անել՝ ամրապնդելով իրենց նրա չար ծրագրերի դեմ: Այս դասում ուսանողները կբացահայտեն, թե ինչ կարող են անել՝ ուժեղ մնալու համար, երբ հանդիպում են հալածանքի, և ինչ կարող են անել, որ արդար ապրեն մի աշխարհում, որը լի է ամբարշտությամբ:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Օգտագործեք իրատեսական սցենարներ:

Երբ ուսանողները կապեր տեսնեն իրենց սեփական կյանքի և իրենց ուսումնասիրած սուրբ գրությունների միջև, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն՝ գնահատելու Աստծո խոսքի արդականությունը, և կտեսնեն, թե ինչպես է այն կարողանում տանել դեպի արդար գործողության: Սցենարները, որոնք ներկայացնում են իրական կյանքի իրավիճակներ և պատասխանում են իրական հարցերի, մտահոգությունների և մարտահրավերների, որոնց դիմակայում են ուսանողները, կարող են օգնել ուսանողներին կապել իրենց կյանքը վարդապետության և սկզբունքների հետ, որոնք գտնվում են Աստծո խոսքում: Իրատեսական իրավիճակները կարող են նաև օգնել ուսանողներին հայտնաբերել իրենց համար, որ կյանքը երբեմն բարդ է, և պատասխանները միշտ չէ, որ հեշտ է գտնել:

Հիսուս Քրիստոսի արդար հետևորդները զորացվում են հալածանքների մեջ

Դասը սկսելու համար կիսվեք հետևյալ սցենարով կամ մեկ այլ համապատասխան սցենարով, որը դուք եք մտածում:

Աքարին Եկեղեցու Նոր մկրտված անդամ է: Նրա ծնողները հրաժարվեցին նրանից, երբ նա մկրտվեց: Սկզբում նրա ծխում բոլորը շատ ընկերական էին: Սակայն, վերջերս որոշ անդամներ Աքարիի անցյալի մասին վատ բաներ ասացին և նույնիսկ ծաղրեցին նրան՝ ավետարանով ապրելու նրա ջանասիրության պատճառով: Նա կամենում է հավատարիմ անդամ լինել, բայց իսկապես հուսահատված է:

- Ինչո՞ւ է դժվար Աքարիի համար հալածվել հատկապես Եկեղեցու ընկերակից անդամների կողմից:
- Եթե Աքարին զար ձեզ մոտ օգնություն խնդրելու, ի՞նչ կասեիք կամ կանեիք՝ նրան օգնելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հելաման 3.24–34-ում մենք կարդում ենք, որ տասնյակ հազարներով մարդիկ միացան Եկեղեցուն և ժողովուրդը մեծապես բարգավաճեց: Սակայն, ի վերջո, հալարտությունը բույն դրեց Եկեղեցու անդամներից մի

քանիսի սրտերում, և նրանք սկսեցին հալածել նրանց, ովքեր մնացին խոնարհ և հավատարիմ:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Հելաման 3,33–35 հատվածները, փնտրելով, թե ինչն օգնեց Եկեղեցու անդամներին ամուր կանգնել հալածանքի դեմ: Մտածեք, թե ձեր տված հետևյալ հարցերից որը կարող է լավագույնս խթանել ձեր ուսանողների ուսումնառությունը:

- Այս հատվածներում ի՞նչ ուսմունքներ կարող են օգնել Աքարիին կամ մեկ ուրիշին, ով նման իրավիճակում է: (Թվարկեք ուսանողների գտած մի քանի նմանատիպ ճշմարտություններ. **Երբ մենք ծով ենք պահում, աղոթում ենք և ենթարկում մեր սրտերը Աստծուն, մեր խոնարհությունն ու հավատքն առ Հիսուս Քրիստոս ավելի կուժեղանա, և մեր սրտերը կսրբագործվեն՝ անկախ ուրիշների վիրավորական վերաբերմունքից:**)
- Ծումապահությունը, աղոթքը և մեր սրտերը Աստծուն ենթարկելը ինչպե՞ս են ազդել առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքի վրա (տես Հելաման 3.35): Ինչպե՞ս են այս արդար գործողություններն օգնել ձեզ, երբ դիմակայել եք ուրիշների վիրավորական վերաբերմունքին:

Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին ժամանակ տվեք՝ անհատապես գնահատելու դրանցից մեկը կամ մի քանիսը և ծրագիր կազմելու, թե ինչպես կպատասխանեն իրենց ստացած հուշումներին.

- Ինչպե՞ս եք ողջունում և ընկերակցում ուրիշների հետ Հիսուս Քրիստոսի Եկեղեցում:
- Ի՞նչ եք անում՝ ձեր սիրտը ենթարկելու Աստծուն:
- Ինչպե՞ս կարող եք մեծացնել ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ, անկախ ուրիշների վիրավորական վերաբերմունքից:

Կիսվեք ձեր վկայությամբ կամ հրավիրեք մի ուսանողի վկայել այն ուժի մասին, որը գալիս է, երբ մենք հավատքով ենք գործում և մեր սրտերը ենթարկում Աստծուն:

Մինչ Նեփիացիների շրջանում ամբարշտությունն աճում էր, Մորմոնը և Մորոնին հավատարիմ էին մնում Տիրոջը

Հրավիրեք ուսանողներին կիսվել նորությունների պատմություններով, մշակութային իրադարձությունների և սոցիալական ցանցերում զրույցների թեմաների օրինակներով, որոնք կարող են դժվարացնել ավետարանով ապրելը մեր օրերում:

- Մորմոնի և նրա որդի Մորոնիի օրերում ո՞ր հանգամանքները դժվարացրին ավետարանով ապրելը: (Եթե անհրաժեշտ է, հանձնարարեք ուսանողներին կրկնել նախապատրաստական նյութի բաժին 2-ը կամ վերանայել Մորմոն 1–6 և Մորոնի 9-ը գլուխների վերնագրերը):
- Ինչպե՞ս եք պատկերացնում, ինչպիսին կլինեք կյանքը, եթե ապրեիք Մորմոնի և Մորոնիի ժամանակներում:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Մորմոն 1.1–2, 15 և Մորոնի 9.25–26-ը, փնտրելով հնարավոր պատճառներ, թե ինչու Մորմոնը և Մորոնին կարողացան հավատարիմ մնալ Տիրոջը, երբ նրանք բախվեցին ամբարշտության մեջ թաղված մի հասարակության հետ:

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել այս հատվածներից այն մասին, թե ինչպես հավատարիմ մնանք Տիրոջը ամբարշտության ժամանակներում: (Օգնեք ուսանողներին գտնել նմանատիպ մի սկզբունք. **Մենք կարող ենք հաղթահարել այս աշխարհի ամբարշտությունը, երբ զգանք Հիսուս Քրիստոսի բարությունը և հավատարիմ մնանք Նրան:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում զգալ Հիսուս Քրիստոսի բարությունը:
- Նայելով Հիսուս Քրիստոսին և զգալով Նրա բարությունը, ինչպե՞ս կօգնենք մեզ արդար մնալ, երբ մեզ շրջապատում է ամբարշտությունը: (Հրավիրեք ուսանողներին վերանայել նախագահ Ջոյ Դ.Ջոնսի և Երեց Նիլ Լ. Սնդերսենի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

- Ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի բարության և Նրա հանդեպ ձեր հավատքի մասին ինչպե՞ս է օգնել ձեզ կատարել արդար ընտրություններ, երբ բախվել եք ամբարշտության:

Հիշեցրեք, որ նախապատրաստական նյութի բաժին 2-ում նրանց հանձնարարվեց Մորմոնի Գրքում գտնել մի մարդու կամ մարդկանց խմբի կամ մեկին, ում ճանաչում են անձնապես, ով հանդիպել է ամբարշտության և մնացել է հավատարիմ: (Եթե անհրաժեշտ է, ուսանողներին ժամանակ տրամադրեք՝ իրենց գրածը վերանայելու համար:) Ձեր դասարանի ուսանողների թվից կախված, ընտրեք մի մոտեցում, որը յուրաքանչյուր ուսանողի հնարավորություն կտա կիսվել իր օրինակով:

Ցուցադրեք հետևյալ հարցերը.

- Հիմնվելով այսօր ձեր սովորածի ու զգացածի վրա, ի՞նչ կանեք, որպեսզի մեծացնեք Տիրոջ

հանդեպ ձեր նվիրվածության մեջ ամուր կանգնելու ձեր կարողությունը, երբ ամբարշտության եք հանդիպում աշխարհում: (Խրախուսեք նրանց գործել համաձայն հուշումների, որոնք ստանում են Սուրբ Հոգուց, երբ խորհում են:)

Հաջորդ անգամ

Կիսվեք մարզարե Զոզեֆ Սմիթի այս մեջբերումով. «Ազատության սերն է, որ ոգեշնչում է հոգիս, քաղաքացիական և կրոնական ազատություն՝ ողջ մարդկային ցեղի համար» (*Նախազգուհների Ուսմունքները. Զոզեֆ Սմիթ* [2007], 345): Երբ ուսանողները կարդան հաջորդ դասի նախապատրաստական նյութը, հրավիրեք նրանց մտածել, թե ինչ է նշանակում կրոնական ազատությունը նրանց համար, և նախապատրաստված գան քննարկելու, թե ինչ կարող են անել, որպեսզի օգնեն խթանել կամ պահպանել այդ ազատությունը:



ԴԱՍ 20. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կրոնական ազատության օրհնությունները

Որքանով է կրոնական ազատությունը կարևոր ձեզ համար: Ինչպես նշված է Եկեղեցու լրատվական կայքում, «Կրոնական ազատությունը մարդկային հիմնարար իրավունք է, որը պաշտպանում է բոլոր մարդկանց խղճմտանքը: Այն թույլ է տալիս մտածել, արտահայտվել և գործել՝ ելնելով նրանից, ինչին մենք խորապես հավատում ենք: . . . Կրոնական ազատությունը պաշտպանում է բոլոր անհատներին ու խմբերին՝ ներառյալ ամենախոցելի խմբերին, անկախ նրանից հավատացյալ են, թե՛ ոչ» («Religious Freedom, mormonnewsroom.org/official-statement/religious-freedom):

Խոսելով մեր օրերի մասին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը նախագգուշացրել է. «[Մատանան] կատաղորեն խարխլում է, հակադրվում և խառնաշփոթություն տարածում կրոնական ազատության վերաբերյալ, թե ինչ է դա, և թե ինչու է այն կարևոր մեր հոգևոր կյանքի և մեր փրկության համար» («Պահպանել կամքի ազատությունը, պաշտպանել կրոնական ազատությունը», *Liahonon*, մայիս 2015, 112): Դասին նախապատրաստվելիս խորհեք, թե Մորմոնի Գիրքը ինչ կարող է ուսուցանել մեզ կրոնական ազատության մասին և մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի խթանեք, պահպանեք և պաշտպանեք այն:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս է կրոնական ազատությունը պաշտպանում իմ համոզմունքները և ինչպես եմ ընտրում ապրել դրանցով:

Դիտեք «Preserving Religious Freedom» տեսաֆիլմը (3:59):

Հետևյալ ամփոփագիրը լուսաբանում է հիմնական իրավունքները, որոնք ներառված են կրոնական ազատության մեջ:

Կրոնական ազատությունը ընդգրկում է ոչ միայն ազատ երկրպագելու իրավունքը, այլև խոսելու և գործելու իրավունքը՝ հիմնված մարդու կրոնական համոզմունքների վրա: . .

Կրոնական ազատությունը պաշտպանում է բոլոր մարդկանց սեփական կրոնական համոզմունքները պահելու և դրանք բացահայտ արտահայտելու իրավունքը՝ չվախենալով հետապնդվելուց կամ քաղաքացիության հավասար իրավունքներից զրկվելուց:

Կրոնական ազատությունը պաշտպանում է ոչ միայն անհատներին, այլև կրոնական կազմակերպություններին, որոնք հնարավոր են դարձնում հավատքի համայնքների գոյությունը: (“Religious Freedom: The Basics,” Church of Jesus Christ.org)

Պատմության ընթացքում մեր համոզմունքների համաձայն գործելու մարդու հիմնական իրավունքը հաճախ է վիճարկվել և նույնիսկ ճնշվել: Օրինակ՝ Մոսիա թագավորի օրոք Եկեղեցու անդամների հալածանքը անհավատների կողմից խստացավ (տես Մոսիա 27.1):




Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 27.1–4-ը, փնտրելով, թե Եկեղեցին և կառավարության առաջնորդներն ինչպես աշխատեցին միասին՝ խաղաղություն հաստատելով ժողովրդի մեջ:

Կրոնական ազատությունը ոչ միայն պաշտպանում է նրանց կարծիքի արտահայտումը, ովքեր կրոնապաշտ են, այլև այն պահպանում է նրանց իրավունքները, ովքեր կրոնապաշտ չեն կամ տարբեր համոզմունքներ ունեն: Մրաօրինակներից մեկն է Կորիհորի պատմությունը: Կորիհորը ապրեց դատավորների կառավարման ընթացքում, կառավարման մի համակարգ, որը նախատեսված էր պահպանել մարդկանց ազատությունը անարդար թագավորներից (տես Մոսիա 29): Կորիհորը քարոզեց «որ չպիտի լինի ոչ մի Քրիստոս» (Ալմա 30.12): Նա հայտարարեց, որ չկար որևէ մեղք, և որ յուրաքանչյուր մարդ բարգավաճում է ըստ իր սեփական բանականության: Կորիհորի ուսմունքները Տիրոջից հեռու տարան շատ մարդկանց: (Տես Ալմա 30.6, 12-18)





Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 30.7–9, 11-ը և նշեք, թե ինչո՞ւ Կորիորն իրավունք ուներ արտահայտելու իր համոզմունքները:

Ալմա 30.29–58-ում մենք կարդում ենք, որ Կորի-հորին բերեցին Ալմա մարգարեի և Զարահեմլայի գլխավոր դատավորի մոտ, և Ալման հակադարձեց Կորիհորի ուսմունքներին՝ վկայություն բերելով Քրիստոսի մասին: Ճիշտ, ինչպես Կորիհորը իրավունք ուներ արտահայտելու իր անհավատա-թյունը Աստծուն, Ալման ևս ազատ էր վկայելու, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը գոյություն ունեն: Ընտրելով չհավատալ Ալմային, Կորիհորը պահանջեց մի նշան Աստծուց և պատժվեց համ-րանալով: Այդ իրադարձության հանրայնացումից հետո նրանք, ովքեր հավատացել էին Կորիհորին, համոզվեցին, որ նա սխալ էր, և «բոլորը դարձի եկան կրկին դեպի Տերը» (հատված 58):

Անդրադառնալով բոլոր մարդկանց համար կրո-նական ազատությունը պաշտպանելու կարևորու-թյանը՝ Մարգարե Զոգեֆ Սմիթը հայտարարել է.



Ես պատրաստ եմ իմ կյանքը տալ, պաշտ-պանելով ցանկացած երիցականի կամ մկրտականի կամ որևէ այլ դավանանքի լավ մարդու համար, [ճիշտ, ինչպես Եկեղեցու անդամի համար], քանի որ նույն սկզբունքը, որը կարող է ոտնակոխ անել Վերջին Օրերի Սրբերի իրավունքները, ոտնակոխ կանի նաև հռոմեական կաթոլիկների կամ որևէ այլ դավանանքի իրավունքները, որը կարող է ժողովրդականություն չվայելել և խիստ թույլ լինել՝ իրեն պաշտպանելու համար: (Եկե-ղեցու Նախագահների Ուսմունքները. Զոգեֆ Սմիթ [2007], 345)

Զոգեֆ Սմիթը նաև շեշտեց կրոնական ազատու-թյունը՝ որպես Եկեղեցու հիմնարար ուսմունք. «Մենք պահանջում ենք մեր խղճի թելադրանքով

Ամենազոր Աստծուն երկրպագելու արտոնու-թյունը, և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք երկրպագեն ինչ-պե՛ս, որտե՛ղ կամ ինչի՛ն կամենում են» (Հավատո Հանգանակ 1.11):



Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղե-ցին հրատարակել է հետևյալ հայտարարությունը՝ կրոնական ազատության համար խաղաղությամբ աշխատելու մասին.

Որտեղ օրենքը սահմանափակում է կրոնա-կան ազատությունը, Վերջին Օրերի Սրբերը հավատում են օրենքին հնազանդվելուն, երբ պաշտպանություն են որոնում իրենց հիմնա-րար իրավունքների համար այնպիսի օրինա-կան միջոցներով, որոնք կարող են մատչելի լինել յուրաքանչյուր արդարադատությունում կամ երկրում: (“Religious Freedom: The Basics,” ChurchofJesusChrist.org)



Քննարկեք դասին Նախապատրաստվելիս

Զրուցեք այլ հավատքի պատկանող մեկ կամ մի քանի մարդկանց հետ և հարցրեք նրանց, թե ինչու է իրենց կրոնը կարևոր իրենց համար, և արդյոք նրանք երբևէ կրոնական

հալածանքների են ենթարկվել: Դասարան եկեք պատրաստ՝ ձեր սովորածով կիսվելու համար:



ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի օգնեմ խթանել կամ պահպանել կրոնական ազատությունը

Օգտակար կլինեն մտածել մի քանի օրինակներ, թե ինչպիսին կլինեն կյանքը առանց կրոնական ազատության: Պատկերացրեք, որ առնչվում եք հետևյալ սցենարներից մեկի կամ մի քանիսի հետ, որոնցում կրոնական ազատությունը սահմանափակված է:

- Դուք կարող եք կորցնել ձեր աշխատանքը կամ ղեկավար պաշտոնները կրոնական համոզմունքներ արտահայտելու համար, նույնիսկ աշխատանքից դուրս: . . .
- Ձեզանից գուցե պահանջվի թաքցնել ձեր կրոնը կամ կատարել հանձնարարություններ աշխատանքի վայրում, որոնք դեմ են ձեր համոզմունքներին: . . .

- Ձեզանից գուցե պահանջվի աշխատել Հանգստության օրը կամ կրոնական տոներին, նույնիսկ, եթե մյուսները պատրաստ են աշխատել ձեր հերթափոխին: . . .
- Հանրակրթական դպրոցներում ձեր երեխաներից գուցե պահանջվի սովորել սեռական և գեղեցիկ տեսությունների մասին, որոնք հակասում են Եկեղեցու հիմնական ուսմունքներին:
- Գուցե դուք չկարողանաք որդեգրել երեխաներ կամ դառնալ խնամատար ծնող՝ ձեր կրոնական համոզմունքների կամ ընտանիքի վերաբերյալ ձեր տեսակետների պատճառով:
- Որպես բիզնեսի սեփականատեր կամ մասնագետ, դուք գուցե կորցնեք ձեր արտոնագիրը կամ տուգանվեք, եթե հրաժարվում եք կատարել ծառայություններ, որոնք հակասում են են ձեր կրոնական համոզմունքներին: ("Religious Freedom Matters: What's at Risk," *Ensign*, July 2017, 37)

Մորմոնի Գիրքում պատմվում է, որ դատավորների կառավարման 19-րդ տարում Ամադիլիա անունով մի ամբարիշտ մարդ դավադրություն կազմակերպեց, որ թագավոր դառնա Նեփիացիների վրա: Նա խորամանկորեն ձգտում էր կործանել Տիրոջ Եկեղեցին և «ազատության հիմքը, որն Աստված էր տվել նրանց» (Ալմա 46.10): Ամադիլիան շողոքորթեց շատ Նեփիացիների, և այդ Նեփիացիները հեռացան Եկեղեցուց՝ նրան հետևելու համար: (Տես Ալմա 46.1-10:)

Երբ Մորմոնին՝ Նեփիացիների գորքերի գլխավոր հրամանատարը, իմացավ Ամադիլիացիների ծրագրի մասին, զայրացավ և համախմբեց ժողովրդին՝ պաշտպանելու իրենց իրավունքները, ներառյալ իրենց կրոնական ազատությունը (տես Ալմա 46.11-13, 19-20):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 46.11–13, 19–20-ը և փնտրեք, թե ինչ արեց հրամանատար Մորոնիս, որպեսզի պաշտպանի ժողովրդին նրանց ազատությունների սպառնացող վտանգներից:

Ժողովուրդը համախմբվեց Մորոնիսի հետ և ուխտ կապեց՝ դեմ կանգնել իրենց ազատությունների սպառնալիքներին (տես Ալմա 46.21–22): Խոսելով մեր կրոնական ազատությանն աջակցելու մեր պարտականության մասին՝ Երեց Հեյլսն ուսուցանել է.



Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք պատասխանատվություն ենք կրում միասին գործել համախոհ հավատացյալների

հետ, որպեսզի բարձրացնենք մեր ձայնը հասուն այն բաների, որոնք ճիշտ են: . . .

Եղբայրներ՝ և քույրեր՝, մենք պարտավոր ենք պահպանել այդ սրբազան ազատությունն ու իրավունքները մեր և մեր սերունդների համար: Ի՞նչ կարող ենք անել ես և դուք:

Առաջինը՝ մենք կարող ենք տեղեկացված լինել: Տեղյակ եղեք ձեր համայնքի խնդիրներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ կրոնական ազատության վրա:

Երկրորդ՝ ձեր կարողության սահմաններում միացեք նրանց, ովքեր կիսում են կրոնական ազատության նկատմամբ մեր նվիրվածությունը: Աշխատեք կողք կողքի՝ կրոնական ազատությունը պաշտպանելու համար:

Երրորդ՝ ձեր ապրած կյանքով եղեք ձեր հավատքի վառ օրինակ՝ խոսքի և գործի մեջ: Թե ինչպես ենք մենք ապրում մեր կրոնով, շատ ավելի կարևոր է, քան այն, ինչ կարող ենք մենք ասել մեր կրոնի մասին:

Մեր Փրկիչի Երկրորդ Գալուստը մոտենում է: Եկեք չուշանանք այդ մեծ իրադարձությունից: Հրամանատար Մորոնիս բարձրացնում է ազատության դրոշը [տես Ալմա 46.12]: . . .

Եկեք հիշենք մարդկանց արձագանքը. օգտվելով իրենց կամքի ազատությունից՝ նրանք «եկան, վազելով միասին»՝ գործելու ուխտով [Ալմա 46.21]: («Պահպանել ազատ կամքը, պաշտպանել կրոնական ազատությունը», 112, 113)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք անել, որպեսզի խթանեք և պահպանեք կրոնական ազատությունն այնտեղ, որտեղ դուք եք ապրում:



Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելի շատ բան սովորել Մորմոնի Գրքի մասին:

Հետևյալ նյութերը ընդամենը մի քանի սուրբգրային օրինակներ են կրոնական ազատության կամ դրա բացակայության վերաբերյալ: Ուսումնասիրեք դրանք և գրի առեք ձեր ներըմբռնումներն ու տպավորությունները: Կարո՞ղ եք Մորմոնի Գրքից այլ օրինակներ հիշել:

Ամդիկին փորձում էր ազդել ժողովրդի վրա՝ զրկելով Եկեղեցու անդամներին իրենց կրոնական իրավունքներից (տես Ավմա 2.1-7):

Ամոնիայի ժողովրդից ոմանք փորձեցին լռեցնել Ավմային ու Ամուղեկին և Նրանց հետևորդներին (տես Ավմա 14.1-9):

Թագավոր Լամոնին և Նրա հայրը հաստատեցին կրոնական ազատություն իրենց երկրներում (տես Ավմա 21.19-23, 23.1-7):

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել այն մասին, թե ինչպես պահպանել և խթանել կրոնական ազատությունը:

Եկեղեցու Լրատվական կայքից կարող եք կարդալ «Կրոնական ազատություն» հոդվածը և դիտել մի քանի տեսաֆիլմեր կրոնական ազատությունը պահպանելու մասին (տես newsroom. ChurchofJesusChrist.org):

Կրոնական ազատության կարևորության մասին լավ ակնարկ ներկայացնող տեսանյութ է «Ի՞նչ է կրոնական ազատությունը» տեսաֆիլմը [4:03]:

«Everyday Example: Religion in the Workplace» (6:11) բեմադրված տեսաֆիլմը ցույց է տալիս մի եղանակ, որ կողմնորոշվենք մեր օրերի Նուրբ հասարակական խնդիրների մեջ, որոնք շրջապատում են կրոնական ազատությունը:



Իր մի ելույթում՝ «Religious Freedom—A Cherished Heritage to Defend», Տասներկու Առաքյալների Զվորումից երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ներկայացրեց գործնական գաղափարներ, թե ինչպես պաշտպանել կրոնական ազատությունը մեր համայնքներում ([address given at the Provo Freedom Festival Patriotic Service, June 26, 2016], speeches.byu.edu). Դուք կարող եք դիտել այդ ելույթի մի մասը հետևյալ տեսաֆիլմում կամ կարդալ այդ գաղափարները հետևյալ հոդվածում՝ «Բարձրացրեք, որտեղ կանգնած եք, 10 ուղի կրոնական ազատությունը պաշտպանելու համար»:

ԴԱՍ 20. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Կրոնական ազատության օրհնությունները

Կրոնական ազատությունը մարդկային հիմնարար իրավունք է: Մորմոնի Գիրքը պարունակում է բազմաթիվ օրինակներ՝ ինչպես կրոնական ազատության օրհնությունների, այնպես էլ կրոնական ազատության սահմանափակման հետևանքների մասին: Այս դասում ուսանողները հնարավորություն կունենան նշել կրոնական ազատության օրհնությունները և գնահատել, թե ինչ կարող են անել, որպեսզի օգնեն պաշտպանել և պահպանել այն մեր օրերում:

Ուսուցման առաջարկներ

Մոսիա թագավորը հաստատում է կառավարման մի ձև, որը պաշտպանում է կրոնական ազատությունը

Նշում. Կրոնական ազատության վիճակը լայնորեն տարբերվում է ամբողջ աշխարհում: Երբ քննարկում եք կրոնական ազատությունը, ուշադիր եղեք առանձնահատուկ հանգամանքների հանդեպ, որտեղ դուք եք ապրում: Խրախուսեք ուսանողներին հարգանքով խոսել կառավարությունների, այլ եկեղեցիների և բոլոր կրոնական ավանդույթների մասին:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստվելով այս դասին, նրանց հանձնարարվել էր զրույց ունենալ այլ հավատքի պատկանող մեկ կամ մի քանի մարդկանց հետ: Ուսանողներին խրախուսել էին հարցնել այդ մարդկանց, թե ինչու է նրանց կրոնը կարևոր իրենց համար, և արդյոք նրանք երբևէ ենթարկվել էին կրոնական հալածանքների: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են սովորել իրենց զրույցներից կամ այլ հավատքի պատկանող մարդկանց հետ անցյալ վորձառություններից:

Ուղղեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս կահմանեիք կրոնական ազատությունը: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին հրավիրեք վերանայել նախապատրաստական նյութի առաջաբանը և բաժին 1-ը :)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ բոլոր մարդիկ իրավունք ունենան արտահայտվել և գործել ըստ իրենց կրոնական հավատալիքների: (Օգտակար կլինի վերանայել Հավատո հանգանակի տասնմեկերորդ կետը և նախապատրաստական նյութի բաժին 1-ում Ձոզեֆ Սմիթի հայտարարությունը)
- Ինչպիսի՞ ազդեցություն կարող է կրել մեր կյանքը, եթե մենք ազատ չլինեինք արտահայտելու կամ գործելու՝ հիմնվելով մեր հիմնական համոզմունքների վրա, ներառյալ մեր կրոնական հայացքները: Որո՞նք են կրոնական ազատություններին սպառնալիքներ հանդիսացող որոշ օրինակները մեր օրերում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մոսիա թագավորը հաստատեց մի օրենք՝ պաշտպանելով իր թագավորության ժողովրդին, ովքեր հալածվում էին՝ իրենց համոզմունքների պատճառով: Կարող եք վերանայել Մոսիա 27.1–4-ը ուսանողների հետ և հարցնել.

- Ի՞նչ կարող եմ սովորել կրոնական ազատության մասին թագավոր Մոսիայի հռչակագրից:



Ցուցադրեք կից պատկերը և հրավիրեք ուսանողներին ամփոփել Կորինթոսի ուսուցանած գաղափարներից մի քանիսը (տես նախապատրաստական նյութի բաժին 1-ը): Հանձնարարեք ուսանողներին կրկնել Ավմա 30.7–9, 11-ը և փնտրել, թե ինչ են այդ հատվածներն ուսուցանում կրոնական ազատության մասին: Մտածեք, թե ձեր տված հետևյալ հարցերից որը կարող է լավագույնս օգնել ձեր ուսանողներին խորապես ուսումնասիրել.

- Այս հատվածներից ի՞նչ կարող ենք սովորել այն մասին, թե Երկնային Հայրը որքանո՞վ է արժևորում կրոնական ազատությունը: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Աստված կամենում է, որ Իր բոլոր զավակներն ունենան հավասար իրավունքներ և արտոնություններ, որպեսզի նրանք ազատ լինեն ծառայել կամ չծառայել Իրեն՝ առանց հարկադրանքի:**)
- Աստծո ծրագրում ինչո՞ւ է կարևոր, որ մեզ չստիպեն հավատալ կամ հետևել Իրեն:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը երբեք չեն ստիպի ձեզ հավատալ կամ հետևել Իրեն: Ի՞նչ է սա ուսուցանում ձեզ Նրանց բնավորության մասին:
- Ինչո՞վ է կրոնական ազատությունը օգտակար հասարակության բոլոր անդամների համար: Որքանով է այն օգտակար ձեզ համար:

Հրամանատար Մորոնին բարձրացնում է ազատության դրոշը և կոչ է անում ժողովրդին պահպանել ազատությունը

Խնդրեք մի քանի ուսանողի կիսվել օրինակներով, թե կրոնական ազատությունը ինչպես կարող է վտանգվել: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խորհուրդ տվեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 2-ը:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ Ավմա 46.4, 10-ը, և ապա բացատրեք, թե Ամադիկիան ինչպես սպառնաց Նեփիազիների ազատություններին, ներառյալ՝ նրանց կրոնական ազատությանը: Հարցրեք ուսանողներին, թե Հրամանատար

Մորոնին ինչպես արձագանքեց այդ սպառնալիքին: (Անհրաժեշտության դեպքում խնդրեք ուսանողներին վերանայել Ավմա 46.12–13, 19–20-ը) Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ավետարանական սկզբունքներ կարող ենք մենք սովորել կրոնական ազատության մասին Հրամանատար Մորոնիի և նրա ժողովրդի ջանքերից: (Օգնեք ուսանողներին գտնել մի սկզբունք, որը նման է հետևյալին. **Երբ մենք կանչում ենք առ Աստված և պատրաստվում գործելու, Նա կգորացնի մեզ, որպեսզի պաշտպանենք մեր ընտանիքները, կրոնը և ազատությունը:**)
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ Հրամանատար Մորոնին և նրա ազատության դրոշը ժողովրդի վրա: Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ Երկնային Հոր օգնությունը՝ կրոնական ազատությունը պաշտպանելու մեր ջանքերում:
- Հրամանատար Մորոնիի կրոնական ազատության պաշտպանությունը ինչո՞վ է նման այն բանին, թե Հիսուս Քրիստոսն ինչպես պաշտպանեց մեր ընտրության ազատությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես քաղաքակիրթ ձևով պաշտպանել կրոնական ազատությունը, կարող եք ցուցադրել Առաջին Նախագահությանից նախագահ Դալլին Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



Մենք պետք է սիրենք բոլոր մարդկանց, լինենք լավ լսողներ և մտահոգություն ցուցաբերենք նրանց անկեղծ համոզմունքների հանդեպ: Մենք պետք է իմաստուն լինենք մեր դիրքորոշումները բացատրելիս, դրանց հետևելիս և մեր ազդեցությունը գործադրելիս: Մենք պետք է փնտրենք անհավատների ըմբռնումը և աջակցությունը: Եվ մենք պետք է Նաև Ներգրավենք կառավարությունների և համապատասխան բազմազգ մարմինների պաշտոնական գործողությունները: Այս բոլորն անհրաժեշտ է այն մեծ բարիքը պահպանելու համար, որը կրոնական կազմակերպությունները և հավատացյալները կարող են իրականացնել՝ ի շահ ամբողջ մարդկության: (“Challenges to Religious Freedom” [address at the Argentina Council for Foreign

Relations (CARI), Apr. 23, 2015], newsroom. ChurchofJesusChrist.org)

Որպեսզի ուսանողներին օգնեք կիրառել կրոնական ազատության պաշտպանությունը, հրավիրեք նրանց աշխատել մի գործընկերոջ հետ և քննարկել, թե ինչպես կարձագանքեին հետևյալ իրավիճակին.

Աշխատավայրում դուք մի ընկեր ունեք, ով գտնում է մի գաղտնի տեղ՝ ընդմիջումների աղոթելու համար: Մի քանի գործընկերներ սկսում են ծաղրել այդ գործընթացը: Ի վերջո, մի գործընկեր ասում է. «Նա ուղղակի պետք է իր կրոնը պահի իր համար և չկիրառի այն աշխատավայրում»: Ապա նա շրջվում է դեպի ձեզ և ասում. «Դու ի՞նչ կարծիքի ես»:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան քննարկելու իրենց պատասխանը ծնողների հետ, հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե իրենք ինչպես արձագանքեցին իրավիճակին:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Խնդրեք մի քանի ուսանողների նպատակներ դնել: Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը դիտարկել է. «Ես խորապես համոզված եմ, որ եթե մենք չենք դնում նպատակներ մեր կյանքում և սովորում, թե ինչպես տիրապետել մեր նպատակներին հասնելու տեխնիկային, մենք կարող ենք հասնել հասուն ծերության, և հետ նայելով մեր կյանքին, տեսնել, որ հասել ենք մեր լիարժեք ներուժի մի փոքր մասին միայն» (“Do Things

That Make a Difference,” *Ensign*, June 1983, 69–70): Ուսանողներին հնարավորություններ ընձեռեք մտածելու և ստեղծելու հատուկ նպատակներ, որոնք կարող են օգնել նրանց կատարել արդյունավետ, արդար գործեր: Եթե նրանց նպատակները խիստ անձնական չեն կիսվելու համար, հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց նպատակներով ձեզ հետ և մտածեք, թե ինչպես կարող եք հետևել ուսանողներին՝ իրենց նպատակներն իրականացնելիս:

Ուսանողներին խնդրեք դնել մի հատուկ նպատակ այն մասին, թե ինչ կարող են անել՝ նախապատրաստվելով կրոնական ազատության սրբազան իրավունքը ավելի լավ պաշտպանելուն: (Օգտակար կլինի ցուցադրել և վերանայել Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:) Ուսանողներին հանձնարարեք կազմել գործողությունների մի հասարակ ծրագիր՝ իրենց նպատակն իրականացնելու համար: Դասն ավարտելիս բերեք ձեր վկայությունը կրոնական ազատության կարևորության մասին:

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին մտածել, թե հպարտությունն ինչու է այդքան տարածված թեմա Մորմոնի Գրքում: Նշեք, որ Նախագահ Էզրա թաֆտ Բենսոնը դիտարկել է. «Հպարտությունը մեղք է, որը հեշտ է տեսնել ուրիշների մեջ, բայց դժվարությամբ ենք նկատում մեր մեջ: («Զգուշացեք հպարտությունից», *Ensign*, May 1989, 5): Հրավիրեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունը Մորմոնի Գրքում հպարտության մասին ուսմունքների վերաբերյալ և այն մասին, թե հպարտությունն ինչպես կարող է ազդել նրանց կյանքի վրա:



ԴԱՍ 21. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հաղթահարել հպարտությունը

Մի հոգևոր վտանգ, որը շեշտվում է Մորմոնի Գրքում, հպարտության մեղքն է: Այդ հիշատակարանից մենք իմանում ենք, թե հպարտությունն ինչպես քայքայեց Լեքիի ընտանիքի ներդաշնակությունը, բաժանումներ առաջացրեց Տիրոջ Եկեղեցում, հանգեցրեց անթիվ պատերազմների, և ի վերջո, կործանեց Նեփիացիների քաղաքակրթությունը: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը նախազգուշացրել է. «Հպարտությունը մեղք է, որը հեշտ է տեսնել ուրիշների մեջ, բայց դժվարությամբ ենք նկատում մեր մեջ: (Ջգուշացեք հպարտությունից», *Ensign*, May 1989, 6): Դասին նախապատրաստվելիս փնտրեք, այն ուսմունքները, որոնք կօգնեն ձեզ բացահայտել հպարտության նշանները ձեր սեփական կյանքում: Մտածեք նաև, թե Հիսուս Քրիստոսի ուսմունքներն ու օրինակը ինչպես կարող են օգնել ձեզ հաղթահարել հպարտությունը:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ ճանաչել հպարտության վնասակար ազդեցությունները իմ կյանքի վրա

ուղղորդեց Հակոբին անդրադառնալ մարդկանց մեղքերին (տես Հակոբ 1.15–2.4, 11): Տաճարում Հակոբը հնազանդորեն խոսեց ժողովրդի հետ նրանց մեղքերի մասին, ներառյալ, թե ինչպես էին հարստությունները նրանց հեռացնում Տիրոջից:

Նեփիի մահից հետո Հակոբը անհանգստացած էր Նեփիացիների մեջ ամբարշտության աճից: Տերն



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մորմոն 8.35–37-ը և մտածեք, թե ինչպես է հպարտությունը հանգեցնում հավելյալ մեղքերի:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Հակոբ 2.12–16-ը կամ դիտեք Մորմոնի Գրքի «Հակոբն ուսուցանում է հպարտության մասին (Հակոբ 2.3–21)» տեսաֆիլմը (5.56), որը գտնվում է Church of Jesus Christ.org-ում: Ապա փնտրեք, թե հպարտությունն ինչպես ազդեց այն եղանակի վրա, որով Նեփիացիները տեսնում էին միմյանց:

Մորմոնի Գրքի վերջում Մորմոնը և Մորոնին ականատես եղան, թե հպարտությունից ապաշխարելու ճախողումը ինչպես հանգեցրեց Նեփիացիների լիակատար կործանմանը (տես Մորմոնի 8.27): Նրանց կործանմանը ականատես լինելուց հետո Մորմոնին մի տեսիլքում տեսավ, թե հպարտությունն ինչպես խնդիր կլինի նաև մեր օրերի մարդկանց համար:



1989 թվականին Նախագահ Բենսոնը մի նշանավոր ելույթ տվեց հպարտության վերաբերյալ: Երբ նրա ելույթից կարդաք այս հատվածը, նշեք կարևոր խոսքերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են հպարտության հիմնական իմաստը:



«Մեզանից շատերը հպարտություն են համարում եսամոլությունը, սնապարծությունը, պարծենկոտությունը, գոռոզությունը կամ մեծամտությունը: Այս բոլորը մեղքի տարրերն են, բայց նրա էությունը կամ միջուկը բացակայում է:

Հպարտության հիմնական բնորոշ հատկանիշը թշնամանքն է Աստծո և մեր ձայնի հանդեպ: *Թշնամանք* նշանակում է «ատելության, ռիսի կամ ընդդիմության վիճակ»: Դա այն ուժն է, որով սատանան ցանկանում է իշխել մեզ վրա:

Հպարտությունն իր հիմնական էությամբ մրցակցային է: Մենք դնում ենք մեր կամքը ընդդեմ Աստծո կամքի: . . .

Հպարտները չեն կարող ընդունել Աստծո հեղինակությունը՝ իրենց կյանքին ուղղություն տալիս: (Տես Հեղինակ 12.6) . . .

Հպարտները յուրաքանչյուր մարդու դարձնում են իրենց հակառակորդը՝ ցուցադրելով դիմացինին իրենց մտածելակերպը, կարծիքները, գործերը, հարստությունը, տաղանդները կամ աշխարհիկ որևէ այլ չափի միջոց: Կ.Ս. Լյուիսի խոսքերը հպարտության մասին. «Հպարտությունը չի բավարարվում պարզապես որևէ բան ունենալով, այլ բավարարվում է միայն մեկ ուրիշի համեմատ ավելին ունենալով: . . . Համեմատվելով՝ մնացածից բարձր լինելու հաճույքը. դա է, որ մեզ դարձնում է հպարտ: Հենց որ անցնում է մրցակցության տարրը, հպարտությունը նույնպես անցնում է»:(*Mere Christianity*, New York: Macmillan, 1952, pp. 109–10.) . . .

Վախը մարդկանց կարծիքից ինքնին ցույց է տալիս մրցակցություն մարդկանց հավանության համար: . . .

. . . Մեզանից շատերը կարծում են, որ հպարտությունը վերնում գտնվողների մեղք է, ինչպես օրինակ՝ հարուստների և ուսյալների, ովքեր վերևից են նայում մնացածների վրա: (Տես 2 Նեփի 9.42) Ինչևէ, մեզանում կա ավելի ընդհանուր հիվանդություն, և դա ներքևից դեպի վեր նայող հպարտությունն է: Այն դրսևորվում է բազմաթիվ տարբեր ձևերով, ինչպիսիք են՝ բծախնդրությունը, բամբասելը, վատաբանելը, դժգոհելը, ունեցած միջոցների սահմաններից դուրս ապրելը, նախանձը, ընչասիրությունը, երախտագիտություն և զովասանք հայտնելուց խուսափելը, որը կարող է վեհացնել դիմացինին և, չներող ու խանդոտ լինելը: («Զգուշացե՛ք հպարտությունից», 4, 5)



Գրի առեք ձեր մտքերը

Նշեք, որ Նախագահ Էդրա Թաֆտ Բենսոնը դիտարկել է. «Հպարտությունը մեղք է, որը հեշտ է տեսնել ուրիշների մեջ, բայց դժվարությամբ ենք նկատում մեր մեջ» (Զգուշացե՛ք հպարտությունից», *Ensign*, May 1989, 5): Ընտրեք այն հարցերը, որոնք ամենաշատն են կապված ձեր կյանքի հետ և գրի առեք ձեր պատասխանները ձեր օրագրում կամ հուշատետրում:

- Արդյո՞ք թշնամանքի (զայրույթի, չարության կամ ընդդիմության) զգացումներ ունեն իմ սրտում Աստծո կամ մեկ ուրիշ մարդու հանդեպ: Եթե այդպես է, ինչպե՞ս են այդ զգացումներն ազդում իմ սրտի կամ իմ հարաբերությունների վրա:
- Ե՞րբ եմ ես հիմնականում համեմատում ինձ ուրիշների հետ: Երբ ինձ համեմատում եմ ուրիշների հետ, ինչպես եմ ինձ զգում:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ հաղթահարել հպարտության մեղքը

Իր ժողովրդին հպարտության մեղքի մասին նախազգուշացնելուց հետո Հակոբը ուսուցանեց նրանց կարևոր ճշմարտություններ, թե ինչպես հաղթահարել այն:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Երբ կարդաք Հակոբ 2.17–21-ը, փնտրեք խորհուրդ, որը կարող է օգնել ձեզ հաղթահարել հպարտությունը:



Մորմոնի Գրքում Նեփիացիները շատ անգամներ դարձան հպարտ: Օրինակ Գադիանթոնի ավազակների դեմ երկարատև պատերազմ մղելուց հետո Նեփիացիները բարգավաճեցին և շուտով դարձան հպարտ, իրենց դասակարգելով ըստ իրենց հարստությունների և կրթության: Ոմանք սկսեցին հալածել նրանց, ովքեր ավելի անհաջողակ էին, քան իրենք: (Տես 3 Նեփի 6.4-12)



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Երբ կարդաք 3 Նեփի 6.12–14-ը, նշեք տարբերությունը այն մարդկանց միջև, ովքեր հպարտ էին, և ովքեր հպարտ չէին: Ի՞նչ հատկանիշներով էին միմյանցից տարբերվում երկու խմբի մարդիկ:

Նախագահ Բենսոնն ուսուցանել է հետևյալը այն մասին, թե ինչպես հաղթահարել հպարտությունը.



Հպարտության հակաթույնը համեստությունն է, հեգույնը, հնազանդությունը: (Տես Ավա 7.23) . . .

Եկեք ընտրենք խոնարհ լինելը:

Մենք կարող ենք ընտրել խոնարհեցնել ինքներս մեզ՝ պայքարելով մեր եղբայրների ու քույրերի հանդեպ ունեցած թշնամության դեմ, հարգելով նրանց այնպես, ինչպես ինքներս մեզ ենք հարգում, և բարձրացնելով նրանց այնտեղ, որտեղ մենք ենք կամ ավելի բարձր: (Տես Վարդապետություն և Ուխտեր 38.24:)

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ ստանալով խորհուրդ կամ նախատինք: (Տես Հակոբ 4.10:)

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ ներելով նրանց, ովքեր վիրավորել են մեզ: (Տես 3 Նեփի 13.11, 14, Վարդապետություն և Ուխտեր 64.10:)

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ մատուցելով ինքնամոռաց ծառայություն: (Տես Մոսիա 24.16-17:)

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ գնալով միսիա և քարոզելով այն խոսքը, որը կարող է հնազանդեցնել ուրիշներին: (Տես Ավա 4.19:)

Մենք կարող ենք ընտրել ինքներս մեզ խոնարհեցնել՝ ավելի հաճախ այցելելով տաճար:

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ խոստովանելով, թողնելով մեր մեղքերը և ծնվելով Աստծուց: [Տես Վարդապետություն և Ուխտեր 58.43:]

Մենք կարող ենք ընտրել հնազանդեցնել ինքներս մեզ՝ սիրելով Աստծուն, եթարկելով մեր կամքը Նրա կամքին և դնելով Նրան առաջին տեղում մեր կյանքում: [Տես 3 Նեփի 11.11:] (Զգուշացիր հպարտությունից, 6–7)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Խորհեք Փրկիչի կյանքի մասին: Ի՞նչ կարող եք սովորել Նրանից խոնարհության մասին: Պատրաստ եղե՞ք դասարանում կիսվել ձեր օրինակներով:

Ցանկանո՞ւմ եք ավելին:
(Ոչ պարտադիր)

**Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել
հպարտությունը հաղթահարելու
վերաբերյալ Մորմոնի Գրքի
ուսմունքների մասին:**

Ուսումնասիրեք 2 Նեփի 9.28–30, 28.11–17,
Հեղաման 3.33–35, 12.2–6-ը հպարտությունը

հաղթահարելու մասին լրացուցիչ գաղափարներ
ձեռք բերելու համար:

«The Pride Cycle» (14:53) տեսաֆիլմը ցույց է տալիս, թե Նեփի մարգարեն ինչպես արձագանքեց հպարտությանը, որը գոյություն ուներ Զարահեմլայի ժողովրդի մեջ՝ Փրկիչի ծնունդից մոտ 20 տարի առաջ:

**Քրիստոսի մաքուր սերն ինչպե՞ս կարող
է օգնել ինձ ավելի շատ խոնարհություն
զարգացնել:**

«Humility and Love» (3:40) տեսաֆիլմում Դիտեր Ֆ. Ուխտորֆը՝ այն ժամանակ Առաջին Նախագահությունից, քննարկում է, թե ինչպես գթություն ունենալը կօգնի մեզ խուսափել հպարտ դառնալուց:

**Ինչպե՞ս կարող եմ բարձրացնել
իմ ինքնավստահության զգացումը՝
առանց հպարտանալու:**



«Confidence and Self-Worth» (*Ensign*, Jan. 2005, 32–35) հոդվածում երեք Գլեն Լ. Փեյսը Յոթանասուկից քննարկել է ուղիներ, որոնցով մենք կարող ենք մեծացնել մեր վստահությունը և մեր ըմբռնումը մեր բնածին ինքնագնահատականի վերաբերյալ:

ԴԱՍ 21. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Հաղթահարել հպարտությունը

Հպարտության մեղքը գլխավոր թեմա է Մորմոնի Գրքում: Արդարության և բարգավաճման ժամանակներին հաճախ հաջորդում են հպարտության և ամբարշտության ժամանակներ: Այս դասը կօգնի ուսանողներին բացահայտել հպարտության նշաններն իրենց կյանքում: Ուսանողները կքննարկեն նաև, թե ինչպես կարող են հաղթահարել հպարտությունը և ավելի շատ նմանվել Փրկիչին:

Ուսուցման առաջարկներ

Հակոբն ու Մորոնին ուսուցանում են հպարտության մեղքի մասին

Դասի սկզբում ցուցադրեք Յոթանասունից Երեց Զ. Դեմն Քորնիլի հետևյալ խոսքերը. «Մենք պետք է դադարենք ուրիշների հետ համեմատվել» («Արդյո՞ք ես բավականաչափ լավն եմ Արդյո՞ք ես կհասնեմ սելեստիալ արքայության»: *Լիստոնա*, նոյեմբեր 2016, 33): Հարցրեք ուսանողներին, թե ինչո՞ւ է սա լավ խորհուրդ:

Կիսվեք հետևյալ սցենարով և հարցրեք ուսանողներին՝ արդյո՞ք իրենք կամ իրենց ծանոթը այսպիսի զգացում են ունեցել:

Զիլը չի սիրում հաճախել Սփոփող Միության ժողովներին: Երբ նա նայում է շուրջը, կարողանում է տեսնել միայն կանանց, ովքեր ավելի գեղեցիկ, հոգևոր և տաղանդավոր են թվում, քան ինքը: Նա բարկանում է նրանց վրա այդ հատկանիշներն ունենալու համար և սովորաբար հեռանում է Սփոփող միությունից՝ զգալով բարկություն և նախանձ:

Ցուցադրեք Դիտեր Ֆ. Ուլսդորֆի հետևյալ հայտարարությունը, ով խոսեց հպարտության մասին, երբ ծառայում էր որպես Առաջին Նախագահության անդամ. «Իր հիմքում հպարտությունը համեմատության մեղք է» («Հպարտությունը և քահանայությունը», *Լիստոնա*, նոյեմբեր 2010, 56): Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Հպարտությունը համեմատվելու մեղքն է:**

- Մեզ ուրիշների հետ համեմատելը ինչպե՞ս կարող է հանգեցնել հպարտության:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Համապատասխանեցրեք դասերը ուսանողների կարիքներին. Չնայած ուսումնական ծրագիրը տալիս է կարևոր ճշմարտություններ, սկզբնաղբյուրներ և օգտակար առաջնորդություն, սակայն այն չի կարող կանխատեսել ձեր ուսանողների բոլոր կարիքները: Երբ ուսուցանում եք, ուշադրությամբ լսեք ուսանողների մեկնաբանությունները, հարցերը և մտահոգությունները, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա օգնել ձեզ իմանալ, թե ինչի վրա կենտրոնանալ և ինչին առաջնահերթություն տալ քննարկման ժամանակ:

Հիշեցրեք ուսանողներին այն, ինչ սովորել են նախապատրաստական նյութի բաժին 1-ում, որ Հակոբը նախազգուշացրեց իր ժողովրդին իրենց հպարտության մասին, Մորմոնին կանխազգուշակեց հպարտություն վերջին օրերում, և Նախագահ Էզրա թափառ Բենսոնն անդրադարձավ հպարտությանը Տիրոջ վերականգնված Եկեղեցում: Հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի ընտրել այդ մարգարեներից մեկին և վերանայել նրա ուղերձը հպարտության մասին, փնտրելով ուղիներ, ըստ որոնց «հպարտությունը համեմատվելու մեղքն է»:

Հետո, երբ ուսանողները հատկացված ժամանակում հետազոտած կլինեն այս հատվածները, հրավիրեք նրանց կիսվել իրենց սովորածով: Մինչ ուսանողները կիսվում են իրենց գաղափարներով,

մտածեք, թե հետևյալ հարցերից որոնց վրա կենտրոնանալ և առաջնահերթություն տալ:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «բարձրամտացել եք ձեր սրտերի հպարտությունից»: (Հակոբ 2.13) Ինչպե՞ս եք իմանում, ե՞րբ եք բարձրամտացել ձեր սրտերի հպարտությունից:
- Ի՞նչ լրացուցիչ մեղքեր կարող են ի հայտ գալ մեր կյանքում, երբ մենք վերևից ենք նայում ուրիշներին՝ ինքնագոհությամբ, կամ վերև նայում ուրիշներին՝ բարկությամբ: Ելնելով ձեր փորձառությունից՝ ինչպես են այսպիսի համեմատությունները ազդում ձեր ընկերների, ընտանիքի անդամների, սենյակակցի, աշխատակցի և Երկնային Հոր հետ փոխհարաբերությունների վրա:
- Մոցիալական ցանցերը ի՞նչ եղանակներով կարող են խթանել համեմատություններ, որոնք կարող են հանգեցնել հպարտության մեղքին: Ի՞նչ եք արել դուք, որ դիմադրեք ուրիշների հետ ձեզ համեմատելու գայթակղությանը:

Նշում. Եթե ուսանողները մտահոգություն են արտահայտում սոցիալական ցանցերում հրապարակվող նյութերի վերաբերյալ, գուցե կիսվեք և քննարկեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Գարի Ի. Մթիվենտոնի հետևյալ խոսքերը.



Սոցիալական ցանցերում հրապարակված շատ նկարներ (գրեթե մեծամասամբ) միտված են կյանքը ներկայացնել լավագույն, հաճախ անիրական գույներով:

Սեփական միջակ թվացող ապրելակերպը համեմատելով սոցիալական ցանցերում ներկայացվող լավ մշակված, հիանալի ձևավորված ուրիշների կյանքի հետ, կարող ենք ունենալ հուսալքության, նախանձի և նույնիսկ ձախողումների զգացում:

Ինչպես քույր Բոննի Լ. Օսկարսոնը հիշեցրեց մեզ այս առաքյալ, հաջողությունը կյանքում կախված չէ նրանից, թե որքան շատ են հավանում մեր նկարները, ոչ էլ նրանից, թե որքան ընկերներ կամ հետևորդներ ունենք սոցիալական ցանցերում: Ինչևէ, հաջողությունը կապված է մարդկանց հետ իմաստալից շփման ու նրանց կյանքին լույս

ավելացնելու հետ:: («Հոգևոր խավարում», *Լիաիոնա*, նոյեմբեր 2017, 46)

Խնդրեք ուսանողներին գտնել նախապատրաստական նյութի բաժին 1-ի վերջում գտնվող հարցերը: Հրավիրեք նրանց վերանայել պատասխանները, որոնք գրի են առել իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ և ավելացնել հավելյալ մտքեր կամ զգացումներ, որոնք ունեցել են՝ իրենց պատասխանները գրի առնելիս:

Նեփիացիները հաղթահարում են հպարտությունը համեստության միջոցով

Խնդրեք ուսանողներին բացատրել հակաթույնի նպատակը: (Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ հակաթույնը դեղ է, որն օգտագործվում է որոշակի թույնի հակազդելու համար:) Ցուցադրեք Նախագահ Բենսոնի հետևյալ հայտարարությունը. «Հպարտության հակաթույնը համեստությունն է, հեզությունը, հնազանդությունը: (Տեա Ամա 7.23:)» («Զգուշացեք հպարտությունից», *Ensign*, May 1989, 6): Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Խոնարհությունը հպարտության հակաթույնն է:**

- Ինչպե՞ս կարող է հպարտությունը թույն լինել:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է նախագահ Բենսոնը նկարագրում խոնարհությունը՝ որպես հպարտության հակաթույն:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հակոբ 2.17–21-ում Հակոբն ասաց իր ժողովրդին, թե ինչպես դիմակայել հպարտության գայթակղությանը, երբ իրենց հարստությունները շատանում էին: Ուսանողներին հիշեցրեք նաև, որ իրենց դասի նախապատրաստական մասից նրանք սովորեցին, որ 3 Նեփի 6.12–14-ը նկարագրում է խոնարհ մարդկանց, ովքեր հրաժարվեցին հպարտությամբ գործել: Հրավիրեք ուսանողներին վերանայել այս հատվածներից մեկը, փնտրելով, թե ինչ կարող ենք անել հպարտությունը հաղթահարելու համար:

- Համաձայն այդ հատվածների, ի՞նչ պետք է անենք՝ հպարտությունը հաղթահարելու համար: (Կարող եք ուսանողների պատասխանները գրել գրատախտակին: Որոշ

հնարավոր պատասխաններ կարող են ներառել հետևյալը. եղեք առատաձեռն նրանով, ինչ ունեք, առաջինը ձգտեք Աստծո արքայությանը, հույս ձեռք բերեք Քրիստոսում, հոգ տարեք աղքատների մասին, զնահատեք բոլորին, մի վիճաբանեք մյուսների հետ, եղեք խոնարհ և ապաշխարող՝ Աստծո առջև, և պահեք պատվիրանները:)

- Ինչպե՞ս են այս վերաբերմունքն ու գործողությունները խոնարհություն ցույց տալիս:
- Ի՞նչ էք սովորել խոնարհության մասին Փրկիչի կյանքից: Ինչպե՞ս կարող ենք կիրառել Նրա խոնարհության օրինակը մեր կյանքում:

Ուսանողներին հատկացրեք մի քանի րոպե՝ վերանայելու Նախագահ Բենսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում: Խրախուսեք ուսանողներին բացահայտել մի հատուկ եղանակ, որով նրանք կարող

են ավելի շատ խոնարհություն սերմանել իրենց կյանքում, և որոշել, թե ինչպես են անելու այդ:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ Տիրոջ օգնությամբ մենք կարող ենք անընդհատ բացահայտել և հաղթահարել հպարտությունը և ավելի շատ նմանվել Փրկիչին:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին՝ արդյո՞ք նրանք կարդացել են կամ լսել բաներ, որոնք կասկած են հարուցել կամ վիճարկել են Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Նրա ապրող մարգարեներին: Երբ ուսանողներն ուսումնասիրեն նախապատրաստական նյութը հաջորդ դասի համար, խրախուսեք նրանց փնտրել ուսմունքներ, որոնք կարող են օգնել նրանց պաշտպանվել նրանցից, ովքեր ձգտում են կործանել իրենց հավատքը:



ՀԱՍ 22. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Քվենթին Լ. Քուքը դիտարկել է. «Մենք ապրում ենք դժվարին ժամանակներում: Աճող միտում կա «չարը բարի կոչել և բարին չար» [2 Նեփի 15.20, տես նաև Եսայիա 5.20]» («Կարգին և Բրիստոլի ձևով. Լինել տաճարին արժանավոր՝ լավ և վատ ժամանակներում», *Հիստորիա*, նոյեմբեր 2015, 40): Մեծ կանխատեսությամբ և սիրով Տերը տվեց Մորմոնի Գիրքը, որն օգնում է բացահայտել կեղծ ուսմունքները և գաղափարները, որոնք գերակշռում են մեր օրերում: Երբ ուսումնասիրեք այս նյութը, փնտրեք սկզբունքներ Մորմոնի Գրքից, որոնք կօգնեն ձեզ ճանաչել խաբեությունը և կանգնել հանուն ճշմարտության:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գիրքը պաշտպանել ինձ այսօրվա աշխարհի կեղծ ուսմունքներից

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը և Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել են հետևյալը կեղծ ուսմունքներից մեզ պաշտպանելու Մորմոնի Գրքի գործողության մասին:



Մորմոնի Գիրքը մերկացնում է Քրիստոսի թշնամիներին: Այն բացահայտում է կեղծ վարդապետությունները: . . . Այն ամրացնում է Քրիստոսի խոնարհ հետևորդներին դևի չար ծրագրերի, ռազմավարության և վարդապետությունների դեմ մեր օրերում: (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* [2014], 132)



Մորմոնի Գիրքը պարզաբանում է Տիրոջ ուսմունքները և բացահայտում է հակառակորդի մարտավարությունը [տես 2 Նեփի 26–33]: Մորմոնի Գիրքն ուսուցանում է ճշմարիտ վարդապետություն՝ ցրելով կեղծ կրոնական ավանդույթները: («Մորմոնի Գիրքը.

ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա»
Լիաժոնա, նոյեմբեր 2017, 62)

Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ
 Նեփին գրել է մի նշանավոր մարգարեություն,
 որը հանդիսանում է Հիսուս Քրիստոսի ավետա-
 րանի Վերականգնման հիմնական մասը (տես
 2 Նեփի 27.6–23): Այն ժամանակ Նեփին մարգա-
 րեացավ կեղծ ուսուցիչների, հիմար վարդապե-
 տությունների և դևի մարտավարության մասին,
 որոնք կշեղեն մարդկանց (տես 2 Նեփի 28):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 2 Նեփի 28.7–9, 20–22, 29–30-ը, և
 նշեք կեղծ ուսմունքները, որոնց մենք կբախվենք
 վերջին օրերում:



Խորհեք դասին նախապատրաստվելիս

Մորմոնի Գրքի ամենօրյա ուսումնասիրությունը
 մեր կյանք է հրավիրում Սուրբ Հոգուն: Սուրբ
 Հոգին մեծագույն օգնությունն է ճշմարիտը
 սխալից գանազանելու հարցում: Երբ եք տեսել
 կեղծ ուսմունքների օրինակներ, որոնց մասին
 Նեփին զգուշացրել է, որ կհանդիպենք վերջին
 օրերում: Դուք ինչպե՞ս ճանաչեցիք դրանք: Ի՞նչ
 քայլեր եք ձեռնարկել, որպեսզի պաշտպանվեք
 այդ կեղծ ուսմունքներից:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ
 պատրաստվել պայքարել
 նրանց դեմ, ովքեր կձգտեն
 կործանել իմ հավատքը Հիսուս
 Քրիստոսի հանդեպ

Մորմոնի Գիրքը նախազգուշացնում է հակաք-
 ռիստոսների մասին: Հակաքրիստոսը նա է,
 «ով բացահայտորեն կամ ծածուկ ընդդիմանում
 է Քրիստոսին, [և Նրա ընտրյալ ծառաների
 իշխանությանն ու ուսմունքներին]» (Սուրբ
 Գրքերի Ուղեցույց, «Հակաքրիստոս », scriptures.
 ChurchofJesusChrist.org): Հակաքրիստոսների
 մասին Նախագահ Նելսոնն ասել է.



Հիշո՞ւմ եք Կորինթոսի՝ հակաքրիստոսին:
 Կորինթոսը տեղից տեղ էր գնում և շատ կեղ-
 ծիքներ էր տարածում Փրկիչի մասին, մինչև
 նրան բերեցին քահանայապետի մոտ, ով
 հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես դու շրջում ամե-
 նուր՝ խեղաթյուրելով Տիրոջ ուղիները: Ինչո՞ւ
 ես դու սովորեցնում այս ժողովրդին, որ ոչ
 մի Քրիստոս չի լինելու՝ նրանց ցնծությունը
 խանգարելու համար:» [Ավմա 30.22]:

Ցանկացած բան, որն ընդդիմանում է Քրիս-
 տոսին կամ Նրա վարդապետությանը, կխան-
 գարի մեր ուրախությանը: Այն ներառում է
 մարդկանց փիլիսոփայությունները, որոնցով
 լի են համացանցը և բլոգոլորտները, որոնք
 անում են ճիշտ նույն բանը, ինչ Կորինթոս
 էր անում: («Ուրախություն և հոգևոր գոյա-
 տևում», *Լիաժոնա*, նոյեմբեր 2016, 83–84)



Գրի առեք ձեր մտքերը

Դասին նախապատրաստվելու համար ուսում-
 նասիրեք հետևյալ պատմություններից մեկը.
 (1) Սերեմ և Հակոբ, (2) Նեոր և Գեդեոն, կամ
 (3) Կորինթոս և Ավմա: (Նշում. Սուրբ գրությունների
 հղումները այս հատվածների համար տրված
 են հետևյալ բաժիններում:) Յուրաքանչյուր

պատմություն ընդգրկում է մի պատմվածք որևէ հակաքրիստոսի մասին, ով հակադրվեց Տիրոջը և Նրա Եկեղեցուն, ինչպես նաև պատմություն ինչ-որ մեկի մասին, ով արձագանքեց Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Ուսումնասիրելիս գրեք հետևյալ հարցերի պատասխանները ձեր օրագրում: Դասի եկեք պատրաստ՝ ձեր սովորածով կիսվելու համար:

Այլ հարցեր

1. Ի՞նչ մարտավարություն էր օգտագործում այդ հակաքրիստոսը, որպեսզի կործաներ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ մարդկանց հավատքը:
2. Ի՞նչ ժամանակակից օրինակներ կան կեղծ գաղափարների ուսուցման կամ մոտեցումների առումով, որոնք օգտագործվեցին հակաքրիստոսի կողմից այս պատմության մեջ: Ինչպե՞ս է ստանալ տարածում այդ գաղափարները մեր օրերում:
3. Ի՞նչ սկզբունքներ կամ գործառնություններ սովորեցիք հավատարիմ մարդու օրինակից, ով դիմակայեց կեղծ ուղերձներին: (Թվարկեք առնվազն երեքը:) Ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկն այսօր օգտագործել այդ սկզբունքներն ու գործառնությունները՝ պատասխանելու կեղծ վարդապետություններին և մեղադրանքներին:

Օգտագործեք ստորև նշված նյութերը, երբ ուսումնասիրեք ձեր ընտրած պատմությունը:

Մերեմն ու Հակոբը



Կարդացեք Հակոբ 7.1–14-ը կամ դիտեք Մորմոնի Գիրքի «Sherem Denies Christ (Jacob 7)» տեսաֆիլմը, մինչև ժամային կոդ 4:20-ը, և պատասխանեք ուսումնասիրության նախորդ հարցերին:

Հակոբի հոգևոր հիմքը ուժի աղբյուր էր Մերեմի պնդումները հաղթահարելու համար (տես Հակոբ 7.5): Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Ռոնալդ Ա. Ռասբանդի հետևյալ ուղերձը և մտածեք, թե ինչպես կարող էք հետևել Հակոբի օրինակին:




Երբ ես խորհուրդ եմ տվել մարդկանց, [ում հավատքը մաքառումների մեջ է], ես ուսումնասիրել եմ նրանց կատարած ընտրությունները վերջին տարիների ընթացքում, որոնք ստիպել են նրանց մոռանալ սուրբ փորձառությունները, թուլանալ և կասկածել: Ես խրախուսել եմ նրանց, ինչպես խրախուսում եմ ձեզ հիմա, վերհիշել՝ հատկապես դժվարության պահերին, երբ դուք զգացել եք Հոգին և ձեր վկայությունը ուժեղ էր. հիշեք հոգևոր հիմքերը, որոնք դուք կառուցել եք: Ես խոստանում եմ, որ եթե դուք սա անեք՝ խուսափեք այն բաներից, որոնք չեն կառուցում և ամրապնդում ձեր վկայությունը կամ ծաղրում են ձեր համոզմունքները, այն թանկագին ժամանակները, երբ ձեր վկայությունը բարգավաճում էր, կրկին կվերադառնան ձեր հիշողություն՝ խոնարհ աղոթքի և ծոմի միջոցով: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ դուք կրկին կզգաք Հիսուս Քրիստոսի ավետարանի ապահովությունը և ջերմությունը:

(«Զգույշ կաց, միգուցե մոռանաս», *Լիահոնա*,
Նոյեմբեր 2016, 114)

Գրի առեք ձեր օրագրում առնվազն մեկ հոգևոր
փորձառություն, որը կգա ձեր միտքը մի պահի
վերաբերյալ, երբ վիճարկվում է ձեր հավատքն առ
Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը:

Ներքը և Գեղենը



Ուսումնասիրեք Ալմա 1.2-16 և պատասխանեք
նախորդ ուսումնասիրության հարցերին: Օգտա-
կար կլինի նշել, որ Նեփին ուսուցանել է, որ
«քահանանենություն է այն, երբ տղամարդիկ
[կամ կանայք] քարոզում են և իրենք իրենց բարձր
են դնում՝ իբրև մի լույս աշխարհի համար, որ
կարողանան շահ և գովասանք ստանալ աշխար-
հից, սակայն նրանք չեն փնտրում Միոնի բարո-
ությունը» (2 Նեփի 26.29):

Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ներքի կեղծ ուսմունքները
հանրաճանաչ դարձան որոշ մարդկանց շրջա-
նում: Կարդացեք հակառակորդի ռազմավարու-
թյան վերաբերյալ Առաջին Նախագահությունից
նախագահ Դավիթ Զ. Օուքսի հետևյալ նկարագ-
րությունը և մտածեք, թե ինչպես է այն վերաբե-
րում Ներքի ուսմունքներին, որոնք տրված են
Ալմա 1.4-ում:



Սատանան մեծ խաբեբան է, ստերի հայրը
(տես Հովհաննես 8.44): Դա այն պատճառով
է, որ սատանան միայն ստեր է ասում: Նրա
ամենարդյունավետ ստերը կիսաճշմարտու-
թյուններ են կամ ստեր, որոնք ուղեկցվում
են ճշմարտությամբ: («Կարդալ Եկեղեցու
պատմությունը» [address to Church Educational
System religious educators, Aug. 16, 1985], 9)

Ձեր օրագրում գրի առեք մի պատասխան
հետևյալ հարցին. Ինչպե՞ս կարող եմ ավելի մեծ
քաջություն զարգացնել՝ ընտրելու այն, ինչ ճիշտ
է, քան այն, ինչ հանրաճանաչ է, բայց՝ սխալ:

Կորիհորը և Ալման



Կարդացեք Ալմա 30.12–18, 23, 27–28, 32–33,
39–46-ը կամ դիտեք Մորմոնի Գրքի տեսաֆիլմը
«All Things Denote There Is a God (Alma 30)» մինչև
ժամային կող 7:45, և պատասխանեք ուսումնասի-
րության նախորդ հարցերին:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց
Մ. Ռասսել Բալլարդը հետևյալ խորհուրդն է տվել
Եկեղեցու անդամներին.



«Եկեք զգույշ լինենք կեղծ մարգարեներից
և կեղծ ուսուցիչներից՝ տղամարդ, թե կին,
ովքեր ինքնակոչ հայտարարում են Եկե-
ղեցու վարդապետությունների մասին և
ձգտում տարածել իրենց կեղծ ավետարանն
ու գրավել հետևորդներ, հովանավորելով
քննարկումներ, գրքեր և ամսագրեր, որոնց
բովանդակությունը կասկածի տակ է դնում
Եկեղեցու հիմնական վարդապետությու-
նները: Զգուշացեք նրանցից, ովքեր խոսում և
հրատարակում են ընդդեմ Աստծո ճշմարիտ

մարգարեների, ովքեր ակտիվորեն քարոզում են մյուսներին՝ անհոգությամբ անտեսելով նրանց բարոյությունը, ում խաբեության մեջ են գցում: ("Beware of False Prophets and False Teachers," *Ensign*, Nov. 1999, 63)

Վկայություն բերելով ճշմարտության մասին, Ալման մի քանի ապացույցներ տվեց Կորինթոսյան Աստծո գոյության վերաբերյալ: Չեր օրագրում գրի առեք ապացույցները, որոնք, ըստ ձեզ, «մատնանշում են, որ կա Աստված» (Ալմա 30.44): Ի՞նչ ուղիներով կարող են այդ ապացույցներն ուժեղացնել ձեր հավատքը և վկայությունն առ Աստված:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող եմ մեծացնել բարու և չարի միջև զանազանելու իմ կարողությունը:

Կարդացեք Մորոնի 7.12–19-ը՝ սովորելով, թե ինչպես է Քրիստոսի Լույսը հնարավորություն տալիս մարդկանց տարբերել բարին չարից: «Patterns of Light: The Light of Christ» (2:33) տեսաֆիլմում Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Դեյվիդ Ա.

Բեդնարը նույնպես ուսուցանում է մեզ Քրիստոսի Լույսի մասին:

Ի՞նչ տարբերություն կա շոգու վկայության և նշանների վկայության միջև:



Սերեմն ու Կորինթոսյան նշան պահանջեցին, որ համոզվեն ճշմարտության վերաբերյալ (տես Հակոբ 7.13–14, Ալմա 30.43–48):

Նախագահ Օուքսը «Հրաշքներ» հոդվածում ուսուցանել է, որ մենք պետք է հիմնվենք ավելի շուտ Սուրբ շոգու վկայության վրա, քան նշանների և հրաշքների վրա՝ ավետարանի վերաբերյալ մեր վկայությունը կառուցելու համար (տես բաժին «Ինչո՞ւ այլևս չենք լսում հրաշքների մասին» in *Ensign*, June 2001, 9–10):

Ինչո՞վ են են Կորինթոսի փիլիսոփայությունները նման նրանց, ովքեր աշխարհից են այսօր:



Երեք Ջերալդ Ն. Լանդը, ով ծառայել է որպես Յոթանասունի անդամ, իր հոդվածում ուսուցանել է որոշ փիլիսոփայական տեսակետների մասին, որոնք ընկած են

Կորինթոսի ուսմունքների հիմքում «Countering Kori-hor's Philosophy» (*Ensign*, July 1992, 16–21):

ԴԱՍ 22. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է, որ «Մորմոնի Գիրքը մերկացնում է Քրիստոսի թշնամիներին [և] բացահայտում է կեղծ վարդապետությունները» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* [2014], 132): Այս դասում ուսանողները կբացահայտեն հակառակորդի մարտավարությունը, որը նա օգտագործում է՝ կործանելու հավատքն առ Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը: Ուսանողները նաև կորոշեն, թե ինչպես կարող են ձեռք բերել Փրկիչի օգնությունը՝ այդպիսի մարտավարությունների դեմ իրենց ամրապնդելու համար:

Ուսուցման առաջարկներ

Նեփին մարգարեանում է վերջին օրերի կեղծ ուսմունքների մասին:

Խնդրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ իրենք (կամ իրենց ծանոթը) ենթարկվել են գաղափարների կամ ուսմունքների ազդեցությանը, որը վտանգում էր կամ մարտահրավեր նետում իրենց հավատքին առ Հիսուս Քրիստոս և Նրա վերականգնված ավետարանը: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողի հակիրճ կիսվել իրենց փորձառություններով:

- Ձեր կարծիքով, Մորմոնի Գիրքը ինչպես կարող է պաշտպանել մեզ գաղափարներից և ուսմունքներից, որոնք կարող են վտանգել մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը: (Վերանայեք նախագահ Բենսոնի և Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Գրեք *Կեղծ ուսմունքներ* արտահայտությունը գրատախտակին: Հրավիրեք ուսանողներին վերանայել 2 Նեփի 28.7–9, 20–22, 29–30-ը և փնտրեք ուսմունքներ, որոնք կսազեն այդ վերնագրին: Ապա ուսանողների պատասխանները գրեք գրատախտակի վերնագրի տակ՝ հետևյալ ձևով.

- Որո՞նք են այդ ուսմունքների մի քանի օրինակները, որոնք դուք ճանաչել եք մեր օրերում:

Ի՞նչ եղանակներով են այդ ուսմունքները ձգտում վտանգել հավատքն առ Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը:

- Ի՞նչ եք արել, որպեսզի պաշտպանվեք այդ կեղծ գաղափարներից:

Սերեմը, Նեորը և Կորիհորը ձգտում էին կործանել հավատքն առ Հիսուս Քրիստոս

Նշեք, որ Մորմոնի Գրքում կային երեք հակաքրիստոսներ՝ Սերեմը, Նեորը և Կորիհորը, ովքեր ուսուցանում էին կեղծ վարդապետություններ: Յուրաքանչյուրը փորձում էր կործանել նրանց հավատքը, ովքեր հավատում էին Հիսուս Քրիստոսին:

Ուսանողներին հատկացրեք մի քանի րոպե՝ վերանայելու այն պատմությունը, որի վրա իրենք կենտրոնացել են նախապատրաստական նյութի բաժին 2-ում: Հրավիրեք այն ուսանողներին, ովքեր գուցե չեն ուսումնասիրել այդ պատմություններից մեկը, որպեսզի նրանք անեն այդ այս ընթացքում:

Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին կազմել փոքր խմբեր նրանց հետ, ովքեր ուսումնասիրել են նույն պատմությունը: Հանձնարարեք ուսանողներին յուրաքանչյուր խմբից ղեկավար ընտրել: Յուրաքանչյուր խմբի ղեկավարի տվեք «Մերկացնել սատանայի մարտավարությունը» օժանդակ նյութի մի օրինակ:

Մերկացնել սատանայի մարտավարությունը

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի խոյթ. Դաս 22

Հիշեցում քննարկումը վարողին. Ուղղորդեք ձեր խմբին քննարկել հետևյալ հարցերը. Հրավիրեք խմբի անդամներին օգտվել նախապատրաստական նյութի բաժին 2-ի սուրբ գրություններից և Եկեղեցու ղեկավարների հայտարարություններից: Խրախուսեք ձեր խմբի բոլոր անդամներին մասնակցել: Այնուամենայնիվ, ոչ ոք չպետք է պարտադրված զգա կիսվել իր մտքերով:

1. Ի՞նչ մարտավարություն էր օգտագործում այդ հակաքրիստոսը, որպեսզի կործաներ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ մարդկանց հավատքը:
2. Ի՞նչ ժամանակակից օրինակներ կան կեղծ գաղափարների ուսուցման կամ մոտեցումների առումով, որոնք օգտագործվեցին հակաքրիստոսի կողմից այս պատմության մեջ: Ի՞նչպե՞ս է սատանան տարածում այդ գաղափարները մեր օրերում:

Պատրաստ եղեք կիսվել մեկ մարտավարությամբ և այդ մարտավարության վերաբերյալ մի ժամանակակից օրինակով:

Երբ ուսանողները քննարկեն օժանդակ նյութի հարցերը, հրավիրեք յուրաքանչյուր խմբի ղեկավարի գրատախտակին գրել սատանայի մարտավարություններից մեկը կամ մի քանիսը, որոնք նրանց խմբերը բացահայտեցին կամ քննարկեցին: Խրախուսեք յուրաքանչյուր խմբի ղեկավարի համառոտ կիսվել ժամանակակից օրերի այդ մարտավարություններից մեկի օրինակով: Նրանք կարող են գրել նմանատիպ մի քանի ճշմարտություններ.

Սատանան օգտագործում է շողորթությունը և խոսքի ուժը, որպեսզի մարդկանց հեռու պահի Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելուց և Նրա մարգարեներին հետևելուց (տես Հակոբ 7.4): (Օգտակար կլինի նշել, որ հաճախ նրանք, ովքեր

հարձակվում են մեր հավատքի վրա, այդ անում են կիսատ ճշմարտություններով, տագնապալի ոճով, անհավասարակշիռ փաստարկներով, թյուր նախադրյալներով և համատեքստից հանված փաստերով: Այդ փաստարկները հաճախ զարմացնում են լսողներին և հնչում են լիովին տրամաբանական, բայց հաշվարկված են, որպեսզի կասկած առաջացնեն: [Տես Դալլին Հ, Օուքս, «Կարդալ Եկեղեցու պատմությունը» (address to Church Educational System religious educators, Aug. 16, 1985), 1–27.]

Մարդկանց խաբելու համար սատանան օգտագործում է ճշմարտության հետ խառնված ստեր (տես Ալմա 1.4, տես նաև Հակոբ 7.7):

Մեզ հրապուրելու համար սատանան օգտագործում է կեղծ վարդապետություններ՝ արհամարհելով Աստծուն և արդարացնելով մեղսագործությունը (տես Ալմա 1.4, 30.17–18):

Սատանան ձգտում է հեռացնել մարդկանց առ Հիսուս Քրիստոս հավատքից՝ ծաղրելով նրանց բանականությունը կամ նրանց համոզմունքները (տես Ալմա 30.13–16, 27–28):

Նշում. Եթե ուսանողները կիսվում են ժամանակակից օրերի օրինակներով, դա կարող է առաջացնել թյուրմեմբումներ կամ հակառակություն, հետևեք Հոգուն՝ պարզաբանելով ոչ ճիշտ դրույթները և հետ բերելով քննարկումը դեպի այն ճշմարտությունները, որոնք ուսուցանվում են այս դասում:

Խմբերի ղեկավարների ներկայացումից հետո հարցրեք.

- Ի՞նչն ամենից շատ տպավորեց ձեզ այն քայլերի մեջ, որոնցով Հակոբը, Գեդեոնը և Ալման արձագանքեցին հակաքրիստոսների խոսքերին և գործողություններին:

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը. **Մենք կարող ենք հաղթահարել մեր հավատքի մարտահրավերները առ Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը. . .**

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Բացահայտել և հասկանալ սկզբունքներն ու վարդապետությունը: Թույլ տվեք ուսանողներին բացահայտել ճշմարտությունները սուրբ գրքերից և մարգարեների խոսքերից: Հրավիրեք նրանց բացատրել, թե ինչու են հատկապես այդ արտահայտությունները նշանակալից իրենց համար: Ուսանողներին խնդրեք նաև մտածել, թե սկզբունքներն ու վարդապետությունն ինչ են ուսուցանում իրենց Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Այդ անելը կօգնի նրանց հասկանալ ճշմարտությունների կարևորությունը և ոգեշնչված զգալ՝ դրանք կիրառելու համար:

Հրավիրեք ուսանողներին ավարտել այս դրույթը, որն իրենք սովորել են Հակոբի, Գեղեոնի և Ալմայի խոսքերից ու գործողություններից: Ուսանողները կարող են լրացնել այս դրույթը մի քանի եղանակներով.

... **հիշելով անցած փորձառությունները, որոնք զորացրել են մեր հավատքը Նրա հանդեպ** (տես Հակոբ 7.5):

... **ապավինելով Սուրբ Հոգու առաջնորդությանը** (տես Հակոբ 7.8):

... **ապավինելով մարգարեների խոսքերին և կիսվելով մեր վկայություններով Հիսուս Քրիստոսի և նրա ավետարանի մասին** (տես Հակոբ 7.9–12, Ալմա 1.7, 30.39–44):

... **վստահելով Աստծուն և թողնելով արդյունքը Նրա ձեռքերում** (տես Հակոբ 7.13–14):

Խնդրեք նրանց մտածել, թե գրատախտակին լրացված դրույթներից որոնք են իրենք անձնապես զգացել: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե իրենք ինչ են իմացել և զգացել իրենց ընտրած դրույթների վերաբերյալ:

Որպեսզի խրախուսեք ուսանողներին արդար գործողություն կատարել, ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին մտածել հարցերի խմբի վերաբերյալ, որոնք իրենք

ամենահամապատասխան են համարում իրենց իրավիճակին: Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին գրի առնել իրենց մտքերն ու զգացումները:

- Կա՞ արդյոք մի անհատ, բլոգ կամ կայքէջ, որին հետևելը վտանգում է իմ հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ: Հաշվի առնելով այն, ինչ սովորեցի և զգացի այսօր, ի՞նչ պետք է անեմ, որպեսզի ավելի լավ պահպանեմ իմ հավատքը նրանցից, ովքեր ձգտում են վտանգել այն:
- Ո՞ւմ գիտեմ, ով մաքառում է իր հավատքի հետ այն ուղերձների և մարդկանց ազդեցության պատճառով, ովքեր հակադրվում են Հիսուս Քրիստոսին և Նրա ավետարանին: Հաշվի առնելով այն, ինչ սովորեցի և զգացի այսօր, ինչ կարող եմ ասել կամ անել, որպեսզի օգնեմ այդ մարդուն ամրապնդել իր հավատքը:
- Մորոմնի Գրքի ավելի հավատարիմ ուսումնասիրության միջոցով ինչպե՞ս կարող եմ մեծացնել իմ ուժը, որպեսզի դիմադրեմ այն մարդկանց կամ ուղերձներին, որոնք ձգտում են վտանգել իմ հավատքը: Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի բարելավեմ իմ ներկա մոտեցումը Մորոմնի Գրքի ուսումնասիրության վերաբերյալ:
- Ի՞նչ հատուկ եղանակներով կարող եմ հրավիրել Փրկիչին օգնել ինձ՝ կառուցել կամ ամրապնդել իմ հավատքը Իր և Իր ավետարանի հանդեպ:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես կարող են այդ սկզբունքները կիրառել իրենց կյանքում: Ապա ցույց տվեք Փրկիչը Գեթսեմանիում նկարը և հրավիրեք նրանց ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը, որպեսզի Հիսուս Քրիստոսից սովորեն՝ ինչպես վստահել և հնազանդվել Երկնային Հորից եկող ուղղորդումներին:

ԽԱՍ 7

Դրեք ձեր վատահուրթյունը Աստծո վրա



ԴԱՍ 23. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հնազանդություն Աստծո պատվիրաններին

Այս բաժնում դուք հնարավորություն կունենաք մտածել, թե ինչպես կարող եք մեծացնել ձեր վստահությունն Աստծո հանդեպ: Աստծուն վստահելու կարևոր տարր է՝ սովորել հոժարակամ հնազանդվել Նրա պատվիրաններին: Ի՞նչ կարևորություն եք տալիս Աստծո պատվիրաններին հետևելուն: Կա՞ արդյոք որևէ պատվիրան, որը դուք հատկապես դժվար եք համարում պահել: Երբ կարդաք Մորմոնի գիրքը դասին նախապատրաստվելիս, խորհեք Աստծո պատվիրանների նպատակի և այն օրհնությունների մասին, որոնք դուք կարող եք ստանալ, երբ ձգտեք նմանվել Փրկիչի հնազանդության օրինակին:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ կարող եմք սովորել այս հատվածներից հնազանդության մասին

Նոր Կտակարանից մենք իմանում ենք, որ Հիսուս Քրիստոսը գնաց Հովհաննես Մկրտիչի մոտ մկրտվելու, որպեսզի նրանք կարողանային «ամեն արդարություն կատարել» (Մատթեոս 3.13–17): Ինչպես գրված է Մորմոնի գրքում, Նեփին բացատրեց, թե Հիսուս Քրիստոսը, ով անմեղ էր, ինչու մկրտվեց (տես 2 Նեփի 31.6–7):



**Ուսումնասիրեք դասին
նախապատրաստվելիս**

Կարդացեք 2 Նեփի 31.6–7, 10-ը և փնտրեք Հիսուս Քրիստոսի հատկանիշները, որոնք Նեփին ընդգծեց:



Երբ Հիսուս Քրիստոսը հայտնվեց Նեփիացիներին Լիառատ երկրում, Նա շեշտեց Իր Հոր պատվիրաններին հնազանդվելու կարևորությունը: Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջեֆրի Ա. Հոլլանդն ուսուցանել է.



Բոլոր ուղերձներից, որոնք կարող էին ծագել հավերժության փաթեթից, ո՞րն էր հռչակագիրը, որը [Փրկիչը] բերեց: Հավատարիմ Նեփիացիները լսեցին, երբ Նա խոսեց. «Ես եմ լույսն ու կյանքն աշխարհի. և ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը, որով ես ենթարկվեցի Հոր կամքին, բոլոր բաներում, ի սկզբանե» [3 Նեփի 11.11]: Հիսուսվեց բառ: Դրանք էին Նրա երկրային առաքելության երկրորդը: Նա ցուցադրեց հնազանդություն և հավատարմություն Հոր կամքին՝ որքան էլ որ դառն լինեի բաժակը կամ ցավոտ լինեի գինը: «Քրիստոսը և Նոր ուխտը [1997], 251)

Նեփիացիների մեջ Իր ծառայության ավարտին Տերը հռչակեց «Ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ» (3 Նեփի 27.13):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Հիսուս Քրիստոսի օրինակից հնազանդության մասին:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ օրհնվել՝ պահելով Աստծո պատվիրանները

Երբ Լեքին և նրա ընտանիքը Երուսաղեմից հեռացան անապատ, կարճ ժամանակ անց Լամանը և Լեմուելը սկսեցին տրտնջալ իրենց հոր դեմ: Վշտանալով նրանց կարծրացած սրտերից՝ Նեփին աղոթեց իր եղբայրների համար: Ի պատասխան նրա աղերսանքի՝ Տերը մի կարևոր ճշմարտություն ուսուցանեց Նեփին հնազանդության մասին: (Տես 1 Նեփի 2.11–12, 18–21:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 2.20–21-ը, և փնտրեք, թե Նեփին ինչ սովորեց հնազանդության մասին:

Անդրադառնալով սուրբ գրության այս հատվածի խոստումին՝ Եպիսկոպոս Ջերալդ Կոսեն՝ նախագահող Եպիսկոպոսը, ուսուցանել է.



Այս խոստումը առանցքային է Մորմոնի Գրքի պատմության և ուսմունքների համար: Այն հայտնվում է 18 տարբեր հատվածներում և Նրա 15 գրքերից յոթում: Չնայած սուրբ գրությունների այս հատվածներում նշված

բարգավաճման օրհնությունը հիմնականում հոգևոր բնույթի է, այն ներառում է նաև Աստծո ժողովրդի՝ տնտեսական առաջընթացը վայելելու և ժամանակավորապես ինքնապահով դառնալու կարողությունը: («Եկեղեցու ֆինանսական ինքնապահովման հոգևոր հիմունքները», *Ensign*, July 2018, 46)



Երբ Բենիամին թագավորը մոտեցավ իր կյանքի մայրամուտին, նա հավաքեց իր ժողովրդին՝ մի վերջին քարոզ տալու համար: Որպես իր քարոզի մաս, նա ուսուցանեց, որ մենք բոլորս «անպիտան ծառաներ» ենք և միշտ պարտական ենք լինելու Աստծուն (Մոսիա 2.20- 21): Մեր պարտական լինելու համատեքստում Բենիամին թագավորն ուսուցանեց, թե ինչու է Աստված մեզանից պահանջում պահել Իր պատվիրանները:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 2.22, 41-ը և մտածեք, թե ինչպես, հնազանդվելով Աստծո պատվիրաններին, մենք կզգանք Աստծո բարությունը:



Մեկնաբանելով Աստծո պատվիրանների նպատակը՝ նախագահ Զին Բ. Բինգհեմը, Սփոփող միության զերագույն նախագահը, ուսուցանել է.



Աստված ինչո՞ւ է մեզ պատվիրաններ տալիս: Արդյո՞ք մեզ ճշշված պահելու կամ Իր ենթակայության ներքո պահելու համար: Արդյո՞ք այս աշխարհում իսկական ուրախության հնարավորությունից զրկելու համար: Ոչ, ճիշտ հակառակը՝ Աստված տվել է մեզ պատվիրաններ, որովհետև Նա սիրում է մեզ: Նա կամենում է խնայել մեզ սրտի ցավից, թշվառությունից և զղջումից: Նա գիտի, որ այս կյանքում իսկապես երջանիկ լինելու և գալիք աշխարհում անսահման ուրախություն զգալու միակ միջոցը Աստծո օրենքներին հնազանդվելու Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելն է: («Հնազանդությունը բերում է օրհնություններ» [address given at Brigham Young University–Hawaii commencement, Apr. 21, 2018], speeches.byu.edu)



Քննարկեք դասին Նախապատրաստվելիս

Ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ քննարկեք, թե ինչպես է հնազանդությունը Աստծո պատվիրաններին օրհնել ձեր կյանքը:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչ կարող եմ սովորել հնազանդության մասին պատանի մարտիկներից

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Աստծո պատվիրաններին հավատարմորեն հնազանդվելը կարևոր է Մուրբ Հոգին ստանալու համար: Ապա, մատնանշելով պատանի մարտիկներին՝ որպես հնազանդության օրինակ, նա ասել է, որ մենք «պետք է ձգտենք դառնալ [նրանց] նման» («Ստացիր Մուրբ Հոգին», *Liahona*, նոյեմբեր 2010, 96, 97):

Պատանի մարտիկները Լամանգիների որդիներն էին, ովքեր դարձի էին եկել դեպի Տերը՝ Մոսիայի որդիների կողմից ուսուցանվելուց հետո: Այդ Լամանագիները կոչվեցին Ամմոնի ժողովուրդ կամ Անթի-Նեփի-Լեքիներ: Իրենց դարձից հետո Անթի-Նեփի-Լեքիները խոստացան Աստծուն, որ երբեք կրկին չէին օգտագործի իրենց պատերազմի զենքերը: (Տես Ալմա 23.4-7, 16-17) Հետագայում նրանց պատանի որդիները, ովքեր չէին կապել այդ ուխտը, միացան նեփիական բանակին և պաշտպանել իրենց երկիրը: Պատանի մարտիկները կամեցան, որ Հելամանը լինեի իրենց առաջնորդը: Նրանք մի քանի ճակատամարտեր ունեցան Լամանագիների դեմ: Չնայած նրանք շատ վերքեր ստացան, սակայն հրաշքով նրանցից ոչ մեկը չմահացավ մարտում: (Տես Ալմա 53.10-19, 57.22-25, 58.39:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 57.21, 27, 58.40-ը: Նայելով ռազմական բախման համատեքստից այն կողմ՝ տեսե՛ք՝ ինչ կարող եք սովորել հնազանդության մասին պատանի մարտիկների օրինակներից:

Ծնողների հետ խոսելով իրենց երեխաներին հնազանդության մասին ուսուցանելու կարևորության մասին, նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տվել է հետևյալ խորհուրդը.



Ուսուցանեք հավատք՝ Աստծո բոլոր պատվիրանները պահելու համար, իմանալով որ դրանք տրված են Նրա զավակներին օրհնելու և նրանց ուրախություն բերելու համար [տես 2 Նեփի 2.25]: Զգուշացրեք, որ նրանք կհանդիպեն մարդկանց, ովքեր ընտրում են, թե ինչ պատվիրան պահեն, որն անտեսեն, որը խախտեն: Ես դա կոչում եմ հնազանդության ճաշարանային մոտեցում: Զանազանելու և ընտրելու այդ սովորույթը արդյունք չի բերի: Այն կտանի դեպի թշվառություն: Որպեսզի մարդը Նախապատրաստվի հանդիպել Աստծուն, պետք է պահի Նրա բոլոր պատվիրանները: Դրանց հնազանդվելու համար հավատք է պահանջվում, իսկ Նրա պատվիրանները պահելը կուժեղացնի այդ հավատքը: («Հավատքով դեմ առ դեմ կանգնեք ապագային», *Liahona*, մայիս 2011, 34)

Երբեմն մենք ճնշված ենք զգում, երբ ձգտում ենք ճշգրտորեն պահել Աստծո բոլոր պատվիրանները: Որպեսզի օգնի մեզ հասկանալ, թե Փրկիչն ինչպես կարող է մեծացնել հնազանդ լինելու մեր կարողությունը, երեց Բեդնարն ուսուցանել է.



Եղբայրներ՝ և քույրեր՝, մեզ բոլորիս համար կենսականորեն կարևոր է հիշել, որ առաջադիմելը հնազանդության ավելի բարձր և ավելի մեծ հոգևորություն պահանջող մակարդակներ, պարզապես ավելի մեծ վճռականության, ավելի ավելի մեծ

քաջության, և ավելի ուժեղ կամքի ուժի հարց չէ, այլ ավելի շուտ, այն իրականանում է Տեր Հիսուս Քրիստոսի Քավության արտոնող զորության միջոցով: (“In a State of Happiness (Mormon 7:7)” [Brigham Young University–Idaho devotional, Jan. 6, 2004], byui.edu)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Այսօրվա ձեր սովորածից ելնելով, ի՞նչ խորհուրդ կտաք ինչ-որ մեկին, ով մաքառում է՝ պատվիրանները պահելու համար:

Ցանկանո՞ւմ եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել հնազանդության օրհնությունների մասին:

«Obedience Brings Blessings» (3:26), տեսաֆիլմում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանում է, որ

Տիրոջ հնազանդության օրհնակին հետևելը բացում է Աստծո մեծագույն օրհնությունները («Հնազանդությունը օրհնություններ է բերում» ելույթից, *Լիա՛հոնա*, մայիս 2013, 89–92):

Ինչպես կարող է ճշգրիտ հնազանդությունը պաշտպանել ինձ վնասից:

Որպեսզի ավելի շատ բան սովորենք ճշգրիտ հնազանդության մասին, դիտեք «The Sting of the Scorpion» տեսաֆիլմը (2:50) կամ լսեք «Եկեք ինձ մոտ սրտի ողջ նվիրվածությամբ և ես կբժշկեմ ձեզ» (11:01) Յոթանասունի Նախագահությունից երեց Պատրիկ Քիրոնի ելույթը (տես *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2010, 50–52):

«Եկեք ինձ մոտ սրտի ողջ նվիրվածությամբ և ես կբժշկեմ ձեզ» իր ելույթում (Լիա՛հոնա, նոյեմբեր 2010, 50–52), Յոթանասունի Նախագահությունից երեց Պատրիկ Քիրոնը քննարկել է ճշգրիտ հնազանդության կարևորությունը:

ԴԱՍ 23. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Հնազանդություն Աստծո պատվիրաններին


Այս բաժինը ուսանողներին հնարավորություն կտա քննարկել, թե իրենք ինչ կարող են անել, որպեսզի ավելի մեծ վստահություն ունենան Տիրոջ հանդեպ, երբ բախվեն կյանքի մարտահրավերներին: Այս դասին ուսանողները կկարողանան բացատրել, թե Հիսուս Քրիստոսն ինչպես կատարյալ վստահություն դրսևորեց Երկնային Հոր հանդեպ՝ պահելով Նրա բոլոր պատվիրանները: Ուսանողները նաև կնշեն հնազանդության օրհնությունները և կքննարկեն, թե ինչպես լիովին նմանվեն Հիսուս Քրիստոսի հնազանդության օրինակին:

Ուսուցման առաջարկներ

Հիսուս Քրիստոսը հնազանդվում է Հոր կամքին բոլոր բաներում

Ցուցադրեք Հիսուս Քրիստոսի կից պատկերները կամ ցույց տվեք «Special Witness—Elder Hales» տեսաֆիլմը (2:49): Տեսաֆիլմում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռոբերտ Դ. Հեյլսը քննարկում է Փրկիչի կատարյալ հնազանդությունը Երկնային Հորը: Սպա հրավիրեք ուսանողներին վերանայել 2 Նեփի 31.6–7, 10, 3 Նեփի 11.11, 27.13 հատվածները և փնտրեք, թե ինչ կարող ենք սովորել Փրկիչի հնազանդության օրինակից:





- Ի՞նչ կարող ենք սովորել հնազանդության մասին Հիսուս Քրիստոսի օրինակից: (Ուսանողները գուցե բացահայտեն մի շարք նմանատիպ ճշմարտություններ. **Խոնարհաբար ենթարկվելով Երկնային Հոր կամքին բոլոր բաներում՝ Հիսուս Քրիստոսը մեզ համար սահմանեց հնազանդության կատարյալ օրինակ:**)
- Ինչո՞ւ եք կարծում, որ Հորը հնազանդվելու Հիսուս Քրիստոսի հոժարակամությունը էական էր Նրա Երկրային առաքելության հաջողության համար: Ինչպե՞ս է հնազանդությունը էական այս և հաջորդ կյանքում ձեր հաջողության համար:
- Ինչպե՞ս կարող է Փրկիչի հնազանդության օրինակը ոգեշնչել ձեզ՝ ավելի ենթարկվող լինել Երկնային Հոր կամքին:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ կարող են իրականացնել իրենց սեփական հնազանդությամբ, գուցե կամենաք կիսվել Յոթանասունից երեց Վոն Գ. Քիչի հետևյալ խոսքերով.



Իսկական հնազանդությունը . . . մեզ ամբողջովին [Երկնային Հորը] հանձնելն է, որ Նա գծի մեր ուղին թե՛ խաղաղ, թե՛ խռովահույզ ջրերում՝ հասկանալով, որ Նա մեզանից կարող է ավելին կերտել, քան ինքներս երբևէ կկարողանայինք դա անել մեզ համար: . . .

. . . [Պատվիրաններն] ընդգծում են այն ուղին, որը մենք պետք է անցնենք, և որ ամենակարևորն է, դրանք պարզաբանում են մեզ, թե ով պետք է դառնանք: («Օրհնված ու երջանիկ են Նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2015, 117)

- Ի՞նչ կարող եք անել դուք՝ Տիրոջ հնազանդության օրհնակը լիովին ընդօրինակելու համար: (Օգտակար կլինի ուսանողներին ժամանակ տրամադրել՝ իրենց մտքերն ու զգացումները գրի առնելու համար:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 2.20-21-ը և կիսվեք հետևյալ սցենարով.

Մարսելը շփոթված է Մորմոնի Գրքի խոստումից, որ Նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները կբարգավաճեն: Նա ջանասիրաբար պահում է պատվիրանները, բայց շատ քիչ փող ունի և ամեն ամիս դժվարությամբ է վճարում իր հաշիվները: Նա իրեն շատ բարեկեցիկ չի համարում:

Հրավիրեք ուսանողներին վերանայել իրենց սովորածը բաժին 2-ի նախապատրաստական նյութում, որը կարող է օգնել Մարսելին ընդլայնել իր հասկացողությունը այն տարբեր ուղիների վերաբերյալ, որոնցով Տերը կարող է բարգավաճեցնել և օրհնել նրանց, ովքեր պահում են Իր պատվիրանները:

- Ինչո՞վ կարող եք կիսվել Մարսելի հետ, որպեսզի օգնեք նրան ընդլայնել իր ըմբռնումը

այն տարբեր ուղիների վերաբերյալ, որոնցով մենք կարող ենք բարգավաճել և օրհնվել, երբ պահում ենք Աստծո պատվիրանները:

Քննարկումը խորացնելու համար կարող եք ցուցադրել հետևյալ հատվածները և հրավիրել ուսանողներին ուսումնասիրել մեկը կամ երկուսը. 1 Նեփի 3.7, 1 Նեփի 17.3, 1 Նեփի 20.18, 1 Նեփի 22.31, Մոսիա 2.41, Ալմա 12.9–10, Ալմա 50.22–23, 3 Նեփի 14.24–25:

Երբ ուսանողներն ավարտեն իրենց ընտրած հատվածների ուսումնասիրությունը, ցուցադրեք հետևյալ անավարտ դրույթը և խնդրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես կավարտեին այն. **Երբ պահեմ Աստծո պատվիրանները, . . .**

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Բերեք վկայություն: Դիտեք «Բերել վկայություն» տեսաֆիլմը (1:57) և մտածեք, թե ինչ դեր ունի վկայությունը ձեր դասարանում: Արդյո՞ք ձեր ուսանողները կանոնավորապես ունենում են հնարավորություն վկայելու, թե ինչպես են Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտություններն ազդում իրենց կյանքի վրա: Արդյո՞ք Նրանք լսել և զգացել են ձեր վկայությունը Տիրոջ ավետարանի վերաբերյալ: Ուրիշ ինչպե՞ս կարող եք ստեղծել մի միջավայր, որտեղ վկայությամբ կիսվելը ուսումնառության սովորական և բնական մասն է հանդիսանում:

- Ե՞րբ եք դուք կամ ձեր ծանոթը վայելել այս հատվածներում նշված օրհնություններից որևէ մեկը՝ պահելով Աստծո պատվիրանները: (Գուցե խրախուսեք ուսանողներին կիսվել իրենց սովորածով, երբ նրանք քննարկեն այս հարցը որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ՝ դասին նախապատրաստվելիս:)

Պատանի մարտիկները ճշգրտորեն հնազանդվում են

Ցուցադրեք կից պատկերը և հրավիրեք ուսանողներին պատմել պատանի մարտիկների

պատմությունը (տես նախապատրաստական նյութի բաժին 3-ը):



Հանձնարարեք ուսանողներին վերանայել Ալմա 57.21, 27, 58.40 հատվածները և փնտրել, թե այդ հատվածներն ինչ են ուսուցանում հնազանդության մասին: Մտածեք՝ հետևյալ հարցերից որը կկամենայիք տալ, որպեսզի լավագույնս օգնեիք ձեր ուսանողներին հասկանալ, թե ինչ պետք է սովորեն պատանի մարտիկների օրինակից:

- Ի՞նչ կարող ենք սովորել հնազանդության մասին՝ պատանի մարտիկների փորձառությունից: (Ուսանողները կարող են նշել մի ճշմարտություն, որը նման է հետևյալին. **Երբ մենք ձգտենք ճշգրտորեն հնազանդվել Աստծո պատվիրաններին և միշտ վստահենք Նրան, Նա կօրհնի մեզ:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ձգտել ճշգրիտ հնազանդության: Ինչո՞վ է ճշգրիտ հնազանդությունը տարբերվում անփույթ հնազանդությունից: (Կարող եք կրկնել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի խոսքերը նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Հիմնվելով ձեր քննարկման վրա՝ կարող եք նաև կիսվել նախագահ Նելսոնի հետևյալ խոսքերով. «Հնազանդությունը բերում է հաջողություն, ճշգրիտ հնազանդությունը բերում է հրաշքներ» [in R. Scott Lloyd, “Elder Nelson Delivers Spiritual Thanksgiving Feast to MTCs,” Church News, Dec. 4, 2013, ChurchofJesusChrist.org].)
- Ո՞ր ուսմունքին կամ պատվիրանին պետք է ճշգրտորեն հնազանդվեք: (Հրավիրեք

ուսանողներին լուռ խորհել այս հարցի շուրջ և գրել ծրագիր, թե ինչ կարող են անել՝ այս փոփոխությանը հասնելու համար:)

- Ինչո՞ւ է կարևոր ապավինել Փրկիչի Քավության արտոնող զորությանը, երբ մենք ձգտում ենք ճշգրտորեն հնազանդվել Աստծո պատվիրաններին: (Կարող է օգտակար լինել կրկնել երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ում:) Ե՞րբ եք զգացել, որ Փրկիչի արտոնող զորությունն օգնում է ձեզ, որպեսզի ավելի հնազանդ լինեք Աստծո պատվիրաններին:

Որպեսզի օգնեք ուսանողներին գնահատել հնազանդության մասին իրենց սովորածը, կիսվեք հետևյալ սցենարով.

Մարիան և Ֆրանչեսկոն վերջերս են նշանվել և նշանակել են ամուսնության օրը: Այժմ, երբ Նրանք պարտավորվել են ամուսնանալ, Նրանք ավելի անփույթ են դարձել մաքրաբարոյության օրենքը պահելիս: Նրանք արդարացված են համարում «կանոնների խախտումը», քանի որ սիրում են միմյանց և ամուսնանալու որոշում են ընդունել:

- Ելնելով Աստծո պատվիրաններին հնազանդության մասին ձեր սովորածից, ի՞նչ խորհուրդ կտայիք Մարիային ու Ֆրանչեսկոյին:
- Ինչպե՞ս կարող է ճշգրիտ հնազանդությունն օրհնել, առաջնորդել և պաշտպանել Մարիան և Ֆրանչեսկոյին, երբ նրանք պատրաստվում են իրենց մոտակա ամուսնությանը:

Հաջորդ անգամ

Նշեք, որ հաջորդ դասի ընթացքում մենք կսովորենք Լիմքիի ժողովրդի և Ալմայի ժողովրդի գերության մասին: Խրախուսեք ուսանողներին լրացնել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և փնտրել, թե այդ ժողովրդի ազատումն ինչպես հնարավոր դարձվեց միայն այն ժամանակ, երբ նրանք լիովին վստահեցին Տիրոջը:



ԴԱՍ 24. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Տիրոջ ազատման գործությունը

Երբ հանդիպում եք փորձության, արդյոք երբևէ հարցրել եք ինքներդ ձեզ. «Ինչո՞ւ է սա տեղի ունենում ինձ հետ» կամ «Ինչո՞ւ Տերը չի հեռացնում ինձանից այս փորձությունը»: Մորմոնի Գրքից մենք կարող ենք կարևոր դասեր սովորել, մեր փորձությունների աղբյուրների վերաբերյալ, և թե ինչպես կարող ենք օրհնվել, երբ դիմենք Փրկիչին օգնության համար: Երբ ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս, մտածեք, թե ինչպես կարող եք խորացնել ձեր վստահությունը Հիսուս Քրիստոսի անսահման սիրո, զորության և իմաստության հանդեպ, երբ Նա աջակցում է ձեզ կամ ազատում փորձություններից, որոնց դիմակայում եք:

ԲԱԺԻՆ 1

Ինչո՞ւ եմ ես փորձություններ ունենում, նույնիսկ, երբ անում եմ այն, ինչը ճիշտ է

Մորմոնի Գիրքը ցույց է տալիս, որ փորձությունները տարբեր աղբյուրներ ունեն: Որոշ փորձություններ մեղքի հետևանք են: Օրինակ Զիզրոմը տառապում էր այրող տենդից և հիվանդությունից, որն առաջացավ իր անօրինության հետևանքով պատճառված մեղքի զգացումից (տես Ալմա 15.3): Նեփիացիներն ու Լամանացիները տարիներ շարունակ պատերազմի մեջ էին Ամադիկիայի ամբարիշտ ընտրությունների պատճառով (տես

Ալմա 46.9–10): Սակայն, ոչ բոլոր փորձություններն են ամբարշտության արդյունք: Լեքիի և Իսմայիլի ընտանիքները տարան շատ դժվարություններ, որոնք անապատի միջով ճամփորդությունների բնական մասն էին կազմում (տես 1 Նեփի 16.9–17.4):

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռոբերտ Դ. Հեյլը հետևյալն է ուսուցանել նեղությունների մասին.



Մահկանացու կյանքի դպրոցում ուսուցչի դերում հաճախ հանդես են գալիս ցավն ու նեղությունը, սակայն այդ դասերի նպատակն է կատարելագործել, օրհնել և ամրացնել մեզ, այլ ոչ թե կործանել: («Հավատքը

տառապանքների միջով բերում է խաղաղություն և ուրախություն», *Լիախոնա*, մայիս 2003, 17):



Երեց Հեյլսի խոսքերը լուսաբանվում են Ալմայի և նրա ժողովրդի փորձառության միջոցով: Նրանք հավատում էին մարգարե Աբինադիի նախագգուշացումներին: Դեպի Տերը դարձի գալուց և Ալմայի կողմից մկրտվելուց հետո ժողովուրդը անապատ քշվեց ամբարիշտ թագավոր Նոյի բանակի կողմից: Ութօրյա ճամփորդությունից հետո նրանք եկան մի նոր վայր, որը կոչեցին Էլամ: Այստեղ նրանք ապրեցին ավետարանով և «բազմացան ու չափազանց բարգավաճեցին» (Մոսիա 23.20): Մակայն, նրանց խաղաղությունն ի վերջո խախտվեց Լամանացիների բանակի կողմից, ովքեր գտան նրանց և գերեվարեցին: (Տես Մոսիա 17-18, 23)



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 23.21–24-ը, փնտրելով պատճառները, թե Տերը ինչու է թույլ տալիս, որ Նույնիսկ արդարները փորձություններ կրեն:



Խորհեք դասին նախապատրաստվելիս

Ինչպե՞ս կարող է փորձությունների վերաբերյալ Տիրոջ հավերժական հեռանկարը հասկանալու ձգտումը օգնել մեզ Նորովի մոտենալ մեր անձնական փորձություններին:

ԲԱԺԻՆ 2

Ինձ համար ինչո՞ւ է կարևոր վստահել Տիրոջ ժամանակացույցին իմ փորձությունների ընթացքում

Երբ Ալման և իր ժողովուրդը լսեցին Աբինադիի ապաշխարության կոչը և փախան անապատ, Նոյ թագավորը և իր ժողովրդի մնացած մասը մերժեցին մարգարեին և չապաշխարեցին: Իրենց մեղքերի պատճառով նրանք պարտության մատնվեցին Լամանացիների կողմից և գերեվարվեցին: Թագավոր Լիմքիի՝ Նոյի որդու կառավարման ընթացքում Լամանացիները ծանր հարկերի տակ էին դնում ժողովրդին և նրանց խիստ հալածում էին: Լիմքիի ժողովուրդը երեք անգամ անհաջողություն կրեց՝ փորձելով ազատվել գերությունից և այդ ջանքերի ընթացքում շատ մարդիկ մահացան: (Տես Մոսիա 12.2, 19.1–21.12) Ի վերջո, նրանք դիմեցին Տիրոջ օգնությանը:





Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 21.13–16 հատվածները և գտեք, թե Տերն ինչպես օրհնեց ժողովրդին, երբ նրանք փնտրեցին Իր օգնությունը:

Երբ Լիմբիի ժողովուրդը իսկապես խոնարհվեց և ապավինեց Տիրոջը, Մոսիա թագավորի կողմից ուղարկված հետախուզական խումբը գտավ Լիմբիի ժողովրդին: Հետախուզական խումբը և թագավոր Լիմբին խորհրդակցեցին ժողովրդի հետ այն մասին, թե ինչպես փախչել գերությունից: Նշանակված զինվորները նրանք հավելյալ զինի տվեցին Լամանացիներին, որոնք հարբեցին և քնեցին: Լիմբիի ժողովուրդը այդ ժամանակ փախուստի դիմեց դեպի անապատ և ապահով հասավ Զարահեմլա: (Տես Մոսիա 21.23–22.14:)



Ինչպես նկարագրված է այս պատմության մեջ, Աստված ուներ Իր սեփական նպատակները և ժամանակացույցը՝ Լիմբիի ժողովրդին ազատելու համար:

Առաջին Նախագահությունից Նախագահ Դավին Հ. Օուքսը ուսուցանել է.



Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոս: Հավատքը նշանակում է ապավինում՝ ապավինում Աստծո կամքին, ապավինում Նրա ուղիով գործելուն և ապավինում Նրա ժամանակացույցին: Մենք չպետք է փորձենք մեր ժամանակացույցը պարտադրել Նրան: Տասներկու Առաքյալների

Քվիրումից Երեց Նիլ Ա. Մաքսվելը բացատրել է.

«Հարցը մեզ համար նրանում է, որ բավականաչափ վստահելով Աստծուն, վստահենք նաև Նրա ժամանակացույցին: Եթե մենք իսկապես հավատում ենք, որ Նա ի սրտե ցանկանում է մեր բարօրությունը, միթե մենք չպետք է թույլ տանք, որ Նրա ծրագրերը բացահայտվեն, քանի որ Նա ունի լավագույն մտադրությունները:» [Even As I Am (1982), 93.] (“Timing,” *Ensign*, Oct. 2003, 12)



Գրի առեք ձեր մտքերը

Օգտագործելով այն, ինչ սովորեցիք Լիմբիի ժողովրդի փորձառությունից, գրի առեք սկզբունքներ այն մասին, թե ինչպես է Տերն աջակցում կամ ազատում նրանք, ովքեր դիմում են Իրեն՝ իրենց փորձությունների մեջ: Պատրաստ եղեք կիսվել այս սկզբունքներով դասաբանում:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ ուժ ստանալ Տիրոջից, երբ համբերությամբ տանում եմ իմ փորձությունները

Լամանացիների մի բանակ հետապնդեց Լիմբիի ժողովրդին, բայց կորցրին ճանապարհը: Նրանք, ի վերջո, գտան Նոյի ամբարիշտ քահանաներին, ովքեր միացան Լամանացիների բանակին: Անապատում ճամփորդելու ընթացքում նրանք հայտնաբերեցին Ալմայի արդարակյաց ժողովրդին և նրանց գերության տարան: Ամուղոնը, ով Նոյի ամբարիշտ քահանաներից մեկն էր, Լամանացիների թագավորի կողմից կառավարիչ նշանակվեց Ալմայի ժողովրդի վրա: Ամուղոնը պահակներ դրեց ժողովրդի վրա և սպառնաց սպանել

յուրաքանչյուրին, ում կգտնեին աղոթելիս: (Տես Մոսիա 22.15–16, 23.25–24.1, 24.8–11)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մոսիա 24.10-16 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե Տերն ինչպես օգնեց Ալմայի ժողովրդին Նրանց ձախողության ընթացքում: Գուցե մի թույլ տրամադրեք և խորհեք, թե Նա ինչպես է հանգստացրել և խրախուսել ձեզ ձեր փորձությունների և չարչարանքների մեջ:

Ալմայի ժողովուրդը հավատք և համբերություն գործադրեց, և ի վերջո, Տերն ազատեց նրանց: Նա «խորը քուն բերեց Լամանացիների վրա» (Մոսիա 24.19), թույլ տալով Ալմային և նրա ժողովրդին փախչել Զարահեմլայի երկիրը: (Տես Մոսիա 24.17–25:)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.



Փորձություններն ու դժվարություններն անմիջապես չհեռացվեցին ժողովրդից: Բայց Ալման ու Նրա հետևորդները ամրապնդվեցին, և Նրանց մեծացած կարողությունը բեռներն ավելի թեթև դարձրին: . . .

Մեզանից յուրաքանչյուրի կյանքում առանձնահատուկ բեռներն օգնում են մեզ ապավինել Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմածությանը և շնորհին (տես 2 Նեփի 2.8): Ես վկայում եմ և խոստանում, որ Փրկիչը կօգնի մեզ հեշտությամբ կրել մեր բեռները (տես Մոսիա 24.15): Երբ Նրան լծակից դառնանք ուխտերի միջոցով և [Նրա] արտոնող զորությունը . . . ստանանք մեր կյանքում, մենք ավելի ու ավելի շատ կձգտենք

հասկանալ և ապրել ըստ Նրա կամքի: Մենք Նան կաղոթենք ուժի համար, որպեսզի սովորենք, փոխվենք կամ ընդունենք մեր հանգամանքները, ոչ թե անդադար աղոթենք, որ Աստված փոխի մեր հանգամանքները՝ ըստ մեր կամքի: («Իրենց բեռները հեշտությամբ տանելի», *Liahona*, մայիս 2014, 89, 90)



Գրի առեք ձեր մտքերը

Խորհրդածեք այն տարբեր ուղիների մասին, որոնցով Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը մեծացրել են բեռները կրելու ձեր կարողությունը: Աղոթքով արտահայտեք ձեր երախտագիտությունը Նրանց օգնության համար:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ այն մասին, թե ինչու եմ փորձություններ տանում իմ կյանքում:

Ավետարանական թեմաների «Ձախորդություն» վերնագիրը տալիս է լրացուցիչ բացատրություն փորձությունների և դեպի Տերը դառնալու մասին, երբ մենք դիմակայում ենք դրանց:

Տիրոջ կողմից նրանց աջակցման կամ ազատման ի՞նչ այլ օրինակներ կան, ովքեր իրենց փորձությունների մեջ դառնում են դեպի Նա:

Լամանացիների բանտում Նեփիի և Լեքիի փորձա-
ռությունից (տես շեղման 5.20–52) և Լաքոնիուսի
ժողովրդի ու Գադիանթոնի ավազակների միջև
տեղի ունեցած ընդհարումից մենք կարող ենք ավե-
լին իմանալ Տիրոջ զորության մասին, որն օգնում ու
ազատում է նրանց, ովքեր իրենց փորձությունների
ընթացքում դիմում են Նրան (տես 3 Նեփի 3–4):



Յոթանասունից Քայլ Ս. Մակքեյը նկարագ-
րել է երկու կանանց փորձառությունը, որոնց
Տերն աջակցեց, երբ նրանք վստահեցին
Նրան իրենց փորձությունների ժամին
«Աստծո անմիջական բարությունը» (*Liahona*,
մայիս 2019, 105–7):



«Ինչ լինելու է, թող լինի և սիրեք այն»
ելույթում (*Liahona*, նոյեմբեր 2008, 26–28),
Տասներկու Առաքյալների Քվորումից երեց
Ջոզեֆ Բ. Վիրթլինը կիսվում է կարևոր
սկզբունքներով, թե ինչպես հաջողությամբ դիմա-
կայենք մեր փորձություններին:

Ինչպե՞ս կարող եմ մեզ համար օրհնություն լինել բեռները, որոնք տանում ենք կյանքում:

Երբ դիտեք «Bearing Our Burdens with Hope»
տեսաֆիլմը (8:46), մտածեք այն մասին, թե կյան-
քում մեր կրած բեռները ինչպես կարող են մեր
հոգևոր և մարմնական բարիքի համար լինել: Այս
տեսաֆիլմը մատչելի է ChurchofJesusChrist.org-ում:

ԴԱՍ 24. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Տիրոջ ազատման գործությունը

Լիմքիի և Ալմայի ժողովրդի փորձառությունները ցույց են տալիս աջակցելու և ազատելու Տիրոջ կարողությունը, երբ իրենց փորձությունների մեջ մարդիկ դառնում են դեպի Նա: Այս դասի ընթացքում ուսանողները կխորացնեն իրենց ըմբռնումը, թե ինչպես կարող են զարգացնել հավերժական հեռանկար Տիրոջ ազատման գործության վերաբերյալ: Ուսանողները նաև կորոշեն, թե ինչ կարող են անել Տիրոջ գործության հասանելիությունը ձեռք բերելու համար, երբ նրանք դիմակայում են իրենց անձնական փորձություններին:

Ուսուցման առաջարկներ

Լամանացիները ճորտության մատնեցին Ալմային և Լիմքիի ժողովրդին

Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձությունների օրինակներով, որոնց ներկայումս դիմակայում են իրենք կամ իրենց ծանոթները:

- Ի՞նչ տարբեր պատճառներ կան մեր փորձությունների համար: (Օգտակար կլինի վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1-ի օրինակները:)
- Ի՞նչ սովորական հարցեր, մտահոգություններ կամ զգացումներ կարող են ունենալ մարդիկ, երբ նրանք բախվում են փորձությունների:

Բարելավել մեր ուսուցումը և ուսումնասիրությունը

Քննեք մտահոգությունները և հարցերը հավերժության տեսանկյունից: Ուսանողները գուցե ձևակերպեն խնդիրները և հարցերը՝ օգտագործելով գաղափարներ, որոնք իրենք լսում են դարոցում, աշխատավայրում կամ սոցիալական ցանցերում: Շատ հաճախ այդ աղբյուրները տալիս են միայն մեկ աշխարհիկ հեռանկար, այնպիսին, որը հաշվի չի առնում ավետարանի ուսմունքները: Հնարավորություններ փնտրեք՝ օգնելով ուսանողներին կիրառել վերափոխող խորություն և հարցեր «Իրկության Ծրագրի և Փրկիչի ուսմունքների

համատեքստում» (Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի [2018], «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ», բաժին 8-ում):

Ալմայի ժողովուրդը

Համառոտ վերանայեք հանգամանքները, որոնք հանգեցրին Ալմայի ժողովրդի գերեվարմանը Լամանացիների կողմից: Կարող եք ուսանողներին հրավիրել պատկերացնել, թե ինչ կարող էր զգալ Ալմայի արդարակյաց ժողովուրդը, երբ հանկարծ կորցրին իրենց ազատությունը և ստիպված եղան ծառայել Լամանացիներին:

Կարդացեք Մոսիա 23.21–24-ը, փնտրելով այն հնարավոր պատճառները, թե ինչու Տերը թույլ տվեց Ալմայի ժողովրդին անցնել փորձություններով:

- Համաձայն այս հատվածների, ո՞րն էր Տիրոջ նպատակը, որ թույլ տվեց Ալմայի ժողովրդին անցնել այդ փորձությունների միջով:
- Ինչպե՞ս կարող է փորձությունների վերաբերյալ Տիրոջ հավերժական հեռանկարը հասկանալու ձգտումը օգնել մեզ նորովի մոտենալ մեր անձնական փորձություններին: (Գուցե կամենաք ցուցադրել «Քննել հարցերը հավերժության հեռանկարից» տեսաֆիլմը [2:56], որը ցույց է տալիս, թե ինչպես վերափոխող խորություն հարցերը՝ օգտագործելով ավետարանական ուսմունքներ:)

Խրախուսեք ուսանողներին դասի ընթացքում փնտրել ճշմարտություններ, որոնք կօգնեն նրանց

ձեռք բերել հավերժության հեռանկարը իրենց փորձությունների վերաբերյալ:

Լիմքիի ժողովուրդը

Հիշեցրեք ուսանողներին, որ Լիմքիի ժողովուրդը նույնպես գերության մեջ էր: Ամփոփեք նրանց գերության հետ կապված հանգամանքները: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Մոսիա 21.6–12 հատվածները՝ փնտրելով, թե Լիմքիի ժողովուրդն ինչպես փախավ գերությունից: Խորհեք հետևյալ հարցերը տալու շուրջ.

- Ի՞նչ պատահեց Լիմքիի ժողովրդին, երբ նրանք փորձում էին ազատվել գերությունից:
- Ի՞նչ խնդիրների կարող ենք մենք բախվել, երբ փորձում ենք հաղթահարել մեր փորձությունները՝ առանց Տիրոջ օգնությունը փնտրելու: Ի՞նչը կարող է խոչընդոտել մեզ, որ մեր փորձությունների մեջ չդիմենք Տիրոջը:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Մոսիա 21.13–16-ը կամ խնդրեք որևէ ուսանողի ամփոփել, թե Լիմքիի ժողովուրդը ինչ արեց, երբ գիտակցեց, որ իրենք չեն կարող ինքնուրույն ազատվել գերությունից: Այնուհետև հրավիրեք ուսանողներից մեկին ամփոփել, թե Լիմքիի ժողովուրդը ինչպես ի վերջո ազատվեց: Տվեք հետևյալ հարցերը, որպեսզի օգնեք ուսանողներին զարգացնել հավերժության հեռանկար՝ իրենց անձնական փորձությունների վերաբերյալ.

- Ի՞նչ սովորեցիք Լիմքիի ժողովրդի փորձառությունից այն մասին, թե ինչպես է Աստված աջակցում կամ ազատում նրանց, ովքեր դառնում են դեպի Իրեն՝ իրենց փորձությունների ժամին: (Բացի ճշմարտություններից, որոնցով ուսանողները կիսվում են, օգնեք նրանց բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք խոնարհեցնենք ինքներս մեզ և կանչենք առ Աստված, Նա կլսի մեր աղոթքները և կազատի մեզ մեր փորձություններից Իր ուրույն ժամանակին:**)
- Ինչպե՞ս կարող ենք ավելի շուտ ապավինել Տիրոջ ժամանակացույցին, քան մեր սեփականին, երբ փորձությունների ենք հանդիպում: (Օգտակար կարող է լինել վերանայել

Նախագահ Դավիթ Հ. Օուքսի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

- Ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ հետևել եք Տիրոջ կամքին և վստահել եք ձեր կյանքի համար Նրա ժամանակացույցին:

Ուսանողներին մի քանի բույս տրամադրեք՝ խորհելու մի փորձության շուրջ, որով իրենք այժմ անցնում են և որոշելու, թե ինչպես կարող են վերախմաստավորել այն հավերժական հեռանկարով:

Տերը զորացնում է Ալմայի ժողովրդին և ազատում նրանց գերությունից

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալմայի ժողովուրդը նույնպես Լամանացիների գերության մեջ էին: Ուսանողներին տրամադրեք մի քանի բույս՝ վերանայելու Մոսիա 24.10–16-ը, փնտրելով նմանություններ և տարբերություններ Ալմայի ժողովրդի և Լիմքիի ժողովրդի տարած փորձությունների միջև:

- Ի՞նչ նմանություններ գտաք: Ինչո՞վ էին տարբերվում երկու խմբերի փորձառությունները: (Հնարավոր պատասխանները կարող են ներառել հետևյալը. երկու ժողովուրդներին էլ աջակցում էր Տերը և, ի վերջո, նրանք ազատվեցին. Ալմայի ժողովրդի գերությունը եկավ որպես իրենց հավատքի փորձություն, մինչ նրանք ձգտում էին հետևել Տիրոջը, մինչդեռ Լիմքիի ժողովրդի գերությունը եկավ մեղքի պատճառով, Ալմայի ժողովուրդն անմիջապես դիմեց Աստծուն, մինչդեռ Լիմքիի ժողովուրդը դիմեց Նրան՝ նախ ինքնուրույն ազատագրվելու փորձից հետո:)
- Տիրոջ սիրտ վերաբերյալ ի՞նչ ապացույց եք տեսնում այս երկու պատմություններում:
- Ի՞նչ լրացուցիչ դասեր կարող ենք սովորել Ալմայի ժողովրդի փորձառությունից այն մասին, թե ինչպես է Աստված աջակցում կամ ազատում նրանց, ովքեր դիմում են Իրեն՝ իրենց փորձությունների մեջ: (Երբ ուսանողները կիսվեն ճշմարտություններով, որոնք

իրենք գտել են, օգնեք նրանց բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք հավատք և համբերություն ենք գործադրում և կանչում ենք առ Աստված, Նա կարող է գորացնել մեզ՝ ավելի հեշտությամբ կրելու մեր բեռները:** *Նշում.* Ալմա Կրտսերն ուսուցանել է նմանատիպ մի սկզբունք Ալմա 36.3, 27-ում:)

Դասարանը բաժանեք երկու կամ երեք ուսանողից բաղկացած խմբերի և հրավիրեք նրանց վերանայել երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին քննարկել դրանք իրենց խմբերում:

- Ինչո՞ւ է օգտակար իմանալ, որ Տերը միշտ չէ անմիջապես վերացնում մեր փորձությունները:
- Ըստ երեց Բեդնարի, պահելով մեր ուխտերը, ինչպե՞ս կարող ենք հավելյալ ուժ ստանալ, երբ դիմակայում ենք փորձությունների:
- Տերն ինչպե՞ս է օրհնել ձեզ կամ ձեր ծանոթներից մեկին, երբ դուք դիմանում էիք

փորձության կամ որևէ բեռ էիք կրում: Ի՞նչ օրհնություններ եկան փորձությունից անմիջապես չազատվելու արդյունքում:

Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների կիսվել, թե ինչը տպավորվեց նրանց մեջ իրենց խմբային քննարկումից: Դասարանի անդամներին տվեք մի քանի րոպե, որպեսզի գրի առնեն տպավորություններն այն մասին, թե ինչպես կարող են մեծացնել իրենց վստահությունը Տիրոջ հանդեպ, երբ դիմակայում են փորձությունների:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին՝ արդյո՞ք ունեն հարցեր, որ կկամենային Տերը պատասխաներ: Խրախուսեք նրանց մանրամասն ուսումնասիրել Մորմոնի գիրքը և նախապատրաստական նյութը, տեսնելով, թե ինչ կարող են սովորել հաջորդ դասի համար Տիրոջից պատասխաններ ստանալու վերաբերյալ:

ՄԱՍ 8

Եկեք Քրիստոսի մոտ. Դառնալ Նրա աշակերտները



ԴԱՍ 25. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Աղոթք և անձնական հայտնություն

Հիսուս Քրիստոսը խոստացել է. «Ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է. և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի» (3 Նեփի 14.8): Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն այս խոստումի վերաբերյալ ասել է. «Անձնական հայտնություն ստանալու այս հավերժական առաջարկը տրվել է Նրա բոլոր զավակներին: Ճշմարիտ լինելու համար այն չափազանց լավ է հնչում: Սակայն այն ճշմարիտ է» («Խնդրեք, փնտրեք, թակեք», *Հիստորիա*, նոյեմբեր 2009, 81): Այս նյութն ուսումնասիրելիս խորհեք ձեր աղոթքների արդյունավետության մասին, և թե ինչ կարող եք անել անձնական հայտնություն ստանալու ձեր կարողությունը մեծացնելու համար:

ԲԱԺԻՆ 1

Ես ի՞նչ կարող եմ անել,
որպեսզի աղոթքը դարձնեմ իմ
կյանքի առավել կարևոր մասը

Երբ Ալման և Ամուդեկը գլխավորում էին ուրացած Ջորամացիներին կրկին դարձի բերելու առաքելությունը, նրանք զարմացան՝ ականատես լինելով, թե ինչպես են Ջորամացիները երկրպագում և աղոթում իրենց ժողովարաններում: Կանգնելով հարթակի վերևում, որը նրանք կոչում էին

Ռամետմփթում, մարդիկ հերթով արտասանում էին սահմանված աղոթքը՝ հայտարարելով, որ ոչ մի Քրիստոս չի լինելու, և որ Աստված ընտրել է իրենց, որ փրկվեն: Երկրպագության ծառայության ավարտից հետո Ջորամացիները տուն էին գնում՝ «Երբեք չխոսելով կրկին իրենց Աստծո մասին», մինչև որ վերադառնում էին հաջորդ շաբաթ: (Տես Ալմա 31.12-24:) Ավելի ուշ Ալման և Ամուդեկը կարողացան մի խումբ խոնարհ Ջորամացիների ուսուցանել ավետարանը, ներառյալ՝ աղոթքի իրական իմաստը և նպատակը (տես Ալմա 32-34):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ավմա 34.17-28-ը և նշեք սկզբունքները, որոնք Ամուղեկն ուսուցանել է Ջորամացիներին աղոթքի վերաբերյալ:



Գրի առեք ձեր մտքերը

Ընտրեք մեկ կամ երկու հատված Ավմա 34.17-28-ից և վերաշարադրեք հատվածը կամ հատվածներն այնպես, ասես Ամուղեկը այսօրվա լեզվով խոսում է ձեզ հասակակից մեկի հետ: Օրինակ՝ մտածեք «ձեր դաշտերի հոտերի համար» աղոթելու խորհրդի մասին (հատված 25) և կիրառեք նույն գաղափարը մեր ժամանակակից պայմաններում: Պատրաստ եղեք դասարանում կիսվելու ձեր վերանայած հատվածներով: Խորհեք, թե ինչպես կարող եք կիրառել Ամուղեկի ուսմունքները, որպեսզի բարելավեք ձեր իսկ աղոթքների անկեղծությունն ու հաճախականությունը:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել՝ անձնական հայտնություն ստանալու համար

Մորմոնի Գրքի գրեթե սկզբում Նեփին արձանագրել է իր ցանկությունը՝ հասկանալ և անձնական վկայություն ունենալ կյանքի ծառի վերաբերյալ իր հոր երազի և նրա մյուս ուսմունքների մասին (տես 1 Նեփի 10.17):



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 10.17-19-ը, փնտրելով, թե Նեփիից ի՞նչ կարող եք սովորել անձնական հայտնություն ստանալու մասին: (Նշում. «Աստծո խորհուրդները հոգևոր ճշմարտություններ են, որոնք տրվում են միայն հայտնությամբ» [Սուրբ գրքերի ուղեցույց, «Աստծո խորհուրդները», scriptures.ChurchofJesusChrist.org]:) Օրինակ՝ Աստծո խորհուրդը հայտնի է դարձել մեզ, երբ հայտնություն ենք ստացել Սուրբ Հոգուց, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:



Մինչ Նեփին խորհում էր Լեքիի ուսմունքների շուրջ, նա «Տիրոջ Հոգով տարվեց հեռու» և անձամբ տեսիլք տեսավ (1 Նեփի 11.1): Այս տեսիլքում Նեփին լրացուցիչ գիտելիք ստացավ կյանքի ծառի վերաբերյալ իր հոր երազի մասին, Փրկիչի

մահկանացու ծառայության, իր սերունդների ապագայի և վերջին օրերին ավետարանի Վերականգնման մասին (տես 1 Նեփի 11–14):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Աստծո վերաբերյալ ի՞նչն էր վստահություն և հավատ ներշնչում Նեփիին, որը մեծացրեց անձնական հայտնություն ստանալու նրա կարողությունը:

Հայտնության այս փորձառությունից հետո Նեփին վերադարձավ իր հոր վրանը և տեսավ, որ եղբայրները «վիճում էին միմյանց հետ այն բաների վերաբերյալ, որ [Լեքին] խոսել էր նրանց հետ» (1 Նեփի 15.2):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք 1 Նեփի 15.3–4, 8–11-ը և խորհեք, թե ինչու էին Լամանը և Լեմուելը դժվարանում հասկանալ Լեքիի ուսմունքները:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ հարցով կամ հարցերով եք դիմել Տիրոջը և ի՞նչ փորձառություն եք ունեցել: Կա՞ն մտահոգություններ կամ հարցեր, որոնց վերաբերյալ կարող եք դիմել Տիրոջն աղոթքով, սակայն դեռ չեք դիմել: Եթե այո, ապա ի՞նչն է խանգարում աղոթել դրանց վերաբերյալ:

Ավելի ուշ Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Ջիզրոմ անունով օրինազետի մասին, ով փորձեց աղավաղել Ալմայի և Ամուլեկի ուսմունքները: Երբ Ամուլեկը «բռնացրեց Ջիզրոմին ստախոսելիս», Ջիզրոմը խոնարհեցրեց իրեն և սկսեց անկեղծ հարցեր ուղղել Ալմային ավետարանի վերաբերյալ: Ալման ուսուցանեց Ջիզրոմին, որ Աստծո խորհուրդները կամ հայտնությունը կարող է տրվել միայն նրանց, ովքեր խոնարհ են և հավատարիմ: (Տես Ալմա 11.21–13.31:)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ալմա 12.9–10-ը և խորհեք, թե ձեր ներկայիս վերաբերմունքն ու գործողությունները

ինչպես կարող են մեծացնել կամ նվազեցնել հայտնություն ստանալու ձեր կարողությունը:

Խոսելով այն ամենի մասին, ինչ կարող ենք անել, որպեսզի մեծացնենք հայտնություն ստանալու մեր կարողությունը, Նախագահ Նելսոնն ուսուցանել է.



Գտեք մի խաղաղ տեղ, որտեղ կարող եք կանոնավոր գնալ: Խոնարիվեք Աստծո առաջ: Ձեր սիրտը բացեք ձեր Երկնային Հոր առաջ: Դիմեք Նրան պատասխանների և սփոփանքի համար:

Աղոթեք Հիսուս Քրիստոսի անունով ձեր մտահոգությունների, ձեր երկյուղների, ձեր թուլությունների մասին, այո, ձեր սրտի բուն ձգտումների մասին: Իսկ հետո լսե՛ք: Գրի առեք խոհերը, որոնք ձեր միտքն են գալիս: Գրի առեք ձեր զգացմունքները և հետևեք, որ կատարեք գործողությունները, որոնք հուշել են ձեզ: Երբ կրկնեք այս գործընթացն օրեցօր, ամիս ամ ամիս, տարեց տարի, դուք «կարող եք աճել հայտնության սկզբունքի մեջ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (2007), 140): . . .

Ոչ մի բան այնպես չի բացում երկինքները, ինչպես աճող մաքրության, ճշգրիտ հնազանդության, անկեղծ որոնման, Մորմոնի Գրքում Քրիստոսի խոսքերով ամենօրյա սնուցման համադրությունը [տես 2 Նեփի 32.3] և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին կանոնավոր ժամանակ տրամադրելը: . . .

. . . Աղերսում եմ ձեզ մեծացնել հայտնություն ստանալու ձեր հոգևոր կարողությունը: («Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիա՛հոնա*, մայիս 2018, 95, 96)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Նախկինում կատարած ձեր ո՞ր արարքն է ամենաշատն օգնել ձեզ հայտնություն ստանալ:

Լրացուցի՛չ ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել, որպեսզի մեծացնեք վկայություն ստանալու ձեր ունակությունը:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Փրկիչն ի՞նչ ուսուցանեց Նեփիացիներին աղոթքի մասին:

Նեփիացիներին ծառայելիս Փրկիչն ուսուցանեց նրանց՝ ինչպես աղոթել (տես 3 Նեփի 13.5–13), ինչպես նաև ուսուցանեց անձնական ու ընտանեկան աղոթքի կարևորությունը (տես 3 Նեփի 18.15–23):

Աղոթքն ինչո՞ւ է հզոր միջոց հանդիսանում իմ հարցերի պատասխանները գտնելու համար:

«Ծագում» (4:57) տեսանյութում երիտասարդ աղջիկը սովորում է, որ ճշմարտությունը գտնելու լավագույն միջոցն է՝ հարցնել Երկնային Հորը և փնտրել հայտնություն աղոթքի միջոցով:

Ես ի՞նչ պարտականություն ունեմ, երբ փնտրում եմ անձնական հայտնություն:

Մեր անհատական պարտականությունների վերաբերյալ մենք կարևոր սկզբունքներ ենք սովորում Եթեր 2.14, 18–23, 3.4–6 հատվածներում Հարեդի եղբոր ունեցած փորձառություններից, երբ փնտրում ենք Տիրոջ օգնությունը:

Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ հասկանալ, թե երբ եմ անձնական հայտնություն ստանում:

«Ստանալ հայտնություն» (4:17) տեսանյութում Եկեղեցու անդամները կիսվում են անձնական հայտնության վերաբերյալ իրենց փորձառություններով:

Ավետարանի գրադարան հավելվածի Հիսուս Քրիստոսի «Լսի՛ր Նրան» բաժնում Եկեղեցու ղեկավարների կողմից նույնպես տեղադրվում են

վկայություններ, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսում
մեզ հետ տարբեր եղանակներով:



«Ազատ ընտրություն և պատասխաններ.
ճանաչել հայտնությունը» (*Ensign*, հունիս
2014, 48–51), Տասներկու Առաքյալների Քվո-
րումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը քննարկում է
Տիրոջ պատասխանները ճանաչելու երեք ուղիներ:

ԴԱՍ 25. ՈՒՍՈՒՑԻ ՆՅՈՒԹ

Աղոթք և անձնական հայտնություն

Տեր Հիսուս Քրիստոսը պատվիրել է. «Դուք պետք է միշտ աղոթեք Հորը իմ անունով» (3 Նեփի 18.19): Մորմոնի Գիրքը ներկայացնում է աղոթքին և անձնական հայտնությանը վերաբերող կարևոր սկզբունքներ: Այս դասը կարող է օգնել ուսանողներին գնահատել իրենց աղոթքների որակը և պարզել, թե ինչ կարող են անել իրենց աղոթքները բարելավելու համար: Ուսանողները նաև հնարավորություն կունենան խորհելու, թե ինչ կարող են անել անձնական հայտնություն ստանալու իրենց կարողությունը մեծացնելու համար:

Ուսուցման առաջարկներ

Ամուղեկը Ջորամացիների ուսուցանում է աղոթքի կարևորության մասին

Նշում. Երբ այս դասի ընթացքում քննարկեք անձնական աղոթքները բարելավելու ուղիները, ուսանողներին հիշեցրեք, որ աղոթելու ցանկացած ջանք գովելի է: Գուցե ցանկանաք բացատրել, որ հետևյալ ինքնագնահատումը նպատակ ունի գործացնել ուսանողներին՝ աղոթքի միջոցով ավելի մոտենալ Աստծուն, այլ ոչ թե հուսահատեցնել նրանց աղոթելու ջանքերում: Ինքնագնահատումը կօգնի պատրաստել ուսանողներին քննարկելու, թե Ամուղեկն ինչ է սովորեցնում աղոթքի մասին Ալմա 34.17–28-ում:

Ցուցադրեք հետևյալ նախադասությունները և հրավիրեք ուսանողներին գնահատել իրենց՝ օգտագործելով 1-5 սանդղակը (1=բոլորովին համաձայն չեմ և 5=լիովին համաձայն եմ):

1. Ես ամեն օր ասում եմ իմ անձնական աղոթքը: _____
2. Իմ աղոթքներն իմաստալի են և սրտաբույս: _____
3. Ես աղոթում եմ իմ ֆիզիկական և հոգևոր կարիքների համար: _____
4. Ես խնդրում եմ օգնել ինձ հաղթահարել դևի գայթակղությունները: _____

5. Ես աղոթում եմ այլ մարդկանց համար: _____

6. Ես միշտ ձգտում եմ աղոթել իմ սրտում: _____

Խրախուսեք ուսանողներին մտածել իրենց պատասխանների մասին, մինչ կքննարկեք աղոթքի վերաբերյալ Ամուղեկի ուսմունքները:

Ընտրեք հետևյալ հնարավորություններից մեկը.

1. Ցուցադրեք Ռամեումփոմի վրա աղոթող մարդու հետևյալ պատկերը.



2. Ցուցադրեք Մորմոնի Գրքի «Ալման և Ամուղեկը ուսուցանում են Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մասին (Ալմա 31–34)» տեսանյութը մինչև 4:15-ը:

Հրավիրեք ուսանողներին հակիրճ նկարագրել Ջորամացիների մոտեցումը աղոթքին և կիսվել

կարծիքներով, թե ինչ են մտածում այդ մոտեցման վերաբերյալ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ամուղեկը հետագայում կարևոր սկզբունքներ ուսուցանեց Զորամացիների խոնարհ խմբին աղոթքի վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին վերանայել Ալմա 34.17-28 հատվածները և գտնել ճշմարտությունները, որոնք կարող ենք նմանեցնել մեր ներկայիս հանգամանքներին:

Այս քննարկման շրջանակներում դուք կարող եք նաև ուսանողներին խնդրել կիսվել, թե ինչպես կարող են վերաշարադրել իրենց իրավիճակներին վերաբերող այս հատվածներից մի քանիսը ժամանակակից լեզվով (տես նախապատրաստական նյութի «Գրեք ձեր մտքերը» վարժությունը բաժին 1-ում):

Ուսանողները կարող են կիսվել նմանատիպ ճշմարտություններով. **Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք աղոթքով դիմենք Իրեն բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում: Մենք պետք է աղոթենք թե՛ մեր նյութական և թե՛ հոգևոր մտահոգությունների համար: Աղոթքը պետք է լինի սրտաբուխ և անկեղծ: Մենք պետք է աղոթենք առանձին: Մենք պետք է աղոթենք այլ մարդկանց համար: Մենք պետք է ոչ միայն աղոթենք ուրիշների համար, այլ նաև ձգտենք ծառայել նրանց:**

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Որոշեք, թե երբ պետք է դանդաղեցնեք ձեր տեմպը՝ ավելի խորը ուսումնասիրելու համար: Խորությամբ ուսումնասիրելու համար ժամանակ է հարկավոր տրամադրել: Լսելով ուսանողների մեկնաբանությունները և հետևելով Սուրբ Հոգուն՝ դուք կարող եք հասկանալ, թե երբ է կարևոր դանդաղեցնել և թույլ տալ ուսանողներին լիարժեք քննել իրենց սեփական մտքերը, զգացմունքները, հարցերը կամ մտահոգությունները: Դիտարկեք հետևյալ օրինակները.

- Եթե ուսանողը նշում է, որ աղոթքը նշանակալիորեն փոխել է իր կյանքը, դուք կարող եք

հարցնել. «Կարո՞ղ եք օրինակ բերել, թե ինչ նկատի ունեք»:

- Եթե ուսանողը մտահոգություն է հայտնում, որ ինքը իրեն հեռացած է զգում Երկնային Հորից, կարող եք ասել. «Սա շատ կարևոր հարց է: Եկեք դասարանով որոշ ժամանակ տրամադրենք կիսվելու, թե ինչն է առավելապես օգնել մեզ ավելի մոտենալ Երկնային Հորը»:
- Եթե ուսանողը նշում է, որ իրեն անհանգստացնում է դասարանի քննարկումը, կարող եք ասել. «Վստահ չեմ, որ հասկանում եմ ձեր մտահոգությունը: Կարո՞ղ եք մի փոքր ավելիս պատմել ձեր մտքերի և զգացմունքների մասին»:

(Տես *Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն. Ձեռնարկ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների ուսուցիչների և ղեկավարների համար* [2012], 64:)

Մինչ ուսանողները կկիսվեն Ալմա 34-ի սկզբունքներով և որոշ հատվածների իրենց ժամանակակից վերաշարադրանքով, խորհեք, թե հետևյալ հարցերից որոնք կարող եք տալ, որպեսզի լավագույնս օգնեք ձեր ուսանողներին կատարել արդյունավետ, արդար գործողություններ:

- Ինչո՞ւ է կարևոր Երկնային Հորը ներգրավել մեր կյանքի բոլոր ոլորտներում: Ի՞նչ տարբերություն եք տեսնում ձեր կյանքում, երբ սկսել եք անկեղծ և հաճախակի աղոթել:
- Ի՞նչն է ձեզ խանգարում անկեղծ աղոթել: Ինչպե՞ս կարող եք հեռացնել այդ խոչընդոտները:
- Ե՞րբ եք դուք «աղաղակել» կամ «դուրս թափել» ձեր սիրտը Աստծո առաջ, և ի՞նչ ազդեցություն է այն ունեցել: Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի «[մեր] սրտերը լցված լինեն՝ ուղղված նրան, շարունակ աղոթքով» (Ալմա 34.27):
- Ինչո՞ւ է աղոթքն այդքան զորեղ ուժ՝ դևի զորույթյունը հաղթահարելու համար: (Օգտակար կլինի կարդալ 2 Նեփի 32.8 և 3 Նեփի 18.15, 18-ը:) Աղոթքն ինչպե՞ս է օգնել ձեզ դիմակայել զայթակղությանը:

- Ի՞նչ օրհնություններ եք ստացել ձեր կյանքում, երբ աղոթել եք ուրիշների համար և ծառայել նրանց: Ձեր կյանքում ե՞րբ եք զգացել, որ ուրիշներն աղոթում են ձեզ համար: Ձեր կարծիքով, ո՞վ կարող է ունենալ ձեր հավատքի, աղոթքների և ծառայության կարիքը:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերով.



Ես ակնկալում եմ, որ մեզանից յուրաքանչյուրն արդեն գիտի, որ աղոթքն Էական Նշանակություն ունի մեր հոգևոր զարգացման և պաշտպանության համար: Սակայն այն, ինչ մենք գիտենք, ոչ միշտ է արտացոլվում մեր գործում: Եվ թեև մենք հասկանում ենք աղոթքի կարևորությունը, բոլորս կարող ենք լավացնել մեր անձնական և ընտանեկան աղոթքների հետևողականությունն ու արդյունավետությունը: («Խնդրեք հավատքով», *Լիահոնա*, մայիս 2008, 94):

Խնդրեք ուսանողներին անդրադառնալ դասի սկզբում տրված ինքնագնահատականի իրենց պատասխաններին: Խրախուսեք նրանց գնահատել իրենց անձնական ջանքերը և գրի առնել, թե ինչ կարող են անել՝ Աստծո հետ իրենց հաղորդակցությունը բարելավելու համար:

Նեփին փնտրում և ստանում է անձնական հայտնություն

Ցուցադրեք Նախագահ Ջուլի Բ. Բեքի՝ Մփոփող միության նախկին գերագույն նախագահի և նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը, ապա խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչու են նրանք կարծում, որ հայտնության մասին այս ուղերձները այսօր հատկապես կարևոր են երիտասարդների համար:



Անձնական հայտնությանն արժանի լինելու, այն ստանալու և ըստ դրա գործելու ունակությունը այն եզակի ամենակարևոր հմտությունն է, որ կարող է ձեռք բերվել այս կյանքում: («Եվ աղախի՞նների վրա էլ պիտի թափեմ այն օրերը իմ հոգին», *Լիահոնա*, մայիս 2010, 11)



Այժմ ավելի, քան երբևէ, այնքան հրատապ չի եղել իմանալ, թե ինչպես է Հոգին խոսում ձեզ հետ: . . .

Ես կրկին խնդրում եմ, որ դուք անեք *այն ամենը*, ինչ անհրաժեշտ է ձեր հոգևոր ունակությունն ավելացնելու համար, որպեսզի ստանաք անձնական հայտնություն: («Լսեք Նրան», *Լիահոնա*, մայիս 2020, 90):

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունները և սուրբ գրությունների հատվածները.

Նեփին մեծացրեց հայտնություն ստանալու իր ունակությունը . . .

(Կարդացեք 1 Նեփի 10.17–19, տես նաև 1 Նեփի 2.16:)

Լամանը և Լեմուելը նվազեցրին հայտնություն ստանալու իրենց ունակությունը . . .

(Կարդացեք 1 Նեփի 15.2–4, 8–11, տես նաև 1 Նեփի 2.11–12:)

Հրավիրեք ուսանողներին աշխատել զույգերով կամ փոքր խմբերով և ուսումնասիրել սուրբ գրությունների հատվածները Նեփիի կամ Լամանի ու Լեմուելի մասին, այնուհետև լրացնել գրատախտակին գրված նախադասություններից մեկը: Ուսանողների պատասխանները կարող են ներառել հետևյալը.

Նեփին մեծացրեց հայտնություն ստանալու իր ունակությունը՝ ցանկանալով իմանալ ճշմարտությունը, վստահելով Աստծո մասին իր գիտելիքներին, հավատք գործադրելով առ Հիսուս Քրիստոսը, ապաշխարելով և ջանասիրաբար պատասխաններ փնտրելով Աստծուց:

Լամանն ու Լեմուելը նվազեցրին հայտնություն ստանալու իրենց ունակությունը՝ կարծրացնելով իրենց սրտերը, չհավատալով, որ Տերը կպատասխանի իրենց, վիճաբանելով միմյանց հետ և չկարողանալով Աստծուն տալ իրենց հարցերը:

- Նեփիի, Լամանի և Լեմուելի կյանքում ի՞նչ ազդեցություն ունեցավ հայտնություն ստանալու նրանց ունակությունը: Մեծացնելով

հայտնություն ստանալու ձեր ունակությունը, ինչպե՞ս կարող եք փոխել ձեր կյանքը: (Կարող եք հրավիրել ուսանողներին վերանայել Ալմա 12.9–10-ը:)

Ուսանողներին որոշ ժամանակ տրամադրեք՝ հետևյալ հարցերի շուրջ խորհելու և իրենց մտքերը գրելու համար: Մինչ նրանք խորհում են, դուք կարող եք ցուցադրել նախագահ Նելսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ից:

- Նեփիի, Լամանի և Լեմուելի օրինակներից այս դասին դուք ի՞նչ եք սովորել հայտնություն ստանալու մասին: Ի՞նչը պետք է դադարեք

կամ սկսեք անել՝ վկայություն ստանալու ձեր ունակությունը մեծացնելու համար:

Դասի ավարտին կարող եք խրախուսել մեկ կամ երկու ուսանողի կիսվել, թե ինչպես է հայտնություն ստանալն օրհնել իրենց կյանքը:

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին խորհել որևէ փորձության մասին, որի միջով ներկայումս անցնում են իրենք կամ իրենց ծանոթներից մեկը: Երբ նրանք պատրաստվեն հաջորդ դասին, խրախուսեք նրանց բացահայտել ճշմարտություններ, որոնք կարող են օգնել մեզ հավատքով, քաջությամբ և հույսով դիմակայել մեր փորձություններին:



ԴԱՍ 26. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Նախքան ձեր հավատքի փորձությունը

Դուք երբևէ աղոթե՞լ եք հրաշքի համար: Արդյո՞ք դուք փնտրում եք ավելի մեծ հոգևոր վկայություն Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Կա՞ որևէ բան ձեր կյանքում, որը դուք հույս ունեք ստանալ Տիրոջից հենց հիմա: Մտածեք այդ հույսերի և ցանկությունների մասին, մինչ շարունակում եք սովորել հավատքի և այն մասին, թե ինչպես է Մորմոնի Գիրքը մեզ սովորեցնում կիրառել այն:

ԲԱԺԻՆ 1

Հավատք գործադրելով Հիսուս Քրիստոսի հանդեպ, ինչպե՞ս կարող եմ սովորել և աճել փորձությունների հանդիպելիս

Եթերի գրքում Մորմոնին արձանագրել է, որ Հարեդի ժողովրդի մեջ պատերազմների, ապստամբությունների և ամբարշտության տարածման պատճառով Տերը ուղարկեց Եթեր մարգարեին, որպեսզի հավատ, ապաշխարություն և հույս քարոզի:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Եթեր 12:3-7, 12, 18-ը և խորհեք, թե ինչու է հավատն առ Աստված կարևոր մեր հոգևոր առաջընթացի համար:

Քանի որ Տերը սիրում է մեզ և ցանկանում է, որ մենք զարգանանք, Նա մեզ հնարավորություններ է տալիս՝ փորձելու Իր հանդեպ ունեցած մեր հավատը: Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռիչարդ Գ. Մքոթն ասել է.



Ամեն անգամ, երբ դուք փորձում եք ձեր հավատը, այսինքն՝ արժանավոր կերպով գործում եք ստացած տպավորության հիման վրա, դուք կստանաք Հոգու հաստատող

ապացույցը: Երբ հասնում եք ձեր հասկացողության սահմանին և մտնում անորոշության խավարի մեջ, հավատք գործածելով դուք կգտնեք լուծումներ, որոնք այլապես չէիք ունենա: («Հավատի և բնավորության վերափոխող գործությունը», *Lhahhna*, նոյեմբեր 2010, 44)



Մտածեք ձեր կյանքի այն պահերի մասին, երբ գործել եք Տիրոջ հանդեպ հավատքով և դրանից հետո հոգևոր վկայություն եք ստացել: Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը մի անգամ բացատրել է, թե փորձության պահին հավատարիմ մնալն ինչպես է օգնել իրեն հոգևոր աճ ունենալ:



Թեպետ ես անցյալում տառապել եմ, հետևաբար ես երախտապարտ եմ, որ իմ խնդիրներին շուտափույթ լուծում չի տրվել: Այն փաստը, որ ես ստիպված էի երկար տարիների ընթացքում գրեթե ամեն օր դիմել Աստծո օգնությանը, ինձ իսկապես սովորեցրեց ինչպես աղոթել և ստանալ աղոթքի պատասխանները, և ես գործնականում սովորեցի հավատք ունենալ առ Աստված: Ես ճանաչեցի իմ Փրկչին և իմ Երկնային Հորը այնպես և այն աստիճան, որ այլ ճանապարհով հնարավոր չէր լինի, կամ դրան հասնելու համար ավելի երկար ժամանակ կպահանջվեր: . . . Ես սովորեցի ապավինել Տիրոջը իմ ողջ սրտով: Ես սովորեցի ամեն օր քայլել

Նրա հետ: ("Look to God Each Day," *New Era*, Apr. 2015, 4)



Խորհեք դասին Նախապատրաստվելու համար

Ի՞նչ դասեր եք քաղել կամ ի՞նչ օրհնություններ եք ստացել, երբ հավատարիմ եք մնացել փորձությունների ընթացքում: Նման փորձառությունն ինչպե՞ս կարող է օգնել ձեզ ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ օրհնվել
և զորություն ստանալ՝
հավատք գործադրելով Հիսուս
Քրիստոսի հանդեպ

Մորոնին Եթեր 12.7–22-ում բերում է օրինակներ, երբ մարդիկ հավատք են գործադրել և օրհնվել հրաշքներով, հայտնություններով, ազատումով, դարձով և խոստումներով: Խոսելով Հարեդի եղբոր մասին, ով Տիրոջ զորությամբ տեղափոխեց Ջերին սարը, Մորոնին ասել է. «Եվ եթե նա հավատք չունենար, այն չէր շարժվի. ուստի [Տերը] գործում է հետո, երբ մարդիկ հավատք են ունենում» (Եթեր 12.30):

Նախագահ Ասասել Մ. Նելսոնն ուսուցանել է.



Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը մղում է մեզ կատարել քայլերի, որոնք այլ դեպքում չէինք անի: Հավատքը, որը դրդում է գործողությունների, մեզ ավելի է մոտեցնում Նրա զորությանը: («Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը», *Lhahhna*, մայիս 2017, 41):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Մորմոնի Գրքում գտեք մի հատված կամ պատմություն, որտեղ նկարագրվում է, թե ինչպես են մարդիկ օգնություն ստանում Աստծուց, երբ հավատք են գործադրում առ Հիսուս Քրիստոսը: Եթե ցանկանում եք մի քանի օրինակ, կարող եք կարդալ հետևյալը.

Եթեր 6.2–12 (Հարեղացիներն անցնում են ծովը բեռնանավերով):

1 Նեփի 3.4–7, 4.1–19 (Նեփին վերադառնում է Լաբանի տուն: Կարող եք նաև դիտել Մորմոնի Գրքի մի տեսանյութ՝ «Հոգին ուղղորդում է Նեփին սպանել Լաբանին (1 Նեփի 4.1–19)» [3:26]:)

Այս կամ ձեր ընտրած հատվածներից մեկն ուսումնասիրելուց հետո խորհեք հետևյալ հարցերի շուրջ և գրեք ձեր պատասխանները: Պատրաստ եղեք դասարանում կիսվել ձեր մտքերով:

1. Ինչպե՞ս են անհատները կամ մարդիկ հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը: Ի՞նչ օրինություններ և աստվածային գործություն է պարզվել Տերն այն բանից հետո, երբ նրանք հավատք են գործադրել Նրա հանդեպ:
2. Ի՞նչ սկզբունքներ կամ գործողություններ կարող եք սովորել այդ պատմությունից: Ինչպե՞ս կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում:

Յոթանասունի Նախագահությունից Երեց Լ. Վիթթնի Քլեյթոնը հավատքով ապրելու մասին ուսուցանել է հետևյալը.



Աստված խնդրում է մեզ համբերատար լինել Իր հետ՝ վստահել և հետևել Իրեն: Նա խնդրում է մեզ. «Մի վիճեք, եթե դուք չեք տեսնում»: Նա զգուշացնում է մեզ, որ մենք երկնքից չպետք է ակնկալենք հեշտ պատասխաններ կամ արագ շտկումներ: Հարցերը լուծում են գտնում, երբ մենք անսասան կանգնում ենք «[մեր] հավատքի փորձության» ընթացքում, որքան էլ դժվար լինի դիմանալ այդ խնդրին կամ դանդաղ գա պատասխանը [տես Եթեր 12.6]: Ես չեմ խոսում «կույր հնազանդության» մասին [տես Բոյդ Զ. Փաքեր, «Agency and Control», *Ensign*, May 1983, 66–68], այլ խոսում վստահության մասին՝ Տիրոջ կատարյալ սիրո և ժամանակի համաձայն: («Ինչ որ ասե՞ ձեզ, արեք», *Լիա-հոնա*, մայիս 2017, 99)



Խորհեք դասին Նախապատրաստվելու համար

Տերն ի՞նչ կարող է խնդրել ձեզ անել, որը կպահանջի ձեզանից գործել հավատքով: Ինչպե՞ս կարող եք ցույց տալ ձեր վստահությունը Նրա հանդեպ, մինչ առաջ եք ընթանում:

ԲԱԺԻՆ 3

Ես ի՞նչ պետք է անեմ, որպեսզի ձեռք բերեմ կամ ամրապնդեմ Մորմոնի Գրքի մասին իմ վկայությունը

Նեփիացիների քաղաքակրթության կործանումից հետո Մորմոնին մենակ մնաց, որպեսզի ավարտի Մորմոնի Գիրքը: Հիշատակարանը կնքելուց առաջ նա տալիս է մի քանի խորհուրդ և քաջալերանքի խոսքեր ասում: Ապագա ընթերցողներին Նա հորդորում է հավատքով մոտենալ Մորմոնի Գրքին,



որպեսզի նրանք կարողանան անձնական վկայություն ստանալ Մուրբ Հոգուց, որ այն ճշմարիտ է:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Մորոնի 10.3–5-ի Մորոնիի հրավերը և նշեք, թե ինչպես կարող ենք հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը և իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:



Որպես Յոթնաստունի Քվորումի անդամ ծառայելիս երեց Զին Ռ. Քուլը բացատրել է, թե Մորոնիի հրավերն ընդունելը ինչպես է հավատքի գործ հանդիսանում.



Ուշադրություն դարձրեք այն հատուկ ձևին, որով մենք Աստծուց պատասխաններ ենք ստանում. մենք պետք է «հարցնենք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս» [Մորոնի 10.4]: Կրկին քննարկենք «հավատք ունենալով առ Քրիստոս» արտահայտությունը: Սա խորհրդանշում է հոգեվիճակի կարևորությունը: Հավատք ունենալ առ Քրիստոս նշանակում է, որ մենք ընդունում ենք Աստծո գոյությունը, ընդունում ենք, որ Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի գործընթացը Աստված կարող է պատասխանել մեր աղոթքին, և հավատում ենք, որ Աստված կարող է հայտնել մեզ ճշմարտությունը: Մենք դուրս ենք գալիս չեզոք գոտուց՝ դրանով իսկ հավատ գործադրելով Քրիստոսի հանդեպ: Մենք գործում ենք: Չնայած մեր հավատքը կարող է փոքր լինել, մենք անում ենք այնպես, ինչպես Ալման է սովորեցրել. մենք «գործադրում ենք» հավատքի մի մասնիկ, այո, նույնիսկ եթե [մենք] չենք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ, [որ Աստված կարող է օգնել մեզ.] թույլ [ենք տալիս], որ այդ ցանկությունը գործի [մեր] մեջ» (Ալմա 32.27): (“Moroni’s Promise,” *Ensign*, Apr. 1994, 14)



Գրի առեք ձեր մտքերը

Խորհեք, թե ինչպես են Մորոնիի հրավերն ու խոստումը հետևում հավատք գործադրելուց հետո վկայություն ստանալու օրինաչափությանը (տես Եթեր 12.6): Ինչպիսի՞ն է եղել ձեր փորձառությունը՝ կապված Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին վկայություն ստանալու հետ: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ձեռք բերեք ձեր անձնական վկայությունը Մորմոնի Գրքի վերաբերյալ կամ մեծացնեք այն, եթե արդեն իսկ ունեք:

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող է հավատքի փորձությունը իմ կյանքը դեպի լավը փոխել:



«Ձեր հավատքի փորձությունը» (*Լիաիոնա*,
նոյեմբեր 2012, 39–42) ելույթում Տասներ-
կու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ.

Անդերսենը քննարկում է, թե մեր հավատքի
փորձության ժամանակ հավատարիմ մնալն ինչ-
պես կարող է հանգեցնել հոգևոր աճի:

Ի՞նչ պարզ եղանակներով կարող եմ հավատքով գործել իմ կյանքում:

«Pure and Simple Faith» (5:21) տեսանյութում երի-
տասարդ աղջիկը կիսվում է մի հրաշքով, որը տեղի
ունեցավ, երբ նա հավատք գործադրեց:

«Campfires of Faith» (3:25) տեսանյութում Տասներկու
Առաքյալների Քվորումից երեց Ջերիթ Վ. Գոնզալեսը և

Եկեղեցու այլ անդամներ խոսում են այն մասին, թե
ինչպես է հավատքի լույսը մեզ ուժ, հույս և խաղա-
ղություն տալիս:

Ինչպե՞ս կփոխվի իմ կյանքը, եթե վկայություն ձեռք բերեմ Մորմոնի Գրքի մասին և խորացնեմ այն:

Հետևյալ աղբյուրները պարունակում են պատմու-
թյուններ այն մարդկանց մասին, որոնց կյանքը
փոխվել է, երբ նրանք վկայություն են ձեռք բերել
Մորմոնի Գրքի մասին կամ ապավինել են դրան
դժվարության պահին.

- “How the Book of Mormon Changed My Life”
(3:12).
- “Your Testimony and the Book of Mormon” (*New
Era*, Sept. 2017).
 - Allen Davis, “The Blessing of a Persistent
Challenge” (21)
 - Portia Marjorie J. Alvaro, “Accepting a Prophet’s
Challenge” (22)
 - “The Book That Saved My Life” (23)

ԴԱՍ 26 ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Նախքան ձեր հավատքի փորձությունը

Մորմոնի Գրքում արձանագրված են բազմաթիվ օրինակներ, երբ մարդիկ փորձության պահին գործում են հավատքով առ Հիսուս Քրիստոսը և ստանում վկայություններ, որոնք հաստատում են նրանց հավատքը: Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա բացատրել, թե ինչու է առ Հիսուս Քրիստոսը հավատք գործադրելը նախորդում հոգևոր վկայություն ստանալուն և պարզել, թե ինչպես կարող են գործել ավելի մեծ հավատքով Նրա հանդեպ, երբ հանդիպում են փորձությունների: Ուսանողները նաև կխորհեն, թե հավատով ոգեշնչված ինչ գործողություններ կարող են կատարել, որպեսզի ձեռք բերեն կամ խորացնեն Մորմոնի Գրքի վերաբերյալ իրենց վկայությունը:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Կիսվեք իրական պատմություններով:

Որպեսզի մեծացնեք ուսանողների սովորելու հետաքրքրությունը, կարող եք կիսվել իրական պատմություններով մարգարեների կյանքից, Եկեղեցու պատմությունից, գերագույն համաժողովների ելույթներից, Եկեղեցու ամսագրերից, ձեր իսկ կյանքից կամ կարող եք հրավիրել ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով: Նման պատմությունները կարող են լուսաբանել ավետարանի սկզբունքները և օգնել ուսանողներին զգալ դրանց ճշմարտությունն ու կարևորությունը:

մարտահրավերը սպառնում էր իմ ընտանիքին և իմ բարեկեցությանը, և ես մտածում էի, որ գուցե ֆինանսական ճգնաժամը չկարողանանք հաղթահարել: Ես աղոթում էի ինչ-որ հրաշագործ միջամտության համար, որը կազատեր մեզ: Չնայած ես այդ աղոթքը շատ անգամներ էի հղել մեծ անկեղծությամբ և լուրջ ցանկությամբ, պատասխանը վերջում «ոչ» էր: (“Look to God Each Day,” *New Era*, Apr. 2015, 3–4)

- Ինչպե՞ս կարող է նման փորձառությունը մարտահրավեր դառնալ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի համար:
- Ուրիշ ի՞նչ իրական օրինակներ գիտեք, թե մարդկանց հավատքն ինչպես կարող է փորձվել:

Հրավիրեք ուսանողներին վերանայել հավատքի վերաբերյալ Մորմոնի ուսմունքները Եթեր 12.3–7, 12, 18-ում, ապա տվեք հետևյալ հարցերը.

- Հավատք գործադրելու վերաբերյալ ի՞նչ կարող ենք սովորել Եթերի և Մորմոնի օրինակներից: (Այլ ճշմարտությունների շարքում ուսանողները կարող են նշել նաև հետևյալը. **Նախքան մեր հավատքի փորձությունը, մենք վկայություն չենք ստանում:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է ակնկալվում, որ նախ մենք պետք է հավատք ցուցաբերենք, մինչև Աստծուց կստանանք հոգևոր վկայություն:

Մորմոնի ուսուցանում է հավատքով գործելու կարևորության մասին

Ցուցադրեք երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը (դուք կարող եք նշել, որ ուսանողները կարդացել են այս փորձառության մասին նախապատրաստական նյութի բաժին 1-ում):



Գերագույն Իշխանավոր կանչվելուց որոշ ժամանակ առաջ ես բախվեցի անձնական տնտեսական մարտահրավերի, որը տևեց մի քանի տարի: Ժամանակ առ ժամանակ այս

- Ինչպե՞ս ենք մենք օրհնվում, երբ հավատարիմ ենք մնում Հիսուս Քրիստոսին մեր փորձությունների ընթացքում: (Կարող եք վերանայել երեց Քրիստոֆերսոնի ելույթը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Հրավիրեք ուսանողներին մտածել Մորմոնի Գրքի այն օրինակների մասին, երբ փորձությունների կամ հակառակության հանդիպելիս մարդիկ գործել են Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Անհրաժեշտության դեպքում նրանց մի քանի բուրբ օրինակներ, որպեսզի ուսումնասիրեն այն մարդկանց պատմությունները, որոնց մասին մտածել են: (Այն ուսանողները, ովքեր լրացրել են նախապատրաստական նյութի 2-րդ բաժնի ուսումնական վարժությունը, կարող են վերանայել իրենց սովորածը:)

Բավարար ժամանակից հետո դասարանը բաժանեք փոքր խմբերի, որպեսզի քննարկեք հետևյալ հարցերը (հիշեցրեք ուսանողներին, որ նրանք պատասխանել են նմանատիպ հարցերի նախապատրաստական նյութի 2-րդ բաժնում):

1. Անհատները կամ մարդիկ ինչպե՞ս են հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը: Ի՞նչ օրհնություններ և աստվածային զորություն է պարգևել Տերն այն բանից հետո, երբ նրանք հավատք են գործադրել Նրա հանդեպ: (Օգտակար է նշել, որ որոշ օրհնություններ գուցե չտրվեն մինչև հաջորդ կյանքը:)
2. Ի՞նչ սկզբունքներ կարող եք սովորել այդ պատմությունից: Ինչպե՞ս կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում:

Դուք կարող եք նաև հրավիրել ուսանողներին խորհել իրենց քննարկած սկզբունքների շուրջ և գրառել դրանց վերաբերյալ իրենց սեփական մտքերն ու տպավորությունները:

Մորմոնի հրավիրում է ընթերցողներին վկայություն փնտրել Մորմոնի Գրքի վերաբերյալ

Ցուցադրեք հետևյալ սցենարը.

Պատկերացրեք, որ դուք ձեր մոտ ընկերոջը հենց նոր տվել եք Մորմոնի Գրքի մի օրինակ և վկայել եք, որ այն ճշմարիտ է: Ի պատասխան՝ ձեր ընկերն ասում է. «Շնորհակալ եմ այն ինձ հետ կիսելու համար: Ես տարբեր կարծիքներ եմ լսել Մորմոնի Գրքի մասին: Մեկը նույնիսկ զգուշացրել է ինձ չկարդալ այն, քանի որ լի է ստերով»:

- Ինչպե՞ս կարձագանքեք Մորմոնի Գրքի վերաբերյալ ձեր ընկերոջ վերապահումներին:
- Ինչպե՞ս կարող եք կիրառել Եթեր 12.6 հատվածի ուսմունքներն այս իրավիճակում:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոնի 10.3–5 հատվածները: Հանձնարարեք դասարանի անդամներին հետևել և տեսնել, թե ինչպես կարող ենք վկայություն ձեռք բերել Մորմոնի Գրքի վերաբերյալ:

- Մենք ի՞նչ պետք է անենք, եթե ցանկանում ենք վկայություն ստանալ Մորմոնի Գրքի վերաբերյալ: (Ուսանողները կարող են նշել հետևյալը կամ նման մի սկզբունք. **Մորմոնի Գրքի վերաբերյալ վկայություն ստանալու համար մենք պետք է հիշենք և խորհենք Տիրոջ ողորմության շուրջ, մինչ կարդում ենք գիրքը, ապա հարցնենք Աստծուց անկեղծ միտումով և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով՝ արդյոք այն ճշմարիտ է:**)
- Մորմոնի հրավերն ընդունելն ինչպե՞ս է հավատքով գործելու վերաբերյալ մեր սովորածի օրինակը հանդիսանում: (Ուսանողների համար օգտակար կլինի վերանայել Երեց Զին Ռ. Քուքի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 3-ում:)

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութի 3-րդ բաժնում նրանց հանձնարարվել է անդրադառնալ և գրի առնել իրենց փորձառությունը՝ կապված հոգևոր վկայության հետ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ փորձառություն են ունեցել և ինչ են սովորել, մինչ փնտրել և ստացել են հոգևոր վկայություն Մորմոնի Գրքի մասին:

Կարող եք կիսվել Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի՝ Մորմոնի խոստումի վերաբերյալ հետևյալ խոսքերով.



Հուսով եմ, դուք ինքներդ փորձել եք այդ խոստումը կամ շուտով կփորձեք: Պատասխանը կարող է չգալ հոգևոր հզոր փորձառությամբ: Ինձ մոտ սկզբում այն եկավ խաղաղությամբ: Սակայն ամեն անգամ, երբ կարդաում և աղոթում էի Մորմոնի Գրքի համար, պատասխանը գալիս էր շատ ավելի հզոր ձևով:

Ես հույսս չեմ դնում անցյալում կատարվածի վրա: Մորմոնի Գրքի վերաբերյալ իմ կենդանի վկայությունը ապահով պահելու համար ես հաճախ եմ ստանում Մորմոնի խոստումը: Ես այդ վկայության օրհնությունը չեմ համարում

մշտական իրավունք: («Կ ենդանի վկայություն», *Լիաիոնա*, մայիս 2011, 127)

- Դուք ի՞նչ եք անում կամ ի՞նչ կարող եք անել, որպեսզի ամրացնեք Մորմոնի Գրքի վերաբերյալ ձեր վկայությունը:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ կփոխվեր իրենց կյանքում, եթե նրանք չունենային հավատք, հույս կամ գթություն: Երբ նրանք պատրաստվեն հաջորդ դասին, հրավիրեք մտածել, թե ինչ կարող են անել, որպեսզի այս Քրիստոսաման հատկանիշները լիարժեք ներառեն իրենց կյանքում:



ԴԱՍ 27. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հավատք, հույս և գթություն

Երբ նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն Առաջին Նախագահությունում էր, ուսուցանել է. «Հավատք, հույսն ու գթությունը լրացնում են միմյանց, և երբ մեկն ավելանում է, մյուսները ևս աճում են: . . . Այս երեք հատկանիշները՝ հավատք, հույսը և գթությունը, աշխատելով միասին և հիմնվելով Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ճշմարտության ու լույսի վրա, մեզ առաջնորդում են «հարստանալ[ի] բարի գործերով» [տես Ալմա 7.24]» («Հույսի անսահման գործությունը», *Լիստհոնա*, նոյեմբեր 2008, 23, 24; տես Մորոնի 10.20): Երբ ուսումնասիրեք այս նյութը, խորհեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի այս աստվածային հատկանիշները լիարժեք ներառեք ձեր կյանքում:

ԲԱԺԻՆ 1

Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հավատն ինչպե՞ս է ազդում իմ հույսի վրա

Նեփիազիների քաղաքակրթության կործանումից հետո Մորոնին մենակ մնաց, որպեսզի ավարտի Մորմոնի Գիրքը: Նա նաև ավելացրեց իր հոր՝ Մորմոնի որոշ ուսմունքներ, որոնք ներառում էին հավատքի, հույսի և գթության առաքինությունների մասին մի քարոզ (տես Մորմոնի 7.1):





Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մորոնի 7.33, 38, 40–43-ը և փնտրեք, թե ինչ է ուսուցանել Մորմոնը հավատքի և հույսի փոխհարաբերության մասին:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ օրինություններ եք ստացել կամ կարող եք ստանալ ձեր կյանքում, երբ ձեր հավատքն ու հույսը կենտրոնացնեք Հիսուս Քրիստոսի վրա:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է հավատի և հույսի միջև կապի մասին.



Երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ *իրական* հավատքը՝ ամբողջ հոգով և անսասան, տիեզերական մի ուժ է: Դա կարող է լինել պատճառական մի ուժ, որի միջոցով տեղի են ունենում հրաշքներ: Կամ այն կարող է լինել ներքին ուժի աղբյուր, որի միջոցով մենք գտնում ենք խաղաղություն, հարմարավետություն և հաղթահարելու համարձակություն:

Երբ մենք մեր հավատը և վստահությունը դնում ենք գործի մեջ, ծնվում է հույսը: Հույսը ծնվում է հավատից և իմաստ ու նպատակ է հաղորդում մեր բոլոր գործերին: Այն նույնիսկ կարող է մեզ տալ խաղաղ հավաստիացում, որը մեզ անհրաժեշտ է՝ անօրինություններով, աղետներով և անարդարություններով լի աշխարհում երջանիկ ապրելու համար: (“The Joy of Hope Fulfilled,” *Ensign*, Nov. 1992, 32)



ԲԱԺԻՆ 2

Ես ինչպե՞ս կարող եմ
մեծացնել հույս ունենալու իմ
կարողությունը

Երբ Մորոնին կրճատում էր Հարեդացիների հիշատակարանը, նա ներառեց հավատքի վերաբերյալ Եթերի ուսմունքները: Այնուհետև նա պատմում է բազմաթիվ հրաշքների մասին, որոնք տեղի են ունեցել Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով: (Տես Եթեր 12.3–22:) Մորոնին բացատրել է, որ «հավատքը բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում» (հատված 6):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Եթեր 12.4, 32-ը և մտածեք, թե ինչ սպասումներ ունեք, մինչ հավատք եք գործադրում առ Աստված:

Հույսի անսահման զորության վերաբերյալ նախագահ Ուիլդորֆն ասել է հետևյալը.



Հույսը Հոգու պարգևն է [տես Մորոնի 8.26]: Դա հույս է, որ Հիսուս Քրիստոսի Քավոթյամբ և Նրա Հարության զորությամբ մենք կբարձրանանք դեպի հավերժական կյանք, և դա Փրկիչի հանդեպ հավատքի շնորհիվ է [տես Մորոնի 7.41]: Այդպիսի հույսը և՛ խոստացված սկզբունք է, և՛ պատվիրան

[տես Կողոսացիս 1.21–23], և ինչպես բոլոր պատվիրանները, մենք պարտավոր ենք այն դարձնել մեր կյանքի գործուն մասը և հաղթահարենք հույսը կորցնելու գայթակղությունը: Մեր Երկնային Հոր ողորմած երջանկության ծրագրի հանդեպ հույսը տանում է դեպի խաղաղություն [տես Հռովմայեցիս 15.13], ողորմություն [տես Սաղմոս 33.22], ցնծություն [տես Հռովմայեցիս 12.12] և ուրախություն [տես Առակաց 10.28]: Փրկության հույսը նման է պաշտպանող սաղավարտի [տես Ա Թեսաղոնիկեցիս 5.8], և մեր հավատքի [տես Եբրայեցիս 11.1; Մորոնի 7.40] հիմքն ու մեր հոգիների խարիսխն է [տես Եբրայեցիս 6.19; Եթեր 12.4]: («Հույսի անսահման գործությունը», 21-22)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք անել, որպեսզի հույսը դարձնեք ձեր առօրյա կյանքի առավել գործուն մասը:

ԲԱԺԻՆ 3

Գթությունը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ուրիշների և Հիսուս Քրիստոսի հետ իմ հարաբերությունների վրա

Հավատը և հույսը քննարկելուց հետո Մորմոնն ավարտում է իր քարոզը՝ կենտրոնանալով գթության վրա, որն էլ «Քրիստոսի մաքուր սերն է» (Մորմոնի 7.47):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մորոնի 7.43-48-ը և նշեք բառեր կամ արտահայտություններ, որոնք սահմանում կամ նկարագրում են գթությունը:

Նախագահ Զին Բ. Բինգհեմը՝ Սփոփող միության գերագույն նախագահը, ասել է.



Հիսուս Քրիստոսը գթության կատարյալ մարմնավորում է: Նախաերկրային կյանքում մեր Փրկիչը լինելու Նրա առաջարկը, մահկանացու կյանքի ընթացքում Նրա գործողությունները, Քավության Նրա աստվածային պարզև և մեզ մեր Երկնային Հոր մոտ վերադարձնելու Նրա շարունակական ջանքերը հանդիսանում են գթության մեծագույն դրսևորումներ: Նրա գործողության կիզակետում կա մի բան՝ սերը Իր Հոր հանդեպ, որը դրսևորվում է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ տաժած Իր սիրով: . . .

Ես վկայում եմ, որ եթե հետևենք Նրա կատարյալ օրինակին, մենք կստանանք գթության պարզև, որն այս կյանքի ընթացքում մեզ մեծ ուրախություն կպարզև, և մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանքի խոստացված օրհնությունը կբերի: («Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ», *Լիահոնա*, նոյեմբեր 2016, 6, 9)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք մի քանի օրինակների մասին, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը հանդիսանում «գթության կատարյալ մարմնավորում»: Նման օրինակներ փնտրեք սուրբ գրություններում և պատրաստ եղեք ձեր դասարանի հետ կիսվել առնվազն մեկ օրինակով:



Երբ մտածեք Փրկիչի օրինակի մասին, խորհեք, թե ինչպես կարող է դրսևորվել գթությունը ձեր ամենօրյա կյանքում: Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնն ուսուցանել է.



Ես նկատի ունեմ այն գթությունը, որը մղում է մեզ լինել ցավակցող, կարեկցող և բարեգութ, ոչ միայն հիվանդության, չարչարանքի կամ վշտի պահին, այլև մյուսների թուլության և սխալվելու պահերին:

Խիստ զգացվում այն գթության կարիքը, որն ուշադրություն է դարձնում աննկատ մնացած մարդուն, հույս է տալիս հուսալքվածին, օգնում է տառապալիս: Իսկական գթությունը գործի դրված սերն է: Գթության կարիքը զգացվում է ամենուր:

Մենք այն գթության կարիքն ունենք, որը չի բավարարվում միայն լսելով կամ կրկնելով ուրիշների հետ տեղի ունեցած դժբախտությունների լուրերը, այդ դեպքում միայն դժբախտը օգնություն կստանա: Ամերիկյան կրթական և քաղաքական գործիչ Հորաս Մանը մի անգամ ասել է. «Վշտահարին խղճալը մարդկային է, սփոփելը՝ աստվածային» [Horace Mann, *Lectures on Education* (1845), 297]:

Գթությունը համբերություն ունենալն է մեկի հետ, ով մեզ նվաստացրել է: Դա հեշտությամբ վիրավորվելու մղումին դիմակայելն է: Դա թուլություններն ու թերություններն ընդունելն է: Դա մարդկանց ընդունելն է այնպես, ինչպես նրանք իրականում կան: Դա ֆիզիկական արտաքինից այն կողմ հատկանիշներ տեսնելն է, որոնք չեն մարի ժամանակի

ընթացքում: Դա մյուսներին դասակարգելու ներքին մղումին դիմադրելն է: («Գթությունը երբեք չի խափանվում», *Լիահոնա*, նոյեմբեր 2010, 124)



Գրի առեք ձեր մտքերը

Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի ջերմեռանդորեն փնտրեք գթասրտության պարզևր և քրիստոսանման սեր զարգացնեք ուրիշների հանդեպ: Ո՞վ կարիք ունի զգալ Փրկիչի սերը ձեր միջոցով: Ի՞նչ կարող եք անել, որ օգնեք այդ մարդուն զգալ Նրա սերը:

Ցանկանում եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող է հույսն օգնել ինձ դժվար ժամանակներում:

«A Mother's Hope» (3:05) տեսանյութում նախագահ Ուիլյամսը կիսվում է մի պատմությամբ, թե ինչպես է Նրա մայրը հաղթահարել վախը հույսով և հավատքով:



Տասներկու Առաքյալների Զվորումից Նախագահ Բոյո Զ. Փաքերն իր «Մեր հույսի պատճառը» (*Lhahohna*, նոյեմբեր 2014, 6–8) ելույթում ուսուցանել է, որ Հիսուս Զրիստոսի շնորհիվ մենք կարող ենք հույս ունենալ բոլոր իրավիճակներում:

Ի՞նչ կարող ենք անել, որ իմ հարաբերություններում զարգացնեմ ավելի մեծ գթասրտություն:



Սփոփող միության նախկին գերագույն Նախագահ Բոննի Դ. Փարքինը իր «Ընտրել գթությունը՝ այդ լավ բաժինը» (*Lhahohna*, նոյեմբեր 2003, 104–6) ելույթում ուսուցանել

է, որ մենք պետք է «ոչ միայն ավելի շատ սիրենք միմյանց, այլ սիրենք միմյանց *ավելի լավ*» (Էջ 106):



Յոթանասունից երեք Լին Գ. Ռոբինսը «Ազատ ընտրություն և սեր ամուսնության մեջ» (*Ensign*, հոկտեմբեր 2000, 16–22) հոդվածում քննարկել է ամուսնության ընթացքում սեր ցուցադրելու տարբերությունը Տիրոջ ուղու և սխալ ուղու միջև:

Ինչպե՞ս կարող է գթությունը փոխել մարդու կյանքը:

«Sitting on the Bench: Thoughts on Suicide Prevention» (6:42) տեսանյութը ցույց է տալիս է, որ երբեմն մարդուն օգնելու ամենագորեղ գործիքն է՝ պարզապես լինել ընկեր և սիրալիր ու քաջալերող խոսքեր ասել:

ԴԱՍ 27. ՈՒՍՈՒՑՈՒ ԵՎ ՆՅՈՒԹ

Հավատք, հույս և գթություն

Երբ նախագահ Դիտեր Ֆ. Ույսթորֆն Առաջին Նախագահությունում էր, ուսուցանել է. «Հավատք, հույսն ու գթությունը լրացնում են միմյանց, և երբ մեկն ավելանում է, մյուսները ևս աճում են» («Հույսի անսահման զորությունը», *Հիստորիա*, նոյեմբեր 2008, 23): Այս դասին ուսանողները կկարողանան մեկնաբանել, թե ինչպես զարգացնել և մեծացնել իրենց հավատն ու հույսը Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ: Նրանք նաև կկարողանան պարզել, թե ինչ կարող են անել՝ Քրիստոսանման հատկանիշներից գթությունը լիարժեք զարգացնելու համար:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Օգտագործեք համապատասխան նյութերի բազմազանություն: Ուսանողների ուսումնական փորձառությունը բարելավելու համար օգտագործեք ուսուցման մի շարք մեթոդներ, ինչպես օրինակ՝ հարցեր, դասարանական քննարկումներ, պատմություններ, գրավոր վարժություններ, իրական օրինակներ, պատշաճ հումոր, առարկաներ, նկարներ, մեջբերումներ, խմբային աշխատանք, ուսուցիչների և օժանդակ կազմակերպությունների ներկայացուցիչների ելույթներ կամ տեսալսողական նյութեր: Միշտ հիշեք, որ ուսուցման մեթոդները ուսումը բարելավելու միջոց են և չպետք է ինքնանպատակ դառնան: (Տես *Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն. Ձեռնարկ Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների ուսուցիչների և ղեկավարների համար* [2012], 66:)

Մորմոնն ուսուցանում է հավատքի և հույսի միջև եղած կապի մասին

Ցուցադրեք գույնզգույն թելերով հյուսված պարանի և իրար վրա շարված գունավոր խորանարդիկների պատկեր: Բացատրեք, որ այս առարկաների տարբեր գույները ներկայացնում են հավատ, հույս և գթություն:



- Ինչպե՞ս կարող են հավատք, հույսը և գթությունը ավելի նման լինել պարանի միահյուսված թելերին, քան իրար վրա դրված խորանարդիկները:

Ցուցադրեք Յոթանասուհից երեց Չի Հոնգ (Մեմ) Վոնգի հետևյալ խոսքերը.



Հավատք, հույսը և գթությունը . . . միահյուսված են իրար: Մենք չենք դադարում նորոգել մեր հավատքը, իսկ հետո ձեռք ենք բերում հույս, կամ հույս ունենալուց հետո, ի վերջո, զարգացնում ենք գթություն: Դրանք բոլորը միասին են գործում: Եվ քանի որ միահյուսվում են, դրանք միասին օգնում են ձևավորել մեր բնավորությունն ու վկայությունը: ("Faith, Hope, and Charity: Interlaced Virtues," *Ensign*, Dec. 2016, 19)

Հրավիրեք ուսանողներին վերանայել Մորմոնի 7.33, 38, 40–43-ը և փնտրել, թե ինչ են

ուսուցանում այս հատվածները հավատքի և հույսի կապի մասին:

- Ի՞նչ ենք սովորում այս հատվածներից հավատի և հույսի միջև եղած կապի մասին: (Ուսանողները կարող են արտահայտել մի քանի ճշմարտություններ, ներառյալ հետևյալը. **Ջարգացնելով հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ՝ մենք հույս ենք ձեռք բերում, որ Նրա Քավության և Հարության միջոցով կարող ենք բարձրանալ դեպի հավերժական կյանք:**)
- Ինչո՞ւ է հույսը սերտորեն կապված հավատքի և վստահության հետ առ Հիսուս Քրիստոսի Քավությունը և Նրա Հարությունը:

Հրավիրեք ուսանողներին վերանայել Նախագահ Մ. Ռասսել Բալլարդի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:

- Կարո՞ղ եք մտածել օրինակների մասին, որոնք գուցե տեսել եք մարդկանց կյանքում, որոնք արտացոլում են Նախագահ Բալլարդի ուսուցանած ճշմարտությունները:

Կարող եք կիսվել նախագահ Ռասսել Մ. Նելսոնին՝ անձնական խնդրի դեմ պայքարող ընկերօջից ուղղված նամակի հետևյալ հատվածով.

«Մեղքն ու ձախողումը, որոնք ես զգում եմ, գրեթե անհնար են դարձնում ապաշխարելը: Ես կորցնում եմ իմ հավատը: Նախ մեղքերը, հետո հաջորդեցին կասկածները: . . .

Իմ ցավագին անորոշությունը, անվճարականությունը, անելանելի վիճակը, որոշում կայացնելու անկարողությունը և վստահության պակասը առաջ են բերում տառապանք և ընկճվածություն: Իմ ընտանիքը, իմ ապագան և իմ հավատը վտանգված են: Ես կորցնում եմ հույսս»: (“A More Excellent Hope,” *Ensign*, Feb. 1997, 60)

Հրավիրեք ուսանողներին վերանայել Եթեր 12.4, 32 հատվածները և Երեց Դիտեր Ֆ. Ուիլյամսի հայտարարությունը նախապատրաստական

նյութի բաժին 2-ում, ապա խորհել, թե ինչ կարող է անել այս նամակի հեղինակը, որպեսզի վերականգնի հույսը:

- Ի՞նչն է ձեզ առավելագույնս օգնել՝ հույսը դարձնել ձեր առօրյա կյանքի գործուն մասը:
- Ելնելով նրանից, թե դուք ինչ եք մտածել և զգացել այս դասի ընթացքում, փոփոխություններ կատարելու ի՞նչ ոգեշնչում եք զգում՝ հույսով լցվելու ձեր կարողությունը մեծացնելու համար: (Կարող եք ուսանողներին ժամանակ տրամադրել՝ իրենց մտքերն ու զգացումները գրանցելու համար:)

Մորմոնն ուսուցանում է գթության պարզև փնտրելու կարևորությունը

Ուսանողներին տվեք հետևյալ հարցը.

- Ձեր ուսումնասիրությունից և ձեր փորձից ելնելով՝ ինչպե՞ս կբացատրեք, թե ինչ է գթությունը:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Մորմոնի 7.43-44, 48-ը և հարցրեք.

- Ձեր կարծիքով, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն ու հույսը ինչպե՞ս են կապված գթության պարզևի հետ:
- Մորմոնը մեզ ի՞նչ է խորհուրդ տվել անել, եթե իսկապես ցանկանում ենք ստանալ գթության պարզևը: (Օգնեք ուսանողներին բացահայտել նման մի սկզբունք. **Եթե աղոթենք սրտի ողջ կորովով և հետևենք Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք լցվել գթությամբ:**)

Կարող եք ուսանողներին մի քանի ընդհանուր հարցերի, որպեսզի խորհեն այն ժամանակների մասին, երբ նրանք աղոթքով օգնություն են խնդրել գթություն ունենալու համար, և արդյունքում ինչ է տեղի ունեցել:

Հրավիրեք դասարանին կազմել փոքր խմբեր և յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ օժանդակ նյութը:

Գթության օրինակներ ամենօրյա կյանքից

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը. Ուսուցչի
Նյութ. Դաս 27

Խմբով փորձեք խորացնել ձեր հասկացողությունը գթության վերաբերյալ՝ լրացնելով հետևյալ վարժություններից մեկը կամ մի քանիսը.

1. Վերանայեք Մորմոնի 7.45-47-ը և նշեք բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են գթությունը: Դրանից հետո հերթով լրացրեք հետևյալ հարցը. «Ինչպիսի՞ն է գթությունը, երբ...» (օրինակ՝ «Ինչպիսի՞ն է գթությունը, երբ համաձայն չեք մեկի հետ, կամ՝ երբ մեկը ձեզ վիրավորել է»): Օգտվելով Մորմոնի 7.45–47-ից՝ պատասխանեք ձեր կազմած հարցերին:
2. Վերանայեք Նախագահ Ջին Բ. Բինգհեմի հայտարարությունը Նախապատրաստական Նյութի բաժին 3-ում և կիսվեք օրինակներով, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը «գթության կատարյալ մարմնավորում հանդիսանում» («Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ», *Լիա՛հոնա*, նոյեմբեր 2016, 6): Երբ քննարկեք տարբեր օրինակներ, միմյանց հարցեր տվեք, որոնք կարող են օգնել ձեզ կիրառել այն, ինչ սովորում եք Փրկիչի օրինակից:
3. Վերանայեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հայտարարությունը Նախապատրաստական Նյութի բաժին 3-ում և կիսվեք գթության օրինակներով, որոնց ակնատեսն եք եղել ձեր ծանոթների կյանքում: Քննարկեք, թե ինչ են սովորեցնում այս օրինակները գթության մասին, և ինչպես կարող են այս օրինակներն օգնել մեզ ավելի Քրիստոսանման լինել մեր առօրյա կյանքում:

Բավարար ժամանակից հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչ են սովորել իրենց խմբերում:

Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին հրավիրեք ընտրել այն մեկը, որը, իրենց կարծիքով, առավել համապատասխան է իրենց ներկա հանգամանքներին: Խրախուսեք ուսանողներին գրի առնել իրենց ունեցած ցանկացած զգացողությունը կամ ստացած տպավորությունները:

- Ո՞վ կարիք ունի զգալ Փրկիչի սերը իմ միջոցով: Ի՞նչ կարող եմ անել, որ օգնեմ այդ մարդուն զգալ Նրա սերը:
- Ինչպե՞ս եմ ես օրհնվել մեկ ուրիշի Քրիստոսանման խոսքերի կամ գործերի միջոցով:
- Ե՞րբ է Քրիստոսանման սիրո ցուցադրումը մոտեցրել ինձ Հիսուս Քրիստոսին և Երկնային Հորը:
- Ես ի՞նչ եմ անում (կամ չեմ անում) այժմ, որն ինձ հեռու է պահում գթության պարզև փնտրելուց (կամ ձեռք բերելուց):

Խրախուսեք ուսանողներին նպատակ դնել, թե ինչպես կարող են աշխատել հավատքի, հույսի և գթության Քրիստոսանման հատկանիշները ձեռք բերելու համար, որպեսզի նրանք ավելի շատ նմանվեն Հիսուս Քրիստոսին:

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին պատրաստված գալ հաջորդ դասին, որպեսզի խոսեն այն մասին, թե ինչպես է Մորմոնի Գիրքն առաջնորդում մարդկանց Հիսուս Քրիստոսի մոտ: Խրախուսեք ուսանողներին այս դասընթացի ժամանակ մտածել Մորմոնի Գրքի հետ կապված իրենց փորձառությունների մասին, որոնք ամրացրել են իրենց վկայությունը և հարաբերությունը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ:



ԴԱՍ 28. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Եկեք Քրիստոսի մոտ

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նկատել է. «Մորմոնի Գրքի ուսումնասիրությունից շատ բան կարելի է քաղել, եթե կենտրոնանանք դրա հիմնական նպատակի վրա. այն վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Եթե համեմատելու լինենք, մնացած բոլոր թեմաներն այդքան էլ էական չեն» («A Testimony of the Book of Mormon,” *Ensign*, Nov. 1999, 69): Մորմոնի Գրքի ձեռնարկում ուսումնասիրությունն ինչպե՞ս է օգնել ձեզ ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին: Ուսումնասիրելիս հարցրե՞ք ինքներդ ձեզ, թե ինչ կարող եք անել, որպեսզի լիարժեք գաք Նրա մոտ:

ԲԱԺԻՆ 1

Ինչպիսի՞ զորության իրավունք կտրվի ինձ, եթե հիմքս կառուցեմ Հիսուս Քրիստոսի վրա

Ք.ա. 30 թվականին Նեփիացիները «ընկել էին անհավատության մի վիճակի և սոսկալի ամբարշտության մեջ» և «հասունանում էին կործանման համար» (Հեղինակ 4.25; 5.2): Վհատված լինելով մարդկանց ամբարշտության պատճառով՝ Նեփին հրաժարվում է դատավորական աթոռից և իր եղբոր՝ Լեքիի հետ, իր կյանքի մնացած մասը նվիրում ավետարանը քարոզելուն (տես Հեղինակ 5.4): Նախքան իրենց առաքելությունը կատարելը,

նրանք հիշում են կարևոր խորհուրդը, որը ստացել էին իրենց հորից՝ Հելամանից:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացե՛ք Հեղինակ 5.9-12-ը, փնտրելով, թե Հեղինակն ինչ է ուսուցանել իր որդիներին այն մասին, թե Նրանք ինչու պետք է կառուցեն իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:



մենք վերահսկողություն չունենք, սակայն զգում ենք դրանցից բխող ցավը:

... Նա խոստացել է, որ եթե մենք կառուցենք մեր կյանքը Իր վեմի վրա, դևը զորություն չի ունենա մեզ վրա [տես Հեղինակի 5.12]: Եվ Նա խոստացել է, որ երբեք չի լքի կամ մոռանա մեզ [տես Եբրայեցիս 13.5]: Մահկանացու կյանքում գոյություն չունի սրան համարժեք ոչ մի բան: Չկա նման նվիրվածություն, զորություն կամ սեր: Նա մեր միակ հնարավորությունն է: (“Our Only Chance,” *Ensign*, May 1999, 66–67)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Հեղինակը կյանքի մարտահրավերները նկարագրել է փոթորիկների օգնությամբ: Ի՞նչ փոթորիկներ կան ձեր կյանքում, որոնց դիմակայելու համար Տիրոջ օգնության կարիքն ունեք:

Երբ Քույր Շերի Լ. Դյուն ծառայում էր Սփոփող միության գերագույն նախագահությունում, նա ուսուցանել է, թե ինչու է Հիսուս Քրիստոսը մեր միակ հուսալի հիմքը.



Ինքն իրեն թողնված՝ բնական մարդը անխուսափելիորեն ենթարկվում է սատանային (տես Մոսիա 3.19), որը լքում է իր որսը հենց այն պահին, երբ նրան գայթակղելով կարողանում է հեռացնել նեղ ու անձուկ արահետից: Սակայն Փրկիչը կառաջնորդի նրանց, ովքեր կհետևեն Իրեն *մինչև* տուն: ...

Տերը գիտի ճանապարհը, որովհետև Նա է ճանապարհը և մահկանացությունը հաջողությամբ հաղթահարելու մեր միակ հնարավորությունը: Նրա Զավությունը մատչելի է դարձնում այն ողջ զորությունը, խաղաղությունը, լույսը և ուժը, որ մեզ պետք է կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար՝ սկսած մեր սեփական սխալներից և մեղքերից՝ մինչև փորձությունները, որոնց վրա



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա կառուցելով, ինչպե՞ս եք դիմակայել փոթորիկներին, որոնց հանդիպել եք ձեր կյանքում:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի գամ դեպի Հիսուս Քրիստոսը

Մորմոնի Գրքի վերջին գլխում Մորմոնին հրավիրում է բոլոր մարդկանց գալ Հիսուս Քրիստոսի մոտ:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մորմոնի 10.30, 32-33-ը, փնտրելով, թե ըստ Մորմոնի խոսքերի, որն է Հիսուս Քրիստոսի մոտ գալու ընտրության արդյունքը:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրել է, թե ինչ է նշանակում «եկեք Քրիստոսի մոտ» (Մորմոնի 10.30, 32):



«Եկեք Քրիստոսի մոտ» արտահայտությունը հապավում է՝ փրկության ծրագիրը երեք բառով նկարագրելու միջոց: Դա նշանակում է ձեռք բերել Նրա Թավության և Հարության պտուղները՝ ի վերջո ձեռք բերել հավերժական կյանք: Հավերժական կյանքը կախված է մեր բարոյական կամքի ազատության կիրառումից, բայց դա հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով: Գալ Քրիստոսի մոտ նշանակում է՝ անել այն, ինչ պահանջվում է այդ շնորհից կառչելու համար՝ Նրա անսահման, փրկագնող զոհաբերության ներքո, սրբազործող, վերափոխող, քավող գործունեից: (“Why We Share the Gospel,” *Ensign*, Aug. 2014, 37)



Նախագահ Թադ Ռ. Քալիսթերը, ով ծառայել է որպես Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ, այսպես է բացատրել Տիրոջ շնորհը.



Իր Թավության շնորհիվ Փրկիչն ունի իրավագործող ուժեր, որոնք երբեմն կոչվում են շնորհ, [տես Bible Dictionary, “Grace”, տես նաև Սուրբ գրքերի ուղեցույց, «Շնորհ», scriptures.ChurchofJesusChrist.org], որոնք կարող են օգնել մեզ հաղթահարել մեր թուլությունները և անկատարությունները, և այդպիսով օգնել մեզ Նրա նման դառնալու մեր ձգտումներում:

Մորոնին այսպես է ուսուցանել. «Այո, եկեք Քրիստոսի մոտ, և կատարելագործվեք նրանում, . . . որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում» [Մորոնի 10.32]: Թվում է՝ կան ամենավազն երկու ուղիներ

կամ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ օգտվել այդ իրավագործող ուժերից, որոնք կարող են գտել, նույնիսկ, կատարյալ դարձնել մեզ:

Առաջինը՝ փրկարար արարողություններն են: . . . Երբեմն, մենք գուցե մտածենք արարողությունների մասին որպես մի ստուգացուցակի, որն անհրաժեշտ է վեհացման համար, բայց իրականում յուրաքանչյուրը բացահայտում է աստվածային մի ուժ, որն օգնում է մեզ ավելի նման դառնալ Քրիստոսին: . . .

Երկրորդ ուղին այդ իրավագործող ուժերի համար Հոգու պարգևներն են: Քրիստոսի Թավության շնորհիվ մենք իրավունք ունենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը և նրան ուղեկցող հոգևոր պարգևներ: Այդ պարգևները բարեպաշտության հատկանիշներ են, ուստի ամեն անգամ, երբ մենք ձեռք ենք բերում Հոգու պարգև, մենք ավելի ենք նմանվում Աստծուն: («Հիսուս Քրիստոսի Թավությունը», *Լիահոնա*, մայիս 2019, 87)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք, թե ինչ կարող եք իրականացնել Տիրոջ իրավագործող ուժով կամ շնորհով: Դուք ի՞նչ եք անում, որպեսզի ձեր կյանք իրավիքեք Տիրոջ շնորհը և օգնությունը:

ԲԱԺԻՆ 3

**Մորմոնի Գիրքը ինչպե՞ս է
ինձ բերել Հիսուս Քրիստոսի
մոտ և օգնել ինձ հավատարիմ
մնալ Նրան**

Երբ Մորմոնին կրճատեց հարեղացիների հիշատակարանը, որն այժմ Մորմոնի Գրքի մաս է կազմում, նա իր մտահոգությունը հայտնեց, որ ապագա ընթերցողները «գրելու մեջ մեր

թուլության պատճառով կծիծաղեն այս բաների վրա» (Եթեր 12.23): Տերը մխիթարեց Մորմոնիին, հայտարարելով. «Իմ շնորհը բավական է հեզերի համար, այնպես որ նրանք չեն չարաշահի ձեր թուլությունը» (Եթեր 12.26): Այնուհետև Մորմոնին աղոթեց հեթանոսների համար, վկայեց, որ տեսել է Հիսուսին և կարևոր հրավեր հղեց բոլոր նրանց, ովքեր, ի վերջո, կկարդան Մորմոնի Գիրքը (տես Եթեր 12.36–41):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Եթեր 12.41-ը և մտածեք, թե ինչպես եք արձագանքել Մորմոնիի հրավերին այս դասընթացի ընթացքում:



Գրի առեք ձեր մտքերը

Երբ պատրաստվեք վերջին դասին, մտածեք, թե ինչպես է Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունն օգնել ձեզ գալ Քրիստոսի մոտ և ավելի նմանվել Նրան: Նշեք հատուկ մտքեր, զգացմունքներ, տպավորություններ կամ փորձառություններ, որոնք մեծացրել են ձեր վկայությունը և խորացրել ձեր դարձը: Գրի առեք ձեր մտքերը:

Դասընթացի ձեր վերջին օրվան Նախապատրաստվելու համար ընտրեք և ավարտեք հետևյալ վարժություններից մեկը.

Տարբերակ 1. Ընտրեք Մորմոնի Գրքից մի հատված կամ ուսմունք, որը հատկապես զորեղ է եղել և օգնել է ձեզ գալ Քրիստոսի մոտ, ապա գրի առեք, թե ինչպես է դա ազդել ձեզ վրա:

Տարբերակ 2. Նշեք Մորմոնի Գրքից մի անհատի, որի օրինակը օգնել է ձեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում գալ Քրիստոսի մոտ, և գրի առեք ձեր սովորածը:

Տարբերակ 3. Խորհեք, թե ինչպես է Մորմոնի Գրքի ձեր վերջին ուսումնասիրությունը ոգեշնչել ձեզ գալ Քրիստոսի մոտ: Գրի առեք, թե ինչպես է ձեր վկայությունն աճել, և ինչպես է ամրապնդվել ձեր դարձը դեպի Փրկիչը:

Ձեր մտքերն ու զգացմունքները գրառելուց հետո աղոթեք և մտածեք, թե ովքեր կարող են օրինվել ձեր գրածով, և կիսվեք նրանց հետ: Պատրաստ եղեք նաև դասի ընթացքում կիսվել ձեր մտքերով:

Ցանկանո՞ւմ եք ավելին:
(Ոչ պարտադիր)

Որո՞նք էին Մորմոնիի վերջին խոսքերը Մորմոնի Գրքում:

“Moroni Invites All to Come unto Christ (Մորմոն 8–9; Մորմոնի 1, 10; Տիտղոսաթերթ)” (8:49) Մորմոնի Գրքի տեսանյութը պատմում է Մորմոնիի վերջին խոսքերի մասին, Նախքան Նա կթաքցներ թիթեղները Կումորա բլրում:

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Հիսուս Քրիստոսի վեճի վրա կառուցելու մասին:

«Հոգևոր պտուտահողմեր» (2:24) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից երեք Նիլ Լ.

Անդերսենը բացատրում է, թե Հիսուս Քրիստոսի հիմքի վրա մեր կյանքը կառուցելով, ինչպես կարող ենք դիմակայել մեր առջև կանգնած հոգևոր պտուտահողմերին:



«Հիսուս Քրիստոսը՝ մեր ամուր հիմքը» (*Ensign*, Apr. 2016, 58-63) հոդվածում Երեց Դոնալդ Լ. Շոլսթրոմը, ով Յոթանասունի Նախագահությունից էր, քննարկել է, թե ինչ է նշանակում կառուցել մեր կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

Ինչպե՞ս կարող եմ Քրիստոսի մոտ գալը դարձնել իմ ամենօրյա կյանքի մի մասը:



«Broken Things to Mend» (*Liahona*, May 2006, 69–71) ելույթում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Շոլլանդը պատասխանել է «Ինչպե՞ս է մարդը «գալիս Քրիստոսի մոտ» հարցին»:

«Come unto Christ» (4:48) երաժշտական տեսանյութը կիսում է այն ուղերձը, որ Երբ Քրիստոսին դնում ենք մեր կյանքի կենտրոնում, մենք միշտ կարող ենք հույս գտնել:

ԴԱՍ 28. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Եկեք Քրիստոսի մոտ

Իր հիշատակարանն ավարտելուց առաջ Մորոնի մարգարեն հրավիրել է ընթերցողներին՝ «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32): Այս դասին ուսանողները հնարավորություն կունենան բացատրել, թե ինչու է կարևոր կառուցել իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա և խորհել, թե ինչ կարող են անել, որպեսզի լիարժեք գան Նրա մոտ: Նրանք հնարավորություն կունենան նաև կիսվել, թե այս դասընթացի ժամանակ Մորմոնի Գրքի ուսումնասիրությունն ինչպես է օգնել իրենց գալ Հիսուս Քրիստոսի մոտ:

Ուսուցման առաջարկներ

Բարելավել մեր ուսուցումն ու ուսումնասիրությունը

Խրախուսեք ուսանողներին շարունակել մասնակցել ինստիտուտի դասերին:

Երիտասարդների համաշխարհային հոգևոր երեկոյի ժամանակ երեք Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ասել է. «Ես սիրում եմ ինստիտուտը: Հուսով եմ, որ դուք բոլորդ, ովքեր հնարավորություն ունեք, ոչ միայն ընդգրկված եք, այլև հաճախում և ակտիվորեն մասնակցում եք ինստիտուտի ծրագրերին: Դա լավագույն գործերից մեկն է, որ անում ենք Եկեղեցում» ("Choice and Commitment" [Jan. 12, 2020], broadcasts.ChurchofJesusChrist.org): Խրախուսեք ուսանողներին կատարել այս դասընթացի պահանջները և շարունակել մասնակցել ինստիտուտի դասերին:

Հելամանն ուսուցանում է իր որդիներին իրենց կյանքը կառուցել Հիսուս Քրիստոսի հիմքի վրա

Ցուցադրեք «Հոգևոր պտուտահողմեր» (մինչև 1:25) տեսանյութը կամ ցուցադրեք և կարդացեք երեք Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե երեք Անդերսենի ուսմունքներն ինչպես են կապված իրենց որոշակի հանգամանքների հետ:



Իմ երիտասարդ ընկերներ՝ աշխարհը սահուն չի գնա դեպի Փրկչի Երկրորդ Գալուստը: Սուրբ գրություններն ասում են, որ «բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ» [Վարդապետություն և Ուխտեր 88.91]: . . .

Մարգարեությամբ հայտնված երկրաշարժերից և պատերազմներից առավել մտահոգիչ են [տես Դավիթ Ն. Օուքս, "Preparation for the Second Coming," *Liahona*, May 2004, 7–10] հոգևոր պտուտահողմերը, որոնք կարող են պոկել ձեզ ձեր հոգևոր հիմքից և ձեր հոգին իջեցնել ձեզ համար աներևակայելի վայրում, իսկ դուք երբեմն չեք նկատի, որ տեղաշարժվել եք:

Այդ սոսկալի մորիկները հակառակորդի գայթակղություններն են: Մեղքը միշտ գոյություն է ունեցել այս աշխարհում, բայց այն երբեք չի եղել այդքան հասանելի, անհագորդ և ընդունելի: («Հոգևոր պտուտահողմեր», *Liahona*, մայիս 2014, 18)

- Ներկայումս ի՞նչ հոգևոր պտուտահողմերի են բախվում չափահաս երիտասարդները: (Ուսանողների պատասխանները կարող եք գրել գրատախտակին:)
- Դուք ինչպե՞ս կարող եք լավագույնս նախապատրաստվել ձեզ սպասվող հոգևոր պտուտահողմերին: (Կարող եք նշել, որ երեք Անդերսենն իր ելույթում տվել է նմանատիպ մի հարց, իսկ հետո մեջբերել Հելաման 5.12-ը:)

Միասին կարդացեք Հելաման 5.12-ը և հրավիրեք ուսանողներին նշել մի սկզբունք, որը կարող է օգնել նրանց դիմակայել իրենց հոգևոր պտուտահողմերին: (Ուսանողների պատասխանների հիման վրա կարող եք գրատախտակին գրել նմանատիպ մի սկզբունք. **Եթե մենք մեր հիմքը կառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, սատանան գործություն չի ունենա կործանելու մեզ:**)

- Ինչպե՞ս կարող են հոգևոր պտուտահողմերն ազդել այն մարդկանց վրա, ովքեր իրենց կյանքը կառուցել են աշխարհիկ արժեքների կամ փիլիսոփայությունների վրա:
- Ի՞նչն է Հիսուս Քրիստոսին դարձնում միակ հուսալի հիմքը, որի վրա պետք է կառուցենք մեր կյանքը: (Կարող եք հրավիրել ուսանողներին վերանայել Քույր Շերի Լ. Դյուի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)
- Ի՞նչը կարող է խանգարել մեզ կառուցել կամ պահպանել մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վրա: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այդ մարտահրավերները:

Հրավիրեք ուսանողներին կիսվել որոշ գործողություններով, որոնք նրանք կատարել են, որպեսզի կառուցեն իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի վրա: (Նրանց պատասխանները կարող եք գրել գրատախտակին): Երբ ուսանողները կիսվեն իրենց փորձառություններով, ժամանակ տվեք նրանց գրի առնել մի գործողություն, որը նրանք կարող են կատարել, որպեսզի իրենց կյանքը լիարժեք կառուցեն Տիրոջ վրա:

Մորոնին ավարտում է Մորմոնի Գիրքը՝ հրավիրելով բոլոր մարդկանց գալ Հիսուս Քրիստոսի մոտ

Կարող եք ցուցադրել «Come unto Christ» (3:54) տեսանյութը, որում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռիչարդ Գ. Մքոթը պատմում է, թե ինչպես Բոլիվիայում որոշ մարդիկ փոխվեցին, երբ եկան Հիսուս Քրիստոսի մոտ: Որպես այլընտրանք, դուք կարող եք կիսվել նաև այլ փորձառությամբ, թե ինչպես է փոխվել ինչ-որ մեկի կյանքը,

երբ նա նախընտրել է գալ Քրիստոսի մոտ: Հրավիրեք ուսանողներին քննարկել, թե ինչ կարող են սովորել այդ փորձառությունից:

Միասին կարդացեք Մորոնի 10.32-33-ը և հրավիրեք ուսանողներին քննարկել, թե ինչու է այդ հրավերն իր համապատասխան տեղը գտել Մորմոնի Գրքի վերջին գլխում: Օգնեք ուսանողներին այդ հատվածներում գտնել նմանատիպ մի սկզբունք. **Երբ գալիս ենք Հիսուս Քրիստոսի մոտ, մենք կարող ենք մաքրագործվել և կատարելագործվել Նրա շնորհով:**

- Ինչպե՞ս կբացատրեք, թե ինչ է նշանակում «Եկեք Քրիստոսի մոտ» արտահայտությունը մի մարդու, ով առաջին անգամ է լսում այդ հրավերը: (Օգտակար կլինի խնդրել ուսանողներին վերանայել նախագահ Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)
- Ի՞նչ է նշանակում «հրաժարվել» ամեն անաստվածությունից» (Մորոնի 10.32):
- Կատարյալ դառնալու համար մենք ինչո՞ւ ունենք Հիսուս Քրիստոսի կարիքը: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր կյանք հրավիրենք Տիրոջ իրավագործող ուժը կամ շնորհը: (Խրախուսեք ուսանողներին վերանայել նախագահ Թադ Ռ. Քալիսթերի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

Խրախուսեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես է Տիրոջ շնորհն օգնել նրանց գալ Հիսուս Քրիստոսի մոտ:

Միասին կարդացեք Մորոնիի հրավերը Եթեր 12.41 հատվածում և հիշեցրեք ուսանողներին, որ նրանց խնդրել էին խորհել, թե ինչպես են արձագանքել այդ հրավերին: Հրավիրեք ուսանողներին բացել նախապատրաստական նյութի 3-րդ բաժինը և վերանայել «Գրի առեք ձեր մտքերը» վերնագրի երեք տարբերակները: Ուսանողներին ժամանակ տվեք վերանայել իրենց գրածները, կամ, եթե նրանք ժամանակ չեն ունեցել պատրաստվելու, խրախուսեք նրանց ընտրել տարբերակներից մեկը և պատրաստել որոշ մտքեր կիսվելու համար:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո
հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գրածով:
(Եթե դասարանը մեծ է, կարող եք ուսանողնե-
րին բաժանել խմբերի, որպեսզի յուրաքանչյուրը
կիսվելու հնարավորություն ունենա:)

Ավարտելով այս դասը և դասընթացը՝ վկայեք,
թե ինչպես է Մորմոնի Գիրքն օգնել ձեզ գալ
Քրիստոսի մոտ: Խրախուսեք ուսանողներին
շարունակել գալ Քրիստոսի մոտ՝ ամեն օր ուսում-
նասիրելով Մորմոնի Գիրքը:

